—Սէրը՝ հզօրագոյնն է ամեն կրից, վասն զի գլուխը, սիրտը և մարմինը միանդամայն կը հարուածէ: Սէրը՝ ցանց մըն է զոր բնութիւնը տուած է և երեւակայութիւնը ստեղնագործած:

Վոքթո

—Սէրը աշխարհիս քաղաքացին է: Տիկիկ Տիւսաք

—Սէրը մարդկային երանութեանց առաջինն է: Սէրը ջերմագին տենդ մ'է, որոյ բնութիւնն է շարժել ամեն ինչ, խենդութիւն է յաւիտենական կարծել:

Տիկիկ Քոքթիկ

—Կեանքը ծաղիկ մ'է, սէրը նորա մեղրը:

Վիքոր Զիւկո

—Սէրը թռչուն մ'է որ կ'երգէ կանանց սրտին:

Ալֆօնս Բար

—Սէրը զգացման ամենէն ուժգինն, հոգեոյ այն բաղադրեալ վիճակն է, յարում ամեն համակրանք, հիացմունք, յարգանք և անձնահաճութիւն իւրեանց բարձրագոյն աստիճանին կը հասնին:

Սքեկար

—Սէրն է այն կրօնն որ մշտապէս է: Բօլ Բերրե

—Սէրն է զգացմանց գերագոյնը, լաւագոյն գործոց մղիչն և գրգռիչ հոգեոյ զօրութեանց:

Լըքուրնօ

—Սէրն, աստուածային հուրն է: Ֆրանսարիոն

* Կեղծաւորութիւնը ժամանակիս նորաձեւութեանց մէկն է. որով բոլոր խօսակցութիւնք բնաւ իմաստ չեն պարունակիր: Ամեն մարդ իր մտածածը չըսէր. անարդած մարդոց բարեկամութիւն կը ցուցնէ: Մարդս շատ պիտի բամբասուէր եթէ իր զգացածը յայտնէր:

—Բողոցին հարուածները՝ մարդուս արժէքն ու բնութիւնը կը յայտնեն, ինչպէս նմարն՝ ստակիրն:

—Պարկեշտութիւնը, որ դժութեան նմանութիւնն է, բնկերութեան ու նենայիք առաքինութիւններէն մէկն է:

Ասով բոլոր մարդիկ կը վերագասուին, ու կախում ունի մարդուս իր պատիւը ճանչնալէն: Պարկեշտութիւնը ընկերութեան ամենագլխաւոր կապիւէն մէկն է և եղակի յատկութիւն մ'է, որով մարդս վաճառականութեան մէջ ալ կ'ունենայ քաղցրութիւն և հաստատութիւն: Իսկ առանց բնաւորութեանց միայն արտաքին գիրքերու պարկեշտութիւնը՝ կեղծաւորութիւն է:

—Ձանալու է որ անձնասիրութիւնը չօչնչացնուի:

—Թշուառը նախատել՝ անգթութեան սահմանէն ալ անցնիլ է:

—Շահասիրութիւնը՝ դարուս բորստութիւնը մեր սղաշտութենէն կը պլլտկի, և մարդ կը սարսափի տեսնելով այն դեռահամներն, որ մտածելէ առաջ հաշուելու կ'ենեն:

—Խաղացողը մարդկային դասէն դուրս է. և արգարև կարծուածին չափ զիւրին բան չէ որ մարդս խիստ աղէկ խաղացող ըլլալով միանդամայն բարի և պարկեշտ ըլլայ: Վաստակելու փափաքը, որ զիչեր ու ցերեկ մտածել կուտայ, շատ անգամ խիստ վտանգաւոր խայթ մ'է, որքան որ սիրտն ու միտքը բարի ըլլայ: Մարդս նախ ապուշ կ'ըլլայ, ետքը չար:

—Ըստ պատահման և առանց մտածելու ամուսնանալը վիճակահանութեան ստակ տալու կը նմանի, որ խիստ քիչ անգամ կը վաստկուի:

—Սչխարհս ստախօս մ'է. մեծ զուարճութիւններ կը խոստանայ, բայց միայն վիշտ և ցաւ կուտայ: Խիստ յայտնի է որ ամէն մարդ իր աստիճանին համեմատ իր վիշտերն ունի, և հետեւաբար աւելի մեծատունք շատ թշուառ են:

—Երբ չար բարեկամներ շարունակ իրարու յաջորդեն, այն ստեն ընկերութիւնը ծպտեալ պարահանդիսի մը կը նմանի:

—Ձուարճութիւններն երբ չափէ դուրս ելնեն, կը լիւզիանան: Շատ աղէկ է քիչը, անանկ որ անոնց քիչութիւնը զմեզ կ'զրօսցնէ:

—Անաստուածութիւնը ծերութեան չար գաւազանն է :

—Անոյշ լեզուն ալ ստակ մ'է . որով աղքատները հանդիստ կրնան ապրիլ :

—Չկայ անանկ վիճակ մը , որ իր վիշտերը չունենայ , ինչպէս մարդուս կեանքը . ամեն բան խառն է ու անկայուն : Հաստատ երջանկութիւն մը ուզելն օրինաց դէմ մեղանչել է : Առ երեսս երջանիկ երեւցածները՝ թէ որ անոնց հարբստութեան և սրտին վրայ մտածես , այն աստիճան չես գրտնեբ : Երբեմն կամ շատ անգամ ամենէն հարուստներն ամենէն թշուառներն են :

—Մարդիկ ընդդիմութեամբ աւելի սերտ կը կապուին , քան թէ միշտ հաճութեամբ :

—Ապրինք ուղղամտութեան համար , մեռնինք ճշմարտութեան համար :

—Ծաղրը շատ անգամ մտաց անարգասաւորութեան նըշան է . երբ մարդս խոճեմ և իմաստուն դատում չունենայ , կ'օգնէ :

—Անմխոր իր հանգամանքները չճանչէր . առանց պատճառի կը սրդողի , առանց օգտակար ըլլալու կը խօսի , առանց ճանչնալու կը վստահի , կարծիքը կը փոխէ , իրեն չվերաբերած բաները կը հարցնէ և թշնամին բարեկամէն չզատէր :

—Ընկերական կեանքը օգնութեան վաճառականութիւն մ'է , որ աւելի պարկեշտ կամ ինքզինքը գիտցողը կը մտածէ : Ուրիշներուն երջանկութիւնը ուզողն իրենը կը հաստատէ . խելացի մեծութիւնն ու բարձրութիւնն է , որ այսպէս մտածել կուտայ :

—Կեանքը պէտք է ունենայ նեղութիւններ , անհաճօյութիւն , վիշտ և ցաւ՝ աշխարհիս միւս նեղութիւններն աղէկ վայելելու համար :

—Արդեօք որչա՛փ մարդիկ համբ պիտի ըլլային , երբ արգելուէին ինքզինքնին գովելէ ու ուրիշներն պարսաւելէ :

—Երեք բան կայ որ կանանց շատերը զուրս կը նետեն պատուհանէն , ժամանակ , առողջութիւն և ստակ :

—Մարդիկ ստակի կը նմանին . զանոնք յարգելու է իրենց արժէքին համար՝ ինչ որ ալ ըլլայ իրենց նկարագիրը :

—Երկայնահասակ՝ բայց կարճամիտ մարդիկն այնպիսի զարդարուած օթեւաններու կը նմանին . որոնց ամենէն բարձր դողիկոնին (խաթ) սենեակներն ընդհանրապէս քիչ զարդարուած են :

—Երկու տեսակ մարդիկ կան , որոնցմէ միշտ հետի կենտլ պէտք է . չարերէն ու տխմարներէն :

—Անկրօնը ինքնաչարժ մեքենայ մ'է , որ առաքինութեան կը մօտենայ , բայց դեռ չը հասած կը կոտորի :

—Ազատութիւնը արուեստից հոգին է :

—Հարուստները կը համոզուին թէ գլխութիւններն ալ կերպասից նման կրնան ծախու առնել :

—Ամեն տեսակ ճշմարտութիւններ ըսելը աղէկ չէ . բայց լսելն շատ բարի :

—Եթէ կ'ուզես գիտնալ թէ ինչպէս տալու է , ինքզինքը ընդունողին տեղ գիր :

—Քաղցրութիւնը անանկ յատկութիւն մ'է . որ ամեն բան կը դերազանցէ : Առանց ասոր ամեն բան ոչինչ է :

—Փորձառութիւնը բժիշկ մ'է . որ միշտ հիւանդութենէ յետոյ կը հասնի :

—Գեղեցկութիւնը յանձնարարական թուղթ մ'է , որուն պատիւը քիչ կը տեսէ :

—Թշնամեաց աղէկութիւն ընելն խուճկի նմանիլ է , որ զինքը փճացնող կրակին անուշահոտութիւն կուտայ :

—Մարդուս սրտին մէջ երկու անօթ կայ . մէկը ուրախութեան , միւսը ցաւի , որ յաջորդաբար կը պարպուին ու կը լեցուին :

—Խօսակցութիւնն ալ պէտք է որ խաղի նման ըլլայ . յորում ամէն մարդ կարգաւ կը նետէ իր թուղթը :

—Առանց սկզբունքի գործելն կը նմանի այնպիսի ժամացոյցի մը նայելու , որուն ցուցակն (ազրէպ) ըստ պատահման դրուած է :

Կ Ա Յ Ծ Ա Կ Է Չ Գ Ո Ւ Շ Ա Ն Ա Լ

Ահաւաստիկ փոթորիկի ատեն կայծակէ չը զարնուելու համար զգուշութիւններ :

Բաց տեղերէ փախչելու է . որովհետեւ կայծակը հովիւն և անձրեւիւն հետ կ'իջնէ : Կրնանք օրինակ առնել պատուհան մը բանալով կայծակէ զարնուողները :

Շատ վտանգաւոր է զանգակ չալել , զանգակ չալողներն յաճախ կը զարնուին կայծակէ :

Ֆրանսիային հետեւեալ խրատները կուտայ կայծակէ վախցողներուն համար .

Ա . Կրակարաններէ հեռի կենալ , որովհետեւ անոնց մէջի մուրը (զուրում) մետաղներու նման իրեն կը քաշէ կայծակը :

Բ . Հեռու կենալու է մետաղներէ , ոսկեգօծեալ բաներէ , զանգակներէ և անոնց չուաններէն , ու հանելու է բուր մետաղեայ իրերը :

Գ . Աշտարակի , մետաղեայ դարդի , ծառի և որ և իցէ բարձր տեղերու տակ նստելու չէ' :

Դ . Իր և գետնին մէջտեղը դնելու է ելեքտրականութիւն չընդունող մարմին մը , օրինակի համար՝ ապակին :

Ուրեմն զգուշութեան ամենէն ապահով միջոցն է մեծ սենեակի մը մէջ մետաքսեայ չուաններով կախուած անկողին մը ունենալ :

Երբ մէկը կայծակէ զարնուի , պէտք է զանի բաց օդն հանել , շուտ մը հանուեցնել և վրան պող ջուր սրսկել քաւորդի մը չափ : Մտուըններուն ծայրերը շփել և ջանալ կուրծքին և փորին ընդհատական ճնշումներով չնշտութիւնն հաստատել :

Այսքան է Սէնի նահանգին առողջապահութեան խորհրդոյն տուած հրահանգը :

Կիւնը սակ բանալին է :

Քաղաք մը լաւ կառավարողին համար ո՛րչափ պատիւ որ պէտք է , նոյնը պէտք է նաեւ կնոջ մը համար , որ լաւ գիտէ տան վերաբերեալ տնտեսութիւնը : Թաւիք

—Տնտեսական գիտութիւնը ոչ՛ միայն անսահմանաբար աւելցնել կը սորվեցնէ , այլ նաեւ ըստ պատշաճի գործածել և տնօրինել ընտանեաց ամեն մէկ եկամուտը :—

Տը Վիքրի

—Կարգը և պէտք եղած բաներու իմաստուն տնօրէնութիւնը մինչև անգամ ամենէն աղքատ ընտանիքի մը մէջ ամեն բան ճոխ կը ցուցնեն :— Տիկին Նանին Կիլիկոն

—Տնտես կիւնն իզական ամեն յատկութիւններն ունի . կարգ , փափկութիւն , բարութիւն , առուգութիւն և քաղցրութիւն : Կը ներքոյէ յուզեալ հարստութիւնները , բարուք կեցութեան պիտոյքը զգալով : Վերջապէս ա՛ն է որ կը կառավարէ տունը , և իր կառավարութիւնը թագաւորաց և պաշտօնէից կառավարութեանն աւելի հաստատուն կ'ընէ :

—Ով որ իր տունը լաւ կը կառավարէ՝ ճշմարիտ քաղաքացի մ'է . այնպիսին քաղաքին կառավարութեանն օգնած կ'ըլլայ՝ կատարելով իւր ամեն ազնիւ պարտքերն և կառավարութեան ընթացքը գիւրացնելով :— Ժիւպիտք

—Աշխարհիս մէջ ո՛ր և է տեղ մը ինձ այնքան հաճոյ չ'է , որչափ տունս . ո՛հ՛ , այն թանկազին տուն իմ . Էօժէկի սը Կեռէկ

—Կնոջ մը բնաւորութիւնը կ'ազնուանայ տնական անասուրբ խնամոց միջոցաւ : Տը Լաքրնայ

—Ընտանեկան երջանկութիւնն ամենէն հաստատուն ու քաղցրն է :— Վօրթոն

—Երբ ընտանիքն աշխոյժ է , ընտանեկան խնամքները կնոջ ամենէն քաղցր զբաղմունքն են : Ռուսօ

—Իմաստուն կիւնը քիչով իւր տունը կը լեցընէ : Տնտեսութիւնն է աղբիւր անկախութեան և ազատութեան : Տիկին Ժեօֆոնէ

—Տուն մը կ'երջանկանայ իր առաջնորդին իմաստութեամբը : Էլեւ-Մարքիս

—Շուայ մարդ մը Սոկրատի կը տրանջայ թէ ստակ չունի : «Փոխ ա՛ն անձէդ» , ըսաւ իմաստասէրը , «ծախքերդ տնտեսելով» :

—Անգամ մը երկու շաբաթ անձինք կը վիճէին թէ, ո՛րը աւելի ծախք բրած է, «կարծեմ թէ», ըսաւ խելացի մարդ մը, «ասոնք անկելանոցին դուռը իրար կը մեծարեն»:

—Դիողինէս շաբաթեան աղքատացած մարդ մը տեսնելով, որ քանի մը ձիթապտղով ընթրիք կ'ընէր, ըսաւ, «եթէ տնտեսութեան ի՛նչ ըլլալը քիչ մը գիտնայիր. հիմա ասանկ ընթրիք մը չպիտի ընէիր»:

—Օր մը մէկն իր հօրը հարցուց թէ, ինչ կերպով այնքան հարստութեան տէր եղեր է: «Ատկէ դիւրին բան չկայ»: ըսաւ հայրը, վառած ճրագներէն մէկը մարելով. «պէտք է աւելորդ ծախքերէ հեռու կենալ, և երբ մէկ ճրագը կը բաւէ՝ երկուք չվառել»:

—Սոկրատ օր մը քանի մը հիւր ընդունելու պարտաւորուած ըլլալով, բարեկամին մէկն երբ զարմանք կը ցուցընէր թէ մեծ պատրաստութիւններ չէ տեսեր. Սոկրատ պատասխանեց. «Եթէ հիւրերս պարկեշտ անձինք են՝ գտնուածը կը բաւէ, իսկ եթէ պարկեշտ անձինք չեն՝ աւելի ևս է»:

Նախնեաց ինաստութիւնը

—Մի նախատեր սայրդ, ձերանալուն համար,
Սոյունն

—Աշխարհիս մէջ անցընելիք օրերնիս սակաւթիւ են, և մենք ալ ծոյլ դործաւորներ ենք: Սակայն մեզ յանձնուած դործն՝ մեծ, թոշակնիս՝ առատ, և տէրերնիս խիստ է:

Թաւգօն

—Ոստիլու եղանակը սովորէ. մոլութեան կամ ստութեան մէջ չիյնալու համար:

Իանայիդ

—Ուրիշի մը վրայ նախանձելը զանի մեծարել է:
Լօֆնսն

—Իշխանի մը պէտք է ժողովուրդէն առաջ ինքզինքը ուղղել՝ չնմանելու համար այն անպիտանին՝ որ գծագրելու որոշած մարմնոյն շուքը մարմինէն առաջ գծելու կ'երէնէ:
Սոյուն

—Կնոջ մը առաքինութեան ամենէն ընտիր պահապանն է ազիզ դէմք մը:
Դիողինէս

—Երբ օր մը մէկը իմաստունի մը հարցուց թէ՛ ինչո՞ւ համար միշտ անհոգ ես, «որովհետեւ, պատասխանեց, բան մը չունենալուս համար ո՛ր եւ է կորուստ ընելու առիթ չունիմ»:
Պրոսպերոս

—Ձգուչացիր վախճանին հասնելէ, որովհետեւ իյնալու սկզբնաւորութիւն է:
Բեռլին

—Եթէ աղքատ ես՝ գոհ եղիր վիճակէդ, և այս կերպով միշտ բաւական հարուստ պիտի ըլլաս: Եթէ հարուստ ես՝ իբրեւ աղքատ վարուէ, որպէս զի աղքատութեան մէջ իյնալու ատենդ մեծ ցաւ չունենաս:
Հերաֆիդ

—Ազահը կը ժողովէ ոսկին, բայց մարմնոյն մէկ մասը ամեն օր կը շողիանայ, իսկ ոսկին ալ փոշիին հետ պիտի խառնուի:
Ժիւսա Հարկի

—Մարդուս պէտք է միշտ պատերազմիլ իւր գէշ կրից դէմ ազէկներով, եթէ չյաջողի զանոնք յաղթելու՝ աղօթէ. եթէ յաղթութիւնն ունենայ՝ մեռնելը մօտեցած համարելու է:
Ֆրիդ

—Սրտին մէջ եղած մէկ զղջում մը կունակին վրայ խարազանի տասն հարուածէն աւելի նախապատիւ է:
Եօհնանն

—Գեղեցիկ է գիտութիւնը, բայց ա՛լ աւելի գեղեցիկ է պարկեշտութիւնը:
Եօգե-Իպն-Ջիւնուս

—Ով որ ուրիշին արժանիքը չպատուեր, իրն ալ կը կորսուի. իսկ ուրիշին արժանիքը ճանչնալը իրն ալ ճանչցընել է:
Իպն-Ջաֆայի

—Աղքատն հիւրընկալելն զԱստուած ի տուն ընդունիլ է:
Պառ-Հանիլուս

—Ամեն ճշմարիտ գիտութեան նպատակն է, Աստուած և բարեգործութիւն:
Հունս

—Ձգո՛ւշ կեցի՛ր ուրիշին պատուոյն, ինչպէս քու կինիդ:
Էլիեզա

—Ամեն բան յԱստուծոյ է բաց ի Աստուածազօտութենէ :

—Երեք բառեր կան որ դէշ են չտփազանցութեան մէջ. իսկ խիստ օգտակար և աղէկ են պէտք եղածին չափ գործածուելով. խմորն, աղն ու քաղաքավարութիւնը :

Թանու

—Որչափ որ բարձր աստիճանի ելնենք, այնքան աւելի խոնարհ ըլլալու է ուրիշին առջեւ :

Ապսմու

—Մեր ամենէն մեծ թշնամին մեր մարմինն է :

Արխարոսէզ

—Մի անարգեր փոքր բաները, որովհետեւ կրնան մեծնալ :

Կոմիսսա

—Ագահին հիւր եղողն դժուարամարտութիւն ունենալու վախ չո՛ւնենար և բժշկի կարօտ չըլլար :

Ակարոջը

—Թշնամեաց յաղթելու ամենէն ընտիր միջոցն է ինքզինքը բարւոքել :

Լիֆիսակ

—Հպարտութիւնն անդարմանելի հիւանդութիւն մ'է :

Թաղես

—Փռուսէ՛ր, ինչպէ՞ս կը համարձակիս փափաքիլ ծիրանիին. կարելի՞ չէ՞ որ վաղը միջատները զքեզ գոցեն :

Ժիւսա Հալեղի

Ժառանգակիև յարզը

—Ծուլութիւնը ոչ՝ միայն մարդս կ'տղքատացնէ, այլ և կենաց տեղութիւնը կը համառօտէ : Ծուլութիւնը ժանդի նման կը մաշեցնէ զմարդ : Ամեն օր գործածուած բանալին միշտ փայլուն կը մնայ :

—Ժամանակին յարգը ճանչցողը երկար կ'ապրի : Մարդիկ զայս մոռնալով, իրենց ժամանակին մեծ մասը քնանալով կանցնեն, չյիշելով որ շատ ժամանակ պիտի ունենանք ի դերեզման հանգիստ ընելու : Եթէ ժամանակն հարստութեանց թանկագինն է, ընդհակառակն ժամանակին կորուստը զեղխութեանց գլխաւորն է :

—Ծուլութիւնն ամեն բան կը դժուարացնէ, իսկ աշխատութիւնը կը դիւրացնէ :

—Ով որ առաւօտուն ուշ կ'ելնէ անկողինէն, բոլոր օրն ունայն կ'անցընէ : Երեկոյ եղած ատեն հաղիւ իր գործերուն կ'սկսի :

—Կանուխ պառկելն ու առաւօտուն կանուխ ելնելը երկու առաջին և գլխաւոր միջոցներն են առողջութիւնը, հարբտութիւնն ու դատողութիւնը անվտանգ պահելու :

—Ժամանակը միշտ երջանիկ է եթէ ապրելու եղանակը դիտնանք : Որ և է արհեստ մը այնպիսի զբաղմունք մ'է որ շահը պատուոյն հետ կը միացնէ : Ամեն մարդ իր արհեստին մէջ առաջինն ըլլալ ջանալու է :

—Ով որ աշխատասէր է, սովէ վախ չունի : Իրաւ է որ անօթութիւնը աշխատասէր մարդուն մինչև դուռը կը մօտենայ, բայց երբէք չհամարձակիր ներս մտնելու :

—Երջանիկ ապրելու համար ո՛չ զանձ պէտք է և ո՛չ հարուստ ժառանգ ծնողաց. բաւական է որ գործունեայ և աշխոյժ ըլլաս, որովհետև աշխուժութիւնն է մայր յաջողութեան :

—Գործէ երկիրդ, երբ ծոյը կը քնանայ, ահա այն ատեն պիտի ունենաս ցորեան պիտոյիցդ և ծախելու համար :

—Կամք ու յարատեւութիւն հրաշքներ կը գործեն, որովհետև ինչպէս յայտնի է, կաթիլ առ կաթիլ վազած ջուրն ապառաժը կը ծակէ :

—Աշխատասիրութեան համար պէտք է ունենալ հաստատամտութիւն, որոշում և մանրամասն խնամք : Ամէն մարդ իր գործն իր ձեռքը խնամելու է առանց ուրիշին ձգելու :

—Հսկէ խանութիդ, և այն ալ զքեզ կը պահէ :

—Եթէ կ'ուզես որ գործդ կատարուի, գլուխ եղիլ բայց եթէ կ'ուզես որ երեսի վրայ մնայ, ուրիշի յանձնէ :

—Խնամոց պակասութիւնը տգիտութենէ աւելի կը վնասէ :

—Գիտութիւնը՝ զգաստին, հարստութիւնը՝ արթունին, կարողութիւնը՝ քաջին, և երկինքն առաքինութեանն են:

—Կերակուրները որչափ իւղոտ ըլլան, այնքան նիհար կըլլայ ժառանգը:

—Եթէ հարուստ ըլլալ կուզես, ո՛չ միայն վաստկիլ սորվէ, այլ և տնտեսել: Սպանիացիք հարուստ չեղան Հնդկաստանի աէր ըլլալով, սրովհետեւ ըրած ծախքերնին աւելի մեծ էր:

—Ողելից ըմպելեաց սովորութիւնը, խաղն ու անհագութիւնը մարդուս քսակը կաղքատընեն ու մարմինը կը մաշեցնեն:

—Մտլութիւն մը մնուցանելն՝ երկու գաւակ մեծցնելէ աւելի սուղ է:

—Եթէ պէտք չեղածը գնես, պէտք եղածը ծախելու կ'ստիպուիս:

—Տղայք և խնդերը կ'երեւակային թէ, զուրուշը և քսան տարին վախճան չունին:

—Երբ հորը չորնայ, այն ատեն ջուրին յարզը կը ճանչցուի, ինչպէս առողջութեան գինը՝ հիւանդութեան ատեն դեղագործին և բժշկաց վճարուած ստակին գումարովը:

—Պարտական ըլլայն անձնական ազատութիւնը ծախել և ինքզինքը գերի ընել է:

—Աշխատութիւն, բարեխառնութիւն, զգուշութիւնը գործոց և ժրութիւն. անա ատոնք են մտքի հանդարտութեան աղբիւրներն և առաջնորդ առողջութեան, որ է հաւատարմութիւն մարդուս իմացական Ֆիզիքական կարողութեանց:

—Երբ սուրը ժանգոտած է, արօրը փայլուն, բանտերը դատարկ, շտեմարանները լեցուն, տաճարներու սանդուխը մաշած, գաղարանաց սանդուխը խոտով ծածկուած կ'ըլլան. վերջապէս բժիշկներն հետիտոն կ'երթան, հացագործները ձիով և գրագէտները կառգով, յայնժամ երկիրը բարօրութեան մէջ է:

ԶԻՆԱԿԱՆ ԱՌԱՄ

—Եթէ կ'ուզես՝ բնակէ այն թաղին մէջ, ուր կը բնակի թշնամիդ, այն քաղաքին մէջ ուր կը բնակի հակառակորդդ, այն տան մէջ ուր կը բնակի ընկերդ, սակայն միշտ հեռու բնակէ մտերիմ բարեկամէդ:

—Առանց երջանկութեան՝ առաքինութիւն կ'ըլլայ, չեմ կարծեր որ առանց առաքինութեան՝ երջանկութիւն ըլլայ. հաճոյից և ուրախութեանց ամենամեծն այն խղճմտանքը միայն կը հայթայթէ, որ երբէք գործ մը գործած չունի:

Օ ՏՐ ՊԱՊԻԱԿ

—Եւ ո՛չ մի վայրկեան պէտք է անգործ անցնել. երկտասարդութեան մէջ անգործութիւնը աններելի է:

ՉԿԱՐՅՈՒ ՖԻՂ

—Գիտութիւնք կը պանքի կը նմանին, որոյ բանալին ուսումն է:

ԱԿՈՒ ԹԱՅԻԱԿ

—Ինչ որ պէտք է քեզ, աղայաբար մի՛ գներ, և թէ որ գնեցիլ շուտ մը անոր գինը վճարէ:

—Ինքնին վճարէ քու պարտքերդ, և դու շացի՛ր պարտք ընելէ: Քանզի պարտական եղող անձը՝ գերի մը կը սեպուի:

—Ուրիշներու խօսքերն չեն որ մեզ կ'անպատուեն, այլ մեր վարմունքն:

—Եթէ կ'ուզես որ դատդ արդարութեամբ տեսնուի, արդար եղիր:

ՄԿՆԱՆԴՐ

—Մտիկ ընել զիտնալը՝ շատ բան սորված ըլլալ կը նշանակէ:

ԼՐ ՊՕԼ

—Չափաւոր խօսակցութիւնը առաւել դժուարին է քան պերճախօսութիւնը:

—Խնդիր մը քաղցրութեամբ մերժել՝ կէս խոստումն ըսել է:

—Վտանգին մեծութիւնն աւելի աներկիւղ կ'ընէ կորույլի սիրտերը:

—Ամենամեծ դժբաղդութիւն է չկարենալ հանդուրժել
դժբաղդութեան :

—Մարդիկ կը թշուառանան՝ այլոց հետեւելով :

—Քարեխառնութիւնը կ'արգելէ բնական հիւանդու-
թիւններ :

—Ամենաստախօսն ա՛յն է . որ իւր անձին վրայ կը խօսի :

—Կինն ստուերի կը նմանի , եթէ հետամուտ լինիս՝
կը փախչի , ե եթէ դու փախչիս , նա քեզ հետամուտ կը
գտնուի :

—Նախանձը սա՛ օգուտը ունի , որ տարափոխիկ չէ և
կը մնայ իւր տեղը :

—Չափազանց բարեկամութիւն մը ստեղծութեան ծնունդ
կուտայ :

—Սուտ անունն դիմակ մ'է որոյ ներքեւ կը փափաքիմք
պահուիլ և մատնուիլ միանգամայն :

—Փիլիսոփայութիւնն այն բաներէն մին է , որք կը
սովորին , բայց չեն սովորեցուիր :

—Շատ մը լեզուներ սորվիլ մէկ երկու տարուան գործ
է , իրենին մէջ պերճախօս ըլլալու համար ամբողջ կեանք
մը պէտք է :

—Ճանապարհորդութեան մը մէջ տղայն կը տեսնէ մի-
այն մեկնուժը , մարդն՝ նպատակը և ձերձուին՝ վերա-
դարձը :

—Մոլութիւնը՝ բարոյական պաշտպանն է . որպէս զի
այս վերջինը կարենայ ապրիլ , հարկ է որ առաջինը չան-
հետանայ :

—Ո՛ մոլութիւն մարդկային դատողութեան , երբ բարի
եմ , կը պահանջես որ լաւագոյն լինիմ , երբ լաւագոյն եմ .
գոհ չես և ինձ նախամեծար կը համարիս այն անձը որ իւր
մէկ մոլութիւնը դարմանելու կսկսի :

—Երեւոյթն ժամանակ մը միայն կը խաբէ , և միշտ կը
ճանաչեմք ճիշտ այնպէս՝ ինչպէս որ եմք մեր սրտով , մեր
գործերով :

—Մահուանէ կ'երկնչիմք , բայց չեմք երկնչիր այնպիսի
մտածումներէ , անտի և աննշան խորհուրդներէ , որք իւրա-
քանչիւր մանրերկրորդ մեր կենաց մի մեծ մասը կը կորզեն :

—Թշնամուց հետ թշնամաբար վարուիլն՝ հասարակ գործ
է , իսկ թշնամուց հետ վհանձնաբար վարուիլը մեծ մարդու
գործ է :

—Քսակը լեցուն՝ բայց սիրտը դատարկ մարդը աղքատ
է միշտ իւր կենացը մէջ :

—Առաջարկութիւն մը քաղաքավարութեամբ մերժելը
կէս մը ընդունել է :

—Մեծ է այն մարդը որ իր կրեցը կը յաղթէ , իսկ շատ
փոքր է այն . որ իր կրեցերէն կը յաղթուի :

—Այն որ ուրիշի վրայ կը խնդայ , ծիծաղելի կ'ընէ զինք :

—Ամբարտաւանութիւնը մարդուս ամենէն մեծ թշնա-
մին է :

—Ապերախտութիւնն ախտ մըն է , որուն ենթակայ ե-
ղողը չկրնար դիւրաւ բժշկուիլ :

—Մարդկային կեանքի մեծ խաղի մէջ մարդ խաբուե-
լով կ'սկսի և խաբելով կը վերջանայ :

—Մեծ օրէնքը՝ քաշել զխոնալն է այն ցաւն , որ անտե-
ղիտալի է :

—Թշուառութեան միակ դարմանը զբաղում և աշխա-
տութիւնն են :

—Նկարագիրով և ո՛չ թէ խելքով հարատւութիւն ձեռք
կը բերուի :

—Երբ չահի վրայ դառնայ խօսքն , արծիւ կը կտրին
եղներ :

—Սիրէ ամենքը , քիչերու վստահիր :

—Փառքը ջրի բոլորակի մը կը նմանի , որ մեծնալէ չը
դաղըրի , մինչեւ որ հեռուն ծաւալի և ոչնչութեան մէջ ցրուի :

—Հոգը դարման չէ , այլ հիւժախտ :

—Տղիտութիւնն Աստուծոյ անէծքն է , զիտութիւնն՝
այն թւեն՝ որով երկինք կը թռինք :

—Կեանքը մահուան ձանձրոյթն է:

—Ընտանի եզի՛ր, բայց երբէ՛ք գռեհիկ:

—Կոխի մէջ մտնելէ զգուշացիր, բայց երբ մէջն ես, այնպէս բռնէ զայն, որ հակառակորդը քաշուի քեղմէ:

—Ամեն մարդու ականջդ տուր, բայց քիչերու ձայնդ. ամեն մարդու կարծիքն ա՛ն, բայց վերապահէ քու դատումդ:

—Մարդը՝ դրամի հողին է, դրամը՝ մարդու մարմին, ըսեմ մէկմէկի երես և աստառ:

Յ. Մ. Տուտիխան

ԼԵՋՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՇՆԵՐ

—Տարբեր խորհելու կերպը՝ մարդը մարդէ կը բաժնէ, տարբեր խօսելու միջնորդն՝ ազգն ազգէ:

—Որչափ ալ աղքատ ըլլայ լեզու մը, յաւիտենական իմաստութեան պատկերը փոքր ՚ի շատէ կը ցոլացնէ:

—Ազգի մը լեզուն՝ նոյն ազգն ամեն յատկութեամբը կը ներկայացընէ:

—Եթէ խորհելն՝ յզանալ է, խօսիլը՝ ծնանիլ:

—Ինչ որ կ'ուզեն ըսեն համաշխարհական լեզուի խառնակութեան հակառակորդք. մարդկութիւնն անհամեմատ վաստակ ըրած է իւրաքանչիւր լեզուի յատուկ բացատրութեանց գանձերով:

—Ինչ է լեզու մը, բայց եթէ օղակ մ'այն չլթային՝ որով բովանդակ մարդկութիւնը կապուած է:

—Ազգ մը յառաջանալով՝ իւր լեզուն կը կատարելագործէ. փոխադարձաբար՝ կատարելագործուած լեզուն՝ զազգը կը բարձրացնէ:

—Մեռեալ լեզու մը գործածութենէ ելած դրամ մըն է, օրուան կիրառութեան չիգար. բայց որչափ վրայն ժամանակ կ'անցնի, այնչափ ալ ուրիշ հնութեանց պէս արժէքը կ'աւելնայ:

—Գեղեցիկ լեզու և գեղեցիկ խօսուածք. ականջն այն-



32 տարի առաջ երուսաղէմի Դամասկոսի դրան հիւսիսակողմը զըտնուած Հայկական եկեղեցւոյ մը մոզայիկ—յատակի լուսանկարը Այդաւերեալ վանքը—Սրբոյն Պողիբտոսի վանք—Դ. դարուն մէջ շինուած է Հայոց Զորորդապետ Արքեղայոս իշխանէն:

պէս կը զուարճացընեն, ինչպէս երաժշտութեան ազնիւ գործեաց ճարտար զարնուածք:

—Լեզուն՝ թէպէտ և բնութեան արդասիք չ'է, բայց անձուկ յարաբերութեան մէջ ըլլալով՝ անոր պէս երբէք 'ի սպառ պիտի չհետազօտուի:

—Անասունը լեզուի կարօտ չ'է, որովհետեւ միտք չ'ունի՝ մարդ՝ լեզուի կը կարօտի, որովհետեւ մտաւոր է:

—Մայրենի լեզուին հետ սիրով կապուած կ'ըլլանք՝ ազգայինը կը մեծարենք:

* * *

—Անգործ ես, անպէտ ես, ցեխի մէջ նետուած խիճը ալիք չը հաներ:

—Ինչ օգուտ, որ գետը կը յորդէ օր մը, երբ արեւի մէջ տապկուեր է արդէն ձուկը:

—Բախտի կողմնացոյցի սլաքը կայուն չէ, օր մը վեր կ'ելնէ ան, օր մը վար կ'իջնէ, և օր մը մուրճ կ'ըլլայ մարդ, օր մը սալ:

—Զիտ աշխատութիւն կ'ուզեն վարժապետէն, ու սարեկի կերակուր կուտան անոր:

—Ո՛վ որ սատանի հետ ուտէ, երկար զգալի պէտք ունի:

—Ճանչէ, գնահատէ ամեն մէկը, ամեն բան, ճանաչում, գնահատութիւն՝ կեանքի տուրեւտն ծանրաչափն է:

—Ամեն ինչ բաղադրութիւն է, բանը զանոնք վերլուծել ու ձեւակազմելն է:

—Բարեկամիդ ետեւէն լաւ խօսէ, թշնամեոյդ ետեւէն լռէ:

—Փորձասութիւնը՝ տգիտութեան հետեւութիւնն է, ու գիտութեան նախընթացը:

—Սէրը շատ բան կ'ընէ, բայց դրամը ամեն բան կ'ընէ:

—Անընդհատ արտադրութիւնը միայն կրնայ մնայուն ընել ամեն մի տեսակ հարստութիւնը:

—Անհատականութեան մը բոլոր արժէքը ինքն, է իր եսը,

այո, որի սակագինը ելեւէջի տարբեր բան մը կը կազմէ. իր վերին գինը 1 է, ու ստորին գինը 0:

—Մեր սրտի զարկը մեր կամաց-կամաց գերեզման երթալու, այսպէս ըսեմ, մեր յուզարկաւորութեան զանգուկահարութիւնն է:

Յ. Մ. Տոսուխեան

—Առ մարդէն յոյսն ու քուրը. կընես զնա աշխարհի թշուառացոյնը:

—Սիրոյ ծնողքն է գիտութիւնն. իսկ խմաստութիւնը՝ նոյն ինքն սէրը:

ԿՐԾՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

—Գիտութեան կ'աշակերտի միտքը, կրօնի՝ սիրտը:

—Գիտութիւնն վառած ջահ կը բռնէ. իսկ կրօնն՝ Աստուծոյ փողը կը հնչեցընէ:

—Գիտութիւն և կրօն. մէկն՝ ոսկի, միւսը գոհար. շատ քիչ կը փողփողեն, եթէ իրարմէ զատուած մնան: Իսկ եթէ գիտութիւնն իբրև ընտիր ոսկի՝ կրօնի գոհարն իւր գոգն առնու և անոր տածիչն ու պաշտպանն ըլլայ, երկուքն ալ իրարու արձակած շողիւններէն շատ շատ կը պայծառանան:

—Ուր գիտութեան վերջին սահմանն՝ հոն գերբնական կրօնի առաջին սկիզբն:

—Գիտութիւնն՝ օգտակար, իսկ կրօնը հարկաւոր է:

—Կրօնը միշտ լուրջ անմեղութեան մէջ է, երբեք չի ծերանար: Իսկ գիտութիւնն՝ արդէն բարին ու չարը ճանչցած ալեւոր մըն է:

—Երանի՛ մարդոց՝ եթէ աջ ձեռքը կրօնի կարկառէ, իսկ ձախը՝ գիտութեան:

—Կրօնը լքանել ուզողը՝ նախ սիրտն իւր անձէն հանելու է:

—Մանկան միտքը դեռ չի բացուած, սիրտն արդէն

կրօնի ընդունակ է . նոյնպէս ծերութեան ժամանակ՝ մտաց լոյսը մթագնելէն ետքը, կրօնական զգացումները սրտին մէջ առաւել կը զօրանան :

— Կինը ցաւոց ամենէն սաստիկն է :

Հ. Ռ. Պ.

Եւրիպիսկս

— Սատանան ինէ մօտ կը բնակի կնոջ քով :

Լուսեր

— Կինը աւելի դառն է՝ քան մահը :

Սողոմոն

— Օձը՝ կինը խաբելէն ետքը՝ լեզուն անոր տուաւ :

— Դժոխքի սալոյտտակը՝ կանանց լեզուներով շինուած է :

Կիւսն Արքայ

— Կիները փոքրիկ հոգիներ միայն կրնան ունենալ :

Մօլիքիսիսկո

— Բնութիւնը երբ չը յաջողիր այրեր արտադրել . կանանց ծնունդ կուտայ :

Արխարոսի

— Կինը անկատար արու մ'է :

Բիլլոն

— Կինը աստուածոց արժանի կերակուր մ'է երբ սատանն չհամեմեր զնա :

Քալդերոն

— Տղեկ կիները սրտի ցաւ կը պատճառեն, գեղեցիկները՝ գլխու :

Պրոն

— Գեղեցիկ կին մը աչաց դրախտն, հոգւոյ դժոխքն և քսակին քաւարանն է :

Բոք

— Կինը բնութեան մէկ սիրուն թերութիւնն է :

Միլլրոն

— Կնոջ հետ լինել առանց մոլորելու մեռելոց յարութիւն տայէ աւելի է :

Ս. Պերնարդոս

— Կին փառք առն իւրոյ է :

Պօղոս Առաքեալ

— Կինը առաջին բնակարանն է մարդուս :

Տիսթրո

— Կինը տիեզերաց գլուխ-գործոցն է :

Լեսիմկ

— Կիները սիրոյ ճշմարիտ ծաղիկներն են :

Էսփրոս

— Կինը ծաղիկ մ'է, որոյ անուշահոտութիւնը շուքին

Լամբնի

մէջ ալ կը բուրէ :

— Կինը Արարչին գեղեցկագոյն գործն է :

Բընան

— Գեղեցկութիւնը, ինչպէս նաև փեսայ մը, կիներու փրկութեան խարխոխն է :

— Վիշաք երկնային գեղ մը կ'ընծայէ գեղանշույլ օրիորդի մը դէմքին :

— Ինչ որ է արեւը երկրիս համար, նոյնն է սէրը-մարդկային կեանքի համար :

— Եթէ լոյսն է կենաց տաղջին սէրը, սէրը սրտին լոյսն է՞ միթէ :

— Աղջիկ մը կրնայ սիրել՝ առանց երջանիկ բլլալու . կըրնայ երջանիկ բլլալ անիկա առանց սիրելու, իսկ սիրել ու երջանկանալ հրաշք մըն է :

— Եթէ անընդդիմակաց զօրութենէ մը մղուելով կը սիրենք այն տեղերը, ուր մեր մանկութեան ժամանակը ներդաշնակութեան զաղանիքները ճանչցած ենք, եթէ հաճութեամբ կը յիշենք նուագածուն և նուագարանը, ինչպէս հընարին է չսիրել այն էակը, որ ամենէն առաջ մեզ կը յայտնէ կեանքի նուագային գեղեցկութիւնները և շնորհքը :

— Վստահութիւնը սիրոյ առաքինութիւնն է :

— Մարդկութեան մէջ միայն կիներն են գեղեցիկ և բարի. անոնք ամենեւին յանցաւոր չեն սեպուիլ իրենց ըրած յանցանքներովը . վասն զի մենք ենք նոյն յանցանքները գործել տուողները :

Պաղգազ

— Մայրական գրկացր մէջն է ժողովրդոց միտքը, անոնց բարքը, նախապաշարումները և առաքինութիւնները . ուրիշ խօսքով ըսենք . հոնկէ կը ըզխի մարդկային սեռի լուսաւորութիւնը :

— Եթէ կիներուն միայն տան նիւթական կառավարութիւնը յանցնել ուզենք և միայն այն նպատակաւ կրթենք զանոնք . մոռցած պիտի ըլլանք թէ աշխարհս կառավարող մոլութիւնները և նախապաշարումները ամեն մէկ քաղաքացիի տունէն կ'եննեն :

— Մարդ մը կրթելը անհատ մը կազմել է . այն որ իրմէ

ետք բան մը չը թողուր, կին մը կըթելը ապագայ սերունդ-
ները կազմել է։ Լապտաշէյ

—Պէտք է կարգուիլ անոնց հետ իրենց ինչ արժէք ու-
նենալը գիտնալու համար։ Բիշթեր

—Սէրը կիններուն կենացը ամբողջ պատմութիւնն է։ Իսկ
մարդերու կենաց մէկ յարավէպն է։ Աքաեկ

—Աթենացի կին մը յանդիմանական կերպով Լակեթե-
մոնացի կնոջ մը կը հարցնէր թէ իբր օժիտ ի՞նչ տուած
էր ամուսնոյն։ «Անբժութիւնս»։ պոտոսիանեց անիկա։

—Առաքինի կին մը կը հրամայէ՝ հնազանդութեամբը։

—Կիները կը կատալարեն մեզի, ջանանք ուրեմն ա-
նոնց կատարելութիւն տալու։

—Անոնք որչափ աւելի լուսաւորեալ ըլլան, այնչափ ալ
մենք ևս առաւել պիտի լուսաւորուինք։ Կանոնց մտքին
մշակումէն կախում ունի մարդուս իմաստութիւնը։

Լեռիսան

—Սէրը երբէք հասակ չունի, միշտ նորածին է այն։

Բաւզալ

—Կին մը երբ երեսուն տարեկան կ'ըլլայ, ամեն բանէ
առաջ իւր հասակը կը մոռնայ՝ իսկ երբ քառասուն տարին
կը լրացնէ, ալ իւր քանի՛ տարեկան ըլլալը անգամ չկրնար
յիշել։

Տիկին Տրիեո

—Մարդ ազատ ըլլալէ կը դադրի՝ սիրելու սկսելով։

—Ազատութիւնը սիրոյ հետ չկրնար համաձայնիլ. սի-
րահար մը միշտ գերի մ'է։

—Երկու կնոջ մէջ հաստատուած բարեկամութիւնը
միշտ երրորդի մը դէմ դաւաղութիւն մ'է։

—Սէրը թե մ'է, Աստուած տուած է հոգիին, որպէս զի
թռչելով կարենայ մինչև առ նա բարձրանալ։

—Սէրը մահկանացուները կը վիրաւորէ և աստուած-
ները կը շղթայէ։

—Ով որ կ'ուզէ որ ամուրիութիւնը տարածուի ու յա-

ռաջադիմէ, կը մոռնայ թէ ամեն սէկ երիտասարդ ամուրի
մնալովը աղջիկ մը ազականութեան դատապարտած կ'ըլլայ։

—Ամուսնութիւնը վիշտեր ունի, բայց ամուրիութեան
մէջ ալ հաճութիւն չկայ։

—Սիրամու աղջիկի մը սիրտը վարդի կը նմանի, որմէ
ամեն մէկ սիրահար մէյմէկ թերթ կը քաշէ, հետեւաբար
այսպիսի աղջիկ մը երբ կը կարգուի, նոյն վարդին միայն
փուշը կը մնայ իւր էրկան։

—Սիրոյ վերջ տուողը ժամանակն է և ո՛չ թէ խելքը։

—Ժամանակը ազան կամ անազան կը յաղթահարէ սէ-
րը. միայն բարեկամութիւնը կրնայ ազատ մնալ ժամանա-
կին հարուածէն։

—Գեղեցիկ սկոայ չունեցող կիները միշտ աչքով կը
խնդան։

—Մարդերը երեւելի սուրբեր կ'ըլլային՝ եթէ կիները
սիրածնուն չափ զԱստուած ալ սիրէին։

Տիկին Տր Սարթորի

—Ոսկին և ագամանդեայ պարգեւները այնպիսի պեր-
ճախօտութիւն մ'ունին, որ ամենէն ազդու խօսքերէ աւելի
կը յուզեն կնոջ մը սիրտը։ Շեյխարի

—Մարդ մը երբ կին մը կ'առնու, համբերութեան պսակի
արժանի է, երբ երկրորդ անգամ կը կարգուի, այնպիսին
յիմարութեան երկու պսակ կրելու արժանի է։

—Սէրը որչափ խորհրդաւոր ըլլայ, այնչափ զօրաւոր է.
որչափ զաղտնի մնայ, այնչափ կ'աւելնայ. և որչափ պահ-
ուի, այնչափ երեւան կ'ելնէ։ Տիկին Տր Սարթորի

Փիլիսոփային մէկը իւր տղան կարգել կ'ուզէ, Տակաւին
պզտիկ է անիկա, կ'ըսէ օր մը բարեկամներէն մին, սպասէ որ
խելացի ըլլայ, և ան ատեն կարգէ՝. Խե՛նդ ևս, բարեկամ,
կը պատասխանէ փիլիսոփայն սաստկութեամբ, եթէ խելա-
ցի ըլլալուն սպասեմ, ան ատեն ալ չպիտի ուզէ կարգուիլ։
Պոնսեկ

—Անկեղծաբար յաւիտենական սէր խոտացողը, և այս-

պիսի խոստումներու հաւտացողը հաւասարապէս կը խաբուին . մին իւր սիրտէն և միւսն ալ իւր սնապարծութենէ կը խաբուի :

Ժ-kord Սանդ

— Ինչպէս վարդը , նոյնպէս կիներուն սէրը գեղեցիկ օղին պէս շուտով մը կ'անցնի :

— Կիները վարդերուն պէս գեղեցիկ են , սակայն վարդերուն պէս անոնք ալ կը պարտաւորին բնութենէն ընդունիլ իրենց գոյնը և ազուրուութիւնը :

— Ով որ կ'ուզէ իւր սիրտը սիրոյ հարուածներէն ազատ պահել , կը պարտաւորի աւելի բազմութեան մէջ ապրիլ քան թէ միայնութեան մէջ :

— Վերաւոր սիրտը ստուերի և լուսութեան կը կարօտի :

Պազգաֆ

— Իրենց կազմութեամբը անտարբեր կիները առաքինի կը մնան : Սակայն սիրոյ վէրքէն վախնալով կուսարանի մէջ առաքինի մնալը ինչպէս որ արժէք չունի , նոյնպէս բնութեամբ անտարբեր եղող կիներուն անարատ մնալն ալ արժէք մը չունի : Շուէտի թագուհիներէն մին օր մը կուսարան մ'այցելութեան երթալով , իրաւամբ կ'ըսէր աւագուհիին : — Եթէ ուխտ կ'ընէք կոյս և անմեղ մնալու , ինչո՞ւ վանդակապատներու ետեւ կը պահուիք . և եթէ վանդակապատներ ունիք , ինչո՞ւ այդպիսի ուխտ կ'ընէք : Լատին փիլիսոփայ մը ըսաւ թէ արժանաւորութիւն մ'ունեցած չես ըլլար չընելովդ ինչ որ չես կրնար ընել :

— Հոռով մէջ հարս ու փեսայի գերեզմանի մը վրայ յետագայ տապանագիրը կը կարդացուէր , « Կեցի՛ր , անցորդ , և տե՛ս սա հրաշալիքը , ահա երկու հարս ու փեսայ , որոնք չեն կուրիք » :

— Կիներուն համար միայն մէկ նշանաւոր թուական կայ , ուր անոնք կը պարտաւորին մեռնիլ . այս թուականը այն ժամանակն է ուր ո՛չ ոք կը սիրէ զանոնք :

Տիկին Սօֆի Կեյ

— Եթէ կին մը գթալուն համար զիս սիրել ուզէ , նա խապատիւ կը համարիմ ամենեւին չապրիլ , քան թէ ողորմութեամբ ապրիլ :

Սօնրհներ

— Կիները տկար են , ըստ որում միայն սիրան է իրենց յենարանը :

Տիկին Ժերարսեն

— Ինչպէս ամեն իրերու , նոյնպէս և սիրոյ մասին փորձառութիւնը բժիշկ մըն է , որ միշտ հիւանդութենէ ետք կուգայ :

Տիկին Տը Լադուր

— Տիկին տը Սթաէլ օր մը կը հարցունէր Նորթլէոնի թէ ըստ իւր կարծեաց ո՞վ է աշխարհիս մէջ առաջին կարգի կինը . — Այն որ ամենէն աւելի զաւակներ բերած է , կ'ըսէ կայսրը :

— Սիրոյ պատերազմին մէջ փոխուստը յողթութիւն մըն է :

Ա. Րիգար

— Կնոջ սիրտը վիճ մըն է , որուն յատակը ոչ ոք կը ճանչնայ :

— Կնոջ սիրտը ամենեւին չծերանար . երբ սիրելէ կը դադրի այն , պէտք է գիտնաս որ նաև բաղխելէ դադրած է :

— Շէյքսպիր կնոջ սրտին համար այլքին պէս շարժուն է ըսաւ . կրնանք յաւելուլ նաև թէ ծովին պէս խորունկ և անթափանցելի է այն : Միայն սէրը կրնայ թափանցել անոր ամեն զաղտնիքներուն . բայց ան ալ միշտ ժամանակէն շատ առաջ կը շիջանի :

— Կնոջ սիրտը երկնից մէկ մասն է . բայց այն եւս երկնից պէս գիշեր ու ցորեկ կը փոխուի :

— Հաճելի ըլլալ , սիրել և տիրել ; ահա այս է կնոջ բոլոր պաշտօնը :

— Տե՛ս սա նաւակը , զոր կը վարեն երկու հողի : Երբ միատեղ կը թիավարեն , յուզուող ալեաց վրայէն մեղմօրէն կը սահին կ'անցնին . երկուքնին համամիտ չեն . ամեն մէկ կը ալիք շարժում մը կուտայ , և եթէ թին անգամ մը հակառակ կերպով քաշուելու ըլլայ , կրնայ ընկղմիլ անոնց դիւրարեկ նաւակը : Նաւակը ամուսնութիւնն է . թիավարներն

ալ ամուսինները, որոնք կեանքի գետին մէջ կը նաւարկեն, և միմիայն միաբանութեամբ կրնան մեղմել ճամբորդութեան վտանգալի խտուածիւնները:

—Կանանց խոստումները պէտք է հովերուն շունչին և ալեաց վրայ գրել:

—Փետուրէ մը աւելի թեթև ինչ կայ.—Փոշին, փոշիէն աւելի թեթև.—հովը. հովէն աւելի թեթև.—կինը. կինէն աւելի թեթև.— ոչինչ:

—Սիրային առաջին արցունքը գոհար մըն է. երկրորդը մարգարիտ մը, իսկ երրորդը արցունք մը:

—Ինչպէս կոյրը վարդի մը մօտեցած ատեն անոր անուշաբոյր հոտէն կ'իմանայ վարդին գեղեցկութիւնն, նոյնպէս երբ խոնարհութեան հոտ առնուս, սպահով եղբ, որ ճշմարիտ արժանեաց մօտ կը գտնուիս:

—Պարտաւորութիւնն և այս օրն մերն են, արդիւնքն և ազազայն Աստուծոյ կը վերաբերին:

—Գէշ ակտը կը բժշկուի, իսկ դէշ համբաւը անբուժելի կը մնայ: «Մ'ազիկ մանկանց»:

—Սէրը փոթորկալից տուրեւառ մ'է, որ կը վերջանայ միշտ սնանկութեամբ, և անպատուեալը սնանկացող մարդն է:

—Սրտի սիրելի չեղող ամեն բարեբարութիւն՝ ատելի է: Դիակի մը կմախք կամ ոսկր է. պէտք է արտաքսել զայն կամ ոտնակոխ ընել:

—Շատ մարդիկ կան, որ կը խօսին անիմաստ: Այսպիսեաց համար է պարսկական սա՛ առածը թէ՛ Աղօրեաց ազազակը կը լսուի, բայց ալիւր չտեսնուիր:

—Բարոյախօսք զսարդիկ կը ծաղրեն յաջողութեան մէջ, և բարեկամք կը միտիթարեն դժբախտութեան մէջ:

—Անկեղծութիւնը պարկեշտ մարդոց ճարտարութիւնն է:

—Երիտասարդութիւնը կը նմանի կարճատեսի որ կը պնդէ թէ լու և սրտատես աչք ունի:

—Եթէ առատածեռն ես, ուսիր թէ բարիք ընելու համար խնայող լինիլ պարտ է:

—Տխրութեան առաջին պարագայք՝ ուրիշ այդպիսի պարագայից դէմ զրահ կը լինին:

—Կենցաղավարութեան բովանդակ գիտութիւնն է՝ կարենալ վարուիլ նոյն ինքն իւր անձին հետ, և գիտնալ վարուիլ այլոց հետ:

—Ամեն անոնք, որ թիթեռնիկ եղած են իւրեանց երիտասարդութեան մէջ, թրթուրի կը վերածին ծերութեան ժամանակ:

—Հաճելի լինելու արուեստն է իւր անձին վերայ չխօսիլ առաջի այլոց, և խօսիլ այլոց վերայ: Իւրաքանչիւր ոք գիտէ զայս, բայց կը մոռնայ:

—Կատարելագէտ ուղիղ գատողութիւն և բուրոյովին ընտիր բարոյական զգացում ունեցող մը չկրնար հաճելի և սիրելի լինել բազմաց:

—Թուի թէ կնոջ ուղեղին մէջ՝ խորջ մը պակաս, և սըրտին մէջ թել մը աւելի է քան ալը մարդոց. ապա թէ ո՛չ՝ ուրիշ մասնաւոր կազմակերպութիւն մը պէտք կը լինէր աղայքը խնամելու, գգուելու և անոր պատճառած անձկութեանց տակալ կարենալու համար:

—Այր մարդ մը որչափ չարութիւն խորհի և գործէ կնոջ համար, չկրնար այս մասին գերազանցել քան զկին մարդն:

—Այն մարդիկ որ ստէպ բաղդէն կը գանգատին՝ լաւ կ'ընեն եթէ իրենց դէմ գանգատ բառնան: Վարդեա

—Սմուրին էակ մ'է, որու բան մը կը պակսի. կը նմանի մկրատի մը, որ իր կիսոյն կ'սպասէ. եթէ այս կէտը չունենայ, կը նստնն զայն իրբև անօգուտ բան մը:

Փրակիլին

—Կանայք ողորմասիրութեան ոգին ունին: Մարդ մը որ կ'որայ, լսի ոսկի կ'որայ. կինն անոր կը միացնէ սիրան: Բարեսիրտ կնկան մ'ոսկին շատ աւելի աղքատներ կը միթարէ քան թէ մարդու մը հարիւր Փրանքը: Իզական սեռի ողորմասիրութիւնը հացերուն առատութեան հրաշքն ամէն օր կը նորոգէ: Է. Լըկուվե



ՕՏԱՐ ԷԶԵՐ

ԱՆԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ

Լաւագոյն կը համարեմ հաւտուլու հին առասպելներուն և թալմուտին և... քան թէ պնդել թէ՛ այս տիեզերական շէնքը ոգի մը չ'ունի: Աստուած ամբարիշտը հաւատքի բերելու համար հրաշք չի գործեց, ըստ որում իր սովորական գործերը իր էութիւնը կը հաստատեն: Իրաւ է որ սին իմաստութիւն մը մարդուս միտքը դէպ 'ի անհաւատութիւն կը տանի, սակայն խորունկ փիլիսոփայութիւնը միտքը հաւատքի կը բերէ: Վասն զի երբ միտքը երկրորդական թիրուցան պատճառներու վրայ կը նայի, ստէպ անոնց մէջ կանգ կ'առնու և աւելի յառաջ չ'երթար, բայց երբ այս պատճառները իրարու հետ կապող օղակը կը նկատէ ուշագիւր, անդէն կը պարտաւորի դէպ 'ի նախախնամութիւն և Աստուածութիւն թօրլ: Նոյն իսկ այն դպրոցը, որ ամենէն աւելի կ'ամբաստանուի իբրև անհաւատ, ամենէն աւելի կը հաստատէ թէ հաւատք ունի: Այս է Լէկիպոսի, Տէմոկրիտէսի և Եպիկուրոսի դպրոցը: Վասն զի աւելի դիւրին է հաւատալ թէ չորս շարժուն տարր և հինգերորդ անշարժ էութիւն մը՝ երբ օրինապէս և յաւիտենապէս կազմուած լինին, կարօտութիւն չունին Աստուծոյ մը, քան հաւատալ թէ անհուն և անհամար մասունք, կամ անկայուն սերմեր այս կարգը և գեղեցկութիւնը արտադրած լինին առանց երկնային Տնօրէնի մը(*): Ս. Գիրքը կ'ըսէ, «Անմիտն իր սրտին մէջ ըսաւ թէ Աստուած չկայ:» Չըսէր թէ «Անմիտը իր սրտին մէջ մտա-

(*) Պարօն հոռ Եպիկուրեան վարդապետութեան կ'ակնարկէ:



1910
 Ի Ս. Էջմիածին Զուարթնոց (աւերակ) եկեղեցոյ առջև: Ներսէս վրդ.Պ., Ներսէս վրդ.Պ., Սեփորդ վրդ.Պ., Սեմենեն, ԽԱՉԻԿ վրդ.Պ., Ի քեռայրն եւ գաւազուք ԵՂՆԵՆ ԵՊՍ., ԽԱՉԻԿ վրդ.Պ., ՓՐՕՅԷՍՄԷՕՐ ԵՌՈՒԱՆԻ ԼԱՂՍԵՆ, ազգային մը. ԽԱՉԻԿ վրդ.Պ., Ի քեռայրն եւ գաւազուք

ծեց : Այնպէս որ անմիտը այս խօսքը ըսած եղաւ թու-
թակի պէս և ո՛չ համոզմամբ : Ըստ որում անոնք միայն
կ'ուրանան զԱստուած որոց բանին կուգայ Աստուծոյ չգո-
յութիւնը :

Անհաւատութիւնը աւելի մարդուս լիզուին ծայրը քան
թէ սրտին մէջ լինիլը ասկէց բացայայտ կ'երեւի որ
անաստուածութիւն գատողները միշտ իրենց վարդապետու-
թեան վրայ խօսելու կը փափաքին, իրրեւ թէ կը դեղձին
իրենց կարծեաց մէջ և ուրիշներուն հաւանութեամբը զօ-
րանալ կ'ուզեն : Այս բաւական չէ. կան անաստուածներ,
որ ուրիշ աղանդաւորներու պէս աշակերտներ որսալու կը
ձգնին, և որ աւելի զարմանալին է, կան այնպիսիներ, որ
անաստուածութեան համար կը հալածուին և անյողզող կը
մնան, մինչդեռ եթէ իրօք հաւատալին թէ Աստուած ըս-
ուած բանը չկայ, ինչո՞ւ համար հոգ և նեղութիւն կրելու
յանձնատու պիտի լինին : Կ'ըսուի թէ Եպիկուրոս իր համ-
բաւը անարատ պահելու համար կը կեղծէր՝ երբ կը պնդէր
թէ կը գտնուին երկնածիր բնութիւններ, որ երանելի են
ստանց աշխարհիս կառավարութեան արժէք մը տալու : Այս
գիտողութիւնը զիջում մը կը համարին, թէիւ նա ի ներ-
քուստ կը խորհէր թէ Աստուած չկայ և մինչդեռ վստա-
հութեամբ վերին տեսչութիւնը կ'ուրանար. անոր էութիւ-
նը ուրանալու կարողութիւն չունէր :

Արեւմտեան հնդիկները իրենց մասնաւոր աստուածնե-
րուն համար անուններ ունին, բայց Աստուած նշանակելու
համար բառ մը չունին, որպէս թէ կոպպաշտները Արամազ-
դի, Ապոլոնի, Վահագնի և այլն անուններ ունեցած լինէին,
բայց ո՛չ թէոս բառը : Ասկէց կ'իմացուի, որ այս բարբարոս
ժողովուրդներն անգամ ունին Աստուծոյ անիւրը, այլ չեն
կրնար ըմբռնել անոր վսեմութիւնը և վեհութիւնը. հետե-
ւապէս նոյնիսկ վայրենիները ամենէն նրբամիտ փիլիսոփա-
յից կը միանան անաստուածներու գէ՛մ : Տեսական անաստ-
ուածը հազուադիւր է. այսինքն Տիակորաս մը, Պիոն մը, Լու-

սիան մը և այլ ոմանք : Դարձեալ աւելի բազմաթիւ կ'երե-
ւիր, թէեւ իրօք չեն : Ըստ որում, անոնք որ հաստատեալ
կրօնի մը, կամ աւելորդապաշտութեան մը զէմ կը կանգ-
նին, ներհակ կողմէն անաստուածի անուամբ կը զրպար-
տուին : Սակայն նշանաւոր անաստուածները էապէս կեղծա-
ւորներ են, որոնք անդադար նուիրական բաներու կը խառ-
նուին առանց զգալու, և ի վերջոյ պիտի ջնջուին : Անհաւա-
տութեան պատճառներն են կրօնական բաժանումներ՝ երբ
շատ են, որովհետեւ զլիսաւոր բաժանումը երկու կողման ալ
նոր եռանդ կ'ազդէ : Երկրորդ՝ քահանայից գայթակղութիւ-
նը, երրորդ՝ սրբազան բաները ծաղրելու պիղծ սովորու-
թիւն մը, որ փոքր առ փոքր կրօնից պատկառանքը կը
ջնջէ : Եւ վերջապէս գիտնական ժամանակներ մասնաւորա-
պէս խաղաղութեան և բարօրութեան հետ, վասն զի մարդս
խռովութեան և թշուառութեան ժամանակ աւելի կը հսկէ
կրօնի : Անոնք որ կ'ուրանան զԱստուած, մարդուս աղնուու-
թիւնը կը քանդեն. վասն զի մարդս մարմնով անասունի
ազգակից է, և եթէ մտքով Աստուծոյ ազգակից չլինի, ստո-
րին և անարդ էակ մըն է : Նոյնպէս կը ջնջէ վեհանձնու-
թիւնը և մարդկային բնութեան զարգացումը : Ա՛ն քեզի
օրինակ չունը և տի՛ս թէ ի՞նչ վեհանձնութեամբ և արիւ-
թեամբ կը զինի՝ երբ կը գիտէ որ մարդ մը իրեն պաշտ-
պան կը կենայ, այս մարդը անոր համար Աստուած մի է,
կամ զերազոյն բնութիւն մը, և եթէ անոր վրայ վստա-
հութիւն չունենայ, անկարելի է, որ իր բնական քաջու-
թիւնը այն աստիճանին հասնի : Նոյնպէս է և մարդս,
որ երկնային պաշտպանութեան վրայ իր յոյսը և վստա-
հութիւնը դնելով՝ այնպիսի ոյժ և հաւատ մը կ'ստանայ,
որ մարդկային բնութիւնը ինքնին կարող չէ ձեռք ձգել : Ուս-
տի ինչպէս որ անաստուածութիւնը ամենայն մասամբ ատելի,
նոյնպէս է և այս մասին, քանի որ կը զրկէ մարդս այն
միջոցներէն, որով մարդկային տկարութեան վրայ կը տի-

բապեփէ: Այս ճշմարտութիւնը ինչպէս մասնաւոր անձերու,
նոյնպէս կը պատկանի նաև ազգերու: Պափօն(*)

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՄՈՒՐԻՈՒԹԻՒՆ

Այն մարդը, որ կին մը և զաւակներ ունի, պատանգ-
ներ տուած է բախտին, ըստ որում խոջնդոտներ են անոնք
թէ՛ բարի և թէ՛ չար ձեռնարկներու: Անուրանալի է, որ
ի նպատակ հասարակութեան գերընտիր և նշանաւոր գործերը
ամուրի կամ անզաւակ մարդերու ձեռքէն ելած են, որոնք
իրենց գորովը և միջոցները ժողովրդեան նուիրած են: Սա-
կայն զաւակի տէր մարդիկ իրաւունք ունին ապագայ ժա-
մանակին հոգ տանելու, քանի որ անոր պիտի յանձնեն ի-
րենց սիրական աւանդները: Կան մարդիկ որ թէև առանձ-
նական կեանք մը կը վարեն, բայց իրենց հետ կը մեռնի և
իրենց յիշատակը և ապագան առ ոչինչ կը զրեն: Մանա-
ւանդ կան այնպիսիներ՝ որ կին և զաւակներ պարտուց
մուրհակներ կը սեպեն, իսկ ոմանք եւս այնչափ յիմար են
և կծծի, որ փառք կուտան որ զաւակ չունին. որովհետև
աշխարհի առջև հարուստ կ'ուզեն երեւիլ. և անշուշտ լսած են
սա խօսքը թէ՛ «Այս ինչ մարդը շատ հարուստ է», և ասոր
պատասխանը թէ՛ իրաւ է, բայց շատ ալ զաւակներ ունի.
որպէս թէ անոր հարստութեան ծանր բեռ մըն են: Սակայն
ամուրիութեան սովորական պատճառը ազատութիւնն է, մա-
նաւանդ տեսակ մը ինքնահաճ և նեղսիրտ անձերու համար,
որ այնչափ կապէ կը խորշին, որ գրիթէ կը կարծեն թէ
մինչև անգամ իրենց գօտին և զանգապանի կապը ծանր
չլթաներ են: Ամուրի մարդիկ լաւագոյն բարեկամներ, լա-
ւագոյն տէրեր և լաւագոյն սպասաւորներ կը լինին. բայց

(*) Պափօն (Րօմըր) Անգլիացի նշանաւոր կրօնաւոր մը. որ կոչուած է հրաշալի վարդապետ մակդիրով. միջին դարու փորձառական գիտութեանց մեծ ներկայացուցիչ և մին ամենէն լուսաւորեալ միտքերու (1214—1291).

ո՛չ միշտ լաւագոյն հպատակներ. վասն զի շուտ մը խոյս
տալու տրամադիր են և ամեն փախստական մարդիկ այս վի-
ճակին մէջ կը գտնուին: Ամուրի կեանքը եկեղեցականի մը
կը վայլէ, որովհետև զթարստութիւնը հազիւ կարող է ու-
սուցել այն հոգը, ո՛ւր նախ պէտք է լիճ մը լեցնել, իսկ
անտարրեր բան մըն է դատաւորներու և օրէնսգէտներու
համար, որովհետև եթէ շահատէր և կաշառակեր լինին,
գարձեալ ունենալիք սպասուոր կինէ մը տասն անգամ վա-
տագոյն կրնայ լինել...:

Արդարև կինը և տղայք մարդկային ազգին կրթութեան
կը նպաստեն և ամուրիները՝ աւելի միջոցներ ունենալով՝
թէև շատ անգամ աւելի ողորմատէր կը լինին, սակայն
գարձեալ աւելի անգութ և քարսիրտ են, (անաչառ, հաւա-
տաքննիչներ ընելու յարմար անձինք), որովհետև իրենց
գութը ստէպ գործածելու առիթ չունին: Ծանրակաց մար-
դիկ, որ սովորութեան կը յարմարին և հետևապէս հատու-
տամիտ են, ընդհանրապէս սիրող ամուսիններ կը լինին,
ինչպէս կ'ըսուի Ուրիսեւոյի համար: Անարատ կանայք ստէպ
հպարտ են և վէս, և իրենց անարատութեան մէջ ապաւէն մը
կը փնտռեն: Երբ կին մը կը մտածէ թէ իր ամուսինը իմաս-
տուն և խելօք է, իր անարատութեան և հնազանդութեան
մէջ ապաւէն մը կը փնտռէ: Երբ կին մը կը մտածէ թէ իր
ամուսինը իմաստուն և խելօք է, իր անարատութեան և
հնազանդութեան մէջ օր ըստ օրէ կը հաստատուի, և ընդ-
հակառակն կը խանդարէ՝ եթէ իր էրկըր ծանձազամիտ գտնէ:
Կանայք երկտասարդաց տիրուհիներն են, արբուն մարդե-
րու ընկերուհիները և ձերերուն զայեակները: Այնպէս որ
մարդ մը ո՞ր հասակին մէջ պէտք է կարգուիլ, գժուարին է
որոշելը: Սակայն իմաստուն կոչուած է այն անձը, որ
մարդս երբ կարգուիլ պէտք է հարցման պատասխան տը-
ուաւ... — «Երկտասարդ է՝ ամուսնանալու ատեն ունի, եթէ
չափահաս՝ բնաւ չամուսնանայ»: — Ստէպ տեսնուած բան է:

որ չար էրիկներ բարի կիներ կ'ունենան, կամ այն պատ-
ճառաւ որ երբ իրենց մարդերուն բարեարտութիւնը տեսնեն,
յարգելու տրամադրութիւն մը կ'զգան և կամ կանայք համ-
բերութեան մէջ հպարտութիւն մը կ'զգան: Բայց այս բանը
միշտ կը պատահի, երբ կանայք իրենց ծնողաց կամքին հա-
կառակ ընտրած են իրենց գէշ ամուսինները, վասն զի այն
ատեն ուղեն չուզեն պէտք է որ իրենց յիմարութեան հե-
տեւանքը կրեն:

Պաքսն

Ա Ի Ե Լ Ո Ր Կ Ա Պ Ա Շ Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Աւելի աղէկ է Աստուծոյ վրայ կարծիք մը չունենալ,
քան թէ այնպիսի կարծիք մը, որ անարժան է: Վասն զի
մին թերհաւատութիւն է, միւսը անարգանք, և իրօք
աւելորդապաշտութիւնը Գերագոյն էին զէմ յանդիմանու-
թիւն մըն է: Այս մտօք քաջ կը խօսի Պլուտարք՝ երբ կ'ը-
սէ: «Արդարեւ աւելի փափաքելի է ինձ որ մարդիկ ըսեն թէ
քնաւ Պլուտարք անունով մարդ մը չկայ, քան թէ ըսեն
թէ Պլուտարք մը կար, որ զաւակները ծնելուն պէս կ'ու-
տէր»: Ինչպէս որ քերթողները կը գրեն Հերայ համար: Եւ
որչափ մեծ լինի այս թշնամանքը Աստուծոյ զէմ, նոյնչափ
մեծագոյն է վտանգը մարդկան համար: Անաստուածութիւնը
գէթ կը թողու որ մարդս ուղիղ բանի, խնաստասիրութեան,
բնական ջերմեանգութեան, օրէնքի, համբաւի հեռելի, ու-
րոնք գոնէ արտաքին բարոյական առաքինութեան մը կըր-
նան տոռաջնորդել, ի չգոյժ կրօնի, սակայն աւելորդապաշ-
տութիւնը այս ամեն բաները կ'աւերէ, կը տապալէ և
մարդկային մտքին մէջ միահեծան միապետութիւն մը կը
կանգնէ: Հետեւապէս երբէք անաստուածութիւնը տէրու-
թիւնները վրդոված չէ. վասն զի մարդիկը զգուշաւոր կը
պարձնէ և կ'արգիլէ որ հեռուն նային: Նաև կը տեսնենք որ
անաստուածութեան հակամէտ ժամանակները (ինչպէս Օգոս-

տոս Կեսարի ժամանակը) քաղաքակիրթ և անդորր ժամանակ-
ներ էին: Իսկ աւելորդապաշտութիւնը շատ մը պետութիւններ
տակն աւ վրայ բրած է և «նոր շարժիչ» մը իր հետը բերե-
լով կառավարութեան շարժումները կը խանգարէ: Ժողո-
վուրդն է աւելորդապաշտութեան վարպետը և ամեն աւելոր-
դապաշտական բանի մէջ խելացի մարդիկ յիմարներուն և
տեւէն կ'երթան, իսկ առարկութիւնները մինակ բանակա-
նութեան զէմ գործելու կը ծառայեն այս պարագայիս մէջ:
Թրէնտի ժողովին մէջ, ո՛ւր զպրոցականաց վարդապետու-
թիւնը մեծ կշիռ ունէր, քանի մը հպիսկոպստներ գլուխ
բռնելով ըսած են թէ՛ զպրոցականները աստղաբաշխ-
ներուն կը նմանին, որոնք (կեղորոնախոյս, ներաչրջան
և ուրիշ ասոնց նման երկրաչափական գիծեր հնարած են,
որպէս զի երկնային երեւոյթ մը մեկնեն, թէև քաջ գիտէին
որ այսպիսի բաներ չկան, նոյնպէս և զպրոցականները շատ
մը նուրբ և կնճռալի առածներ և խնդիրներ դարմներ են
եկեղեցիին արարողութիւնները պահելու համար: Աւելոր-
դապաշտութեան պատճառներն են՝ հրճուելու և հեշտական
ծէսերը և արարողութիւնները, ծայրայեղ փառիսեցիլի մը
սրբութիւնը. աւանդութեանց յետին ծայր ակնածու-
թիւնը, որոնք միայն եկեղեցին կը ծանրարեռնեն, կրօ-
նականաց հնարքը, իրենց փառասիրութեան և շահուն
համար. բարի խորհուրդներու քաջալերութիւնը, որ
պատրանքի և (նորութիւններու) զուռ կը բանայ. երկ-
րային իրերու միջոցաւ երկնային նպատակի մը զիմելը,
որ մինակ երեւակայութեան մուռնդ տալով մոլոր ճամբայ
մը կը տանի, և վերջապէս վայրենի ժամանակներ, մաս-
նաւորապէս աղէտից և ձախորդութիւններու հետ կ'ընթա-
նան: Աւելորդապաշտութիւնը առանց քօղի մը. տձև բան
մըն է. վասն զի ինչպէս որ կապիկը մարդուս նմանելովը
աւելի եւս տգեղ է, նոյնպէս կրօնը աւելորդապաշտութեան
յարելով բոլորովին կը աճեւանայ: Եւ ինչպէս որ զուտ միւր
մանր մուռն որգերով կ'ապականի, նոյնպէս ընտիր ծէսերը

և կարգերը փցուն արարողութիւններով կ'աւրուին: Աւելորդապաշտութենէ խորշելու համար ուրիշ տեսակ աւելորդապաշտութիւն մըն ալ կար՝ որով զարդիկ կը կարծեն թէ հրաշք կը գործեն՝ եթէ արդէն ընդունուած աւելորդապաշտութենէ անդին անցնին: Հետեւապէս այսպիսի նորոգութիւններու ժամանակ պէտք է զգոյշ լինել որ աղէկը գէշին հետ չի ջնջուի, և այս դէպքը առ հասարակ կը պատահի՝ երբ ժողովուրդը իբր վերանորոգիչ կը կանգնի: Պատճառ

ՀԱՆԳԱՐՏՈՒԹԻՒՆ ՈՎԿԻԱՆՈՒ ՄԷՋՏԵՂ

Արեղահը տասն անգամ իւր շրջանը կատարեց և սակայն հողմը չը հանդարտեցաւ: Վերջապէս հողմը իջաւ և իսկոյն խոր հանդարտութիւն մը անոր յաջորդեց: Հողմը դադարեցին վերջ երկայն ժամանակ տակաւին կը շարժին բուն կերպով յուզուած այիքները: Բայց անզգալապէս իրենց ակօսները կը հարթուին, և անշարժ ծովու մը վերայ՝ նաւը գոզցեալ շղթայուած՝ զինքը շարժող քամի մը օդոց մէջէն անօգուտ տեղը կը փնտռէ: հարիւր անգամ բացուած առագաստը՝ նայնչափ անգամ կրկին կիյնայ կայմերուն վերայ: Զուրը, կրկինքը, անսահման հորիզոն մը, յորում տեսութիւնը ընդունոյն կը թափառի. տարածութեան խորութեան մէջ անդաման և խոր դատարկութիւն մը, յուսութիւնը և անբաւութիւնը կը դիտեն, անաւասիկ զոր ինչ կը ներկայացնէ նաւաստիներուն այս տխուր և աղետաւոր կիսագունդը. վախէն սարսափած և սառած՝ անոնք կը խնդրեն յերկնից մըրբիկներ, փոթորիկներ. և երկնք պղինձի գոյն ստած՝ ծովուն նման՝ ամենուտեք, անոնց կը ներկայացնէ սոսկալի պայծառութիւն մը: Ճերկներ ու գիշերներ կը հոլովին այս չարաբախտ խաղաղութեան մէջ, այն արեգակը, որուն նորածին պայծառութիւնը կը կենդանացնէ և կը զուարթացնէ երկիրը, այն աստղերը, որոնց պայծառ ջահերուն փայլը

կը սիրեն տեսնել նաւաստիք, այն բիւրեղանման մաքուր ջրերը, զոր մենք այնքան հաճոյքով ծովեզրէն կը դիտենք՝ երբոր լոյսը կը ցոլացնէ և երկնակապոյտը կ'անդրադարձնէ. ցաւալի տեսարան մը կը կազմեն, և ամեն բան, որ բնութեան մէջ հանդարտութիւն և ուրախութիւն կը յայտնէ, հոս սոսկում կը ցուցնէ, և մահ կը գուշակէ:

Սակայն սակիքները կը հատնին, զանոնք կը նուազեցնեն, զանոնք կը բաշխեն անհաս ագահ ձեռքով մը: Բնութիւնը, որ կեանքի պատճառներուն, սպառիչքը տեսնէ, անով աւելի անյոյս կը գառնայ. որչափ որ օգնութեան միջոցները կը նուազին, այնչափ պէտքերը կ'աճին: Ուտեցեաց պակասութեան կը յաջորդէ սովը. որ զարհուրելի պատիժ է երկրի վերայ. բայց հազար անգամ աւելի սոսկայի է ջրոց ընդարձակ անդունդներուն վերայ, որովհետեւ երկրի վրայ գոնէ յուսոյ որ և է նշմարանք մը կրնայ խարել վիշտը և զօրացնել քաջասրտութիւնը: Բայց անբաւածայ և անոնչձին ծովու մը մէջտեղ, որ սչնչութիւնով շրջապատուած է՝ մարդը բովանդակ բնութեան յրճման մէջ մտախառ երազ մը անգամ չունի յուսահատութիւնէն ինքզինքը ազատելու համար. անիկայ կը տեսնէ զարհուրելի միջոցը՝ որպէս մի անգունդ, որ զայն կը հեռացնէ ամեն օգնութիւններից. իր մտածութիւնը և իր ուխտերը հոն կը կորսուին. յուսոյ ձայնը անգամ չէ կարող մինչեւ անոր հասնիլ:

Նաւուն վերայ անօթութեան առաջին փորձերը կ'ըզգացուին. վշտից և մոլեգնութեան դառն յաջորդութիւն. յորում կը տեսնէ մարդ թշուառներ, որք նստարաններու վրայ տարածուած կը վերցնեն ձեռքերնին դէպի երկինք սրբապաշարժ ողբերով, կամ կը վազեն կատաղի և շիթած՝ նաւուն առաջակողմէն ի յետակողմ և կը խնդրեն որ գոնէ մահը գայ և իրենց աղէտից վերջ տայ: Մարմօկեղ(*)

(*) Մարմօկեղ ժամ Ֆրանսուա գրագէտ. հեղինակ կարգ մը գործերու, բաւական յաջող արտադրութիւններ ունի, (1723—1799):

ԳԱՂՂՒՌՅ ԿՂԶԻՌՅՆ ՄԵՋ ՓՈԹՈՐԻԿԻ ՄԸ
ՆՇԱՆՆ ՈՒ ՎՆԱՍԸ

Մին այն ամառներէն, որոնք երբեմն երբեմն աւերակ կը դարձնեն արեւադարձներու մէջ գտնուած երկիրները, կը տարածէ հոս իր աւերումները: Գեկտեմբերի դէպի վերջըն էր երբոր արեգակը Այծեղջեր մէջ կը տաքցնէ պէտզալ երեք շաբաթներ Գաղղիոյ կղզին իւր ուղղահայեաց ճառագայթներով: Հարաւային արեւելեան հովը, որ հոն կը տիրէ գրեթէ ամբողջ ամառը, այլեւս չէր չնչեր: Փոշիի մեծ մըրքիկներ կը բարձրանային ճանապարհի վրայ օդի մէջ կախուած: Հովը ամենուրեք կը պատուէր, խոտը այրած էր, լերանց կողէն տաք գոյորչիներ կը բարձրանային, և իրենց գետակներէն շատեր ցամաքած էին: Ծովուն կողմէն ո՛չ մէկ հողմ չէր դար: Միմիայն օրուան միջոցին կարմրագոյն գոյորչիներ կը բարձրանային ծովուն երեսէն և մայրամուտի ժամանակ կ'երեւէին հրդեհի մը բոցերուն նման, Գիշերն անգամ չէր բերեր ոչ մէկ զովութիւն տաք օդին: Լուսնոյ գունտը բոլորովին կարմիր՝ կը բարձրանար միզապատ հորիզոնի մը մէջ չափազանց մեծութեամբ մը: Ոչխարաց հօտը բլուրներուն կողերուն վրայ գետին տապալած, վիզը երկնցուցած գէպի երկինք՝ օդը չնչելով և տխուր մայիւններով ձորակները կը հնչեցնէր: Նոյն իսկ Քաֆրաստանցին, որ անոնց կ'առաջնորդէր, հողին վրայ կը պառկէր, անկէ զովութիւն գտնելու համար: Ամենուրեք հողը բռնկած էր, և հեղձուցիչ օդը կը հնչէր միջատներու բզզումներէն, որոնք կը ջանային կենդանեաց և մարդկանց արիւնով իրենց ծարաւը անցնել:

Սակայն այս չափազանց տաքութիւնները Ովկիանոսէն շոգիներ բարձրացուցին, որոնք կղզին ծածկեցին ահագին

հովանոցի մը նման: Լերանց գագաթները կը ժողուէին դանոնք իրենց շուրջը և բոցի երկայն հետքեր ժամանակ ժամանակ կ'ելլէին իրենց մշուշապատ գագաթներէն: Իսկ սոսկայի որոտումներ իրենց պայթումներով հնչեցուցին անտառները, դաշտերն ու հովիտները. սաստիկ անձրևներ ջրվէժներու նման ինկան յերկնից: Փրփրալից հեղեղներ գահավիժեցան լերան կողերու երկայնքէն: Սոյն լեռնադաշտի գետինը դարձած էր մի ծով. սարահարթը, ուր խրճիթները կը գտնուէին, եղած էր մի կղզի փոքրիկ, և այն հովիտին մուտքը, սահանքի մը դուռը, ուսկից դուրս կ'ելնէին խառնափնդոր մոնչող ջուրերուն հետ հողերը, ծառերը և ապառաժները: Իրիկուան վրայ անձրևը գաղբեցաւ. հարաւային արեւելեան կանոնաւոր քամին իւր սովորական ընթացքը սկսաւ. մրրկոտ ամպերը քաշուեցան դէպի հիւսիսային արեւմուտք և մարը մտնելու վրայ եզոզ արեգակը երեւցաւ հորիզոնին վրայ:

Պերնարսէն ջը Սէն Բիէր (Պօզ եւ Վլորգինկ) (*)

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵՋ ՄԵՆՆՈՂՆԵՐՈՒ ՎՐԱՅ
ԿԱՏԱՐՈՒԱԾ ԳԱՏԱՍՏԱՆ

Թաղման վայրը հասնելու համար պէտք էր անցնիլ լիճ մը, որ անդ կը գտնուէր. այս լճին եզերքը կը կեցնէին մեռեալը. «Ով ոք ալ ըլլաս, տո՛ւր հայրենեաց քու գործօցդ հաշիւը: Ի՞նչ ըրած ունիս կեանքիդ ընթացքին: Օրէնքը զքեզ կը հարցաքննէ, հայրենիքը քեզ մտիկ կ'ընէ. ճշմարտութիւնը զքեզ կը դատէ:» Յայնժամ նա ատենին առջև կ'երեւնար տառնց տխորոսի և առանց իշխանութեան, միա-

(*) Պերնարսէն տը Սէն Բիէր (Ժան Հանրի) մատենագիր եւ քննապաշտ. հեղինակ շատ մը գործերու. ֆրանսական գրականութեան մէջ մըտուցած է քննութեան ճաշակը (1737 1814):

ԳԱՂՂՒՈՑ ԿՂԶԻՈՑՆ ՄԷՋ ՓՈԹՈՐԻԿԻ ՄԸ
ՆՇԱՆՆ ՈՒ ՎՆԱՍՐ

Մին այն ամառներէն, որոնք երբեմն երբեմն աւերակ կը դարձնեն արեւադարձներու մէջ գտնուած երկիրները, կը տարածէ հոս իր աւերումները: Գեկտեմբերի դէպի վերջըն էր երբոր արեգակը Այծեղջեր մէջ կը տաքցնէ պէրողջ երեք շաբաթներ Գաղղիոյ կղզին իւր ուղղահայեաց ճառագայթներով: Հարաւային արեւելեան հովը, որ հոն կը տիրէ գրեթէ ամբողջ ամառը, այլեւս չէր չնչեր: Փոշիի մեծ մըրքիկներ կը բարձրանային ճանապարհի վրայ օդի մէջ կախուած: Հովը ամենուրեք կը պատուէր, խտաը այրած էր, լերանց կողէն տաք գոյորչիներ կը բարձրանային, և իրենց գետակներէն շատեր ցամաքած էին: Ծովուն կողմէն ո՛չ մէկ հողմ չէր գար: Միմիայն օրուան միջոցին կարմրագոյն գոյորչիներ կը բարձրանային ծովուն երեսէն և մայրամուտի ժամանակ կ'երեւէին հրդեհի մը բոցերուն նման, Գիշերն անգամ չէր բերեր ոչ մէկ զովութիւն տաք օդին: Լուսնոյ գունտը բոլորովին կարմիր կը բարձրանար միգապատ հորիզոնի մը մէջ չափազանց մեծութեամբ մը: Ոչխարաց հօտը բլուրներուն կողերուն վրայ գետին տապալած, վիզը երկնցուցած դէպի երկինք՝ օդը շնչելով և տխուր մայրեններով ձորակները կը հնչեցնէր: Նոյն իսկ Քաֆրատտանցին, որ անոնց կ'առաջնորդէր, հողին վրայ կը պառկէր, անկէ զովութիւն գտնելու համար: Ամենուրեք հողը բռնկած էր, և հեղձուցիչ օդը կը հնչէր միջատներու բզզումներէն, որոնք կը ջանային կենդանեաց և մարդկանց արիւնով իրենց ծարաւը անցնել:

Սակայն այս չափազանց տաքութիւնները Ովկիանոսէն շոգիներ բարձրացցին, որոնք կղզին ծածկեցին ահագին

հովանոցի մը նման: Լերանց զազաթները կը ժողուէին գանոնք իրենց շուրջը և բոցի երկայն հետքեր ժամանակ ժամանակ կ'եւլէին իրենց մշուշապատ գազաթներէն: Իսկ սուկայի որոտումներ իրենց պայթումներով հնչեցուցին անտաները, դաշտերն ու հովիտները. սաստիկ անձրևներ ջրվէժներու նման ինկան յերկնից: Փրփրայից հեղեղներ գահավիժեցան լերան կողերու երկայնքէն: Սոյն լեռնադաշտի գետինը դարձած էր մի ծով. սարահարթը, ուր խրճիթները կը գտնուէին, եղած էր մի կղզի փոքրիկ, և այն հովիտին մուտքը, սահանքի մը դուռը. ուսկից զուրս կ'եւնէին խառնափնդոր մանչող ջուրերուն հետ հողերը, ծառերը և սպառաժները: Իրիկուան վրայ անձրևը գաղբեցաւ. հարաւային արեւելեան կանոնաւոր քամին իւր սովորական ընթացքը սկսաւ. մրրկոտ ամպերը քաշուեցան դէպի հիւսիսային արեւմուտք և մարը մտնելու վրայ կողով արեգակը երեւցաւ հորիզոնին վրայ:

Պերնարսեկն ջը Սեկն Բիէր (Պօզ եւ Վիրգիկն) (*)

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ՄԵՌՆՈՂՆԵՐՈՒ ՎՐԱՑ
ԿԱՏԱՐՈՒԱԾ ԳԱՏԱՍԱՆ

Թաղման վայրը հասնելու համար պէտք էր անցնիլ լիճ մը, որ անդ կը գտնուէր. այս լճին եզերքը կը կեցնէին մեռեալը. «Ով ոք ալ ըլլաս, տո՛ւր հայրենեաց քու գործոցդ հաշիւը: Ի՞նչ ըրած ունիս կեանքիդ ընթացքին: Օրէնքը զքեզ կը հարցաքննէ, հայրենիքը քեզ մտիկ կ'ընէ. ճշմարտութիւնը զքեզ կը գատէ:» Յայնժամ նա ատենին առջև կ'երեւնար առանց տխորոսի և առանց իշխանութեան, մնա-

(*) Պերնարսեկն տը Սէն Բիէր (Ժան Հանրի) մատենագիր եւ քննապաշտ. հեղինակ շատ մը գործերու. Ֆրանսական գրականութեան մէջ մըտցուցած է բնութեան ճաշակը (1737 1814):

ցած ինքնին, և իբրև ուղեկից և օգնական ունէր իւր առաքինութիւնները կամ իւր յանցանքները: Անդ յայտնի եղան ծածուկ սճիրները և անոնք, զորս քարի համբաւը կամ մեռեալին իշխանութիւնը ապականած էին: իւր շրջանին կուգար դատապարտել զրպարտիչը. և կրկին պահանջել պատիւը. որ անկէ հանուած էր: Օրէնքները բնաւ չարձող յանցաւոր ցուցուած քաղաքացին կը դատապարտուէր. պատիժն էր վատահամբաւութիւնը. բայց առաքինի քաղաքացին կը վարձատրուէր հասարակաց գովեստով. զայն արտասանելու պատիւը կը վերապահուէր ազգականաց, ընտանիքը հոն կը խմբէին, մանուկները կուգային առաքինութեան դասեր ընդունելու՝ լսելով իրենց հօրը նկատմամբ եղած գովեստը: Ժողովուրդը խմբովին հոն կը գիմէր. ատենակալը կը նախագահէր: Յայնժամ մարդը կը հռչակէին արգարձ իւր մարմնոյն նայելով կը յիշէին տեղերը, վայրկեանները և օրերը, յորս ըրած էր առաքինական դորձեր, շնորհակայ կը լինէին այն ամեն բանին համար, որով ծառայած էր հայրենեաց և մարդկութեան: իւր օրինակը կը դնէին անոնց առջև, որոնք պիտի սպրէին և մեռնէին: Ատենաբանը կը վերջացնէր՝ մեռելոց ահաւոր աստուածը անոր օգնութեան կանչելով, և զայն յանձնելով՝ Աստուածութեան, կ'ազաչէր անոր, որպէս զի չը լքանէ զնա այն մութ և անձանօթ աշխարհին մէջ, ուր անիկա նոր կը մտնէր: Վերջապէս անորմէ յաւիտեանս բաժնուելու ժամանակ, անոր կ'ըսէին՝ իւրաքանչիւրին և ժողովրդեան համար երկար և յախտենական մնաք բարեւաւ: Այս ամենը միատեղ, մանաւանդ խիստ և ծանրաբարոյ ազգի մը քով հարկ էր ազդեցութիւն ընել խոր կերպով՝ ներշնչելու համար բարոյականի և կրօնի յարգելի գաղափարները:

Կարելի չէ կասկածիլ, որ այս գովեստները դեռ չը շրջապատուած և չապականած՝ չունենան զօրաւոր տպաւորութիւն մը հոգիներուն վրայ: Անոնց ձեւակերպութիւնը շատ կը նմանէր մեր դամբանականներուն. բայց նշանաւոր ասար-

բերութիւն մը կայ, այն է որ շնորհուած էին անոնք առաքինութեան և ո՛չ թէ աստիճանին: Երկրագործը և արհեստաւորը միեւնոյն իրաւունքը ունէին, ինչ որ ունէր գերագոյն իշխանը (կամ թագաւորը): Դատարկ արարողութիւն մը չէր այս բնաւ. յորում ատենաբան մը՝ զոր ոչ ոք կը հաւատար, կը խօսէր առաքինութեան վրայ, զոր չէր հաւատար նոյն իսկ ինքն ալ կը ջանար գովել վայրկեան մը զայն, որ երբեմն իրեն և հասարակաց անարդանաց առարկայ էր, և գիղելով ներդաշնակութեամբ վարձկանի մը յատուկ եղող սոսիսութիւնները՝ սաստիկ կը գովէր մեռեալները երկաբօրէն՝ ինքզինքը դոված ըլլալու համար: Յայնժամ չէին գովեր. զօրավարի մը մարդասիրութիւնը որ եթէ եղած էր անգութ. ատենակալի մը անշահասիրութիւնը, որ եթէ օրէնքները վաճառած էր. ամեն ինչ էր պարզ և ճշմարիտ: Ինչպէս որ էին հասարակութիւնք, և անոնք չէին գովուեր՝ մինչև որ չունենային արժանաւորութիւն: Արգար է որ գերեզմանը ըլլայ պատուար մը իշխանին և շողքորդութեան մէջտեղ, և ճշմարտութիւնը սկսի հոն ո՛ւր իշխանութիւնը կը դադարի: Մենք գիտենք ի պատմութենէ որ եգիպտոսի շատ մը թագաւորները, որոնք ոտնակոխ ըրած էին իրենց ժողովուրդները այս ահագին բուրգերը բարձրացնելու համար, օրէնքէն դատապարտուեցան, և զրկուեցան գերեզման ներէն, զորս նոյն իսկ անոնք կանգնած էին:

Երեք հազար տարիներէ ի վեր այս սովորութիւնները այլեւս գոյութիւն չունին, և աշխարհի ո՛չ մէկ երկրին մէջ չըկան ատենակալներ հաստատուած թագաւորաց կեանքը դատելու համար, բայց համբաւը կ'ընէր այս ատենին պաշտօնը խիստ սոսկալի. որովհետև կարելի չէ զայն խանգարել կաշառովնա կը սահմանէ վճիռները, ապագայ սերունդը անոնց կը լսէ և պատմութիւնը կը գրէ զանոնք:

Թումաս (Ճառ ի վերայ գովեստի)(*)

(*) Թումաս (Անթուան Լէսնարտ) գրագետ, նշանաւոր է իր «Ճառ ի վերայ գովեստի»-ը. որմէ թարգմանուած է վերոյիշեալ հատուածը (1732 1785):

ԳԵՏՆԱԴԱՄԲԱՆՆԵՐԸ

Օրին մէկը գնացած էի այցելելու համար էքէրեան աղբիւրը, գիշերը յանկարծ վրայ հասաւ Աբիէնի ճանապարհը գտնելու համար ուղղուեցայ վայելչութեան և մեծութեան կողմանէ գլուխ գործոց եզոզ դէպ 'ի գերեզմանն Սէսիլիա Մէթէլլայի Երեսի վրայ թողուած գաշտերէ անցնելով նշմարեցի շատ մը անձեր, որք զգուշութեամբ ստուերի մէջ կը սահէին, և բոլորն ալ միեւնոյն տեղոյ մէջ կենալով յանկարծուստ անհետ կը լինէին: Հետաքրքրութենէ մղուած՝ կը յառաջանամ և կը մտնեմ համարձակորէն քարանձաւին մէջ, ուր ընկզմած էին խորհրդաւոր ուրուականները: Տեսայ ստորերկրեայ սրահներ, որք կ'երկարաձգուէին իմ առջեւ, զորս հազիւ կը լուսաւորէին 'ի հետուստ քանի մը կախուած լապտերներ: Գերեզմանական անցքերու պատերուն յմէջ երեք կարգ դաղաղներ կային՝ զետեղուած մէկզմէկու վերայ, լապտերներու տխուր լոյսը կամարներու ներքին երեսներուն վրայ տարածուելով և գերեզմանաց երկայնքին վրայ դանդաղութեամբ յառաջանալով դարհուրելի շարժականութիւն մը կը ծաւալէր այս յաւիտենապէս անշարժ առարկայից վրայ:

Ի զո՛ւր մտաղիւր ականջ գնելով՝ կը փնտռեմ որ և իցէ ձայն մը առնուլ՝ երթալու համար լուսութեան անդունդի մը մէջէն, չեմ լսեր, եթէ ոչ՝ իմ սրտիս զարնուածքը այս տեղերու բացարձակ խաղաղութեան մէջ: Ուզեցի յետս դառնալ, բայց կարելի չ'էր. սխալ ճանապարհ մը բռնեցի, և փոխանակ լարիւրինթոսէն դուրս ելնելու, անդ ընկզմեցայ: Նոր ճանապարհներ, որք կը բացուէին և զիրար կը կորէին ամեն կողմերէն, իւրաքանչիւր վայրկեան կը յաւելուն իմ

կասկածներս: Որչափ կը ջանամ ճանապարհ մը գտնել, այնչափ կը մոլորիմ, մերթ կը յառաջանամ դանդաղութեամբ, մերթ կ'երթամ արագութեամբ: Յայնժամ արձագանգներու տպաւորութեամբ մը, որք կը կրկնէին իմ քայլերու ձայնը, կը կարծէի լսել իմ հտեւէս աճապարանօք մարդկանց քալելը:

Երկար ժամանակ անցեր էր արդէն, որ այսպէս կը թափառէի, իմ զօրութիւններս կ'սկսէին սպառիլ. մեռելոց քաղսքին անբնակ մի ճանապարհին բերանը նստեցայ, անհանգստութեամբ կը նկատէի յապտերաց լոյսը գողցես սպառած, որ մօտ էր մարելու: Յանկարծ ներդաշնակութիւն մը, նման երկնային հոյիներու հեռաւոր խմբերգութեան, այս գերեզմանական ընակարանաց խորէն դուրս ելաւ. այս երկնային ձայները կը վերջանային և նորէն կը լսուէին փոփոխակի՝ կը թուէին մեղմանալ տակաւ ստորերկրեայ օձապոսոյ ճանապարհներուն մէջ կորսուելով. կ'երլեմ և կը յառաջանամ դէպի այն վայրերը, ուսկից կը լսուին մոզական ներդաշնակութիւնները, կը գտնեմ մի սրահ լուսաւորեալ: Ծաղկազարդ գերեզմանի մը վրայ՝ Մարտըլէն կը մօտէք քրիստոնէական խորհուրդը. երիտասարդ օրիորդներ ճերմակ քղերթով ծածկուած՝ կ'երգէին յոսս սեղանոյն: Բնդմաթիւ ժողովարդ ներկայ կը գտնուէր պատարագին: Ճանաչեցի դեռնագամբանները:

Շարքուրիան (մարտիրոսները) (*)

(*) Շարքուրիան (գերիլմա) նշանաւոր գրագէտ հեղինակ «Քրիստոնէութեան Ոգի»ի, «Մարտիրոսներու» եւն. ունի պայծառ ոմ, վառ երեւակայութիւն եւ զգայնոտութիւն (1768—1848):



Անգլ. Եպս. ՄՕՏԱՖՆԵՅԻՐ ՄԱՔԻՆՆԵՅԻՄ, Յուձաց Տ. ՂԱՄԻԱՆՆԻՄ Ս. Պատկաթք, ԵՂԻՃԷ ԵՊՍ. ՉԻԼԻՆԳԻՐՅԱՆ, Ասորոց Անգլ. Տ. ԻԼԻԱՍ ԵՊՍ., Ղպուռց Փոխանորդ Տ. ՀԱՆՆԷ՛ ՎՐԻՊ., Հապէշաց Տեսուչ, Ամերիկեան Հիւպատոս ԵՊ. 1919ին Երուսաղէմի մէջ Անգլիացոց Սէն Ճորճ Եկեղեցոյ դրան առջեւ

ՓԵՐՈՒՅԻ Մէջ ՄՐՐԻԿԸ ԵՒ ՕՉԵՐՈՒ ԲԱՐԱՆՁԱԻԸ

Խոր մտնչիւն մը կուտայ կուտոյ նշանը, զոր հազմունք կը հրատարակեն: Յանկարծ իրենց մտնչութիւնը կը յայտնուի զարհուրելի սուլումներով: Թանձր մթութիւն մը կը պատէ զերկին և զայն երկրի հետ կը խառնէ. կայծակը այս խաւարային քողը պատուելով՝ անոր մթութիւնը կը վերակրկնէ տակաւին. հարիւր որոտումներ, որք կ'որոտան և կը թուի արձագանգ տալ լերանց շղթայի մը վրայ, մէկը՝ մէկ փոխանակելով՝ մտնչիւն մը կը կազմեն, որ կը ցածնայ և կ'ուռի նման ծովու ալեաց: Յնցումները, զոր լուր կ'ընդունի հողմերէն և որոտումէն, կը շարժի, կը պատռի, և իր կողերէն ստակալի ազմակով մը արագանոս հեղեղներ կը թափին: Անատունները զարհուրած անտառներէն կը վազէին դաշտին մէջ, և կայծակին լուսով երեք տօգոյն ճանապարհորդները կը տեսնէին իրենց մօտէն անցնիլը առիւծին, վագրին, (սրատես կենդանի մը) ընձառիւծին, որք սարսափով պաշարուած էին ճանապարհորդներու նման, բընութեան այս ընդհանրական տագնապին մէջ: ուր այլևս կատաղութիւն չկայ, և երկիւղը ամենքն ալ մեղմացուցած է:

Ալօնգօի առաջնորդներէն մին իւր սարսափին մէջ զրուած էր ապառաժի մը գազաթը: Հեզեզ մը, որ կը գահալիժէ, ցատկելով զայն տեղէն կը հանէ և կը քչէ կը տանի, և վայրենին. որ զայն կը գրկէր՝ անոր հետ կը գլուտորի ալեաց մէջ: Միւս ամերիկացին կը կարծէր գառած լինել իւր փրկութիւնը ծառի մը խոռոչին մէջ, բայց բոցի սիւն մը, որուն ծայրը ամպին կը կցուի, ծառին վերայ կ'իջնէ և զայն կը մրկէ զժբախտին հետ, որ հոն ապաւինած էր:

Սակայն Մօլինա ամեն հնարք 'ի գործ կը գնէր ջրոց բոնութեան դէմ, ան աշխատելով կ'ելնէր խաւարին մէջ՝ փո-

փոխակի ձևը ձգելով ծառերու ոստերն ու արմատները, որոնց կը հանդիպէր, առանց մտածելու իւր առաջնորդներուն վրայ, առանց ունենալու ուրիշ զգացում, միայն իւր անձին յատուկ կենաց հոգը, որովհետեւ սարսափի վայրկեաններ կան, յորում ամեն կարեկցութիւն կը դադրի, յորում մարդը՝ իւր խնկ անձով միմիայն իրեն համարզադած է:

Վերջապէս սողալով կը հասնի դէպ ՚ի վեր ցցուած ապստամբի մը ստորտը, և քաղաքներու լուսով՝ այր մը կը տեսնէ, որուն խորութիւնն ու խաւարային սարսափը զայն պիտի ստեղծէր՝ եթէ երբէք պատահէր ուրիշ ժամանակ մը: Կիտամուս և յոգնութենէն ուժաթափ՝ ձգեց ինքզինքը այն քարայրին մէջ, և հոն շնորհակալութիւն մատուցանելով Երկնից՝ ինկաւ թմրութեան մէջ:

Մորիկը վերջապէս կը ցածնայ, որսուսները, հողմունք լեռը շարժելէ կը դադրին. հեղեղներու ջրերը՝ նուազ սրբնութաց՝ այլևս չեն մանչեր չորս կողմէ, և Մօլինա կ'զգայ իր երակաց մէջ վազքը քնոյ լալտասնին: Բայց մրբիկներէն աւելի սոսկալի աղմուկ մը ակունջին կը զարնէ այն վայրկեանին, յորում պիտի քնանար:

Այս աղմուկը՝ նման կայծքարերու իրարու դարնուելուն՝ շատ մը օձերու ձայնն էր. որոնց ազատանարանն է քարայրը: Կամարը անոնցմով ծածկուած է, և անոնք մէկզմէկու փաթթուած՝ իրենց շարժման միջոցին կ'ընեն այս աղմուկը, զոր Ալօնգօ կը ճանաչէր: Ան գիտէ որ այս օձերու թոյնը՝ թոյներու ամենաստատիկն է, որ չուտով մը կ'այրէ, և բոլոր երակաց մէջ կրակ մը կը թողու որ կը լայնէ և կը փճացնէ ամենասոսկալի ցուերու մէջտեղ այն դժբախտը, որ զարնուած է անկէ: Անոնց ձայնը կը լսէ. կը կարծէ թէ անոնք կը սողան իր շուրջը կամ կախուած են իր գլխիտն վրայ կամ իրարու վրայ կը կտրուին և պատրաստ են յարձակելու: Իր արդէն սպասած ոյժը կ'ընկճի. իր արիւնը կը սասի զարհուրանքէն. հագիւ կը համարձակի շունչ առնել: Եթէ ուզէ սողալով քարայրէն դուրս ելլել ծածուկ

կերպով և քալել զգուշութիւնով, կը դողայ թէ մի գուցէ վտանգաւոր սողուններէն մին սեղմէ զինքը: Լեղապատառ, սարսուհար, անշարժ, բիւր մաներով պաշարուած՝ ամենաերկայն գիշերը կ'անցնէ տաժանելի հոգեվարքի մը մէջ, փափաքելով և վախճալով յոյս տեսնելու. մեղադրելով երկիւղը, որ զայն արգիլած կը պահէ, և իրեն վրայ անօգուտ ջանքեր ընելով՝ այս տկարութեան յաղթելու համար:

Օրը, որ եկաւ լուսաւորեց զայն, անոր սարսափը արդարացուց: Ան տեսաւ իրապէս բոլոր վտանգը, զոր նախազգացած էր զայն տեսաւ դեռ աւելի սոսկալի Հարկ էր մեռնիլ կամ ազատիլ: Մեծ աշխատութեամբ կը ժողովէ քիչ մը զօրութիւն, որ կը մնար իրեն, դանդաղութեամբ կ'ելլէ, կը ձուի, և ձեռքերը դողող ծունկերուն լեցուցած՝ քարայրէն դուրս կ'ելլէ տկար և տժգոյն իր գերեզմանէն ելլող ուրուականի մը նման: Նոյն փոթորիկը, որ զայն ձգած էր վտանգի մէջ, անկէ պահպանեց, որովհետեւ օձերն ալ անոր նման սարսափած էին փոթորկէն. և այս ազդեցութիւնը բոլոր կենդանիներուն հարկ է՝ վնասակար ըլլալէ դադրել երբ որ վտանգը կը պաշարէ զիրենք:

Պայծառ օր մը կը միթիթարէր ընութիւնը գիշերուան աւերուսներէն, Երկիրը՝ որպէս թէ ազատած մի նաւաբեկութենէ՝ ամենուրեք կը ներկայացնէր աւերածներ: Անտառներ, որոնք նախորդ օրը, մինչեւ յամպս կը բարձրանային, խոնարհած էին յերկիր, ուրիշ ծառեր կը թուէին դեռ տնկուած մնալ սոսկումէ: Բլուրներ, զոր Ալօնգօ սասած էր բոլորուած իրենց կանաչագարդ զարդարանքին տակ, բացուած գահավէժի նման, անոր ցոյց կուտային իրենց պատառեալ կողերը: Հինաւուրց ծառեր՝ արմատաքի խլուած՝ լերանց բարձունքէն վար ինկած, շոճին, արմաւենին, գաւակենին (փէյղամպէր աղածը) եղելինը տարածուած, գաշաին մէջ ցրուած, զայն կը ծածկէին իրենց խորտակեալ կոճղերով և իրենց ջախջախուած ոտերով: Ապառաժներու ցցուած կտորներ՝ ցոյց կուտային հե-

ղեղներու տեղը, իրենց խոր փոսը լեցուած էր կատաղի, երկչոտ, անգութ և հեզ կենդանեաց սոսկալի թուով մը: որոնք խղրուած և ջուրերէն դուրս ձգուած էին:

Սակայն այս անցած ջուրերը կը թողէին անտառները և դաշտերը՝ ծագող օրուան յուսովը կենդանանալու համար: Գողցեա երկինք կը թուէր երկրի հետ խաղաղութիւն ըրած լինիլ և ժմտիլ անոր սիրոյ և շնորհաց նշանաւ: Ամեն բան որ տակաւին կը շնչէր, կ'սկսէր վաշխել կեանքը. թոչունք, վայրի անասունք մոռցած էին իրենց վախը. որովհետեւ աղէտից արագ մոռացուեց պարգեւ մըն է, զոր բնութիւնը անոնց տուած է և զոր զլացած է մարդկանց:

Մարտնեքեղ

Ա. Թ. Է. Ն. Ք. Ի. Ժ. Ա. Ն. Տ. Ա. Խ. Տ. Ը.

Երբէք այս սոսկալի պատիժը չապականեց այնքան կլիմաներ, որքան Եթովպիայէն Եգիպտոս, Լիբիա, Պարսկաստանի մէկ մասը, Լիմնոս կղզին և դեռ ուրիշ տեղեր: Վաճառականական նաւ մը զայն մոցուց անշուշտ Փիլիքայի մէջ, ուր յայտնուեցաւ ան առաջին անգամ. անկէ տարածուեցաւ սաստկութեամբ քաղաքին մէջ, և մանաւանդ այն անշուք և վատաբողջ բնակութեանց մէջ, ուր դաշտի ժողովուրդը խռնուած կը գտնուէին:

Չարիքը կը յարձակէր բոլոր մարմնոյն վրայ յաշորդաբար. ախտանշանք սոսկալի էին, յառաջախաղացութիւնը արագրնթաց, ելքերը գրեթէ միշտ մահացու: Առաջին հարուածներէն ի վեր հոգին կը կորուստնէր իր զօրութիւնները, մարմինը կը թուէր նոր զօրութիւններ զգնուել. և հիւանդութեան զիմազբելը էր սոսկալի տանջանք մը, առանց կարողանալ զիմազբելու ցաւին: Քնատութիւնք, սարսափք, իրարու վրայ եկած հեծեծանքներ, զարհուրելի ջղաձգտութիւնք չէին միայն հիւանդներուն վերապահուած տանջանք:

ները: Այրող տաքութիւն մը զանոնք կը լափէր ի ներքուստ: Կապուեցած բիծերով և կեղերով ծածկուած՝ այլքերը բորբոքած, կուրծքը նեղուած, աղիքները կտոր կտոր եղած, գարշելի հոտ մը արձակելով իրենց բէրնէն, որ շողախուած էր աղսեղի արիւնով մը, կը տեսնուէին անոնք քաշքշուելով ձգուած փողոցներուն մէջ, որպէս զի աւելի ազատ շունչ առնեն, և չկարողանալով մարել բորբոքեալ ծարուր, յարմէ նուազած էին, կ'իյնային սառնակոյտերով լի գետակներուն կամ ջրհորներուն մէջ:

Շատերը կը մեռնէին եօթներորդ կամ իններորդ օրը: Եթէ անոնք երկարածոյէին իրենց կեանքը այս սահմաններէն անդին՝ կը պարտաւորէին կրել մահ մը աւելի ցաւալի և աւելի ծանր:

Անոնք որ հիւանդութենէն չէին մեռնիր, երկրորդ անգամ գրեթէ նոյն հիւանդութենէն չէին բնուիր: Նուաճ միսիթարութիւն, որովհետեւ անոնք աչքի կը ներկայացնէին միայն դժբախտ ոսկրներ իրենց անձերէն: Մի քանիսը կտրուած էին իրենց անգամոց շատերուն գործածութիւնը, սառնք չէին կարող պահել անցեալի ո՛չ մէկ յիշատակ. երջանիկի էին անտարակոյ, որոնք չէին ճանաչեր իրենց միճակը, բայց անոնք չէին կարող ճանաչել իրենց բարեկամները:

Միեւնոյն պարմանը յոռաջ կը բերեր արդիւնքներ՝ փոփոխակի. փրկարար և վըտտակար, հիւանդութիւնը կը թուէր արձամարտելի փորձառութեան կանոնները: Որովհետեւ կ'ապականէր այն նաեւ Պարսկաստանի շատ մը նահանգները, Արտաշէս թագաւորը որոշեց կոչել յօգնութիւն իրենց անուանին Հիպոկրատը, որ կը գտնուէր յայնժամ Քիոս կղզին, անոր աչքերուն շողջղացուց ոսկի և մեծ պատիւներ. բայց տաղանդաւոր մարդը պատասխանեց մեծ թագաւորին, թէ չունէր ո՛չ կարօտութիւն, ո՛չ բաղձանք և թէ ինքը կը պարտէր աւելի Յունաց քան թէ անոնց թշնամեաց: Յետոյ եկաւ իր ծառայութիւնները մատուցանել Աթենացուց, որք զայն ընդունեցին այնչափ երախտագիտութեամբ, որովհետեւ

իրենց բժիշկներէն շատերը զո՛հ եղած էին իրենց ետանդին . նա ի գործ դրաւ իւր արհեստին ամեն հնարքները և շատ անգամ վտանգի մէջ զրաւ իւր կեանքը : Եթէ անիկայ ձեռք չբերաւ բոլորովին յաջողութիւնը, որուն արժանի կ'ընէին այնչափ գեղեցիկ զո՛հեր և այնչափ մեծ տաղանդներ, գոնէ յոյսեր և մխիթարութիւններ տուաւ : Կ'ըսուի որ օգը մաքրելու համար անիկայ կրակ վառել տուաւ Աթէնքի փողոցներուն մէջ . ուրիշներ կը հաստատեն թէ այս միջոցը ի գործ դրուեցաւ յաջողութիւնով մը Ակրեժանոցի բժշկէ մը Ագրօն անունով :

Տեսնուեցաւ սկզբնաւորութեանց մէջ՝ վեհանձն բարեկաւութեան սրղիսկան սիրոյ մեծ օրինակներ, բայց որովհետեւ անոնք եզան միշտ ձախորդ իրենց հեղինակներուն, միայն քիչ անգամ նորոգուեցան շարունակութեան մէջ : Յայնժամ ամենապատկառելի կապերը խորտակուեցան . աչկունք՝ մերձ ի փակել՝ տեսան միայն խորին սուսնձնութիւն մը և մահը այլևս չնսեցուց արցունքներ :

Այս խստորտութիւնը յառաջ բերաւ անսանձ անկարգութիւն մը : Այսչափ բարի մարդկանց կորուստը՝ խառնուած եղեռնագործներու հետ միեւնոյն գերեզմանի մը մէջ, այնչափ ստացուածոց կործանումը յանկարծ բաժին և որս եղած ամենաաննշան քաղաքացւոց, սաստիկ կերպով անոնց վրայ ազդեցութիւն ի գործ գրին որ ուրիշ կանոն չունին երկիւղէն գտաւ : Համոզուած թէ աստուածք այլևս հետաքրքրութիւն չունէին առաքինութեան համար, և թէ օրինաց վրէժխնդրութիւնը մահուանէն աւելի արագընթաց չի պիտի լինէր, որուն մօտ էին, հաւատացին թէ մարդկային գործոց անհաստատութիւնը իրենց կը յայտնէր գործածութիւնը, զոր նոքա պիտի ընէին, և թէ քանի մը վայրկեան ունենալով ապրելու համար պէտք կը տեսնէին զոնէ անցընել զոնանք հաճոյից մէջ :

Երկու տարիէն վերջ ժանտախտը հանդարտեցաւ : Այս հանդարտութեան միջոցին, շատ անգամ նշմարուեցաւ որ

ախտին ծիրը շնչուած չէր . տասնուութ ամիս յետոյ տարածուեցաւ, և ամբողջ մէկ տարուան ընթացքի մէջ կրկին յառաջ բերաւ սարսափի և սոգոյ միեւնոյն տեսարանները : Միեւնոյն ժամանակաց մէջ միւսան . բազմաթիւ քաղաքացիներ որոնց մէջ պէտք է հաշուել հինգ հազար մարդ զէնք կրելու վիճակին մէջ : Ամենէն անդարմանելի կորուստը եղաւ Պէլիկէսի կորուստը որ պատերազմի երրորդ տարին հիւանդութեան հետեւանքով մեռաւ :

Պարթեզիս. Ուղեւորութիւն Ամսթամբուայ (*)

ՄԱՐԿԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷԿ ՄԵԾ
ԳՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ընկերային աշխարհը բռնաւոր եւ նեղգաւոր հսկայ մ'է, եւ իր զէնքերն են նախապաշարու մերու օրինակիրը եւ պատրաստաց արձանագրութիւն մը :

ԼԸ ՎԻԳՕՆԹ ՏԱՐՎԷՆԳՈՒԲ.

Ընկերային աշխարհը ընդարձակ գործարան մ'է, որուն այլանդակ ձեւերը դեռ անոր անկատարութիւնը կը հաստատեն : Հաւասարակշռութեան բարձրագոյն օրէնքին վրայ կը կրթնի այս աշխարհքս, որուն մէկ կողմն է այն հրաբուրդ խը, ուրիշ գուրս նետուեցան մարդիկ և միւս կողմն ալ վիհ վը, ուր կը գլորին մարգիկ անյարիւր : Հաւասարակշռութեան մէկ կողմը գրուած են նախապաշարումները, միւս կողմն ալ սկզբունքները, այսինքն տեսակ մը կշիռներ, որոնցմով թագաւորք կը բարձրանան և մարդիկ կը խոնարհին :

Այս աշխարհս կը գոտնայ և կը շարժի առանցքի մը

(*) Նշանաւոր գրագէտ. գրած է երիտասարդ Անաքարսեայի ուղեւորութիւնը ի Յունաստան 1779ին . այս գործը այն ատեն մեծ հռչակ հանած է : (1716—1795) :

վրայ, զոր կ'անուանենք ստակ. այս առանցքը անցած է աշխարհիս մէջտեղէն, և իր երկու ծայրերը կամ բեւեռներն են շահր և սնափառութիւնը, որք ընկերական կարգաւորութեան երկու ամենագորաւոր շարժառիթներն են: Հարկաւորութիւնը միջօրէական շրջանն է, զոր համամտութեամբ ընտարած ենք համրելու համար այն աստիճաններու թիւը, որք մեր նոր աշխարհը կատարաբաժնեն: Հարստութիւնը սանդուղ մ'է, որ հասարակօրէն մարդոց իրարու հետ ունեցած հետաւորութիւնը չափելու կը ծառայէ:

Այն հորիզոնը, որուն քանի կը մօտենանք, մեզմէ կը հեռանայ, և որ կ'աներեւոյթանայ երբ իր քովը կը հասնինք, բանաստեղծաբար կ'անուանի յոյս: Ամզ մ'է այն, որ անզգալի կերպով մեզի կ'առնու կը տանի մինչև այն անհուն վիճը, ուր ամեն բան պիտի կորսուի՝ զայն իր պատիր շոգիովը ծածկելով:

Երկու որոշ տարրեր կան, աղէկութիւն և գէշութիւն: Հակառակեայք կանուանին բարի զգայութիւնը և միտքը: Մարդիկ կանուանին 1000,000,000 փոքրիկ արարածներ, որք սեւազէմ կամ սպիտակազէմ, գառամեայ կամ երեստասարգացեալ կերպարանք ունին, և որք ինքզինքնին հրակայ կանուանեն երբ եօթն սոք բարձրութիւն կ'ունենան:

Այս վայրկենիս, ո՛ր կը գրեմ այս սողերը, երախայ մը ծնու և յանկարծահաս մահուանէ լիզպատառ ծերունի մը՝ առանց իր ծրարները պատրաստելու ժամանակ ունենալու՝ կը մեկնի միւս աշխարհը, իր ճամբորդութեան անէձք կարգալով:

Մարդ մը հաց չ'ունենալուն համար կը յուսահատի, ուրիշ մ'ալ կը ձանձրանայ՝ հորուստ բլլալուն պատճառաւ, և Զինացուց թագաւորը գուցէ իր դիտարկը կը հագնի:

էս/իլ Տը Ժիրարսկն(*)

(*) Մեծ հրապարակագիր. և անուանի գրող (1806—1881):

ԵՐԿԻՆՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ ՄԷՉ
ՌԻՐԻՇ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԸ
ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՄՈՂՈՐԱԿՆ ՀԻԱՏ

Երկիոյեան այն գեղեցիկ ժամերուն մէջ, յորս բնութիւնն հանգչիլ կը թաւի ցերեկուան գործունէութենէն. ուր ննջող թռչնոյն վերջին նուազն կախուած կը մնայ անտառաց մէջ. ուր երեկոյեան արշալուստց շիջեալ փառք տեղի տուած են արդէն գիշերային խորհրդոց, կը սիրենք մտածել բնութեան մեծ տեսարանին մոգական փոխաձեւութիւնը դիտելով, և նշմարելով աստեղաց փառաւոր գալուստը. որ ընդարձակ երկնից մէջ մի առ մի կը վառին. մինչդեռ լուսնիւն ալ իր թեւերը ծանրաքայլ կը տարածէ աշխարհի վրայ:

Այս առանձնութեան վայրկեանին մէջ միայնակ կը մնայ հողին: Այս խորին երկիւղածութենէն աւելի պերճաբան խօսք չկրնար բլլալ: Մեր մտածութիւնը կը բարձրանայ յինքնէն գէպի այս հեռաւոր լոյսերը, և մեր միտքը գաղտնի հաղորդակցութիւն մը կ'զգայ այդ անմատոց աշխարհաց հետ: Հրատն՝ իր հրալից ճառագայթներով, Արուսեակն իր արծաթափայլ լուսով, վեհափառ Լուսնիթազը և Երեւակն՝ աւելի հանդարտ, կ'երեւին մեզ, ո՛չ այլևս իբրև փայլուն կէտերու կապուած երկնային կամարին, այլ որպէս ահագին գունտեր, որոնք կը թաւային մեզի հետ յախտենական անզուեղին մէջ. և գիտենք որ այն փայլը՝ որով կը փայլին, զիրենք ողողող արեգակնային լուսոյ ցոլացումն է: Գիտենք որ երկիրս ի հեռուստ կը փայլի այս միւս մոլորակաց նման, և թէ՛ այսպէս բլլալու համար, կը լուսաւորէ զլուսին, որպէս լուսինն ալ կը լուսաւորէ զմեզ: Գիտենք որ այդ միւս աշխարհները նիւթական՝ ծանրամարմին և մթին են ինքնին, եթէ արեւը մարելու բլլար, ա՛յ այնուհետև չէինք տեսներ զանոնք. թէ ամեն մոլորակի ընդունած արեգակ-

նային լոյսը մէկ կէտի վրայ կեդրոնացած է, զմեզ անոնցմէ զատող հեռաւորութեան պատճառաւ. գիտենք որ ատոնք լուսոյ վտարանին շուրջը կը դառնան զանազան հեռաւորութեամբ. իրենց վրայ կը թաւալին, ունին ցերեկ ու գիշեր, եղանակներ և մասնաւոր օրացոյցեր, և գիտենք միանգամայն որ երկիրս երկնից մէկ ատողն է:

Իսոյց այս գիտողութիւնս շուտով մեր սրտին մէջ կը թողու տարտամ մեղամտազոտութեան մը զգացումը, վասն զի մենք ինքզինքնիս օտար կը կործենք ա՛յն աշխարհաց ուր կը տիրէ երեւութական առանձնութիւն մը, և որոնք չեն կրնար ծնուցանել մեր սրտին մէջ՝ ա՛յն անմիջական տպաւորութիւնը. որով կեանքը կը կապէ զմեզ երկրի հետ, անոնք կը սա առնին մեր վերնւը իբրև անմատոց օթեւաններ, և կ'ընթանան մեզմէ հեռու՝ իրենց անծանօթ ճակատադրաց չրջանին մէջ. կը քաշեն մեր մտածութիւններն իբրև անգունդ, բայց կը պահեն իրենց անլուծանելի հանելուկին բառը: Ընդդէմ լլուլով այսպիսի մեծ և խորհրդաւոր տիեզերաց զիտողները, պէտք կ'զգանք մեր սրտին մէջ այս երկնային կղզիներս բազմամարդելու, և այս անապատ և լին եղերաց վրայ կը փնտռենք աչքեր՝ որ պատասխանեն մեր աչաց:

Քաւիչի Թղաւարիտն(*)

ԽՕՍՔ Ի ՎԵՐԱՅ ՄԱՐԴՈՅ

«Մարդ երկնից համար ծնած է, նա իր սրտին մէջ գրոշմեալ ունի իր ճագման մեծաշուք եւ անցնչկի նրշաններ»:
ՄԱՍԻՅԵՕՆ

Տիեզերաց ամբաւազօրն Արարիչ՝ մեր երկրագունտը յանէից վէէն ի լոյս գոյութեան կոչելով, յետ ամենայն արարածոց, ստեղծեց Մարդը, արարչութեան հրաշակերտը, փչելով ի նմա իր սուրբ շնչով, յորմէ կենազարծեալ

(*)Նշանաւոր աստեղագէտը. ունի բազմաթիւ հրատարակութիւններ. ծնած է 1842ին:

է բնութիւնն անպարագիրս Այս՛, ըստ պատկերին վեհից վեհին ստեղծուած է մարդ՝ ունենալով հոգի մը՝ սրոյ կեանքն է յախտնականութիւն. սրոյ սահմանն է անհունութիւնս Հոգի. գաղտնիք գաղտնեաց, խորհուրդ խորին, ինքն աներեւոյթ, այլ արդիւնքն է մեծ երեւոյթ, թէպէտ յաւէտ անկարող, այլ սիրտս՝ մտացս վրայ կը բռնանայ, քիչ մը խօսիլ անոր վրայ:

Յայտնի է թէ մարդ բազադրեալ էակ է, ունի էութիւն հոգեկան և նիւթական, ունի կարողութիւն բանական և կենդանական: Նիւթականաւ ունի յարաբերութիւն արտաքին աշխարհի հետ, ինչպէս նաև կենդանեաց և բուսոց հետ: Նիւթագալչաք մարդուս կենդանեաց հետ ունեցած յարաբերութիւնները լոկ անսնելով. արարչութեան խորին գաղտնիքը անտեսելով, աննիւթ էակը կենդանացուցին. յախտնականութիւնը ոչնչացուցին և մարդուն բարձրագոյն վիճակը անասնական ստորնութեան հասցուցին: Չեմ կրնար ըսել թէ՛ մարդ էակը բնութեան օրէնքէն զարտուղի է, նիւթէն դուրս գոյութիւն ունի, ո՛չ, ո՛չ, մարդուն ուշադրութիւնը գրուող առաջին կէտը իր մարմինն է, ինչպէս կ'ըսէ Քառքալ, և այդ մարմնով հանգիտութիւն ունի ուրիշ արարածոց: Տուներ, բոյսեր կ'աճին իրենց սերունդը և հիւթը աշխարհէն բնագունելով, կ'աճին իբրև զանապուտ, նոյնպէս մարդ էակ կ'աճի կը մեծնայ յանգրատից կենդանարանական օրինօք, ունի կենդանեաց հետ նմանութիւն բնազդմամբ: Ամեն ցեղ անասուն իր սեպական բնազդումն ունի. սոխակը՝ զարնան զուարթ երգիչը, ոնդամբ վարդին հոտը առնելուն պէս խայտալով կ'երթայ կը փարի կաթողին և քաղցրանուագ կը գեղգեղէ, մեղրաճանճը իր բնազդմամբ նրբաթեղ ոտայնը կը հլուէ, երկրաշափը խօր հիացման ենթարկելով: Այսպէս համայն անասունք իրենց յարմար բրնազդումն ունին, ունին կարգ, կանոն, ներդաշնակութիւն. միթէ ատոնք բնազդման արգասիքն չեն: Ն՛անութիւն ունինք կենդանեաց հետ մարմնական յորինուածով, կազմութեամբ, ջգային և նեարգային գրութեամբ ասուել նմա-

նութիւնն ունինք մարդակապկինս։ Ոմանք տեսնելով զայս կապկի սերունդ ըսին անխորհրդաբար. բայց որչափ նմանութիւն տեսնեմ, ճշմարիտը խօսելով այնչափ տարբերութիւններ կը տեսնեմ. ահա այս տարբերութիւնն է ուշադրութեան արժանի կէտ։

Մարդ՝ ուղիղ և կանգուն կենալով, տիրաբար մեծ իշխանութիւն մը ունի, որ ներքին կողմուածքին մեծութիւնը կը ցուցնէ. ճակատ մը ունի երկնազէտ, զոր ի վերամբարձեալ կը նախ յերկին ի վեհաբանն Աստուածութեան, ունի կերպարանք վեհ և վսեմ, իսկ երկրային անասունը կը նայի միշտ յերկիր. քանզի երկրի համար ծնած է, քանզի մարդկային պիտոյից համար ստեղծագործուած է։ Ունի մարդ աչքեր, երկու մշտափառ ջանքեր, գեղամիծաղ և երկնալոյս աստղեր, որոնցմով միշտ կ'ուզէ իւր շուրջը գտնուած առարկաները գիտնալ, կ'ուզէ քննել ինչ որ իւր աչաց կը հանդիպի և միշտ կը հարցնէ, ինչպէս կ'ըսէ Տեքսարթի «Les yeux ont le droit d'interroger autour de lui. — Իւր աչաց շնորհիւ, բնութեան մէջ տեսնուած հրաշալիքը և տիրող ներգաշնակութիւնը և անկողն անհունութեան մէջ թաւալող անթիւ փիւրաւոր աշխարհներու, արեգակներու կանոնաւոր շրջանները տեսնելով, այսքան արգասեաց պատճառ մը, Գերագոյն Էակ մը կը փնտռէ և իւր բերանը օրհնութեամբ կը շարժէ։ Իսկ անասնոյն աչքը կը վառի, լոյս չտար, կը նայի գոզցեալ չը տեսներ, և միշտ գիտածն է ախտին խորը և մարգագետնին դալարը։ Ունինք ձեռքեր, ամենակարեւոր գործարաններ ո՛չ թէ կապկաց պէս ծառեր մագլցելու այլ մեր պիտոյից, օգտից և մեր ուզեղին ծառայելու համար ստեղծուած, ինչպէս որ յայտնաբարբառ կ'ազգայէ Ամերիկայի մեծ երկրախօսը Տէյնա «ձեռքերնիս կը ծառայեն ուղեղին, իմացականութեան և հոգւոյն»։ Պերձ իմն կը գոչէ Կազլիոյ մեծ բնախօսը Պի.Փոն. Le bras et la main sont fait pour servir à des usages plus nobles, pour exécuter les ordres de la volonté. *Ձեռքերնիս ստեղծուեցան ազ-*

նուազոյն գործոց կիրառութեան և Աստուածային հրամանաց գործադրութեան համար։ Ի մի բան, մեր մարմնական յօրինուածքը կը ցուցնէ մեր մեծութիւնը, մեր առանձնաշնորհեալ լինելը, մեր առաւելութիւնը և տարբերութիւնը։ Առաւել վսեմութիւն պիտի փայլի երբ այս աշխարհէն, երբ այս նիւթականէն զատուելով մտնենք յաշխարհ խեղական և յաշխարհ աննիւթ, ուր պիտի տեսնենք հոգի մը որ միշտ կը վառի, միշտ կ'ապրի, միշտ նորանոր խորհուրդներ կը յղանայ։ Ոմանք անդամազննելով և բնազննելով մարդկային մարմինը յոտից ցգլուխ, փնտռեցին հոգի, գոչեցին հոգի և չգտան և ըսին, ահա մարդ, ուր է հոգի. անանկ կարծեցին թէ մեքենական մարմնի սնուակ մըն է, և այս սնուակին մէջ պարունակուէր հոգին. խորահանձար գիտուններ աննիւթ էակը նիւթականին մէջ, պարզը՝ բազմաբերոյն մէջ, տեսանելին՝ անտեսանելոյն մէջ փնտռեցին։ Արդէն ի՞նչ է հոգի, և անոր զօրութիւնը ի՞նչ բանի վրայ կը կայանայ. ո՞չ ապաքէն նորա պարզ և անտեսանելի լինելուն վերայ։ Եւ դուք ազատօրէն պիտի հարցընէք ինձ այժմ, մեզ անձանօթ և անտեսանելի և մեզի անյայտ բանին ինչպէ՞ս հաւատ ընծայելու ենք. և ես համարձակ կը պատասխանեմ, Փիզիքական աշխարհին մէջ բանի մը զօրութեան կը հաւատանք, առանց նորա խիղճանհատու և գիտնալու. ինչպէս երբ քար տրձակենք յօղս, այն քարը կ'իյնայ վերտօտին յերկիր, ինչո՞ւ համար, անշուշտ զօրութեամբ մը. բայց գիտէք և կը տեսնէ՞ք այս զօրութեան էութիւնը, միայն կ'ըսենք, ձգողականութեան շնորհիւ, զոր այս դարը եթերին ամենամուրը գոյութեան կուտայ։ Երկնից մէջ մեքենայէս այս անկողնութեան թաւալեցնող ձգողականութիւնը և խիղճութիւնը ի՞նչ է արդեօք, ի՞նչ է այս ամենամարմին գոյացութիւնը զոր «եթեր» կ'անուանեն. մեծ հարցումներ, մեծ խնդիրներ, միայն թէ բնագէտք և աստեղագէտք իրենց զօրութիւններէն և յառաջ բերած արդիւնքներէն գիտեն առանց սոցա

խկը ճանչնալու, ընդ ազօտ գաղափար մը ունին ճգողական զօրութեան և եթերին վերայ: Ասոր նման հոգին, որ տեսութեան զգայարանաց տակ չիշնար, չօչափելիօք չչօչափուիր, «ինչպէս էթերը» միայն թէ իւր կարողութեամբ, յատկութեամբ, կատարելութեամբը՝ գիտեն թէ՛ նիւթէն դուրս առանձին յատկութիւն մըն ալ ունի, և ահա ասոր կ'ըսեն հոգի, դոր բնուցենցին թաղէս, Սոկրատ, Պլատոն և Արիստոտէլ: Սակայն դեռ ճիշտ գաղափար մը չունինք և չունին, դեռ հոգեբանութիւնը շատ մը լուծելիք իրն-դիրներ ունի այս մասին ի՞նչ է հիւլէ, ի՞նչ է անդործութիւն, որ հակասութիւններ ունի, բնագէտք այս մասին կը լռեն:

Ինչպէս կարելի է գիտնալ ուրիմն հոգին՝ որ մեզ անտեսանելի է, որ աննիւթ է, սակայն և այնպէս անժխտելի ճշմարտութիւն մ'է թէ՛ մարդ ունի հոգի և հոգեկան կարողութիւն, զոր նիւթը չունի և չկրնար ունենալ, ի՞նչ է ուրիմն հոգւոյն կարողութիւնը: Հոգւոյն խորը ճառագայթացայտ կը ցօլանայ մի լոյս զէպի անհունն, զէպի յաւիտենականութիւնն. այս լոյսն է մտածում, մտածումն է մարդուն էութեան առաջին տարերքը, և մարդ՝ ըստ Տէքարթի, մեծ իմաստասէրին՝ մտածման կարողութեամբ է որ կ'երեւակայէ զանհունութիւն, ուր ըստ Հիւկոյի՝ լեռ մը մըրջիւնի հողակոյտ է և որզն՝ սոսկավիթխար և անարգ փիղ մ'է: Կ'երեւակայէ զանհունութիւնն ուր շար ի շար աստեղք իրը լուսավառ ջահեր կը վառին յար հանապազ, լոյս կուտան միշտ դիտողին, խանդ կուտան բանաստեղծին, հիացում կուտան աստեղագիտին, մեծ տպաւորութիւն կ'ազդեն մտածողին: Սոյն կարողութեամբ է որ մարդ կը տիւրէ ծովու և օդին և կը հնարէ մեծամեծ գիւտեր, մեքենաներ ի վերջոյ սովաւ կ'ապրի մարդ: Այս է մարդուն կեանքը, իր մեծութիւնը և իր նշանը. նիւթը կրնա՞յ ունենալ այսպիսի կարողութիւններ, խորաղնին բնագէտ, դուն տուր պատասխան, կը մտածեմ, մտածում, այս պայծառափայլ ջահ նիւ-

թին ծոցէն չկրնար ելլել: Հոգին երկրորդ փայլ մ'ալ ունի, որ կը ցօլանայ զէպի լոյսն անմատոց, զէպի յԱստուած: Այս ցօլացումն է խիղճը, մարդուն այս փափուկ և կենդանի զգացումը, որ իրրեւ ներքին դատաւոր կը հանդիսանայ և կը տիրապետէ հոգւոյն խորը իրը արդարադատ նախագահ. խիղճը ջահ մ'է որ կը վառի մարդուն մտքին վրայ, կ'առաջնորդէ զմարդ զէպի յուղտութիւն, զէպի յարատեւութիւն, զէպի բարութիւն, և ան է ուղեցոյց մարդուն, որպէս կ'ըսէ մեծ բանաստեղծը Վ. Հիւկօ. «Ի՞նչ է խիղճը, անձանօթին ուղեցոյցն»: Այս խորհրդաւոր և մեծ ճառագայթ մ'է, զոր պէտք է յարգել: Ո՛ր կ'երթայ հոգւոյն այս վեհաշուք փողփողումը, զէպի մթութիւն, զէպի լոյս, զէպի անտեսանելի յոյս: Խիղճը ձայն մ'է երկնային, որ կը բարձրացնէ իր ձայնը երկրային ազմուկներու, ժխորներու, վրդովներու մէջէն, նա է դահիճ մեր կրից: Աստուած երբ ստեղծեց զմարդ, խղճին յանձնեց իշխելու իշխանութիւնը, խիղճն է գեղեցկին, բարւոյն և անսահմանին զգացումը: Անրան անասունները միթէ ասանկ փափուկ և երկնային զգացում մը կրնա՞ն յատա՞ր բերել, ո՛չ, անշուշտ պիտի պատասխանէք: Հոգին կը յղանայ ուրիշ զգացում մ'ալ, այն է անսահմանի զգացումը. մարդ՝ էակ հոգեկան, կը յղանայ սահմանաւորէն անսահմանը, միջոցէն և ժամանակէն՝ յաւիտենականութիւնը, տեսանելիէն անտեսանելին: Ունի զգացում բարիին, գեղեցկին և ճշմարտին, այս սըրբազան երրորդութեան ի հուսկ բան, մարդ իր հոգւոյն միջոյաւ կ'երեւակայէ իտէական աշխարհ մը և կը փափաքի շրջիլ այն մեծ աշխարհին մէջ և բուռն տենչանօք կը ցանկայ մեռնիլ այս անմահ աշխարհին մէջ: Ահա այս է մեր վեճակը, մեր սահմանը, և մեր մեծութիւնը: Ուրիմն աշխատինք և ջանանք գէթ դոյզն ինչ պարզելու հոգւոյն խորը քողածածուկ եղած վարագոյրը, աշխատինք և սորվինք մեր վեճակը և յատա՞ղիմենք: Աշխատիլ մեր հարկն է:

Գամիեղ Գ. Նշանեան

Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ Մ Ա Ր Դ Ը

Առաքինութեան ստերը քրտինքով և աշխատութիւնով կը բուսնին և կ'ուճանան :

Երկրաւոր սէրը իրեն ճարակ ունի բնութեան առարկայները . որոնք արագիտելով մարդ էակին վրայ՝ կը բորբոքեն անոր սիրտն ու զգացումները և ծախելով կ'սպանեն զայն բարոյսպէս . և այդ սէրը կ'անէանայ մարդուս վախճանին հետ :

Երկնաւոր սէրն է , որ զմարդիկ յաւիտեանականութեան հետ կը զօդէ սակեղէն շղթայով , և իրեն ճարակ ունի հոգեւոր առարկաներ . այն է՝ առաքինի կեանք . ազնիւ զգացմունք . արդար , ուղիղ և պարկեշտ կենցաղավարութիւն . մաքրութիւն սրտի և հոգւոյ . որոնք զմարդիկ այս աշխարհիս մէջ երջանիկ ընելով՝ յաւիտեանական կեանքին հետ կը կապեն , և յետ աստուացոս ելանելոյ՝ անմահական կենաց կ'արժանացնեն :

Ո՛վ մա՛րդ , ջանա , աշխատէ և յառաջացի՛ր կեանքի պայքարին մէջ . բայց արդարութեան կշիռքը թո՛ղ լինի քեզ յաւէտ առաջնորդ և նշանաբան :

Ընտանեակէր եղի՛ր և առաքինասէր՝ և ի պահանջել հարկին՝ անոր բազնին և սեղանոյն նուէրէ քու անձդ բուրովին , իբրև ողջակէզ զո՛հից և պատարագաց կամ իբրև անուշահոտ բուրս մն խնկոց և կնդրկաց :

Ահա այս է կատարեալ մարդն ամենեւին :

Նիկի Եպս. Չիլիկիսեան

Գեղեցիկ մարմին մը կը խոտանայ գեղեցիկ հոգի մը :
Սոկրատ

Զարգարուն ճառ մը առանց խմատի՝ թմբուկ մըն է ազմկալի ու գատարկ :


Վ Ի Ք Թ Ո Ր Հ Ի Ի Կ Օ

Ե Ի

« Թ Շ Ո Ւ Ա Ռ Ն Ե Ր » Ը

Մեծանուն հեղինակին այս աշխարհահռչակ գործը՝ որ շատ մը լեզուներու թարգմանուած և բազմաթիւ տպագրութիւններու արժանացած է . մեր մէջ թարգմանուած է հայերէնի Գ . Չիլիկիսեանի կողմէ : Այս առթիւ այս երկուքին միջեւ կատարուած թղթակցութիւնը և Վ. Ի. Թ. Ո. Ր. Հ. Ի. Կ. Օ. յառաջաբանը կարեւոր կը համարինք հոս ներկայացնել : Այս այնքան կարեւոր աշխատութիւնը այս անգամ «Ժամանակ» լրագրին կողմէ կրկին տպագրուելով նուիրուած է իր ընթերցողներուն :

Վ. Ի. Թ. Ո. Ր. Հ. Ի. Կ. Օ. ծնած է 1802ին . անիկա Փրանսական գրականութիւնը ճոխացուցած և արտադրած է գլուխ գործոց հրատարակութիւններ , որոնց մէջ կը գտնուին երեւակայութեան մեծութիւն , զգացումներու խորունկ արտայայտութիւն և ոճի ճկունութիւն , լեցուն իմաստասիրական և բարոյական վսեմ գաղափարներով : Փրանսական ազգը՝ իբր երախտագիտութիւն այս մեծ հանճարին , անոր մահուընէն վերջ (1885) ազգային յուղարկաւորութիւն մը կատարեց և անոր սակերտիքը փոխադրեց Պանդէոն , ուր թաղուած են իրեն նման մեծ ու տաղանդաւոր Հանճարներ :



ՎԵՆԵՔՈՐ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՄԵՏԱՆՈՒՆ ՏԷՐ

Մարդս որրան կարգայ Ձեր հեղինակութիւնները, այնքան աւելի կ'սքանչանայ Ձեր վրայ, վասն զի վշտահար մարդկութեան բարերարն էք, եւ Ձեր անունը տասնեւիններորդ դարու յառաջդիմութեան խորհրդանշանն է:

Դուք իրաւունք ունիք պահանջելու որ տիեզերք երախտագէտ ըլլայ Ձեզի:

Բարոյական եւ նիւթական ազատումի նահատակք ի Ձեզ տեսնող անբազդ ժողովուրդներու մէջ Հայերը չէին կրնար աւելի երկար ժամանակ յապաղել իրենց շնորհապարտ համակրութիւնը Ձեզի արտայայտելու:

Իբր տկար թարգման իմ հայրենակիցներու զգացմանց՝

կը յանդգնիմ յայտնելու Ձեզ ասոնց ամենաբուն արտայայտութիւնը, թարգմանելով «Թշուառներ»ը՝ անմահ արծան Հանճարի եւ Սիրոյ, եւ համարձակելով անոնց թարգմանութիւնը Ձեզ նուիրելու՝ իբր նուէր խորին յարգանաց եւ մեծ սքանչացման:

Բարեհաճեցէ՛ք, Մեծանուն Տէ՛ր, ընդունիլ իմ ամենախորին մեծարանացս հաւաստիքը:

Իզմիւր 8/20 Մարտ 1868

ԳՐ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Ա. Ա. Պ. ՎԻՅԹՈՐ ՀԻՒԿՅ

Կ ԿԵՐՆԸԶԷՅ



Վ. Բ. ՅՈՐ ՀԻՒԿՅ

ԱՌ Պ. ԳՐԻԳՈՐ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Ի Զ Մ Ի Ր

Հօրվիլ Հառւգ, 12 Դեկտ. 1868

Պարուն

Ձեր առաջին նամակը չհասաւ ձեռքս. իսկ երկրորդը ընդունեցայ երկարատեւ բացակայութենէ մը վերադառնալիս ետ: Այս է պատահական յայտարարական պատճառը:

Ձեր տոնակային հիւն ըզուքն չեմ գիտեր, բայց կը սիրեմ: Անոր մեջ արեւելքը կ'զգաւ. դարերը կը ընդհանրեմ, անցեալին խորհրդաւոր նշուշին նառազայքիչը կը տեսնեմ:

Պարծամբ մըն է ինձ հայերեկի քարգնամուխը: Երախտագիտութեամբ կը ընդունիմ Ձեր ազնիւ ուղերձը, եւ շնորհակալ եմ:

Վ.Ի.Գ.Թ.ՈՐ ՀԻԻԿՕ

«ԹՇՈՒԱՌՆԵՐ»ՈՒ ՅԱՌԱՋԱԲԱՆԸ

Քանի որ օրինաց եւ բարուց տամադրութեամբը ընկերային դատապարտութիւն մը կայ, որ այս կատարեալ քաղաքակրթութեան դարուս մեջ արուեստիւ դժոխքներ կը շինէ եւ երկնային նահատակութիւն մարդկային նահատակութիւն մը հետ կը խառնէ. քանի որ անյոյժ կը մնայ դարուս սա երեք խնդիրը, որ է մարդու գծովութիւնը՝ ռամկութեանը պատճառաւ, կընդունջ անկումը՝ անօրութեան պատճառաւ եւ մանկան ծիւղութիւնը՝ սգիտութեան պատճառաւ. քանի որ մեկ քանի աշխարհի մեջ դեռ հնարին է ընկերային անկնչութիւնը. կամ քեռութիւն կեցողութիւն եւ աւելի բնդարձակ տեսութեամբ մը նկատելով ըսեմք, քանի որ սգիտութիւն եւ բուռառութիւն կայ աշխարհիս մեջ, այս գրքին նման գրքեր կրնան անօգուտ ըլլալ:

Վ.Ի.Գ.Թ.ՈՐ ՀԻԻԿՕ

Հօրուիլ Հառւգ 1862

ԼՈՋԱՆԻ ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԵԾ ԺՈՂՈՎԸ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԵՐՁԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ



1918նէն ի վեր Ա.մերիկայի և Եւրոպայի մէջ ծրագիր մը կը մշակուէր Քրիստոնէայ եկեղեցիներու միջև համերաշխ ոգի մը յառաջ բերելու, իտիազարձ բարեկամական յարաբերութիւն մը ստեղծելու և առանց իւրաքանչիւր եկեղեցիի դաւանական սկզբունքներու դպչելու, Քրիստոսի և Աւետարանի ներշնչած սիրովը վերաբերուելու իրարու հետ:

Այդ նպատակը իրագործելու համար որոշուած էր Լօզանի մէջ համաժողովի մը գումարումը՝ մասնակցութեամբ տիեզերքի բոլոր եկեղեցիներու պատուիրակներու:

Աշխարհի ամեն կողմ հրաւերներ ուղղուած էր այս տիեզերական համաժողովին ներկայ գտնուելու:

Այս հրաւերին պատասխանած էին Արեւելեան երկու մեծ եկեղեցիներ, Հայ և Յոյն, ինչպէս նաև Սլաւ և Ամերիկացի և Եւրոպացի բոլոր Բողոքական յարանուանական եկեղեցիներ, որոնք իրենց ներկայացուցիչները զրկած էին Լօզան և ասոնք կը կազմէին 90 տարրեր եկեղեցիներու պատուիրակները: Միայն Հռոմէական եկեղեցին չէր մասնակցած, ըստ որում անոր հոգեւոր պետը, Ս. Պապը, մերժած էր ընդունիլ իրեն եղած հրաւերը:

Մասնաւոր հրաւեր ուղղուած էր նաև Հայ Եկեղեցւոյ Հոգեւոր Պետին, Ամենայն Հայոց Ս. Հայրապետին՝ որ յատուկ կոնդակաւ սոյն համաժողովին՝

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԵՄԻԱԾՆԻ ՀՐԱՋԱՆԳԸ իրրև ներկայացուցիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ, յանձնախումբ մը նշանակած է նախագահութեամբ Ամերիկայի Առաջնորդ Տէր Տիրայր Արքեպսկ. Տէր Յովհաննէսեանի

և անդամակցութեամբ Մանչեսթըրի հոգեւոր հովիւ Տ. Ղեւոնդ Գուրեան և Եւրոպայի Կաթող. Պատուիրակ Տ. Գրիգորիս Պալաքեան Եպսկօներու :

Ն. Ս. Օծութեան հրամանաւ Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը հրահանգ-ուղեցոյց մը պատրաստած և ուղարկած է սոյն Յանձնաժողովին : Այդ հրահանգին մէջ որոշակապէս ցոյց արուած է Հայ Եկեղեցւոյ ներկայացուցիչներուն հետեւելիք ուղղութիւնը նոյն Համաժողովին մէջ :

Այս հրահանգով կը յանձնարարուի ողջունել Համաժողովին բացուիք, յայտնել Հայ Առաքելական հնազարեան ազգային եկեղեցւոյն սիրայօժար մասնակցութիւնը համաժողովին, որուն նպատակն է եկեղեցիներու մերձեցմամբ և ընդհանուր համագործակցութեամբ, Քրիստոսի սիրոյ շնչովը ջերմացնել աշխարհը և տնոր Աւետարանի յախտնական գաղափարները մարմնացնել կեանքի մէջ, պարզել թէ Հայ Եկեղեցին դարերէ ի վեր իր մշակած կանոններուն և աւանդութեանց համաձայն, եկեղեցական կեանքի ամեն տեսակ խնդիրներու լուծումը և վերջնական որոշումը, կ'ստանայ վեհ. Հայրապետին նախագահութեամբ գումարուած եկեղեցական ժողովէն, որով Հայ Եկեղեցւոյ ներկայացուցիչները պարտադրուած չեն համագումարին վերջնական որոշումները ձանձնալու, այլ պարտական են միայն մասնակցել խորհրդակցութեանց և կայացած որոշումները հաղորդել Ս. Հայրապետին, որ իր կարգին այդ որոշումները կենթարկէ յառաջիկային իր նախագահութեան ներքե գումարելի եկեղեցական ժողովին քննութեան, և այդ ժողովին հեղինակաւոր որոշման համեմատ կը ճշդէ իր դիրքը նոյն Համաքրիստոնէական Համաժողովին ապագայ գումարումներու մէջ, և հետեւաբար պաշտօն կուտայ միայն՝ ըստ պահանջել հարկին, ապա Հայ Եկեղեցւոյ գաւառական, ծիսական և արարողական նարազիրը՝ առաջնորդ ունենալով տիեզերական երեք Սուրբ ժողովներու կանոնները, Ներսէս Շնորհալիի Ընդհանրականը, ինչպէս նաև Հայ Եկեղեցւոյ վարչական կազմա-

կերպութեան մասին ալ Օրմանեան հանգուցեալ Տէր Մաղաքեայ Սրբազանի Հայ Եկեղեցին հեղինակութիւնը՝ որ միջազգային գնահատութեանց արժանացած է, շնչով Հայ Եկեղեցւոյ ժողովրդական սրբին, ընդգծելով նաև Արեւելքի բազմացեղ և բազմակրօն ժողովուրդներու մէջ դարերէ ի վեր Քրիստոնէական կրօնի հաւատարիմ մնալը :

Տ. Տիրայր Արքեպիսկ. չէր կրցած երթալ Լոզան՝ միայն Գուրեան և Պալաքեան Սրբազանները մասնակցած են Համաժողովին, որ տեղի ունեցաւ 1927 Օգոստոս Յին :

Համաժողովի բացման հանդէսը կատարուեցաւ Լոզանի Մայր Եկեղեցւոյն մէջ նախագահութեամբ Նիւ-Եօրքի Եպս.

Տ. Պրէնտիս Զուղիչ էր տեսարանը ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՈՒՄԸ կեկեղեցիին մէջ ուր պատշաճ կերպով զարդարուած էր և ուր աշխարհի ամեն կողմերէն եկած 3000ի մօտ քրիստոնէական խոնուած էին :




Լոզանի Մայր Եկեղեցին

Երգուած երգէ մը և արտասանուած կարճ աղօթքէ մը ետքը, բոլոր ներկաները՝ խորքանշիւրը իր լիզուով յանկայս կարգաց Նիկիական հանդանակը «Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն Ամենակալ, եւ ըն», ինչպէս նաև «Հայր մեր»ը : Աննկարագրելի էր պարզուած այս տեսարանը որ Քրիստոնէական սիրոյ խոր

սուլակութիւնը գործած էր : Այս հանդիսաւոր արարողութենէն ետքը պատուիրակները դային համալսարանի շէնքը որ յատկապէս արամազրուած էր :

Հոս տեղի ունեցաւ համաժողովին առաջին նիստը ուր գերմաներէն և ֆրանսերէն ճառեր արտասանուեցան :

Թէ այս և թէ յաջորդական գումարումներուն մէջ բոլոր ճառախօսները կը ձգտէին հասկացողութիւն մը յառաջ բերել եկեղեցիներու միութեան շուրջը՝ հիմ ունենալով Նիկիական հանգանակը որ խտացուցած է իր մէջ Քրիստոնէական առողջ վարդապետութեան հիմն ու սկզբունքները:



Լօզանի համալսարանին շէնքը

ղեցւոյ երկու սրբազան պատգամաւորներն ալ խօսք առին

(*)Ընդհ. Քրիստոնէից թիւն է 566,201,000 որու 273,500,000ը կաթոլիկ, 121,801,000ը Օրթոտոքս և 170 միլիոն 900,000ը Բողոքական, համագումար 292,701,000 որոնք Լօզանի Համաժողովին ներկայացուցիչ զրկած էին Հիւս. և Հարաւ. Ամերիկայէն, Եւրոպայէն, Ասիայէն, Ափրիկէէն, Ովկիանիայէն:

«Ժամանակ» լրագրի թղթակիցը՝ որ ներկայ գտնուած է այս գումարումներուն գնահատելի փութկտութեամբ մը՝ շատ լաւ կերպով նկարագրած է տեղի ունեցած խորհրդակցութիւնները՝ նոյն թերթին մէջ ուրկէ կը քաղենք այս տեղեկութիւնները:

Յիշեալ թղթակիցը՝ Տիար Լեւոն Թիւթիւն՝ ճեան կ'ըսէ,

«Ուրախ ենք որ աշխարհի չորս ծագերէն հաւաքուած և 292,701,000 քրիստոնեայ (*) ներկայացնող 500 պատգամաւորներու մէջ, Հայ Եկեղեցւոյ երկու սրբազան պատգամաւորներն ալ խօսք առին

և արժեցուցին թուով փոքրիկ բայց սրակով արժէքաւոր մեր դարաւոր եկեղեցին: Ճառի համար խօսք առնող պատգամաւորներու թիւը սահմանափակուած էր. հողիւ յիսուն, յիսուն երկու հոգի ճառախօսեցին, և կամ պիտի խօսին: Հայ Եկեղեցւոյ հանդէպ յարգանքի և համակրութեան արտայայտութիւն մը եղաւ Դիւանին կողմէ անոր երկու պատուիրակներն ալ խօսելու հրաւիրուելով»:

Ու կ'աւելցնէ.

«Ե Օգոստ. Շարաթ օրուան նիստին, կէս օրէ վերջ ժամը 4ին յուզիչ արտայայտութիւն մը եղաւ ժողովին կողմէ Հայ Եկեղեցիին հանդէպ: Օրուան նախագահը Dr. Garvie, յայտնեց թէ պիտի խօսի Հայ Եկեղեցւոյ Պետին և Ազգին կողմէ Տ. Ղեւոնդ եպ. Գուրեան, թէ Հայ Եկեղեցւոյ Պետը և Հայ ազգը՝ իրենց խորին համակրութիւնը կը յայտնեն բոլոր Եկեղեցիներուն և «Ես», ըսաւ նախագահը, Տ. Ղեւոնդ Եպս.ի գառնալով, յանուն այս ժողովին ձեր աջը կը սեղմիմ ինչպէս մենք Անգլիոյ մէջ կ'ընենք ի նշան յաւիտեանական եղբայրութեան, և մեր բողձանքը կը յայտնենք թէ Հայ Եկեղեցին և ազգը իրենց դարաւոր գոյութիւնը պահպանեն առ յաւէտ»:

«Գուրեան սրբազան շնորհակալութիւն յայտնելէ վերջ նախադահին և ժողովին, հետեւեալ ճառն արտասանեց.

ՍԻՐԵԼԻ ՆԱԽԱԳԱՀ ԵՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ

«Իբր ներկայացուցիչ Ն. Ս. Օծութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ, սրտագինս կը շնորհաւորեմ քրիստոնէական համաժողովը և կը յայտնեմ թէ Հայ Առաքելական Եկեղեցին խորին համակրութեամբ կը մասնակցի Համաժողովի խորհրդակցութեանց,

ԳՈՒՐԵԱՆ Ս.Ի ՃԱՌԸ

նկատի ունենալով որ Համաժողովը կը ձգտի աւելի սերտ յարաբերութիւններ ապահովել ընդ մէջ քրիստոնէական եկեղեցիներու համադորժակցութեամբ և նպատակ ունի ներշնչող և կենդանարար զէր մը կատարելու քրիստոնեայ



Տ. Տ. Գուրեան Ղեւոնդ, Պարսեան Գրիգորիս Եպիսկոպոսները և «ժամանակի» բարակից Պրն. Ղեւոն Թխաթևեան

ազգերուն մէջ, իրականացնելու համար Քրիստոսի սիրոյ և միութեան վսեմ սկզբունքները :

«Նկատի ունենալով որ եկեղեցիաց փոխադարձ ծանօթութիւնները կը նպաստեն մի միայն մերձեցման և սերտ

յարաբերութեան, ինչպէս և համադորժակցութեան և նկատելով նաեւ Համաժողովից ծրագրին ընդհանուր հանդամանքը, հրահանգուած եմ Համաժողովից պարզել խիստ համառօտ մէկ ուրուապիծը Հայ եկեղեցւոյ կազմակերպական և գաւառնարանական սկզբանց մասին :

«Ա.— Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարքը կամ Կաթողիկոսը իբր Գլուխը համայն Հայ եկեղեցւոյ, կը նկատուի յաջորդ Թագէտս և Բարթողիմէոս առաքեալներու : Հայ եկեղեցւոյ կազմակերպութիւնը և վարչութիւնը բղխած է ոչ թէ եկեղեցական օրէնսդիր մարմինէ մը, այլ բուն իսկ Հայ ազգին պատմութենէն : Հայ Ազգը ինքն իսկ է պահապան ո՛չ միայն եկեղեցւոյ բո՛ւն կազմակերպական և յատարարական ուժին, այլև նոյն իսկ ձայն ունի վարդապետական (ոչ-գաւառնարանական) հարցերու մէջ :

«Վարչական կազմակերպութիւնը Հայ եկեղեցւոյ՝ կ'սկսի շատ կանուխ փամառակներէ և առաջին եկեղեցական Վարչական Ժողովը, որուն մասնակցած են հաւատարապէս աշխարհականներն և կրօնականները, գումարուած է 365ին : Մինչ ցայժմ կը պահէ այդ ուղղութիւնը և ամեն թիւնրու մէջ այդ ուղղութեամբ կը կառավարուի եկեղեցին և եկեղեցականներուն մեծէն մինչև պզտիկը պատասխանատու է ժողովուրդին և այս ռամկավարական սկզբանց չնորձիւ է որ Հայ եկեղեցին իրապէս ժողովուրդին հոգիին խօսող հաստատութիւնը եղած է ցայժմ :

«Բ.— «Հաւատամք»ը զոր ընդունած է Հայ եկեղեցին, Աթանաս Աղեքսանդրացիինն է, որ կ'սկսի Նիկիոյ Ժողովէն : Հայ եկեղեցին իր «Հաւատամք»ին վրայ ո՛չ մէկ փոփոխութիւն և ո՛չ մէկ յաւելում ըրած է : Քրիստոսի Աստուած—թիւն և ո՛չ մէկ յաւելում ըրած է : Միաբնակուբիւնը, մարդկային բնութեան միութիւնը կամ միաբնակուբիւնը, զոր կ'ընդունի Հայ եկեղեցին, եփեսոսի Ժողովին բանաձեւին համեմատ է, որ Ս. Կիլիւք Աղեքսանդրացիինն է, այսինքն «Մի րևուքիս Բանին մարմնացերոյ» : Միաբնակութիւնը զոր Հայ եկեղեցին կը գաւառնի, Եւտիքէսինէն կը տարբերի :

Հայ Եկեղեցին Միբնութենական է: Այն տարբերութիւնը որ կը բաժնէ Հայ և Յայն Եկեղեցիները իրարմէ, Հայ Եկեղեցւոյ Քաղկեդոնի ժողովին և անոր յաջորդող ժողովներուն տարամբժումն է: Միւս բոլոր դաւանաբանական հարցերու մէջ երկու Եկեղեցիները միմեանց կատարելագէտ համաձայն են:

«Հայ Եկեղեցին դաւանաբանական հարցերու մէջ կը ղեկավարուի արեւմտեան Եկեղեցւոյ Ս. Հայրերէն՝ Ս. Օգոստինոսի սկզբանց համեմատ: «Միտքիւն ի կարեւորս»: Հայ Եկեղեցին կ'ուզէ սերտ միութիւն պահել մարդկային փրկագործութեան հետ առնչութիւն ունեցող դաւանաբանական հարցերու շուրջ:

«Ազատութիւն յերկբայականս». բոլոր տարակուսելի երկբայական հարցերու մէջ կ'ուզէ ազատ մնալ ու անկաշկանդ շարժիլ: Եւ դերազանցօրէն բարձր պահել «սիրելութիւն յամենայնի»ն: Ըստ այսմ այս նուիրական» և վսեմ առիթով Համաժողովիդ կը յայտարարեմ Հայ Առաքելական Եկեղեցւոյ կողմէ սիրելութիւն, աւելի՛ սիրելութիւն»:

Տ. Դեռոնդ Եպս.ի այս սեղմ և ամփոփ յայտարարութենէն վերջ, որ բուն ծափերով ընդունուեցաւ, նախագահին հրաւէրով Համաժողովը յտանկայս երկու վայրկեան լուռ աղօթեց մարտիրոս Եկեղեցիներու համար:

Համաժողովի գումարումներուն մէջ նշանաւոր է նաև Կլուչեսթրի Եպիսկոպոս տօքթօր Հիտլէմի ճաւը Քրիստոնեայ Եկեղեցիներու և քրիստոնէական միութեան վրայ ճառախօսը կ'ըսէ թէ. «Եկեղեցւոյ միութիւնը՝ ինչպէս կ'ուսուցանէ մեզ Ս. Պօղոս, հոգեւոր միութիւն մըն է, միութիւն ի Քրիստոս, միութիւն մը՝ հիմնուած Աստուծոյ կարգեալ և անկէ ներշնչեալ պաշտօնէութեան մը վրայ:» Եւ ընդարձակօրէն ուրուագծելով այս միութեան սկզբունքները և ապա այլազանութեան սկզբունքները, ծանրացած է Ս. Հաղորդութեան և Եկեղեցւոյ պաշտօնէութեան կարեւոր հարցերուն վրայ:

Օգոստոս 19ի Հինգշաբթի օր կէս օրէ ետքի նիստին
Դիւանական հրաւէրով խօսեցաւ
ՊԱՒՔԵԱՆ Ս.Ի ՃԱՌԸ Պալաքեան սրբազան հետեւեալը:

«Աշխարհի ամեն կողմերէն հաւաքուած ենք այս հիւրընկալ քաղաքը Լօզան, նուիրական պարտականութիւն մը կատարելու, միացնելու քրիստոնեայ բոլոր Եկեղեցիները և այսպէս վերակենդանացնելու Աւետարանական կեանքը:

«Մեր դարուն որչափ նիւթապաշտութիւնը՝ զօրացաւ, նոյնքան եւս թուլացաւ քրիստոնէական ոգին, մանաւանդ համաշխարհային պատերազմի վաղորդայնին ա՛յլ աւելի նսեմացաւ այդ ոգին պատերազմին մասնակցող բոլոր ազգերուն մէջ առաւել կամ նուազ համեմատութեամբ:

«Քրիստոնէական ոգին այնչափ թուլցած է որ նոյնիսկ ոմանք կը կարծեն թէ տյեւս քրիստոնէութիւնը կորսնցուցած է իր կենսունակութիւնը, հինցած անպէտ գործիք մըն է, զոր պէտք է մէկ կողմ դնել և նորը փնտռել, կրօնական սուրբ զգացումներով գտեպնդելու համար մարդկային այլաոսերած հոգիները:

«Կան նոյն իսկ գիտնականներ որ կը կարծեն թէ քրիստոնէութեան արեւը այլեւս մայրը կը մտնէ, և աչքերնին մինչև Հնդկաստան յառած են, նոր կրօնի մը արշալոյսը փնտռելու համար, կրօններու ծննդեան մայր երկրին Արեւելքի մէջ:

«Ի՞նչու համար այս կասկածը քրիստոնէական կրօնի կենսունակութեան մասին: Որովհետև մարդ սարսափով կը նայի, երբ կը զիտէ քրիստոնեայ Եկեղեցիներու հարեւաւոր յարանուանական բաժանումները և իրենց արտաքին խաղաղ ձեւին մէջ իրարու հանդէպ սուղացած թաքուն ատելութիւնները և թշնամութիւնները:

«Ո՛չ, մարդկութիւնը պէտք չունի նոր կրօնի մը, այդ յաւիտենական կրօնը Քրիստոնէութիւնն է, բաւ է որ զիտ-

նանք արծարծել մարդկային հոգիներու մոխիրներուն մէջ պահուած քրիստոնէական թաքուն կրակը :

«Մարդկութիւնը մշտապէս խաղաղութեան պէտք ունի, որուն միակ աղբիւրն Սէրն է, իսկ Քրիստոնէութիւնը և իր քարոզած Աւետարանը Սիրոյ կրօնն է, բաւ է որ ժողովուրդները ապրիլ գիտնան քրիստոնէական կամ աւետարանական կեանքով: Մենք հոս հաւաքուած ենք սիրոյ և խաղաղութեան ծարաւի մարդկութեան, Սիրոյ աւետարանական պատգամը տալու :

«Բայց ամեն բանէ առաջ նախ մենք քրիստոնեայ բոլոր եկեղեցիներու պատգամաւորներս պէտք է զիրար սիրելու առաջին հրահանգիչ օրինակը տանք, որով պիտի կրնանք երաշխաւորել նաև մեր սկսած այս գործին յաջողութիւնը :

«Նոյն իսկ մեր ընկերներէն ոմանք կը կասկածին այս նուիրական գործին յաջողութեան: Ահա բուն վճանգը այս կասկածին մէջ է: Գործի մը յաջողութեան համար մարդ անոր հաւատքն ունենալու է: Ինչ որ չունինք, չենք կրնար ուրիշին տալ: Նախ պէտք է մենք մեր սկսած գործին հաւատքն ունենանք, որպէսզի ուրիշներուն ալ զայն ներշնչենք :

«Դիտեցի որ ոմանք կը կարծեն թէ եկեղեցիներու միութիւնը հնարաւոր չէ: Ինչո՞ւ: Որովհետև այսքան հին ու նոր եկեղեցիները իրենց հաւատոյ տարբեր հանգանակներով, իրենց զանազան նուիրապետութեամբ, անհնար է իրօպէս վերածել Քրիստոսի քարոզած «մի հօտ և մի հովիւ»ի գաղափարին :

«Այս գործին սկսպտիկ եզրոյները անհնար կը դանեն միակ հաւատոյ հանգանակ մը ընդհանուրին ընդունելի ընել կամ պարտադրել: Կան ալ որ մեր այս համաշխարհային «Ֆէթ ու օրորի» համաժողովին մէջ դիւանագիտութեան գաղտնի թերեր կը փորձուին գտնել :

«Ես լաւատես եմ մեր այս գործին յաջողութեանը մասին, բաւ է որ մեր սկսած գործին հաւատքն ունենանք ան-

կեղծօրէն: Մենք պէտք չունինք բոյոր քրիստոնեայ եկեղեցիներու միութիւնը ապահովելու համար ամենքին պարտադրել միօրինակ աստուածայանութիւն և ս'չ ալ միօրինակ փիլիսոփայութիւն: Պատմութիւնը զեռ չէ արձանագրած որ աստուածաբաններ և փիլիսոփաներ երբ և ինչ կրօնք մը հիմնած ըլլան :

«Յարգելի ընկերներս հոս օգափոխութեան եկած չենք: քանի որ այնքան լրջութեամբ կը զրաղին ամբողջ օրը ժողովներու և յանձնաժողովներու մէջ, ապահովելու և հարթելու համար փշտ ճամբան դէպի համապարօճակցութիւն: Ոչ ալ դիւանագիտութիւն պէտք է փնտուել մեր այս Միութեան սուրբ գործին մէջ :

Աշխարհի տարբեր ազգերու, տարբեր հարիւրաւոր եկեղեցիներու միջև միութեան մէկ ճամբայ կայ՝ համագործակցութիւն: Ի զուր է փնտուել հաւատոյ միակ հանգանակ մը, քրիստոնեայ եկեղեցիներու իր խորհրդանշան: Մենք արդէն ունինք այդ հանգանակը: որ շատ պարզ է: Քրիստոսի վերջին կտակն է, սիրեցեք իրար, ինչպէս որ ես սիրեցի զձեզ: Որպէս զի այնքան խանդավառութեամբ մեր այս սկսած նուիրական գործին մէջ յաջողիլ կարենանք, պէտք է քրիստոնէական սիրով մը կապել բոլոր եկեղեցիները, բոլոր ազգերը, որով և ապահոված պիտի ըլլանք աշխարհի խաղաղութիւնը :

«Բայց որպէս զի կարենանք եկեղեցիներու միութիւնը ապահովել և հաստատել ամեն հաւատացեալի մէջ քրիստոնէական ընդհ. սէրը, նախ հարկ է որ մենք բոլոր եկեղեցականներս իրարու հանդէպ անհնանք պարզ, մաքուր և անխարդախ քրիստոնէական սէրը, Հաւատք առանց գործոց մեռեալ են :

«Քրիստոնէութիւնը ինչպէս նաև քաղաքակրթութիւնը վտանգի մէջ է, որովհետև ազգերու մէջ տիրող այժմու խաղաղութիւնը կեղծ է: Զի ամեն ազգ տեսնողին պատառաստութեան մէջ է, և ամեն օր կատարելագործեալ զէն-

քեր կը հնարուին նոր պատերազմի մը մէջ իւրաքանչիւրն իր յաղթանակն ապահովել կարենալու համար:

«Նոր պատերազմ մը աննախատեսելի չարիքներ պիտի յառաջ բերէ, որ համազօր պիտի ըլլայ քրիստոնէութեան և քաղաքակրթութեան մնանկութեան:

«Աշխարհի խաղաղութիւնը ապահովելու գործին մէջ, Քրիստոնեայ Եկեղեցիները մեծ և նուիրական պարտակա- նութիւն մը ունին կատարելիք, բաւ է որ գիտակցինք մեր հրամայողական սուրբ պարտականութեան: Մենք պէտք է կանխենք մարդկութեան սպառնացող վերահաս վտանգը, որով բարձրացուցած պիտի ըլլանք Եկեղեցիներու հզօր ազ- դեցութեան հետ նաև մեր հոգեւորական հեղինակութիւնը:

«Համաշխարհային խաղաղութեան պահպանման հարցը միջանկեալ յիշեցի հոս, որպէս զի ապացոյց մը տամ թէ Եկեղեցիներու ընդհ. Միութիւնը և քրիստոնեայ եկեղեցա- կանաց համագործակցութիւնը ամեն ժամանակէ աւելի ան- հըրաժեշտ ստիպողականութիւն մըն է մարդկութիւնը իրեն սպառնացող վերահաս զժբախտութիւններէն փրկելու հա- մար: Այսինքն, ըսել կ'ուզեմ թէ, պղտտոնական հարց մը պէտք չէ նկատել Եկեղեցիներու Միութիւնը:

«Շատեր թերեւս աւարկեն, մենք խեղճ հոգեւորական- ներս ի՞նչ կրնանք ընել երբ քաղաքական և զինուորական իշխանութիւնը պետական մարդոց ձեռքն է, անոնք ի՞նչ կ'ուզեն կ'ընեն, և մեզ միայն համակերպիլ կը մնայ:

«Ես այդպէս չեմ խորհիր: Արտաքին աշխարհը կառու- վարող հոգեկան ներքին աշխարհն է. և մենք այս ներ- քին աշխարհին ղեկավար մարդիկն ենք. և հրաշքներ կրը- նանք գործել, եթէ գիտակցինք մեր այս հզօր ոյժին: «Ճէթ ու օրտորը» ի այս համաշխարհային ժողովը կրնայ հրաշքներ գործել աշխարհի խաղաղութեան գործին մէջ, պայմանաւ որ նախ մենք աշխարհի Եկեղեցիներու և տարբեր ազգերու հոգեւորականներու մէջ խաղաղութիւնն և սէրը հաստա- տենք:

«Հրաշխից դարը շատեր անցած կը կարծեն: Անցած չէ. բաւ է որ Քրիստոսի քարոզած հաւատքը մեր մէջ չպակսի, բայց ո՛չ Թովմաս առաքելոյն հաւատքը, այլ Պօղոս առաք- եայի բոլոր հաւատքը:

Ամեն յարգանքի և շնորհաւորութեան արժանի մեր հո- գեւոր եղբայրներու նախաձեռնութեան շնորհիւ Սթւ. քհն. Սթւ. քհն. մէջ մէկ քանի տարի առաջ ծառ մը տնկուեցաւ, այսօր հաւաքուած ենք այս տեղ, այդ նորարողը ծառին արեւ ու ջուր տալու, փոյթ չէ թէ այս խաղաղութեան սիրոյն և համագործակցութեան պտուղները միայն ապագայ մեր սերունդները, որպէս որդիները ճաշակեն:

«Պէտք է յարատեւ կերպով այս ծառը մեր ամենօրեայ խնամքին գուրգուրոնքին առարկայ ընենք, աճեցնենք և զօրացնենք, որպէսզի մեր այս պատկառելի ժողովը կա- բենայ իր այնքան գնահատելիօրէն ստանձնած պատմական պարտականութիւնը, եկեղեցիներու միութիւնը ի գլուխ հանել, նոր դարազրուի մը բանալով մարդկութեան:

«Թէ ի՞նչ կը հասկնամ Եկեղեցիներու Միութիւնը ըսե- լով, աւելի յստակ բացատրեմ. ևս համագործակցութիւն կը հասկնամ: Օրինակ. Զուիցերիան՝ դասական երկիրը գեղե- ցիկ գործի և դադափարի իւրաքանչիւր «քանթոն» իր ա- ռանձին տարբեր դրօշակը ունի, տարբեր օրէնքները, նոյն իսկ երբեմն իրարու հակասական, ունի իր տարբեր լիզու- ները և տարբեր յարանուանութիւնները, բայց ամբողջ աշ- խարհ գիտէ որ Զուիցերիան մէկ անձեռնմխելի պետութիւն է, հզօր, հարուստ և ներքնապէս շատ աւելի խաղաղ քան միատարր կարծուած պետութիւններն ու ժողովուրդներ:

«Կ'առաջարկեմ որ Զուիցերիոյ նման արտաքին հզօր մի- ութիւն մը կազմենք, թոյլ տալով որ իւրաքանչիւր եկեղե- ցի պահէ իր ունեցած անկախութիւնը, պայմանաւ սակայն որ քրիստոնեայ եկեղեցիներու համադաշնակցութեան մաս կազմէ, ուխտալ համագործակցութեամբ մը:

«Աշխարհ որքան ուզէ թող սկեպտիկ ըլլայ, բաւ է որ

մենք սկիզբիկ չըլլանք, և մեր սկսած այս նուիրական գործին անկեղծ հաւատքն ունենանք: Հաւատոյ հանդանակները, բանաձեւերը չէ որ պիտի կրնան ապահովել մեր այս գործին յաջողութիւնը: Հաւատք և կամք կը բաւեն արդէն զնայն ապահովելու համար:

Շն շատ լաւատես եմ, և արդէն յաջողած կը կարծեմ մեր սկսած գործը. զի աշխարհի հետաւոր անկիւններէն մեր սյստեղ գալ հաւաքուիլն իսկ ինքնին այս գործին յաջողութեան ապացոյց է:

Յիկեղեցիներու միութեան զաղափարը յղանակ՝ առաջին յաջողութիւն, զայն գործադրութեան զնեղ՝ երկրորդ յաջողութիւն, մեր այս սկսած գործը յարատեւութեան մէջ պահելու համար ձեռք աստուելիք միջոցներն ալ՝ երրորդ յաջողութիւն: Իսկ վերջնական յաջողութիւնը անկասկած է, քանի որ մենք համաշխարհային սիրոյ, կորաչրութեան ու խաղաղութեան վրայ կ'աշխատինք և սիրոյ և խաղաղութեան յաւիտենական Աստուածը մեզ պիտի օգնէ և մեզ հետ պիտի ըլլայ, բաւ է որ մեր սրտերը իրեն հետ ըլլան:

«Հայ Առաքելական Եկեղեցին ամենահին եկեղեցիներէն մէկն է և իր պարզութեամբ, իր ժողովրդական ոգիով և միխոնաւոր նահատակներով իր պատուոյ տեղն ունի քրիստոնեայ բոլոր եկեղեցիներէն: Կողմունեմ զձեզ ամենքդ Հայ Եկեղեցոյ անունով և կը յայտնեմ որ Հայ Եկեղեցին ամենահին գարեղէ ի վեր, արդէն քրիստոնէական բոլոր եկեղեցիներու հետ, ո՛չ մէկին հանդէպ նզովք ունի, կ'ընդունի անոնց բոլորին հոգեւոր ծիսակատարութիւնները և բոլոր սրտով կը փարի համագործակցութեան աստիճանաւ հոյակապ այս գաղափարին:

Գիտէք արդէն թէ հին Կտակարանի յիշած ջրհեղեղէն վերջ, Նոյեան աստուածը իջաւ Արարատի վրայ: Նոյեան տապանէն արձակուած ազաւնին ձիթենիի ճիւղը լերնին եկաւ Նոյին տալու փրկութեան աւետիար, թէ Տիրոջ բարկութիւնը անցած է, ջուրերը քաշուած են, ցամաքը երեւան եկած է ու երկիրը գարձեալ ծլիլ ու ծաղկիլ սկսած է:

«1914 — 1918ի համաշխարհային արեան ջրհեղեղին վաղորդայնին, Լոզանի այս վերնատան մէջ մեր համաշխարհային համաժողովը թող ըլլայ նոր Պէնտէկոստէ մը, և մենք սիրոյ և խաղաղութեան աւետիար տանինք մեր երկիրներուն և մեր եկեղեցիներուն, աւետիար՝ մեր փոխադարձ անկեղծ սիրոյն և համերաշխ գործակցութեան, և մեր անսասան ուխտը՝ պահելու այս համերաշխութիւնն ու համագործակցութիւնն անքակտելի: Քրիստոնէութեան համար պատմական այս մեծ օրուան մէջ, կ'ողջունեմ Քրիստոնէութեան այս նոր արշալոյսը» (երկարատեւ ծափեր):

Համաժողովը իր վերջին նիստը գումարեց Օգոստոս 22 շաբաթ օրը: Նոյն օր ընտրուեցաւ նոր Յանձնաժողով մը

81 անդամներէ, որուն նպատակը պիտի ըլլայ ՓԱՆՈՒՄԸ ամեն տարի ժողովքի հրաւիրել եկեղեցիները: Այս յանձնաժողովին անդամ ընտրուած էր նաև Տ. Գրիգորիս եպ. Պալազիան:

Համաժողովին փակումն այ՛ ինչպէս բացումը, կատարուեցաւ հանդիսաւորապէս Լոզանի Մայր Եկեղեցոյն մէջ ուր բազմամրոյն ժողովուրդ մը ձեռք ձեռքի տուած՝ իրեն կորաչրական սիրոյ նշան, «Հայր մեր»ը արտասանեցին:

Նախագահ Տ. Պրէնտ Եպիսկ. ներկայացուց ժողովին ընդարձակ բանաձեւ մը, զոր իր կարեւորութեանը համար ի ստորեւ կը ներկայացնենք:

Ա.—Այստեղ հաւաքուած Եկեղեցիներու ներկայացուցիչները ուրախ են յայտարարելու որ իրենք հիմնաւորապէս համաձայն են հետեւեալ հինգ «թէզ»երու վերաբերմամբ.

1. Քրիստոնեայ պաշտօնէութիւնը Քրիստոսի միջոցով եղած Աստուծոյ պարգիւն է իր Եկեղեցոյն և էական է Եկեղեցոյ գոյութեան և բարեկաջող յառաջդիմութեան համար:
2. Քրիստոնեայ պաշտօնէութիւնը Քրիստոսէ և Անսր

մենք սկիպոիկ չըլլանք, և մեր սկսած այս նուիրական գործին անկեղծ հաւատքն ունենանք: Հաւատոյ հանդանակները, բանաձեւերը չէ որ պիտի կրնան ապահովել մեր այս գործին յաջողութիւնը: Հաւատք և կամք կը բաւեն արդէն զայն ապահովելու համար:

«Ես շատ լաւատես եմ, և արդէն յաջողած կը կարծեմ մեր սկսած գործը. զի աշխարհի հետաւոր անկիւններէն մեր այստեղ գալ հաւաքուիլն իսկ ինքնին այս գործին յաջողութեան ապացոյց է:

«Եկեղեցիներու միութեան զազախարը յղանալ՝ առաջին յաջողութիւն, զայն գործադրութեան զնեղ՝ երկրորդ յաջողութիւն, մեր այս սկսած գործը յարատեւութեան մէջ պահելու համար ձեռք անուակելիք միջոցներն ալ՝ երրորդ յաջողութիւն: Իսկ վերջնական յաջողութիւնը անկասկած է, քանի որ մենք համաշխարհային սիրոյ, եզրայրութեան ու խաղաղութեան վրայ կ'աշխատինք և սիրոյ և խաղաղութեան յաւիտեական Աստուածը մեզ պիտի օգնէ և մեզ հետ պիտի ըլլայ, բաւ է որ մեր սրտերը իրեն հետ ըլլան:

«Հայ Առաքելական Եկեղեցին ամենահին եկեղեցիներէն մէկն է և իր պարզութեամբ, իր ժողովրդական սպիտիկ և միխոնաւոր նահատակներով իր պատուոյ տեղն ունի քրիստոնեայ բոլոր եկեղեցիներէն: Կողջունեմ զձեզ ամենքդ Հայ Եկեղեցոյ անուանով և կը յայտնեմ որ Հայ Եկեղեցին ամենահին դարերէ ի վեր, արդէն քրիստոնէական բոլոր եկեղեցիներու հետ, ո՛չ մէկին հանդէպ նզովք ունի, կ'ընդունի անոնց բոլորին հոգեւոր ծիսակատարութիւնները և բոլոր սրտով կը փարի համագործակցութեան աստիճանաւ հոյակապ այս գաղափարին:

«Փիտէք արդէն թէ հին կտակարանի յիշած ջրհեղեղէն վերջ, Նոյեան տապանը իջաւ Արարատի վրայ: Նոյեան տապանէն արձակուած աղաւնին ձիթենիի ճիւղը թերնին եկաւ Նոյին տալու փրկութեան աւետիար, թէ Տիրոջ բարկութիւնը անցած է, ջուրերը քաշուած են, ցամաքը երեւան եկած է ու երկիրը զարձեւալ ծլիլ ու ծաղկիլ սկսած է:

«1914 — 1918ի համաշխարհային արեան ջրհեղեղին վազորդայնին, Լոզանի այս վերնատան մէջ մեր համաշխարհային համաժողովը թող ըլլայ նոր Պէնտէկոստէ մը, և մենք սիրոյ և խաղաղութեան աւետիար տանինք մեր երկիրներուն և մեր եկեղեցիներուն, աւետիար՝ մեր փոխադարձ անկեղծ սիրոյն և համերաշխ գործակցութեան, և մեր անսասան ուխտը՝ պահելու այս համերաշխութիւնն ու համագործակցութիւնն անքակտելի: Քրիստոնէութեան համար պատմական այս մեծ օրուան մէջ, կ'ողջունեմ Քրիստոնէութեան այս նոր արշալոյսը» (երկարատեւ ծափեր):

Համաժողովը իր վերջին նիստը գումարեց Օգոստոս 22 շաբաթ օրը: Նոյն օր ընտրուեցաւ նոր Յանձնաժողով մը

81 անդամներէ, որուն նպատակը պիտի ըլլայ ՓԱՆՈՒՄԸ ամեն տարի ժողովքի հրաւիրել եկեղեցիները: Այս յանձնաժողովին անդամ ընտրուած էր նաև Տ. Գրիգորիս եպ. Պալազեան:

Համաժողովին փակումն ալ՝ ինչպէս բացումը, կատարուեցաւ հանդիսաւորապէս Լոզանի Մայր Եկեղեցոյն մէջ ուր բազմամբոյն ժողովուրդ մը ձեռք ձեռքի տուած՝ իրրեկըրայրական սիրոյ նշան, «Հայր մեր»ը արտասանեցին:

Նախագահ Տ. Պրէնտ Եպիսկ. ներկայացուց ժողովին ընդարձակ բանաձեւ մը, զոր իր կարեւորութեանը համար ի ստորեւ կը ներկայացնենք:

Ա.—Այստեղ հաւաքուած Եկեղեցիներու ներկայացուցիչները ուրախ են յայտարարելու որ իրենք հիմնաւորապէս համաձայն են հետեւեալ հինգ «թէզ»երու վերաբերմամբ.

- 1. Քրիստոնեայ պաշտօնէութիւնը Քրիստոսի միջոցով եղած Աստուծոյ պարգիւն է իր Եկեղեցոյն և էական է Եկեղեցոյ գոյութեան և բարեյաջող յառաջգիմութեան համար:
- 2. Քրիստոնեայ պաշտօնէութիւնը Քրիստոսէ և Անոր

հոգիէն կը ստանայ իր մշտական իշխանութիւնը և իր ազդեցութիւնը :

3. Պաշտօնէութեան նպատակն է միայն Քրիստոսի միջոցով փրկիլ սրբազնագործութեան մասնակից եղող մարդիկը, և այս ալ հովուական գործունէութեամբ : Աւետարանի քարոզութեամբ և Խորհուրդներու կատարումով, որ ազդեցիկ կը գառնան հաւատքի շնորհիւ :

4. Քրիստոնեայ պաշտօնէութեան յանձնուած են, ամբողջովին կամ մասնակի կերպով, Եկեղեցւոյ առաջնորդութիւնը և կարգապահութիւնը :

5. Պաշտօնէութեան համար բարեմասնեալ մարդիկ Հոգիէն կոչուած և Եկեղեցիէն ընդունուած, աղօթքով և ձեռքերու հպումով ձեռնադրութիւն կ'ընդունին որ անոնց հըրատան կուտայ պաշտօնավարելու :

Բ. Զանազան քրիստոնեայ ընկերութիւններու ծոցին մէջ, որոնց միջեւ քրիստոնէութիւնը բաժնուած է պատմութեան ընթացքին, զարգացած են պաշտօնէութեան զանազան ձեւերը՝ նայելով պարագաներուն. ուր կը գտնուէին այս այլազան Եկեղեցիները և նայելով անոնց Քրիստոսի նպատակները և Նոր Կտակարանի առաջնորդութիւնը մեկնելու ձեւին :

Աստուծոյ Նախախնամութեան շնորհիւ այս Եկեղեցիները եղած են աներկբայելիօրէն Սուրբ Հոգիէն օրհնուած գործիները՝ աշխարհը լուսաւորելու, մեղաւորները դարձի բերելու և հոգիները սրբապործելու համար : Բայց այն տարբերութիւնները, որ առաջ եկած են պաշտօնէութեան այս զանազան ձեւերու իշխանութեան և պաշտօնին վերաբերմամբ, եղած են և են տակաւին խոտովութիւններու, կասկածներու և թիւրխմացութիւններու պատճառ :

Ատոր հետեւանքը եղած է այն, որ իրերանադորդութեան վերաբերեալ դժուարութիւնները երթալով աւելի շեշտուեր են, հաւատացեալ հոգիները վերաւորուեր և մոլորուեր են, մինչդեռ միւս կողմէ, առաքելութիւններու

մարդին մէջ, ուր Եկեղեցին իր էական նպատակը կ'իրագործէ, որ է աւետարանել մարդկային էակներուն, նոր Եկեղեցիները միութեան այս պակասին մէջ գտեր են շատ լուրջ արգելք մը Աւետարանի քարոզութեան համար :

Ուրեմն, ստիպողական պահանջ մըն է որ միջոցներ ձեռք առնուին որպէսզի ընդհանուր պաշտօնէութիւն մը ճանչցուի եկեղեցւոյ բոլոր մասերուն մէջ իրր նուիրագործուած ամբողջական Եկեղեցիէն :

Գ.— Արձանադրենք հիմա այն տարբերութիւնները, որոնց ակնարկուած է վերը :

Ահա Օրթոտոքս Եկեղեցւոյ անսակէտը :

Ընդունելով նուիրապետութիւնը իբրև եկեղեցւոյ մէջ սահմանուած նոյն ինքն Քրիստոսէ և իբրև օրիան մը որով Եկեղեցին կը հազարդէ շնորհքի իր միջոցները, որպիսիք են Խորհուրդները, և հաւատալով որ նուիրապետութիւնը իր երբեակ ձեւին մէջ՝ եպիսկոպոսներ, երէցներ և սարկաւազներ, իրր հիմք կընայ ունենալ միայն Առաքելական անընդհատ յաջորդութիւն մը, Օրթոտոքս Եկեղեցին կը ցաւի որ չի կրնար համաձայնութեան մը գտլ Համաժողովին մէջ ներկայացուած շատ մը եկեղեցիներու հետ : Բայց ան կ'աղօթէ Աստուծոյ, որ իր Հոգւոյ միջոցով միութեան առաջնորդէ եկեղեցիները նոյնիակ այս ծանր տարակարծութեան մէջ :

Դ. Արեւմտեան քրիստոնէութեան մէջ կան ակնյայտնի տարբերութիւններ :

Ահա տեսակէտներէն մէկուն յատկանիշները :

Այն համոզումը թէ՛

ա. Նուիրապետութեան մէջ միշտ եղած են զանազան աստիճաններ, որոնցմէ իւրաքանչիւրը ունեցած է իր սեփական պաշտօնը :

Բ. Թէ ձեռնադրութիւնը աստուածային պատգամի խորհրդաւոր արարք մըն է և հետեւաբար անհրաժեշտ :

Գ. Թէ եպիսկոպոսները, որոնք ստացած են իրենց պաշտօնը առաքելական յաջորդութենէն, ձեռնադրութեան պարտաւորեալ գործակալներն են :

դ. Թէ աշպէս ըմբռնուած առաքելական յաջորդութիւնը անհրաժեշտ է նուիրապետութեան իշխանութեան, հեղինակութեան, Եկեղեցւոյ տեսանելի միութեան և խորհուրդներու վաւերականութեան:

Սիւս կողմէ Համաժողովին ներկայ բազմաթիւ Եկեղեցիներու մէջ գերակշիռ կը հանդիսանան հետեւեալ համազումները:

Ա. Թէ իրականին մէջ կայ միայն մէկ պաշտօնէութիւն Բանի և Խորհուրդներու:

Բ. Թէ այս Եկեղեցիներուն մէջ գոյութիւն ունեցող պաշտօնէութիւնները համաձայն են Նոր Կտակարանին, ապացուցուած իրենց արդիւնքներով. անոնք օրինական իշխանութիւն ունին Եկեղեցւոյ մէջ և անոնց կատարած խորհուրդները վաւերական են:

Գ. Թէ պաշտօնէութեան ո՛չ մէկ մասնաւոր ձև հաւատարի առարկայ է:

Ասկէ զատ, պէտք է արձանագրել և այն որ պաշտօնէութեան վերաբերմամբ վերը յիշուած ակադրներու միջև կան միջին կարծիքներ ալ. օրինակի համար, կան այնպիսիներ որ Եկեղեցւոյ վարչութեան կախկոպութեան սխիսթիմին յարելով հանգերձ, չեն ընդունիր առաքելական յաջորդութիւնը այնպէս, ինչպէս որ ան հոս ներկայացուած է իրրեւ կախկոպութեան կենսական տարր մը և կամ զայն կը մերժեն բոլորովին: Կան ուրիշներ ալ, որ յարելով Եկեղեցւոյ վարչութեան երիցական կամ այլ սխիսթիմին, կը համարեն որ առաքելական պաշտօնէութիւնը փոխանցելի է և իրօք փոխանցուած է երիցանց միջոցով:

Եկեղեցւոյ կազմակերպութեան վերաբերմամբ եղած են որոշ թելադրանքներ, զորս մեք Եկեղեցիներու քննութեան կենթարկենք:

1. Նկատելով որ Եպիսկոպոսութիւնը, Երէցներու Խորհուրդը և հաւատացեալներու համայնքը փոխադարձաբար ունեցած են իրենց տեղը նախնական Եկեղեցւոյ կազմութեան մէջ,

2. Նկատելով որ պաշտօնէութիւնը, ըլլա՛յ բղխած եպիսկոպոսութենէ, ըլլա՛յ երէցներէ, ըլլա՛յ համայնքէ, այ-

սօր փոխադարձաբար ընդունուած է Քրիստոնէութեան մեծ Եկեղեցիներու կողմէ և տոյգպէս եղած է դարերու ընթացքին:

Յ. Նկատելով որ պաշտօնէութիւնը, ըլլա՛յ բղխած եպիսկոպոսութենէ, երեցներէ կամ համայնքէ, էական համարուած է Եկեղեցւոյ կարգաւորութեան համար, ըստ ոմանց իր կախկոպութեան ձևին տակ, ե. ըստ այլոց իր երիցական ձևին տակ և վերջապէս Երրորդներուն համար իր «քոնկրէկտիօնայիսթ» ձևին տակ:

Այս չարժատիքներու վրայ հիմնուելով մենք կ'ընդունինք որ այս զանազան տարրերը, աւելի կատարելապէս ուսումնասիրուելու պայմանով, պէտք է ունենան իրենց յատուկ տեղը Միացեալ Եկեղեցւոյ կազմակերպութեան և կեանքին մէջ, և իւրաքանչիւր անջատ Եկեղեցի, յիշելով Աստուծոյ իր պաշտօնեաներուն շնորհած առատ օրհնութիւնները անցեալին մէջ, պէտք է խնդրութեամբ բերէ Միացեալ Եկեղեցւոյ ընդհանուր կեանքին իր սեփական հոգեւոր գանձերը:

Եթէ այս առաջարկը ընդունուի և եթէ անոր համակերպին, էական է ընդգծել որ ձեռնադրութեան այս ձևերէն ո՛րէ մէկուն ընդունելութիւնը, որ Եկեղեցւոյ պաշտօնէութեան մէջ մանեւու կանոնաւոր և բնականոն ձևեր պիտի ըլլայ ապագային, պէտք չէ որ մեկնուի իրրեւ յարում որոշ տեսութեան մը, Եկեղեցւոյ պարտականութիւններէն ո՛րէ մէկուն սկզբնաւորութեան, բնոյթի և պաշտօնի վերաբերմամբ, ո՛չ ալ ենթադրուի Ընդհանրական Եկեղեցւոյ ճիւղերու ձեռնադրութեան զանազան ձևերու տակ, իբրև պահող առաքելական վաւերական պաշտօններու, ոչ ալ մերժուի վարկաբեկութի խօսքի և Խորհուրդներու պաշտօնը, ներկայ կամ անցեալ, որ կիրարկուած և օրհնուած է Աստուծոյ Հոգւով:

Ասկէ զատ, մենք կ'ընդունինք որ Սուրբ Հոգին տրուած է ամեն մէկ հաւատացեալի և իւրաքանչիւր հաւատացեալի համար Աստուած Քրիստոսի միջոցով անմիջականօրէն մտայելի ըլլալով և ամեն հաւատացեալ ունե-

նալով Սրբոյ Հոգւոյն սասնաւոր շնորհները, ինչպէս ուսուցումը, քարոզութիւնը և հոգիներու բուժումը՝ և Եկեղեցւոյ, ինչպէս և նահատակներու գանձերը ըլլալով, արդարութիւն՝ անհրաժեշտութիւն է որ Եկեղեցին այս շնորհքները աւելի առատօրէն գործածէ իր հոգւոր և հաւաքական կեանքի զարգացման և մեր Փրկիչ Քրիստոսի թագաւորութեան տարածման համար:

Ե.— Համաժողովը բաւական ժամանակ չունեցաւ՝ տալակարծութիւններու բոլոր կէտերը ուսումնասիրելու խնամքով և համբերութեամբ, որոնք միայն կրնային առաջնորդել դէպի կատարեալ համաձայնութիւն: Նոյն նկատողութիւնը կը վերաբերի նմանապէս այն առաջարկներուն, որ եղած պէտք է ըլլային Միացեալ Եկեղեցի մը կազմելու նըպատակով: Բայց մենք չենք կրնար գոհանալ այս յիշատակութեամբ միայն. առանց յոյս յայտնելու որ այս հարցի ընդհանուր ուսումնասիրութիւնը պիտի շարունակուի զանազան Եկեղեցիներու անդամներու կողմէ, որ ներկայացուած են այս Համաժողովիս մէջ, և ամենաարդիւնաւոր հետեւանքները պիտի ունենայ Միութեան դատին համար:

Զ.— Իբր եզրակացութիւն, մենք կ'արտայայտենք մեր երախտագիտութիւնը Ամենակարող Աստուծոյ, այս վերջին տարիները Եկեղեցիներու փոխադարձ մերձեցման նպատակով կատարուած յառաջդիմութեան համար և մեր համոզումը, որ պէտք է յառաջ ընթանալ հաւատով և քաջութեամբ ապահովուած, որ Աստուծոյ օրհնութեամբ մենք ընդունակ ենք լուծելու մեզ առաջադրուած խնդիրները:

Մասնաւորապէս, մենք համամիտ ենք համաժողովի միջոցին բազում անգամ արտայայտուած այն համոզման թէ սպասելով հաւատքի և Եկեղեցւոյ կազմութեան հարցերու լուծման, որոնց վերաբերմամբ կարելի չեղաւ այժմէն իսկ

համաձայնիլ, մեզ համար կարելիութիւն կայ ո՛չ միայն իբրև անհատներ, այլ որպէս Եկեղեցիներ, միանալ իրարու եղբայրական պաշտամունքի գործունէութեան համար, զոր Քրիստոս աւանգած է իր աշակերտներուն:

Հետեւաբար, մենք կը յանձնարարենք մեր Եկեղեցիներուն ուսումնասիրել այժմէն իսկ ընդհանուր պաշտամունքի անմիջական կարելիութիւնները, աւելի զգալիօրէն ակնյայտնի կացուցանելով արդէն գոյութիւն ունեցող Միութիւնը:

Է.— Տրուած ըլլալով այս Համաժողովի նպատակը, համոզուած ենք թէ գերազասելի է Խորհուրդներու մանրամասնութեանց մէջ չմտնել. զորս ումանք կ'որակեն իբր «միսթէր»։ Հետեւաբար այս տողերու նպատակն է ցոյց տալ թէ անոնք որ Խորհուրդներու իրենց բմբռնումին մէջ կը տարբերին, կրնան խորհրդակցիլ միասին և անոնց արժէքը բնորոշիլ:

Մենք կը հաւատանք թէ քրիստոնէայ աշխարհին մէջ կան Խորհուրդներուն արժէքին և նշանակութեան աւելի կատարեալ գիտակցութեան ակնյայտնի նշաններ և կը կարծենք թէ այս տրամադրութիւնը պէտք է քաջալերել և առաջնորդել իբր միջոց Եկեղեցիներու հոգւոր կեանքի և փորձառութեան խորքը թափանցելու: Մենք կ'ընդունինք որ Խորհուրդները շատ մեծ կարեւորութիւն ունին Եկեղեցւոյ հաւաքական կեանքի և հաղորդակցութեան համար և թէ շնորհքը Սուրբ Հոգիէն կը տրուի, առնելով այն՝ ինչ որ Քրիստոսինն է և կիրարկելով զայն մարդկային հոգիին:

Մենք կը հաւատանք թէ Խորհուրդները Աստուծոյ սահմանուած են և Եկեղեցին պէտք է երախտագիտութեամբ մատակարարէ զանոնք, իբրև Աստուծոյ շնորհները:

Մենք կը հաւատանք թէ Խորհուրդներու մէջ կայ արտաքին նշան և ներքին շնորհք, և թէ Խորհուրդները ողորմութեան միջոցներ են, որոնց միջոցով Աստուած անստեղծ նեղիօրէն կը գործէ մեր անձին մէջ: Մենք նմանապէս կ'ըն-

գունինք թէ Աստուած իր ողորմութեան շնորհքներու մէջ սահմանափակուած չէ իր սեփական Խորհուրդներով :

Օրթոտոքս Եկեղեցին և ուրիշ եկեղեցիներ կը դաւանին թէ եօթը Խորհուրդ կայ, և թէ ասոնք վաւերականօրէն մատակարարուած ըլլալու համար, այդ մատակարարումը պէտք է կատարուի որոշ ձեւերու համաձայն, որոշ տարրերով և ըստ օրինի որակուած պաշտօնէութեան մը միջոցով : Ուրիշները իրր միակ Սրբախորհուրդներ կը նկատեն Մկրտութիւնը և Ս. Հաղորդութիւնը : Այս համաձոցովին մէջ մենք կը չեշտենք այս երկու Խորհուրդներուն վրայ, որովհետեւ անոնք ընդհանրապէս ընդունուած են այս համաժողովի անգամներուն կողմէ :

Մենք կը հաւատանք թէ մկրտուելով ջուրով յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, մեղքերու թողութեան համար, մենք կը մկրտուինք միայն մէկ հոգեով, միայն մէկ մարմին կազմելու համար : Ուսիկա ըսել չէ որ մենք կ'անգիտանանք մեր մէջ գոյութիւն ունեցող տարրերութիւնները՝ Մկրտութեան բմբունումի, մականութեան և իր կատարման ձեւի վերաբերմամբ :

Մենք կը հաւատանք մեր Տիրոջ ներկայութեան Ս. Հաղորդութեան մէջ և կը հաւատանք թէ այս գործողութեան մէջ մենք կը հաղորդակցինք մեր Հօր Աստուծոյ հետ՝ մեր կենդանի Փրկիչ և իր Որդի Յիսուս Քրիստոսով, որ միակ Հայն է Կենաց, տրուած աշխարհի կեանքին համար, որ կը պահէ իրեն պատկանողներուն կեանքը, և թէ մենք հաղորդակցութեան մէջ ենք բոլոր անոնց հետ որ միացած են Քրիստոսի : Մենք համաձայն ենք թէ Տէրունական Ընթրիքի Խորհուրդը եկեղեցւոյ ձէսերէն ամենասրբազանն է, ձէս մը որու միջոցով կը յիշուի և կը յայտնուի Տիրոջ քաւչական մահը, և որ փառաբանական և շնորհումատոյց գոհ մըն է և մեր սեփական անձին Տիրոջը նուիրաբերուելու հանդիսաւոր գործողութիւնը :

Մասնաւորապէս տեսակէաներու այլազանութիւն կայ

մեր մէջ ինչ կը վերաբերի 1) շիրական ներկայութեան բնոյթին և ձեւին, 2. Յիշատակութեան և զոհողութեան ըմբռնումին, 3. Տարրերու և տրուած շնորհքի յարաբերութիւններուն և 4. Մատակարարողի որակի և ձէսի վաւերականութեան ու զօրութեան յարաբերութեան :

Մենք գիտենք թէ Աստուծային ներկայութեան և Աստուծոյ շնորհքի իրականութիւնը այս Խորհուրդի մէջ կալող չէ համազօր կերպով արտայայտուիլ մարդկային մտքով և լեզուով :

Վերջապէս մենք կը վերջացնենք այս յայտարարութիւնը, ազօթելով Աստուծոյ որ ներկայիս միւսնոյն ուխտին ամենուն լիութի մասնակցութիւնը արդիւրդ տարրերութիւնները բարձուին :

Վ Ե Ր Ջ

ԵՐՋԱՆԻԿ ԱՊՐԵԼՈՒ ՄԻՋՈՅԸ



Ո՛վ մարդ, կ'ուզե՞ս երջանկապէս անցնել քու կենաց սակաւաթիւ տարիներէ : զօրս շնորհած է քեզի Արարիչը երկրիս վրայ. քու սիրտդ կապէ մի անաղարտ դեղեցկութեան. քու վարքդ թող սահման դնէ փափաքներուդ. քու պարտաւորութիւնդ նախագաս ըրէ քան քու հակումներդ. պէտքի և կարեւորութեան ատաջնութիւնը՝ բարոյական իրաց վերայ տարածէ : Ուսիր կորուսանել ինչ որ մի օր կրնայ բարձուիլ քեզմէ : Ուսիր՝ թողուլ ամեն ինչ երբ ատաքինութիւնն է, որ կը հրամայէ : Բարձր բռնէ զքեզ աման արկածից հանդէպ : Ուսիր՝ կտրել սիրտդ ամեն բանէ, առանց սակայն զայն արիւնելու : Արի և աննկուն եղի՛ր հակառակութեանց սողն, և քո պարտականութեանցդ մէջ եղի՛ր անյողողդ և ճշդապահ : Յայնժամ դժխեմ բախտին հակառակ քու օրերդ երջանկութեան մէջ կ'անցնես, և բուն կրից պատերազմին

մէջ իմաստութեամբազգայնութեան կը հանդիսգ բանաս : Բու ստաց-
ուածքդ կը վայելես անլրդով բերկրութեամբ , առանց գերին
ըլլալու անոնց , և կ'զգաս թէ մարդս , յորմէ ամենայն ինչ
խոյս կուսայ , կորանցնել գիտնալուն համար ուրախ կ'ըլլայ :
Ստոյգ է որ դու չես ունենար մտացածին պատրանաց հա-
ճոյքը , այսու ամենայնիւ չես ունենար նաև այն մշտափե
ցաւերն , որք այդ խաբէական հաճոյց պտուղներն են : Այս
փոխանակութիւն յոյժ շահաւոր կը լինի քեզի , զի նորա
ցաւերն խիստ կսկծալի են և վայելքն ու հաճոյքն առոր-
եայ : Այս կերպով անխռով կը վարես քու կեանքդ և կ'ա-
ւարտես զայն առանց գորհուրանաց , կը բաժնուիս ի կենաց
իրբև մի աննշան առարկայէ : Թող զարհուրին այլք և սագ-
նապին , խորհելով իրենց կեանքի զաղարուժը : Իսկ դու սոր-
ված ըլլալով այս աշխարհին ունայնութիւնը , կը հաւատաս
թէ նոր կ'սկսի քու բուն կեանքը : Մահը , այս' չարիբու
կենաց վախճանն է յուսանատ , իսկ բարիներու կենաց յու-
սապարար սկզբնաւորութիւնը :

Ո՛վ մարդ , կատարելութեան հասնելու համար , մի'տ
դիր այն ճշմարտութեանց , որ կը բղխին ի Բանէն Աստու-
ծոյ , Աստուծոյ Բանն միայն կ'առաջնորդէ յերջանկութիւն ,
զոր վայելել կըզգաս անշուշտ թէ աստ՝ յայսմ աշխարհի և
թէ անդ ի հանդերձելումն :

8

1889 Յունիս 22

յերուսաղէմ

Հարատութիւն և հոգ անբաժան ընկերներ են , ինչպէս
արեւն ու իր ստուերը : Բ.

Սէրն այնպիսի փափուկ զգացում մըն է , որ սիրահար
մը գուշակութեամբ միայն պարտի իմանալ թէ՛ կը սիրուի :
Սարդորի

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՆՇԱՆՆԵՐ



- Աղաւնի՝ բերանը ուսով .— Աւետիս , շինութիւն :
- Աղաւնի .— Կը նշանակէ անկեղծութիւն , ողջախոհութիւն :
- Աղուես .— Խորամանկութիւն , նենդութիւն :
- Այծ .— Հնարագիտութիւն :
- Առիւծ .— Ոյժ , քաջութիւն , վեհանձնութիւն :
- Առիւժ՝ ցեղահար .— Վրէժխնդրութիւն :
- Առիւժ՝ մուշոյ .— Կատաղութիւն :
- Առիւծ ընդ յծով .— Աղատութիւն :
- Արագիլ .— Որդիական սէր , երախտագիտութիւն :
- Արծիւ .— Աղատասիրութիւն , նրբամտութիւն , ազնուութիւն :
- Արջ .— Որկրամոլութիւն :
- Այծու կոսո՛ւ որոյ մեջէն պսուղներ կը յորդին .— Նշանակ
առատութեան :
- Առանակ եօքնասդեան .— Եօթն Ս . Խորհուրդ եկեղեցւոյ :
- Անիւ .— Փոփոխութիւն , անհաստատութիւն :
- Առագաստ ցաւու .— Հաւատք :
- Արեւ եւ բացուած գիրք .— Ճշմարտութիւն հաւատոյ :
- Արմաւենիի ուս .— Վարկ արդարոց :
- Բագէ .— Համ , հոտ :
- Բու .— Իմաստութիւն , երախտագիտութիւն : — Չարաչքու-
թիւն , ձախորդութիւն :
- Բոլորակ .— Կատարելութիւն :
- Բոցերով երկնքէն իջնող աղաւնի .— Հոգին Սուրբ :
- Բուրվառ ծխեալ .— Աղօթք :
- Գառնուկ .— Հեղութիւն , տնմեղութիւն :

Գոճ.— Հեռաքրքրութիւն, լեզուազարութիւն, շատախօսութիւն:

Գողի լապտեր.— Սուտ կրօնք:

Գիմակ.— Կերծաւորութիւն:

Եղջերու.— Երկիւղ, երկայնակեցութիւն:

Եռանկիւնի լուսաւոր մեջտեղը աչքով մը.— Ամենատուրք երրորդութիւն:

Զանգակաւոր գաւազան.— Յիմարութիւն:

Էօ.— Յամառութիւն, տղիտութիւն, էչութիւն:

Թիթեռն.— Անհասառութիւն, թիթեռութիւն, պառակտուն:

Իծ.— Անէծք, աւեր:

Խոզ.— Անմաքրութիւն, անձնասիրութիւն, խնուութիւն:

Խաչածեւ բանալիներ.— Նշան պապութեան:

Խարխիս.— Յոյս, վաճառականութիւն:

Խաչ.— Նեղութիւն, փորձութիւն:

Ծիծառն.— Անցաւոր երջանկութիւն, անփորձութիւն:

Կասու.— Մատնութիւն, չարութիւն, վէճ:

Կապիկ.— Նմանութիւն, ճարպիկութիւն:

Կակորդիլոս.— Նհնգութիւն:

Կրեայ.— Յամրութիւն:

Կամաբաձեւ գուն՝ վրան խաչով մը.— Աշխարհ հնազանդակալ ֆրիստոսի:

Կամար՝ ծիրանի գօտիով.— Ներողութիւն, գթութիւն:

Կնիք եւ բանալի.— Հաւատարմութիւն, դադանիք:

Կապար.— Թանձր միաք:

Կեիռ եւ սուր.— Արդարութիւն:

Կովու կամ եզան եղջիւր.— Աշխատութիւն:

Կրակ եւ ջուր.— Մաքրութիւն:

Հաւ.— Առատութիւն:

Հաւարուսն.— Գութ, Մալրական սէր:

Հնդկահաւ.— Հպարտութիւն, անմտութիւն, յանդգնութիւն:

Հայիլի.— Ծշմարտութիւն, խոհմտութիւն:

Ջիւղեթի.— Վնաս և աւեր:

Ձեռքեր՝ իրարու տուած.— Հաւատարմութիւն, անկեղծութիւն:

Ճապար.— Առատութիւն:

ձանն.— Ազատութիւն, անամօթութիւն:

ճրագ.— Ուսումն:

Մեղու.— Աշխատութիւն:

Մոդես.— Աէր:

Մուկ.— Աւերում:

Մրջիւն.— Խնայողութիւն, փութացանութիւն:

Մարդու մը գլխուն վրայ եռու ականջներ, աչքեր կապուած ու ձեռքը սուր.— Մոխրանդութիւն, անմտութիւն:

Մոխիր.— Մա՛:

Մոմ վառած.— Բարի օրինակ:

Մուրն եւ գամեր.— Հարկաւորութիւն:

Յովագ.— Անգթութիւն, դադանամտութիւն:

Յոպոպ.— Անմաքրութիւն:

Նապաստակ.— Երկիւղ, թուլութիւն, մտաւցկոտութիւն:

Շուկ.— Հաւատարմութիւն:

Շղթայ՝ կոսրած.— Ազատութիւն:

Շղթայ՝ պատեց կախուած.— Գերութիւն:

Շղթայ՝ գունձին բոլորսիք փաթեցուած.— Գերի:

Ոշխար.— Անմտութիւն:

Ոզնի.— Արդեւք:

- Ոսրեհ.— Հանդարտութիւն, տկարամտութիւն:
- Ուղտ.— Տոկունութիւն, հանդարտութիւն, չարքաշութիւն:
- Ոսկի.— Մաքրութիւն:
- Պսակ՝ աստեղեաց.— Անմահութիւն, յաղթութիւն, փառք արդարոց:
- Պսակ՝ փեռայ.— Ապաշխարութիւն:
- Չրունց.— Ճարտարութիւն:
- Սագ՝ բերանը քար մը բռնած.— Լռութիւն:
- Սպինքս.— Գաղտնիք:
- Սանձ.— Ձգաստութիւն:
- Սիւրս բոցավառ.— Սէր:
- Սնդիկ.— Խռովասիրութիւն, տիրապետութիւն, ճնշում:
- Սիրամարգ.— Ունայնամտութիւն:
- Սպիտակ զգեստ.— Անմեղութիւն:
- Վարագ.— Մաստկութիւն:
- Տասրակ.— Ամուսնական խոստումն, անմեղութիւն:
- Փիղ.— Կրօն, խելք զգաստութիւն:
- Փող.— Աւետարանի քարոզութիւն:
- Տուլ.— Ձգաստութիւն:
- Օձ.— Դիտութիւն:
- Օձ՝ պոչը խածած.— Յաւիտենականութիւն, անմահութիւն:
- Օձաձուկն.— Մարդատեցութիւն:

Հաւսեց Վ. Յ. Յակոբեան

Աշխարհիս մէջ միայն երկու ճամբայ կայ, մին է կատարեալ պարտաւորութիւն և միւսը դրժեւ, միջին ճամբայ չկայ:

Ան. Կիզօ

ԺԷ. ԳԱՐՈՒ ԿԻՆՆ ԸՍՏ ՌՈՒՍԱՅ

- Նա ունի երկայն մազեր ու կարճ խելք:
- Ով որ թողու զսանձ կնոջ, չը յաջողիլ ի գործս:
- Անովախ կինն այծէն ալ գէշ է:
- Սիրէ կինդ որպէս հոգիդ, ու թօթուէ զայն որպէս օտանձենի:
- Ծիծէ կինդ ճաշէն առաջ, վերստին ձեծէ զայն ընթարիքէն առաջ:
- Կինդ անօթ մը չէ, չի պիտի փշրի այն որչափ ձեծես:
- Մեր կողէն (Եւայի աղջիկէն) աղէկ բան մի՛ սպասէք:
- Կին և սատան մէկ են:
- Իւր կնոջ հաւատացողն երեք օր չսպրիլ:
- Շունը քան զկին խելացի է, զի իւր տիրոջ առջև չը հաջեր:
- Բազդատմամբ կնոջ սատան փոքրիկ անմեղ մըն է:
- Կինն երկու անգամ միայն սիրելի է. նախ երբ ոտք կը կոխէ մեր տան՝ հարսանեկան զգեստով. երբ հրաժեշտ կուտայ մեր տան սեմին մահու զգեստով:
- Պատերազմի երթալէդ առաջ աղօթէ՛ մի անգամ, ծովային ճամբորդութենէդ առաջ՝ երկու անգամ, իսկ ամուսնանալէդ առաջ երեք անգամ:

Յ. Թ. Գ.

Անսէր ամուսնութիւն հաստատել յուսահատութեան դուռ բանալ է. բայց սէրը պայման դնել առանց պարտաւորութեան, անպատուութեան և չուսյառութեան ոյժ տալ է: Է. Լըկուվի

Կանայք միշտ կը սիրեն, երբ երկրի վրայ սիրելու բան կը գտնեն՝ երկին ապաւէն կը փնտռեն: Բ.

ՉՈՐՍ ԱԻԵՏԱՐԱՆԻՉՆԵՐԸ

ՄԱՏԹԷՈՍ՝ Թարգմանի երգ կենաց
 ՄԱՐԿՈՍ՝ բարձր պատուար կամ ի վերայ տանեաց-
 ՂՈՒԿԱՍ՝ Յարութիւն.
 ՅՈՂՀԱՆՆԷՍ՝ հնազանդութիւն.

Երգոյն կենաց Մասթոսին.

Ապա Մարկոս պատուար բերդին:

Յեսոյ Ղուկասըն Յարութիւն,

Հուսկ Յովհաննէսն հնազանդութիւն:

Քառակերպեան սուրբ արժոյն.

Սոքա երեսն անկենկին:

Մարդ եւ առիւծ, ցուչ եւ արծուին.

Հանգիստ կաւաց Տեսնն Արարչին:

Մարդըն փստակ Մասթոսին.

Առիւծն արի փոյ Մարկոսին:

Ղուկաս հերկող երեսն եզին.

Յովհանն սչացող ըստ արծրին:

Օրինակեաց 1886 Հոկտ. 1

Երուսաղէմ

ՏՕՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՄԱՐԳԱՐԷԻՑ

Նախնոյն Իսրայէլի Մրոց տեսնողաց,
 Նորոյս Իսրայէլի միփարիչ աւեսաւորաց,
 Ժողովրդեանն Ասուծոյ խրատաւ սուսընորաց,
 Ի շախոյ ուղղութեան հոգեշունչ ոսհանորաց,
 Երկոսասան ազգաց անձնադիր հոյրուաց,
 Ասուածընէիր դասու մարգարհից երկոսասան,
 Յաւաջայիսն Ռիսիկի որդոյն Երեւայ,
 Ընդ արդար դասասանին գողորնութիւն փարգողին:
 Խաչնարածին Անուխայ յԱկիարիս Թեկուայ,
 Ի գործին հաւորուաց զաւեսարան սուսկողին,
 Երանեղոյն Միսիայ ի փարափէն Մորուսայ,
 Չնկեղեցին նոր ուիսիս ի Գրիսոսու զուշակողին.
 Մփանչելոյն Յովեղեայ որդոյն Բարուէլի,
 Ընդ յայտնութեան ի վերնասան զՅովսարասուն հոջակողին:
 Մարգարհից Հոյաննոյն հարիւրասպէսն Արդիւս,
 զՊատիւ անպարզաց ի յեղոն օրինակողի:
 Հրաշարոյն Յովհաննու որդոյն Յանսեայ
 Տերունեան յարութեան յօրինակ սուեղոյն:
 Ընտրեղոյն Նաուուայ ի գեղեցին Եղիսայ,
 Չոստ աւեսարանցաց եւ զաւսփեայս պատնողին:
 Հոգեսախոյն Անքակուայ արքազան փերողին,
 Չյաղքանակ խաչի քարձրագոչ քարեքանողին:
 Ասուածարեւայն Մոսիոնիայ յորդոցն Քաւեայ,
 Ի դարձ եւ ի հաւասու զայխարհ հրաշիրողին
 Պաշտօնէին սաճարի փահանային Անգիի,
 Բանական սաճարաց զշինութիւն խրատողին:
 Չարեանաշոյն Չափարեայ որդոյն Բարափեայ,
 Չգաղուսն փառօք ի զարարանս յայտնողին,
 Հրեշտակափրօնն Մարափիայ զունն մարգարհից,
 զՀրեշտակ Անեանակային մօտաշուս ձայնողին:
 Որոց այսօր է յիշատակ եւայն:

Ա. Լ. Ե. Լ. ՈՒ

(Ծննդեան երգը Բաղեի Խուլքիկ գիւղի մեջ)

| | |
|------------------------------|-----------|
| Յը՛նծացէք, ուրախացէք | ալէլուիա, |
| Էսօր ծնունդը կուս Մարիաման | > |
| Մարիամ գնաց դուռն ի յէրին | > |
| Չորա՛ւ, էրէր զՅիսուս-Որդին | > |
| Բուրդ խա՛նձարում փաթութեցին | > |
| Ի յանբանից մուր զրին | > |
| Գետ-Յորդանան մըկրտեցին | > |
| Էնէկէր ու էն տարին | > |
| Ձերուսաղէմն օր շինեցին | > |
| Սուն ու գէրան պակսեցուցին | > |
| Մելրոն, Գասպար ու Բաղդասար | > |
| Թիւեցին թախտէ կացին | > |
| Գացին, առան ծառ խնկենին | > |
| Առջի զրբին ծառը զընդաց | > |
| Միջին զրբին արուն բօխաց | > |
| Յետին զրբին ծառըն ընկաւ: | > |
| Գացին, բէրին Սիրամ, Սըգամն | > |
| Ու լըծեցին ու հօ՛ էրին | > |
| Սիրամ գնաց, Սըգամ չը գնաց | > |
| Գացին, բէրին պառվու մօզիկ | > |
| Ու լը՛ծեցին ու հօ էրին | > |
| Ասիս-Մասիս սարն ընցուցին | > |
| Կաթնի՛կ ազրուր ջուր խմցուցին | > |
| Ձերուսաղէմն էլ շինեցին | > |
| Ամա՛ռ ի վիրէն ծալ-ծալ ոսկի | > |
| Խողն ի վերէն սուս մարգըրիտ | > |

| | |
|----------------------------|-----------|
| Թոնի՛րն ինձ եկեղեցի | ալէլուիա, |
| Ակնե՛րն են խօւռոյ-խօւռոյ: | > |
| Սիմոն նստեր ծառի ճղին | > |
| Վռչա՛մ թռիւք վի թեւերուն | > |
| Աստված տուեր եօթ զոմ ոչխար | > |
| Եօթ զոմ ոչխրի պճեղն ոսկի | > |
| Աստված տուեր եօթ զոմ մասակ | > |
| Եօթ զոմ մատղու պճեղն ոսկի | > |
| Գութան ի դաշտ կը բանի | > |
| Չարկա՛մ ի դուռ կը պատուի | > |
| Տա՛նտիկին ու կին, տիկին | > |
| Սօլերդ խագիր ճըւղըռալին | > |
| Գնա՛, խասիր դուն մտռանին | > |

Երեկ խնձոր բեր
 մէ՛կն ասողին
 մէ՛կն խողին
 մէկը ջաղամարիին
 Յ. Մ. ՏՈՒՏՈՒԽԵԱՆ

ԵՐԳ ԱՌ ԱՆՁԿԱԼԻՆ ԵՒ ՓԱՓԱՔԵԼԻՆ ՅԻՍՈՒՍ

Յիսուս փափարեկին նախահարց խմբից.
 Նախագուշակեալն ի մարգարէից.
 Այց ելանէ սիրով խրոց ծառայից.
 Եւ տայ զինքն ի փրկանս փոխանակ ընալից.
 Ձընթաց տնօրէնութեան խրոյ վըճարէ.
 Ձգիրս աւետեաց նոցա կըտակ աւանդէ.
 Ձճանապարհ փրկութեան մարդկան ցուցանէ.
 Եւ ըզհաւատացեալքս յերկինս հրաւիրէ.
 Ձերրորդութիւն Սուրբ մեզ յար պաշտելի.
 Ըզմի Աստուածութիւնն երէ՛ր պագելի.

Բզոււրբ եկեղեցին իւր անխախտելի.
 Յառաջադրէ մեզ զու միշտ հաւատալի.
 Զխորհուրդ մկրտութեանն շնորհէ դեզ կենաց.
 Բզիտտովանութիւնն մարբութիւն մեղաց.
 Բզսէրն աստուածային եւ զսէր ընկերաց.
 Ուսուցանէ զլուխ զու պատուիրանաց.
 Զմըխիթարիչ հոյլն իւր խոստանարով.
 Բզսիրտ աշակերտաց վերապիտիւնով.
 Զպատուէր պահպանութեան բանիցն տալով.
 Համբառնայ ի յերկինս անճատ իւ պատուով.
 Արդ՝ ընթերցողը սորին միշտ ըզգուշացէր.
 Զբաննն ճրջմարտութեան վերապատուեցէր.
 Շաւղացըն Յիսուսի առ հետեւեցէր:
 Եւ ըզսէր աշխարհիս ի բաց ընկեցէր:

Ա.Գ.Ա.Հ ՄԱՐԿՈՒ ՄԸ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

- Յայտ ի աագան
- Հողապատեան
- Հանգչի կծծին
- Անհնարին
- Ռր զիւր հոգի
- Յամանորի
- Փշեաց. զի մի՛
- Հարկադրեացի
- Ռւմէ՛ր ընծայ
- Տալ կաղանդեայ

Մ. Ն

ԱՂԹԱՍԱՐԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ
 ԱՄԵՆՈՐԵԱՅ ԱՂՕԹՔԸ



Ո՞վ դու վարձկան, առնուս զանուն լուսաւորչէն.
 Մոլորեալ կաս՝ չը հանաչողը ըզքեզ կոչեն՝

Հ Ա Յ Ր Մ Ե Ր

Ի գեհնին, հոգւ ով մարմնով տանջելոց ես,
 Բայց եւ այնպէս, սնախառեալ՝ դու քեզ կարծես՝

ՈՐ ՅԵՐԿԻՆՍ ԵՍ

Այս քեզ խրատ, լի՛ր դու աշխատ, զի գերժըք քոյ,
 Ըստ սուրբ անուան՝ բարձր կոչմանդ՝ երկնահատոյ,

Ս Ո Ւ Ր Բ Ե Ղ Ի Յ Ի

Մեք տեսանեմք չար կրիւք դու կաս լցեալ,
 Արդարացի նախատանօք է հռչակեալ՝

Ա Ն Ո Ւ Ն Բ Ո Յ

Մի հանգիցէ քոյդ օրհնութիւն՝ անէձք ՚ի մեզ,
 Այդ ամենայն, յետս դարձեալ անդրէն առ քեզ,

Ե Կ Ե Ս Յ Է

Արժաթ ոսկի՛ անյազարար միշտ խնդրեցիր,
 Գողացան զայն, եւ դու ի զուր, ո՛հ. կորուսեր.

ԱՐԲԱՅՈՒԹԻՒՆ ԲՈՅ

Անհոգ հովուիդ հսկողութիւն չէ պիտոյ մեզ,
 Հարստութիւն քոյ միասին, ՚ի կորուստ ընդ քեզ՝

Ե Ղ Ի Յ Ի Ն

Աւանդ հօտիդ, թշուառութեան, չափ շատ լրցաւ,
Իսկ դու խնդրես, գաւազանաւ՝ կոշտ երկաթեալ՝

Կ Ա Մ Ք Ք Ո Յ

Բագում տարիս քեզ խնդրէաք, եւ երբ գտար,
Շուրջ զաթուոյդ, իբր հրեշտակ՝ բոլորեցար,

Ո Ր Պ Է Ս Յ Ե Ր Կ Ի Ն Ս

Բայց սոսկալի քոյ արարմամբ եղեր ծանակ,
Փոխան բարեոյն, դու կազմեցիր ոսկւոյ քանակ՝

Ե Ի Յ Ե Ր Կ Ր Ի

Թողուլ ըզմեզ սովալլուկ, այս է քոյ տենջ,
Իսպառ բառնալ, աշխատիս դու՝ պարէնն ի մէնջ-

Ջ Հ Ա Յ Մ Ե Ր Հ Ա Ն Ա Պ Ա Ջ Ո Ր Դ

Որպէս զի մենք, քեզ դիմեսցուք մեծ տոկոսով,
Եւ խնդրեսցուք սակաւ մի հաց, արտասուելով,

Տ Ո Ւ Ր Մ Ե Ջ Ա Յ Ս Օ Ր

Այս աղօթից՝ եթէ երբէք վշտանայցես,
Եւ ըզ վրէժ, ՚ի մէնջ լուծել մտաբերես՝

Թ Ո Ղ Մ Ե Ջ Ջ Պ Ա Ր Տ Ի Ս Մ Ե Ր

Թէպէտ մարդոյ միտք տկար է սխալական,
Բայց քեզ դատել չ'է անիրաւ, չը մեղանչեն,

Ո Ր Պ Է Ս Ե Ի Մ Ե Ն Ք

Թո՛ղ մեզ շուտով զհաշիւ քոյ պահանջանաց,
Չսպասեմք մեր, լսել բագում աղաչանաց-

Թ Ո Ղ Ո Ւ Մ Ք Մ Ե Ր Ո Յ Պ Ա Ր Տ Ա Պ Ա Ն Ա Յ

Ի քոց ձեռաց՝ թէ չը զերծցուք ժամն հասեալ է,
Դիմել ազգին՝ եւ աղերսել, ասելով թէ՛

Մ Ի Տ Ա Ն Ի Ր Ջ Մ Ե Ջ Ի Փ Ո Ր Չ Ո Ւ Թ Ի Ի Ն

Եւ առ Աստուած աղաղակել թէ՛ մի՛ թողուր,
Ժողովուրդ քոյ ՚ի կեղեքման եւ ՚ի սու՛ր տո՛ւր-

Ա Յ Լ Փ Ր Կ Ե Ս ՝ Ի Չ Ս Ր Է

Սրդարոց է, ասեն բաժին, ուրախութիւն,
Մի տար Աստուած, դու զրկողին հանգստութիւն-

Չ Ի Ք Ո Է Ա Ր Ք Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Քակէ՛ քանդէ՛, տուն աղքատին, ո՛հ տկարին,
Անողորմն բռնաբարէ ըզքոյ բաժին,

Ե Ի Ջ Օ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Հարստութիւն, փարթամութիւն գանձէ՛ դէզէ՛,
Եւ ու՛մ մնայ, ինք չգիտէ, քանզի քոյ է

Ե Ի Փ Ա Ռ Ք

Ոսկեղէն կսուք, ցայգ եւ ցերեկ նա պաշտէ,
Հոգին իւրեան խորս դժոխոց խորասուզէ,

Յ Ա Ի Ի Տ Ե Ա Ն Ս Յ Ա Ի Ի Տ Ե Ն Ի Յ

Ասեմք ցնայ, մի՛ նեղեր մեզ՝ «պըլիկ» չըկայ,
Պատասխանէ, շատ մի՛ «խոշա» տու՛ր ինձ փարա,

Ա Մ Է Ն



Ե Ղ Ե Ր Գ

ԸՆԴ ԼԱՆԴԻՍՏ ՍԵՐՈՎԻԷ ԷՖ. ԿԻՒՂԵՆԿԵԱՆԻ(*)



Ա.— Ի սկսանել ժողովրդեանն ի կոծ, ի սկսանել ժողովրդեանն ի հեծեծանս, և ի մարմոքիլն ի սուգ զիզանակսկիծ, երկինք մթագնի, երկիր դզրդի, ամպք զիզանին, ասրեքք խոսովին, և ի վերուստ կաթկթի ցօղ. «զի գնաց մարդ ի տուն իւր յաւիտեանից և սուգ ասին ի հրապարակս կօծողք» (**):

Բ.— Իսկ է՞ր ցօղէ երկինք: Աստ սիրտք կը զելուն և աչկունք կ'արտասուեն, զզի գնաց մարդն ի տուն իւր յաւիտեանից». զի արտօսըն հոյզ է սրտի, որ կը թորի առ վշտի, և կը ծորի ի բոց վշտի, ըստ ասածին թէ «արտասուք զգանս թիւն սրտի ամոքեն»: Արդ՝ սիրտ, որ չունի արտօսը, հոյզ սրտի, բեկոր ժայտի է, կոթո՞ղ մարդկային ապշութեան: Այլ սակայն ցօղդ՝ որ ի վերուստ կ'իջնէ, ուստի՞ է, կա՞ն միթէ սիրտք փղձկող և աչկունք արտասուող անոր ի յերկինս:

Գ.— Այո՛, անդ ի յերկինս կան զուարթունք, որպէս աստ ի յերկրի կան փարագունք, մէն մի մարդոյ համար կայ մի հրեշտակ ըստ Տէրունի բանին, թէ «հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ, որ յերկինս է»: Արդ՝ երբ աստ փարագունք խայտան, անդ զուարթունք ցնծան, իսկ երբ աստ մեք տխրումք, անդ նոքա տրտմին և ցօղեն արտօսը, զի «անկաւ այր յիսրայէլի»:

(*) Հիւանդանոցի բարերարներին՝ որ 1886 փետր. 10ին վախճանելով կը թաղուի Հաստատութեան մէջ:

(**) Ընդ մտն արանց մեծաց կամ սրբոց՝ արտակարգ ինչ ինչ դէպք, զոր օրինակ երկնի եւ երկրի խոսովել եւ ամպոցն անձրեւել եւայլն, պատմին ի գիրս:

Դ.— Անկաւ այր, ուստի երկինք և երկիր կ'արտասուեն, անկաւ նա, որ ծնեալն է հողւոյն. կը սուբան ի համբոյր առաքինւոյն, որ ծնունդ է բարւոյն: Հողիէն ծընուածը բարին է, բարիէն ծնուանը առաքինին է, իսկ մարմնէն ծնուածը չարն է, արմատն է, սրտին կորստեան, զի զերն լցցի, «այսպէ՛ս կորիցեն ամենայն թշնամիքքս, Տէր»:

Ե.— Ուրեմն քեզ, քե՞զ ողջոյն, ո՛ր դու, որ հողիէն հողի ծնուած՝ կը սլանաս կը խոյանաս յաշխարհն հողւոց, ա՛նդ. ընդ տեսիլդ՝ զուարթունք լան զմեզ, զի որբացեալ եմք, մինչ մեք ևւո աստ զքեզ լամք, զքե՞զ, «կա՛ւքք Իսրայէլի և հեծեալդ նորա»:

Զ.— Աշխարհս ծով մըն է, և մարդս մի ոտորէ անշուք մարմնովը Որպէս ոտորէն մերթ կը սուզի ի խորս ծովու և մերթ ջուրց վերայ կը տարածի սրտաբաց որ ընդունի առաւօտեան ցօղն երկնահոս, որով գոյանայ իւր մէջ իւր կեանքը — մարգարիտը, և սպա կը փութայ սքողիլ սքիլի ի պահպանութիւն գանձինն, ահա կը հասնի մահու գործին, կը բանայ սիրտը, կը կողոպտէ մարգարիտը. և ոտորէն ի բաց կը ձգէ անկենդան(*). այսպէս և մարդն մերթ կը դյորի և մերթ կը կանգնի, մերթ կը փայլէ և մերթ գայթէ, այլ միշտ ակնկառոյց ի վեր կ'ըզձայ բնդո նիլ զցօղն երկնային — զՇնորհս Աստուծոյ և զոր բնդունելէ յետոյ հուսկ ուրեմն՝ երբ ոգեպարար զուարթութեամբ կ'սկսի լսիկ մեջիկ ծաւայիլ զայն իւր շուրջը — առ մարդկութիւն —, ահա կը հասնի մահուն մանգաղ, կը հնձէ այդ ատօք հասկը. ի ձայն լալժնից յարտասուս ողորդելով զիւրան և զազգն առ հասարակ:

Է.— Մեծ է լալիւնն, այս, մանաւանդ ազգի մը, որ չունի մարդերս «վա՛յ միւռմն, յորժամ գլորիցի. և ո՛չ գուցէ միւս, որ յարուցանէ զնա»: Մարդիկ կան որ ո՛չ թէ տարիներ, այլ դարեր կ'արժեն: Կը հաշուին ժամեր, կ'անցնին օրեր, կը սոհին ամիւր, կը գնան դարեր, այլ կը լուեն

(*) Աւանդութիւն պարսկական:

դարք և տարիք, կը ծնին մարդիկ, կը մեռնին մարդիկ, կը բոլորին սերունդք, այլ դուն ուրեք կը լսուի այս ձայն, այս բարբառ աւետատու, «Թէ «ծնու մարդ յաշխարհ»»

Է.— «Ո՛ր տայր ինձ զգլուխ իմ ի ջուր, և զաչա իմ յաղբիւր արտասուեաց»։ Տէ՛ր, միթէ ատաքինութիւնն չունի իւր յիշատակ, և այդ յիշատակ, անմահութիւնն չէ՞ ատաքինուոյն, է՞ր ուրեմն ողբ և կոծ, Թող բեկանի ուրեմն լարն, և լռէ քնարն, զի դու կաս, յաւիտենակա՞նդ Արդարութիւն, և ահա ամենայն ինչ կատարեալ է։ Եթէ փողովուրդ մը արժանի է շնորհացդ, արդէն իսկ կ'երթայ իւրոյս փառացդ Աստուածային և ի գիտութիւն ճշմարտութեանն, Դու «Է՛ր միջի նոցա, և նորա մի սասանեացին ի յաւիտեան»։

Թ.— Բայց մարդն անասնման ունի փափաք։ Նա կը խորճի, կը կամի, և կը կրէ։ Կը խորճի ապրելու համար ՚ի յաւիտեան, կը կաօի փառաւորելու համար ստուգապէս, և կը կրէ վայելելու համար կատարելապէս։ Նա յաշխարհի աստ ըստ փափաքանոցն աւանիկ չ'ապրիր, չը փառաւորեր և չվայելեր։ Ամենայն ինչ վաղանցուկ է նմա, և զարհուրելին բարբառ յուսահատութեան յունկն նորա հծծէ միշտ. «Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է»։

Ժ.— Ո՛չ, չի՛ք ունայնութիւնն, բարեոյն, զեղեցիկն, ճշմարտին. հրապոյրն, որմէ կ'առաջնորդուի մարդ, կը մղի յառաջ մինչև ՚ի նահատակութիւնն, չտար մարդուն հրապոյր անմահութեան, այն Աստուածային աւիւն և կաթոգին այն խանդ, որով մարդ կ'ողեւորի, հոլաթև կը ճախրէ ՚ի վեր, ՚ի վեր անդր. և արհամարհելով ինչ որ դժուան է, բաժին սինլքորին, կը բարձրանայ ՚ի Գողգոթա ՚ի դազաթ կատարելութեան, և անտի կը գտայ, կ'որոտայ աստուածաբար. «Ես յաղթեցի աշխարհի»։ Այդ ահագնազորդ բարբառը միթէ կը կորսուի՞ ունայնութեան մէջ, եւ մարդկութիւնը, որ ՚ի ստորոտս Գողգոթայ կը գեգերի իսնչ ՚ի շալակն, արտասուաթորմ աչօք սոյն արձագանդը չտա՞ր. «Եկեացէ արքայութիւն քո», Տէ՛ր»։

ԺԱ.— «Իսկ այս ո՞վ է, որ գիմեալ գայ յեղովմայ, կարմրութիւն ձորձոց նորա ՚ի բոսորայ, զեղեցիկ պատմուձանու և բուռն զօրութեամբ»։ Դա ինքն է ատաքինին, որ գորովոյ ու զթութեան պատմուձանն է հագած, և վասն այսորիկ զեղեցիկ է այդ պատմուձանն. վասն զի ընդ արիւն ապաժոյժ անձանձորոյթ տքնութեամբ զայն հագաւ, և գայ բուռն զօրութեամբ զի նորայն բարբառ այս էր յաշխարհի. «Ես խօսիմ զարդարութիւն և զիրաւունս փրկութեան»։

ԺԲ.— Արդարութիւնն, կը քսամիմ, կը սարսուիմ երբ այդ բառը կը լսեմ. երբ կեանք ու մահ դէմ առ դէմ կան, ու՞ր է արդարութիւնն։ Արեգակն արդարութեան Աստուած՝ մինչ պատգամ կ'արձակէ. «Զոր Աստուած զուգեաց մարդ մի մեկնեացէ»։ մահը կը հասնի, և այդ զուգութեան սուրբ և անընտարարելի կապը կը խղէ, բան մը, զոր ո՛չ ոք ՚ի մարդկանէ կը Ժպրճի ընել, մահն արձակ համարձակ կ'ընէ, և Աստուած կը լռէ. այլ ո՛չ այրակորոյս կիներն ամուսինն սիրասուն—, որ հերարձակ կը գոչէ լալով. «Երդմեցուցանեմ զՁեզ, զստերք Երճուաղէմի, ՚ի զօրութիւնս, միթէ զոր սիրեաց անձն իմ, տեսէ՞ք»։ Եւ անձամբ անձին տայ պատասխանի. «Երանեցան կառք նորա, և այլ ո՛չ ևս է, զոր սիրեաց անձն իմ»։

Եւ հծծիւն զեաց ի կոծս։

ԺԳ.— Ո՞վ է սո, որ երեւելաւ է իբրև զառաւօտ, զեղեցիկ իբրև զլուսին, ընտիր իբրև զարեգակն, դա ելանէ նայլ յարդիւնս վտակացն, տեսանել թէ ծաղկեալ իցէ որթ, ծաղկեալ իցէ նոճ, ծաղկեալ իցեն նաննիք»։ Սա է մարդն առաքինութեան, որ յարդիւնս վաստակոցն և եթ կը նայի, ոխրալի գործերով՝ բարեպաշտութեամբ կը փայլի, գուրգուրանօք կը փայլայէ իւրայինները, կը խայտայ մանաւանդ երբ իւր ուստերքը կը տեսնէ ծաղկեալ իբրև որթ, ուռճացեալ իբրև նոճ, և իւր զստերքը հասեալ յարբունս իբրև նաննիք։ Այլ այդ ծաղկաբթիթ որթն ու նոճ կը կքին, և

նունենիք կը դայկանան երբ մահուն գայուկը գիտապատ կը ձգէ հայր մարդը, բարութեան մարդը, նոյն իսկ առաջ, 'ի գիրկս մտերմին, հոգեկցորդ բարեկամին, որ 'ի զուր կը մըմնջէ ցաւազին. «Արի, մերձաւոր իմ, դեղեցիկ իմ, ազաւնի իմ, արի եկ ընդ հովանեաւ վիմիդ. եկեղեցւոյ—, լսելի արա ինձ ըզբարբառ քո»:

— «Ես ննջեմ, բայց սիրտ իմ արթուն կայ»:

Եւ ամենեցուն, որք 'ի ժողովրդեանն էին, աչք արտասուեցին:

Այս արգարութիւնն է, Տէ՛ր. է՞ր սրտեր կոպել իրարու հետ ու է՞ր խղել, է՞ր մահուան հարուած այսքան անազորոյն:

«Եւ յիս դայ խորհուրդ քե աշխարհ հաւնայն»

«Վրիպակաւ վարի անհանձարակաւ»:

ԺԴ.— «Ո՛չ այգպէս, պնդես իբրև այր գմէջ քո, ես հարցից եւ տուր ինձ պատասխանի: Ո՞ր էիր, մինչ ես հիմունա արկանէի երկրի, պատմե՛ս ինձ. եթէ խելամուտ իցես հանձարոյ: Ո՞վ եզ գչափ դորա թէ գիտիցես, կամ ո՞վ արկ ի վերայ նորա լար: Յէ՞ր վերայ հաստատեցան աղիք դորա: Յորժամ եղին աստեղք ծերք, ամենայն հրեշտակք աստեղաց օրհնեցին գիս մեծաձայն: Եթէ սա քե՞ւ կարգեցի լոյսն առաօտին, կամ թէ քո առեալ գնողն կաւ, ստեղծե՞ր կենդանի, եւ խօսո՞ւն եզեր զնա յերկրի: Եւ մերժեցի՞ր ըզլոյսն յամբարշտաց, զբազուկս ամբարտաւանից խորտակեցե՞ր: Բանայցե՞ն քեզ ահիւ գրունք մահու: Զի՞նչ երկիր իցէ, յորում լոյսն ազանեցի»:

ԺԵ.— Զի՞նչ տու պատասխանի, Տէ՛ր, բայց թէ ասիբերան լինել, մեք հոգ եւ մտիւր... այլ սակայն յորդ երկի՞ր, ուր լոյսն ագանի, երթայ արդեօք Սերովբէն հողեղէն:

Եկ եւ տես.

Եւ արտասուեաց Յիսուս:

ԺԶ.— Այ՛ն, Աստուած անգամ կ'արտասուէ, երբ այս աղեխարշ գոյժը կ'սրբորանայ ամեն ուրեք, «մեռա՛ւ, եկ եւ տես»: Թողէք ուրեմն մեզ տրամութեան արտասուք երթալ եւ կալ գագաղի մը շուրջը, կամ առ շիրմաւ, ուր մարմին մարդոյ 'ի հանգստեան է 'ի ստուերս մահու: Յընձութեան արտասուք երթալ անգ՝ ուր հոգին մարդոյ յարթունս է, 'ի լոյս Աստուծոյ: Անգ՝ ուր չիք խաւար, ուր հոգին՝ «որ ճաճանչ է Աստուծոյ զօրութեանն եւ ծագումն փառաց Ամենակալին, նշոյլ մշտնջենաւոր լուսոյն, եւ հայելի անարատ ազգեցութեանն եւ պատկեր առատութեան նորա», կը խայտայ կը հրճուի անտրամախառն ուրախութեամբ, անգ եւ «մեք երթիցաւք եւ օթեւանս առ նմա արասցուք»:

ԺԷ.— Անձն իմ 'ի Մասիս, Մասիսէ 'ի Վարագ, անձն իմ 'ի Վարագ կ'ելնէ, աղու աչուքներ յիս կը յառին, եւ քնարն իմ կ'երգէ, իմ քնար կ'երգէ գառաքինին, իմ քնար կ'օրհնէ զՏէր: Ո՞վ, աւանիկ կը սլանամ 'ի թեւս հողմոց, աստղէ՛ յաստղ կը թռչիմ, կը փնտռեմ իմ աստղիկս, սիրականս, կը հեծեմմ. «ու՛ր ես, մերձաւոր իմ, աղաւնի իմ, կատարեա՛լ իմ, գլուխ իմ լցաւ ցօղով, եւ վարսք իմ 'ի շաղից»): Շաղքդ լուսնին են արտօսը, երբ դրախտին մէջ գեղգեղաձայն սոսակ տեսաւ իր սիրական վարդին տարածած թռչնիլը, այնպիսի սրտայոյզ եղանակաւ դայայլեց եւ սղաց զայն, մինչև մարեցաւ ձէնիկը. մարմըրեցաւ սոսակ եւ մեռա՛ւ, եւ լուսին լացաւ ընդ այս աղիողորմ տեսիլ (*): Այսպէ՛ս ո՞վ չմորմոքիր եւ չմարմրիր, երբ ազգի մը վարդաստանէն ընտիր վարդի մը, աստուածատունկ հրեշտակատիպ վարդի մը յանկարծ խորշակահար թառամիլը կը տեսնէ:

«Մի՛ մեզ, Տէ՛ր, մի՛ մեզ, աչ անուան քու՛մ տու՛ր փառս»:

ԺԸ.— Յերեկոյանալ աւուրն, երբ ամբակուռ կառք կը սուրան, սալամբակ երիվարք կը խոյանան. յերեկոյանալ աւուրն, երբ սեղանք կը պատրաստուին, եւ

(*) Աւանդութիւն Հայկական:

ճրագունք կը փայլին վառ ի վառ. յերեկոյանալ աւուրն,
երբ նեկտար գինւոյ կը պղպջայ ի բաժակ և սէր կաթողին
սրտէ ի սիրտ կ'երթեւեկէ. յերեկոյանալ աւուրն, երբ արեւ-
ուն վերջին շառաւիղք կը համբուրեն վաստակաւոր մար-
դուն ատուածափա՛ն ճակատը. յերեկոյանալ աւուրն, երբ
նաւն վերջին անգամ կ'ակօսէ զծովն խաղաղիկ, յայնժամ
կը լսուի բօթ տհաւոր, ցրտասարսուռ և սրտայոյզ. «Անուա
հաճի չեղեսիւն, մեռա՛ւ Կիւրպիկն կփեկիկն: «Եւ երաց Խորայեղ
չալիւն մեծ»:

ԺԹ. — Մի՛ տանիք գոյժ ի Թալաս և մի՛ բօթ ի Հա-
յաստան: Օն, փող հարէ՛ք, հարէք շեփօր, մանկո՛ւնք Հա-
յոց, հարէք Թմբուկ, իսկ դա՛ք Հայկոյ գտեր՛ք աղւոր,
փառաց դափնի հիւսեցէք, բոլորեցէք ՚ի Ձեր գլուխ: Արիք
զարթիք, իմ զօրութիւնք, պար առէք, ՚ի վեր անդր նա-
յեցէք, անէք վեր աստեղց ի՞նչ կը գրէ Ձեզ Աստուծոյ որ-
գին, մորգոյ որդի՛ն:

«Որ հաւասայ, Կեցցե՛ք»:

1886 Փետրվար 20
Նառլը-գաբու

ՎԱՀԱՆ Վ. ՏԵՐՄԻՆԱՍԵԱՆ
Պարսիզակցի

Իմատասիրութիւնը կը բանավարէ և սովորութիւնը կը
գործէ: Վօրդեւ

Չկայ բան մը այնքան ծիծաղելի որքան բժիշկ մը որ
ծերութենէ չմեռնիր: Նոյն

Մարտոզութեան եղանակէն կախում ունի մեր խորհուլու
եղանակը: Նոյն

ՔԱՐՈՋՆԵՐ

Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆ (*)

Որոնտի գետափունքը՝ Անտիոքայ կայսերական քաղա-
քին մէջ, ուր առաքելոց Պեան Սուրբ Պետրոս իւր առաջին
աթոռը հաստատած էր, 348 թուականին Անթուսա ա-
նուն մի մանկամարդ կնոջմէ մանկիկ մը ծնաւ, որուն Յով-
հաննէս անունն տրուեցաւ: Անթուսա իր քսան և հինգերորդ
տարիքին, և բնութեան շնորհած ծաղիկ հասակին և ընտանի
հարստութեան ճոխութեանց մէջ այրի մնալով, իւր անձը
բոլորովին իւր մէկ հատիկ որդւոյն կրթութեան նուիրեց, և
երկրորդ ամուսնութեան մը առաջարկութիւնը մերժելով,
հին Յոյն Ասորի բնաւորութեան հաստատամտութեամբ ու-
րուցեց իւր որդին նշանաւոր մտրդ մը ընել: Եւ որովհետեւ
ինքն ուզեց, այսպէս ալ եղաւ. այնպէս որ, ինչպէս Լատին
Եկեղեցին իւր վարդապետաց Պղատոնը՝ զՕգոստինոս, Սրբուհ-
ւոյն Մանիկայի պարտական է, այսպէս Յոյն Եկեղեցին իւր
սուրբ հարց Մարկոս-Տուղլիոսը՝ զՅովհան Ոսկերեւան Ան-
թուսայի պարտական է:

Յովհաննէս արեւելքի ամենէն հոչակաւոր ճարտարա-
խօսաց դպրոցը մտնալով, արտաքոյ կարգի հանճարովի, և
գիտութեան համար ունեցած մեծ եռանդովն քիչ ժամանակի
մէջ բոլոր իր հաւատարները գերազանցեց. հին Յունաստա-
նի գիտութեանց ամեն ճիւղին մէջ յառաջ բերած մեծամեծ

(*) Այս ներբողական ճառը խօսած է Պոլսոյ Պապական Նուիրակ
Արքիսիս Բոթէլլի Արքեպիսկոպոսը Բանկաթիի Սէնթ-Էսարի Լատին Եկե-
ղեցոյն մէջ 1886 Յունուար 27ին՝ ի Տօնի Ծննդեան Յովհան Ոսկերեւան
Ս. Հայրապետին՝ ի ներկայութեան Հայ-Հռովմէականաց Կ. Պատրիարք
Ազարեան Ստեփանոս Պետրոսի: Այս ճառը թարգմանուած է իտալական
բնագրէն եւ զայն կը հրատարակենք իրրեւ հետաքրքրական, թէպէտ
համամիտ չըլլանք, այդ բարոզին ինչ ինչ մասերուն:

մարդկանց օրինակին հետամուտ ըլլալով, փութով անոնց մատենագրութիւնները իմաստասիրեց, և իւր հանձարը այն հին իմաստնոց տրամարանական խորին խնդիրներով մարդեկէն կտրք, զինքը բարբոսութիւն ատենական ճարտարախօսութեան տուաւ: Ոչ ոք երբէք անպէ աւելի ճարտարախօսութեան յաղթող ճոխութեամբն՝ զրկելոյց դատերը Յոյն-Հոփմէական ատենից առջև պաշտպանեց, և քիչ ժամանակի մէջ իւր քաղաքացեաց քովն և բարբ կայսերութեան մէջ այնպիսի և այնչափ համբաւ ստացաւ որ, միայն հաւանութեամբ հովմէական ճարտարախօսաց ատենին իշխան ընդունուեցաւ: Սակայն իւր անկեղծ և ուղիղ բնավորութիւնն օրէնագրեաց նրբին գիտողութեանց և պատ ի պատ պատճառաբանութեանց չէր կրնար դիւրաւ յարմարիլ, իւր ամենազինու քրիստոնէական խիղճն օրինական կեղծութիւններէ կր խորչէր, իւր ճարտարախօսական հանձարն ատենին սովորական ձեւակերպութիւններէ կաշկանդեալ կր մնար: Բնական ազգամայր կ'իմանար որ Հոփմէական օրինագրքն աւետարանական օրինագրքին քով շատ ստորին բան էր: Իր եւանդուն հողին սուելի ընդարձակ հորիզոններու կր տենչար: Իբրև մէկ հատիկ որդի հարաստ սրբեւայրի մը կրնար աշխարհիս մէջ գեղեցիկ տպագայ մը յատուլ, բայց իբրև որդի սուրբ մօր մը երկրաւոր անայնութիւններէ հրապարակաւ հրաժարեցաւ, և 386 թուականին, իւր երեսուն և ութամեայ հասակին մէջ քահանայական ձեռնադրութիւնը ընկալաւ: Հետեւաբար տասն և հինգ դարեր անցան, յորմէ հետէ Անախոքացի Յովհաննէան Քրիստոսի զինուորութեան մտաւ, յորում տասն և երկու տարի շարունակ քահանայական վարուց օրինական և մտքերուն և սրտերուն յաղթող խօսքովն իր եկեղեցւոյն զլիսաւոր փառքն եղաւ: Անախոքայ ժողովրդեան խօսած ճատերն իւր երկասիրութեանց գուղէ ամենէն շքեղներն են, և արդարև անոնց մէջ հիացմամբ կր նկատուի Պղատոնի վսեմութիւնն, Դիմոսգենեսի զօրութիւնն, Արիստոտէլի սրամտութիւնն, և

որ առաւելն է: Եկեղեցւոյ և առաջին երեք դարուց Սլաւոց հարց վարդապետութիւնն, այնպիսի դիւրխաց և ժողովրդական կերպով մեկնեալ, և ոճով բացատրեալ սր, հազար և հինգ հարիւր տարիներէ հտըր տակաւին իրին ոչ հաւասար և ոչ երկրորդը ունեցաւ:

Բայց Անախոք չկրցաւ երկար ժամանակ իւր սուրբ և գիտուն քահանայն վայելիլ, Արևելեան կայսրն Արկադիոզայն իւր քովն ունենալ ուղեց, և զրեթէ բունի Կոստանդնուպոլիս բերիլ տալով, իր մայրաքաղաքին բոլոր կղերին և ժողովրդեան հաւանութեամբն զայն Սպիսկոպոս ձեռնադրել տուաւ, և արեւելից ամենէն երեւելի, այսինքն Կոստանդնուպոլսոյ Աթոռոյնվրայ բազմեցուց: Աղեքսանդրութէոփիլոս Պատրիարքն էր որ զինքը ձեռնադրեց, բայց չուտով իրին ամենէն ոխերիմ թշնամին եղաւ, և անձնական և Աղեքսանդրիոյ և Կոստանդնուպոլսոյ հայրապետաց մէջ տիրող հնացեալ նախանձէ շարժեալ զայն տկարամիտ կայսեալքէն հանել երդուընցաւ:

Այս՝ 390 թուականին հանդիպեցաւ, և դիտելու բռնէ որ, Ոսկերերանին անողոք թշնամիներն բուն իսկ անոնք եղան, որոնք անոր Բիւզանդիոնի Մետրապոլիտան զահն ամբառնալուն աշխատեցին, այսինքն, Աղեքսանդրիոյ Թէոփիլոս Պատրիարքն և Մետրապոլիտաներինին այս երկուքին հետ ի դաւաճանութիւն միացաւ նաև ցփակեաց Եւտոքսիան, որ անվեհր Արքեպիսկոպոսին պալատական կանանց յորութեան դէմ ցոյց տուած արութեան չկարենալով համբերել, այնպէս համարեցաւ, իբրև թէ իսկ անձն անարգուած ըլլար: Եւտոքսիա կնոջ բարկութեան կայսրուհւոյ զօրութիւնը եւս կը միացնէր. և սուրբ եպիսկոպոսին ոչ միայն իւր վրայ կրած փառաւոր անուան, և և այն նոր Հերովդիազայ տտելութեան առարկայ մը եղաւ ըլլալով, Քրիստոսի յառաջընթաց Կարապետին Յովհաննէանանեցաւ:

Կոստանդնուպոլսոյ կղերն՝ Արքեպիսկոպոսին հոգեբուղ

մարդկանց օրինակին հետամուտ ըլլալով, փութով անոնց մատենագրութիւնները խմատասիրեց, և իւր հանձարը այն հին խմատենոց տրամարանական խորին խնդիրներով մարդեղէն կտրք, զինքը բոլորովին ատենական ճարտարախօսութեան տուաւ: Ոչ ոք երբէք անպէ աւելի ճարտարախօսութեան յաղթող ճոխութեամբն՝ զրկելոց դատերը Յոյն-Հոովմէական ատենից առջև պաշտպանեց, և քիչ ժամանակի մէջ իւր քաղաքացիաց քովն և բոլոր կայսերութեան մէջ աշխարհի և այնչափ համբաւ ստացաւ որ, միտան հաւանութեամբ հոովմէական ճարտարախօսաց ատենին իշխան ընդունուեցաւ: Սակայն իւր անկեղծ և ուղիղ բնաւորութիւնն օրէնսդիտաց նրբին դիտողութեանց և պատ ի պատ պատճառաբանութեանց չէր կրնար զիւրաւ յարմարիլ, իւր ամենազինու քրիստոնէական խիղճն օրինական կեղծութիւններէ կր խորչէր, իւր ճարտարախօսական հանձարն ատենին սովորական ձեւակերպութիւններէ կաշկանդեալ կր մնար: Բնական ազդամամբ կ'իմանար որ Հոովմէական օրինակիւքն աւետարանական օրինագրքին քով չստ ստորին բան էր. իր եռանդուն հողին աւելի ընդարձակ հորիզոններու կր տենչար: Իբրև մէկ հատիկ որդի հարատտ որբեայրի մը կրնար աշխարհիս մէջ գեղեցիկ ապագայ մը յոստոյ, բայց իբրև որդի սուրբ մը երկրաւոր տնայնութիւններէ հրապարակաւ հրաժարեցաւ, և 386 թուականին, իւր երեսուն և ութամեայ հասակին մէջ քահանայական ձեռնադրութիւնը ընկայաւ: Հետեարար տասն և հինգ դարեր անցան, յորմէ հետէ Անախոքացի Յովհաննէսն Քրիստոսի զինուորութեան մտաւ, յորում տասն և երկու տարի շարունակ քահանայական վարուց օրինական և մտքերուն և սրտերուն յաղթող խօսքովն իր եկեղեցւոյն գլխաւոր փառքն եղաւ: Անախոքայ ժողովրդեան խօսած ճտերն իւր երկասիրութեանց գուղէ ամենէն շքեղներն են, և արդարև անոնց մէջ հիացմամբ կր նկատուի Պղատոնի վսեմութիւնն, Դիմուղենեսի զօրութիւնն, Արիստոտէլի սրամտութիւնն, և

որ առաւելն է: Եկեղեցւոյ և առաջին երեք դարուց Սլբոց հարց վարդապետութիւնն, այնպիսի զիւրիմաց և ժողովրդական կերպով մեկնեալ, և ոճով բացատրեալ որ, հազար և հինգ հարիւր տարիներէ կտրք տակաւին իրեն ոչ հաւասար և ոչ երկրորդը ունեցաւ:

Բայց Անախոք չկրցաւ երկար ժամանակ իւր սուրբ և գիտուն քահանայն վայելիլ, Արեւելեան կայսրն Արկադիոզայն իւր քովն ունենալ ուղեց, և զրեթէ բռնի կոտան դնուպոլիս բերել տալով, իր մայրաքաղաքին բոլոր կղերին և ժողովրդեան հաւանութեամբն զայն Յպիսկոպոս ձեռնադրել տուաւ, և արեւելից ամենէն երեւելի, այսինքն կոտանդնուպոլսոյ Աթոռոյնվրայ բազմեցուց: Աղեքսանդրի Թէոփիլոս Պատրիարքն էր որ զինքը ձեռնադրեց, բայց չուտով իրեն ամենէն սխերիմ թշնամին եղաւ, և անձնական և Աղեքսանդրիոյ և կոտանդնուպոլսոյ հայրապետաց մէջ տիրող հնացեալ նախանձէ շարժեալ զայն տկարամիտ կայսե աչքէն հանել երզուընցաւ:

Երուսաղէմի մէջ մտ շինուելիք Սիւրբապետ Եփեմեացոյ հիմնադրէք, որ անցեալ քառս կառարեացաւ մեծահանգիւ, որու մեռելոց գտնուած է ի ղիմաց Ս. Աքրոսոյ Տ. Եղիշէ Եղիսի, Ձիլինկիրեան



Երուսաղէմը: Այո արգաւանդ գաշտը, որուն վրայ ունինք գրել այլուր, կը ձգի յարեւելակողմ մինչեւ ի բարձրագոյն հորիզոնն՝ այսինքն Յուգայի և Եփրեմի ըսուած լեռներուն չղթանս ժամն ութին կ'անցնինք Լիզգայի ձիթենեաց հինաւորց անտառը՝ կազմուած հարիւր հազարաւոր ծառերէ, որոնց մէջ կան մինչեւ մէկ մէքր տրամագիծ ունեցող ջոջեր. 8,30ին կը հասնինք Ռէմլէյի կայարանը. ասկէ ա՛լ կը սկսի բարձրանալ գաշտն և կ'առնէ հարթ այլ անդարդ և անսաղարթ կերպարանք մը. քանի մը հողազանգ տնակներ եղիզնուտ երդիքներով՝ կ'երեւին հոն յապուրակի՝ վտարանդի պահակներու նման. քիչ մը ի հարաւ կա՛յ Եքրոն քաղաքը, ուր Աշտոտէն բերուեցաւ երբևէն տապանակը: Ժամն 9,30ին հասանք Տէսեպանի ձորը, որ կը մտնէ Եփրայիմի լեռներուն մէջ: Փղշտական հին սահմանապուրներէն՝ մննք ալ մտնելու վրայ ենք այդ վիմուտ սյուրուտ լեռները, օդն ալ տակաւ կը մկրտուի լեռնային զովութեամբ մը և կ'առնէ առոյգ թափանցիկ թիւն, որու մէջէն դիւրին կ'ըլլայ զանազանել ու քննասիրել հազարաւոր մէքր հետուն՝ այլերն ու ափափայքր, չէնկն ու անչէնները: Այդ ճաղատ լեռներուն մէջ շատեր կան. որ աշխարհի ծանօթ սկիզբէն գէթ 1000 տարի մը յառաջ գոյացած ըլլալու երեւոյթն ունին. այնքան լերկ ցի՛ց ու անհողա՛ծ են. այնքան զառամ խուկրով շարահիւստայ. անհատնո՛ւմ ոլորք, անհատնո՛ւմ չղթայում ամայի, անհատնո՛ւմ հովիտ, անհատնո՛ւմ ժայռ և անձաւ, որոնց վրայ գահած է խաղաղ ծանրութիւն մը դամբանաձան: Հող ըսուած բանը չիկա՛յ հոն. կարծես նախախընամութիւնն սամրող մարդկան ազգի արմ Ադամը ստեղծած ստեն՝ հող չէ ձգած առած է հոսկէ և փչած է անոր «Շունչ կենդանի», անշունչ քարերը միայն ձգելով անոր սուրբ յաջորդներուն. քա՛ր ու սա՛ր՝ ցից ցից ամբարտակուած յաւիտենական նժդեհութեան ցուրտ հեծեձանքը վիմատառելով. յոյսն և կակուղ երկինք միայն կըսփոփեն այդ անյոյզ բարձրութեանց. կա՛րծր մերկութիւնը:

Երուսաղէմի մէջ հար շինուելիք Սիովական Եփրայցոյ հիմնադէնը, որ անցեալ Գարի կաթարուեցաւ մեծանոցիւ, որու ներքայ գտնուած է ի ցիմնաց Ա. Երուսայ Տ. Եղիտ: Եղիտի, Չիլիկիւրեան



Քանի մը տեղ՝ թաղարածև սեքերու վրայ քիչ մը հող տեղաւորելով երկրագործներ փորձած են անհեղուկ տունկեր ու սերմեր :

Կը սուբանք այսպէս հրտոն այդ ամէնավէ՛մ լեռներուն մէջէն . աստուածաշնչական սուբ յիշատակներ ալ սրբնթաց կ'արշաւեն մեր միտքը . Փղշտացիք, Սամոն , Դաւիթ , Յեսուէանք՝ այս ապալեր տեղուանքը բանակած , երգած ու հմայած են : Ժամը 10,30ին հասանք Պիթթիւր սրբաջուր գիւղն արաբ : Ա՛լ մօտ ենք Ս . քաղաքին . երազավազ երազներու վրայ՝ ա՛լ բանալու վրայ ենք աչուրնիս՝ լեռներու այս վերջաբան խրթին կնճռոտներէն՝ իրական հին տեսլաքաղաքին :

Խուն ձիթենիներ , տարտամ կանանչներ , գեանասող նորօրինակ այգիներ , Փիլիպպոսի աղբուրը , յուսական վանք մը կը լրջացունեն ուր ուրեմն վերջապահ հովիտներուն բաց դուռները , ուրկէ կը նկատուին Երուսաղէմի բարձրաբերձ շէնքերը : Կը հասնինք վերջապէս վերջին կայարանը՝ Ծովտեսի՛ , Յամաքատեսի՛ , Լեռտեսի՛ , Վէմոտեսի՛ այլ ոչ Մա՛հտեսի , այսքան մը գէթ կը տարբերինք ու կը բարբաղգինք հիներէն՝ ըսե՞նք՝ շնորհիւ արդի գիտութեան և ապահովութեանց : Երուսաղէմի տեսքը՝ կայարանի կողմէն՝ բոլորովին եւրոպական է արդ : Տաանի չափ անծանօթ վեղարաւորներ ու Ս . Յակոբեանց դպրոցին ամբողջ աշակերտները կրօնադգեստեալ կը դիմաւորեն մեզ «ողջեկայքի» պատիւներով . փառակից կ'ըլլամ ուղեկիցս վարդապետին համար սարքուած այս վեղարաւոր շարքին , ու կառքերով սիրտ ի թունդ խոնջ և կրաւոր իմն ձուլուածով կը հասնինք Սիոն՝ Ս . Յակոբեանց մեծ վանքը : Ժամը երեկոյեան 12 է . ա՛լ բոլորովին լեցած՝ Պոլսեցի վարդապետէ մը կը խնդրեմ նախ Եկեղեցին մտնել , և խոնարհ հին դուռնէ մը կը խոնարհիմ ու կը մտնեմ՝ վերջալսյսի անփակ շողերուն փոխան՝ մշտալոյս կանթեղներու ճառագայթներով պլպլացող տաճարն առաքելահիմն : Աւագ խորանի մթամած տեսիլին առջեւ , որ

ունի անդէնի մը տարտամութիւնը և գլխադիր զարմանագործ մատուռին քովէկը՝ երկինքի , երկիրի և շուրջ վայրերուն վրայ ակնարկ մը ժահկանացու , մրմունջ մը հիւանդ և



Ղպփնեու Երուսաղէմի
Արեւոյսեկոյս Տիմօթէոս Մրբագան

երկու կաթիլ արտօ՛սը (որուն մէջ ծրարուած է խաչակոնակ կեանքի մը բովանդակ ալեկոծութիւնը) և ահա կը զգամ որ

ա՛լ գողնեմ Աստուծոյ, այսչափ մը վայրկեան երանութիւն ալ ինծի :

...Այգուռն ժամը 10,30ին՝ միաբանութեան մեծ մասը փայտեայ ու երկաթեայ ժամհարներու կոչովը՝ խմբուած է եկեղեցին : Ես ալ միամտօրէն կիջնեմ եկեղեցի, որու և վանքին վրայ կուզեմ կանխաւ արտայայտել սկզբնական տպաւորութիւններս, որպէս զի կարենամ ըսել անխառն բաներ մը. — առաջին տպաւորութիւնները լաւ կըլլան, զի երեւոյթները կը ներկայանան իրենց ամենէ սուբբ և ասպնջական ձևով : Ս. Յակոբեանց այդ խորախորհուրդ եկեղեցին որ բաղմապտոյտ վանքին յարկերուն մէջ գեանադամբանի մը պէս սուզուած թաղուած է լայնախարիսի, թուեցաւ ինծի շատ ներդաշնակ և հին ճարտարագիտութեամբ կերտուած կոկ և աւանդընկալ աղօթարան մը՝ բացառելով միայն անձուկ և ցած դռներն երկաթի ու քանի մը վաղեմի պատկերները տխրից : Ըստ չափուն երկայնութեան 22 և լայնութեան 16 մէր է : Ըստ ձեւին՝ կը մօտիկ Վ. Պօլիսի Ղալաղիւայի հին Ս. Լուսաւորչին, որուն տասնեւութերորդ դարու նորոգութեան ատեն նորոգակից ալ եղած է. իսկ հանգիտապէս՝ գրեթէ աննման է հայոց մէջ : Չորս յաղթ քառակուսի սիւներ, որոնց երեսներն ունին մէրդէ աւելի լայնութիւն՝ ստորուտ յախճապակեայ և պատկերապատեալ և վերուտ վաղնջուց խոյակաձեւերով քանդակեալ՝ վեր կը բռնեն կաթողիկէձեւ դմբէթիկ մը, որ շրջանակուած է ներսէն երկաթորմով մը, և քանի մը մեծկակ պատուհաններով : հոնկէ միայն ներս կը նշողեն արեւին արբանեակները՝ կցորդուելով կանթեղներու ճառագայթներուն հետ ա՛յն զէնիթէն մինչև ա՛յս նատիրը՝ փառաւորելու համար իմանալի լոյսն անմատոյց : Գմբէթիկն յեցեալ է ընդմիջանց կամարակապերու վրայ, որ կը կազմեն սողմոնեան կնիք մը : Ոսկեգօծեալ աւագ խորանն և իր քովընտի գոյգ մը խորանիկները՝ միջինդարեան մանրաձև և մթին չափակցութիւններով կը զարդարեն արեւելեան անլուսամուտ ճակատը՝ տպա-

ւորիչ հին աւագ պատկերներու հետ. այդ պերճ խորաններն ոսկեգօծուած են տասնեւութերորդ դարուն մեծ պատրիարքի մը օրերուն :

Չեղունն՝ համակ բազմակամար՝ կը հասնի տասնէ աւելի մէրդ բարձրութեան : Եւ պատուհանները կը ցուցնեն մէրդէ աւելի թանձրութիւն որմերու, որոնց մէջ կան մինչև 1000 տարուան անխախտ պատեր :

Այդ որմերուն վրայ գրուած են շուրջանակի երկու կարգ աստուածաշնչական ամէն տեսակ պատկերներ՝ հիները մեծ մասով գործ Հաննէ ամբողջ վարդապետին և նորերն յոյն և հայ ճարտարներու, որոնց մէջ իր ինքնակիրթ հանճարովը կը բռնէ նշանակելի տեղ մը միաբան Գեր. Մամբրէ Եպիսկոպոս Մարկոսեան : Գլխաղիբի երփնագմբէթ մատուռը՝ քանդակագործութեան, սատափի, բանուած ատաղձի և վանական խնկեալ պաշտամունքի գոհար տիրիկ մըն է. անոր կից մատրիկին մէջ է գանձարանին խորհրդափակ դուռը :

Այդ վանական եկեղեցիին արտաքինն իր բովանդակութեամբը կը բերէ նմանութիւնն անգարդ այդ ամենալից գոց սրբատուփի մը, որուն մէջ գետեղուած պահուած են ամէնազանն նուիրական զարդեր՝ հին միջին և նոր դարերէն մինչև այս մեր դարը. հոն են հին արուեստք, յիշատակք, արձանագիրք, քանդակք, մասունք թանկագինք, մատեանք աղօթից, քերթուածք, գերեզմանք և կրօնք. հոն անձկանօք կ'այցեն՝ եւրոպացի ու ամերիկացի եկեղեցականներ, շրջիկներ, ուխտաւորներ, լորտեր ու մեծամեծ անձնաւորութիւնք անգամ : Հոն Փօքր Ասիայի, Հնդկաստանի, Պարսկաստանի, Եւրոպայի, Պօլիսի, Չմիւռնայի, Բագուի, Թիֆլիզի և Նոր Նախիջուանի հոյր կուգայ կատարել իր ամէնաշեբ ուխտը, աւանդել իր աղօթքն համբոյրները՝ դառնալու համար իր երկիրն անհունի միութարութիւններով լեցուած :

...Մարդ հոս՝ ըլլա՛ց տասնօրեայի պանդուխտ մը՝ ուզէ՛ չուզէ՛ կը տպաւորի կ'ազդուի և կը հոգեփոխուի, խստա-

կրօն գործունէութիւններով և ապերա՛զ անթօրիչ հաւատ-
քով :

Հողերանական այդ կապարի ձուլուածով մենք ալ առ-
տու իրիկուն՝ առ այժմ քանի մը թօշնած պապաններու և
Միաբան Վարդապետներու մեծ մասին հետ ներկայ կ'ըլ-
լանք եկեղեցական պաշտամունքին , սկիզբէն մինչեւ վերջ ,
և հոն՝ դարերու անմեղ ու մեղաւոր մահտեսի ձեռքերու
հողենիւթած շուրջ արուեստներուն թանձր խորհրդանշան-
ներուն և միտք ընկճող խորհուրդներուն մէջ՝ կը զգանք
որ մեր միտքն ու հողին կորուսած է՝ թէ՛ բանաստեղծա-
կան թէ՛ փիլիսոփայական յորդ խոհուններու կարեւոր մաս
մը ազնիւ , այլ փոխան անոր՝ կ'իմանանք սիրտերնուս մէջ
խոր և թանձր կրօնական կայլակում մը վստահ համակեր-
պութեան և յանձնուած խիղճի մը , որ կ'ազատէ շտտ մտա-
ծելէն , որ կ'ապրեցունէ այս օրն իբր անշան՝ այսօրուան
սոսկ ձիրքերովը պատահումներովը և վաղուին այս օրուան
պէս յոյսերովը : Իսրայէլի ու քրիստոնէութեան առաջին
դարերուն և առաքեալներուն հողերանութիւնը տարբեր
բան մը չէր . վայրին , պատմութեան , երկինքին ու ան-
վայրափակ Եէհովային անփակ կաթումն է աս :

1/14 Գեկտ. 1901



ԱՆՑԵԱԼԷՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ

208 ՏԱՐՈՒԱՆ ԿՈՆԴԱԿ ՄԸ

Ասկէ շուրջ 30 տարի առաջ Բաղէշի Առաջնորդութեանս միջոցին
տեղւոյն Ամրոզայ (Ամրտօլ) Ս. Յովհաննու վանքին Մատե-
նազարանին մէջ կը գտնուէր Գրիգոր Շղթայակիրի եւ Բա-
ղիշեցի Յովհաննէս Կօյտ պատրիարքներու սէկ կոնդակը,
գոր ընդօրինակել տուած ըլլալով այն ատեն , իբրեւ պատ-
մական մի եղելութիւն կը հրատարակեմ Տարեգիրքիս մէջ :
Սոյն կոնդակին գլուխը կը գտնուի երկու մեծ կնիքներ աջ
ու ձախ դրուած . առաջնոյն բոլորտիքը գրուած է «Է. Յի-
սուսի Բրիտանոսի ծառայ Գրիգոր վրդ. Ամրտօլու եւ
Պատրիարք Ս. Սաղիմայ ՌճԿԶ = 1716 = » կնիքին
մէջտեղը Փրկչական պատկեր մը երկու կողմը գրու-
ած Յիսուս Բրիտանոս : Իսկ միւս կնիքին բոլորտիքը
գրուած է . «Է. Յիսուսի Բրիտանոսի ծառայ Յովհան-
նէս վրդ. Բաղիշցի. ՌճԾԷ = 1708 = համանման
Փրկչական պատկերով , որուն երկու կողմը գրուած է
Յիսուս Բրիտանոս :

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԶԵԼԻՆԿԻՐԵԱՆ

Ի ԲՐԻՒՏՈՍԻ արուստ ծառայք և Տեղապահք Բրիտա-
նադիր Սրբոյ և մեծի գերագրական Աթոռոյն Սրբոյն Յա-
կովրայ Տեառնեղբոր՝ և Սրբոյն Յակոբայ գլխադրի , և
Եւստաքէի Առաքելաշնորհ Աթոռոյն Կոստանդնուպոլսոյ , և
անպիտան սպասաւորք ամենայն Աստուածահոտ անդիւստ
անօրինականաց Բրիտանոսի Աստուծոյ մերոյ որ յերուսա-
ղէմ , և Ս. Կարապետի շնորհաբաշխ գերեզմանին , աւելա-
ծուք և աշակերտք Տեառն Վարդանայ մեծի վարդապետի և
քաջ հոկտորի , Գրիգոր և Յովհաննէս մեղապարտ վարդա-
պետք՝ յորոյ ժամանեալ հասցէ դիր օրհնութեան և նամակ

պահպանութեան: Շնորհք Առաքելական և Աստուածային գերակատար և բազմապատիկ օրհնութիւն և նախախնամական գթութիւն և ողորմութիւն 'ի վերայ տիրախնամ և Աստուածապահ մայրաքաղաք Բաղնոյց և ի նմա կառուցեալ չորից սրբոց աստուածաշէն եկեղեցեաց, եկեղեցական դասուց, քահանայից, երեսփոխանաց, իշխանաց, մահտեսեաց, արհեստաւորաց, աղքատաց և հարտից, արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն չափու հասակի հաւատացելոցդ 'ի Տէր Յիսուս Քրիստոս՝ յԱստուածն ամենայնի. մեր սիրելի և հոգեւոր հարցդ և եղբարցդ 'ի Տէր ամէն: Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ հօրէ մերմէ և 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ և 'ի Հոգւոյն Սրբոյ կենարարէ և ամէնունակ շնորհողէ, բարեբարէ և առատաձիր պարգեւատուէ և ամ յամէ 'ի տարուան ցասմանէ փըրկելով ազատեոցէ զձեզ յամենայն պատահարաց, ամէն:

Եւ ընդ Աստուածապարգեւ Քրիստոսագեղուն օրհնութեանս ծանիրուք բնիկ սիրելիք մեր և աչաց լոյս բարեկամք օրհնեալ քահանայք և աստուածասէր ժողովուրդք, զի գրէ իմաստունն. թէ որ քակէ զցանկն հայրենի, խայթէ զնա օ՛ձ: Արդ դուք ամենեքին զիտէք և վկայէք, և դեռ ևս ոչ է հընացեալ և անցեալ ժամանակ 'ի վերայ, որ 'ի յաւուրս լուսաւորեալ հոգի մեծաց վարդապետացն մերոց Տեառն վարդանայ, և Տեառն Աւետիք արքեպիսկոպոսաց, և քաջ հռետորացն, ո՞րքան ջան և վաստակ կրեցին նոքա, և դուք ո՞րչափ դրամ վատնելով հաղիւ թէ զայն անբաւութիւն բարձիք, և լաւ դատաստանաւ ի վերայ Գ. վանուց՝ զբաղաքն և զգիւղօրայքն թեմ և բաժին ի չորս բաժնեցիք, Տօլվէթլու խաներու մարիֆէթովն և հաստատուն գրով և մուշէլկէով, և Սրբազան հայրապետի օրհնութեան և կապանաց գրով, թէ ո՛վ որ հնազանդ լիցի այսմ կանոնի, օրհնութիւն Տեառն ի վերայ լիցի, և ո՛վ որ հակառակ լիցի զնորհակ սորին կրեսցէ, որ զիտէք դուք, զիտեմք և մեք որ այսպէս է. իսկ այժմ լուաք թէ վասն

մեղաց մերոց. այն Գ. վանքն Գումա և Աւետի ի ներքոյ դառն պարտուց անկեալ են և խանն մեծ կոչեալ զվարդապետս և զձեզ թէ ճար մի արէ՛ք ձեր վանքերու պարտուցն, իսկ դուք միարանեալ կրկին զրկողութեամբ այլուր մի էք արարեալ զԱռաջնորդութիւն և զթեմ որ և մեր լուեալ յերթ և եկողաց բազմաց, զարմացեալ հիացաք և տպուշ մնացաք, թէ ո՛րպէս շուտով մոռացաք զայն ուխտն և զդաշինքն, և զայն բարձրաձայն քարոզութիւնքն հրամայեալ 'ի սրբոց հարցն թէ ո՛վ ոք յայսմ հետէ այս բանիս հակառակ լիցի, այսպէս և այնպէս լիցի, և զամէնն ասէիք գոչմամբ մեծաւ 'ի մէջ սրբոց եկեղեցեաց, և այժմ ո՛րպէս իշխեցիք զցանկն զայն քակել և կրկին առաջին կարգն զրկողութեան դրանդ զայդ եղբակացուցանել, միթէ մոռացա՞յք զայն առաջին ժամանակի զբառնութիւնն զգժտութիւնն և զխաղաղութիւնն որ ձայն աղաղակին յերկինս վերանայր, և կամ թէ յորժամ զայդ կ'առնէիք, նա թող դատաստանաւ շարժէիք, զԳումոց վանքն իւր թեմով թող մեծարգոյ եղբայրն մեր Արքահամ վարդապետն զապթէր, և զպարտքն տայր. և զԱւետի վանքն իւր թեմով թո՛ղ մեր մեծ եղբայրն Ներսէս վարդապետն զապթէր և զպարտքն տայր, և եղբոր պէս հաշտ և խաղաղ մնային. ընդէ՛ր զայս այդպէս արարիք, եղբարք, թէ որ թեմ կայր պարտական եղեն և աւերեցան, ապա յորժամ զթէմս ևս սուիք ո՞րպէս պիտի լինի. յայտնապէս ասեմք թէ, անբաւութիւն է այդ գործդ, Աստուած զապուլ չի աներ, իսկ թէ ասէք հաքիմ արեր է, մենք ի՞նչ անենք, զայն ևս զիտեմք, զի մինչև դուք չկամենայիք, հաքիմ զիւր արարած և սահմանած բանն չէր աւերեր, և այժմ 'ի հեռաստանէ իբր ի մօտոյ, զձեզ, զքահանայոց, զժողովուրդ աղաչեմք և խնդրեմք զի լսող լինիք ձայնի աղերսանաց մերոց, միաբան ի միասին ժողովիք, և բարի խորհրդով զամէն վանք իւր թեմով պահէք, և զերկու վարդապետքն զայն Գ. վանքն զապթեմ և պահեն, իւրեանց կողմանէ մարդ զնեն և չէն պահեն. Աստուծով դուք ալ զիտէք թէ ո՞րչափ աշխատանք և երախտիք ունի մեր մեծ վարդապետն

ի վերայ Աւելիս վանուց, թէ մեր հղբայր Ներսէս վար-
 գապետն ո՞րչափ նեղութիւն այլ ունի, գայն վանքն այլ
 ի վերայ իւր թող առնու մեր սրբոյ հօրն խաթերն համար
 իսկ թէ հրամայեցիք վարդապետք, քահանայք և ժողո-
 վուրդք, թէ ձեզ զինչ պիտոյ է, դուք ելեր էք գնացեր էք
 'ի մեր երկրէն, և 'ի մեզանից հեռացեր էք, այլ ի մեր վան-
 քերու բանն ի՞նչ կու խառնուիք, այդ յիրաւի և ստոյգ է,
 այլ զայս. զիրս Բ. պատճառաց գրեցաք 'ի ձեզ զի մեք ձեր
 հացովն սնեալ եմք, և մեր բարեկամն էք, նախ պատճառն
 այս է զի գայն սրբոց Հայրապետացն և վարդապետաց ա-
 նէժքն մի առնուք 'ի վերայ ձեր, և միւս այլ յայտնի և հա-
 մարձակ գրեմք և ասեմք զի մեք ընդ սրբոյ հօրն մերոյ
 աշխատեցաք, զմեր դասատուն զԱմբաստու զվանքն շինե-
 ցաք Աստուծով և պայծառացուցաք, և յետ վախճանի ե-
 րանեալ հօրն մերոյ զՆերսէս վարդապետն հղաք նմա և
 մեզ փոխանորդ, և ի Սուրբ յաթոռոյ նորա ելեալ յօտար
 երկիր շրջիմք և Աստուծոյ փառք մինչև ցայժմ մէկ զբամ
 արծաթոյ մեր զարարն 'ի ձեզ չէ հասերս իսկ այժմ յորժամ
 զայս լուաք, կարծես իմն 'ի միտս մեր անկան թէ գուցէ
 զմեր վանքն ևս զապթ առնիցեն, և զթիմն խլիցեն, և այ-
 նուհետև կը լինի մեծ խռովութիւն, և ազմուկ չփոթի 'ի
 միջի մերումս վասն սրոյ շուտով աճապարեալ զայս զիրս
 'ի ձեր սիրելիութիւնդ, աղաչեմք լալտա աչքով հեղութեամբն
 Գրիստոսի, մի՛ առնէք զանիրաւութիւնդ զայդ, զի այդ
 բանդ 'ի Բանէն չէ, այլ ի ձեռն է ժողովեցարուք 'ի միասին
 և կոչեցէք զվարդապետան 'ի մէջ ձեր, և զԳրիստոս վանքն իւր
 թեմով և պարտաճրով թէսլիմարէք յԱրբահամ վարդապետն,
 և զԱւելիս վանքն իւր թեմով և պարտքով թէսլիմարէք
 'ի Ներսէս վարդապետն, զի հոգացեն և ի չէն պահես-
 ցեն Աստուծով զիրեանց վանքերն, և մի՛ լինիչիք ի՛ ներ-
 քոյ դատապարտութեան հարցն սրբոց, թէ դուք և թէ նո-
 քա, աղաչեմք և կրկին աղերսեմք զայդ այդպէս առնիցէք,
 թէ զԱստուծոյ և զՍուրբ հայրապետաց և զմեծ վարդա-

պետաց զօրհնութիւնս կը սիրէք, ապա թէ ասեր էք թէ
 այլ չի լինիր և ձեզ պէտք չէ հարգաքարութիւն մի՛ առնէք,
 դուք ո՞վ էք որ կու խօսիք յիրաւի որ մեք մեղաւոր եմք
 և յետնեալ, այլ թէ զինչ և իցեմք ձեր եմք և յայդ օճախէն
 հղեալ, և խմացէք ճշմարտապէս որ մեք 'ի մեր դատաստա-
 ճէն վազ չենք իզար թէ և մէկ աչակերտ մնացած լինի վար-
 գան վարդապետին, զայս ոչ թէ հպարտութեամբ և մեծա-
 մըտութեամբ ասեմք, այլ իրաւամբ և դատաստանաւ զարձեալ
 աղաչեմք զվարդապետս և զձեզ, սիրով զայս բանս այսպէս
 առնէք Աստուծոյ սիրոյն համարս Գրիստեմք զինչ որ դուք կա-
 մենայք, Տօլլէթլի խանն չէ՛ չասեր, Աստուած իւր կենդա-
 նութիւն տայ, և եթէ բարձր թողի արէք, և մեր վանքերն
 ալ թողիք, որ դաւիճութիւն արեն, և կամ զթեմն ատին,
 նախ խմացէք որ այդ հաքիմներն միայն ձեզ չեն այլ և մերն
 են, և անիրաւութիւն իւրեանց ուայէին չեն աներ, և վեր-
 ջին չար կու լինի քան զառաջին, ահա ծանուցաք ձեզ, որ
 յետոյ չը մեղադրէք մեզ, զի զայդ տունն միայն Ներսէս
 վարդապետին չէ, մեր ամենեցուն է, թէ և մեր տունէն մեք
 չենք անցնիր որչափ կենդանի եմք, Աստուծոյ սիրոյն հա-
 մար զմեր սէրն յատկութիւն չի փոխէք, և զմեզ ումուտ-
 սուզ այդ երկրէն չը հանէք, և պատճառ լինողացն այլ ա-
 սէք որ յայդ մարդոց և երկու վանքէն զձեռքն քաշեն, զի
 մեր հօրն և մեծ հղբօր տունքն են, և երթամք երեսաց նո-
 ցա և մեր շինեալք են, մի՛ զրկէք զորբերս, Աստուած զայդ
 զապուլ չի անիր, թէ արարիք մի բնութիւն, և որպէս
 գրեցաք այնպէս արէք, Աստուծոյ օրհնութիւն 'ի վերայ քա-
 հանայիցդ և ժողովրդոցդ լիցի. և զվարձքն յԱստուծոյ առ-
 նուք և 'ի սուրբ աթոռոցն:

Իսկ թէ զանց արիք և կրկին զնեղութիւն թ. . . ցանկն
 հղբօրն մերում Ներսէս վարդապետին և վանիցն, և այնու-
 հետև և այլ մի . . . զինչ որ լինի, և մեզքն 'ի չլսողն վիզն
 լինի յօրն դատաստանին. Խնդրեմք զի որպէս մեծ ի . . .
 այնպէս պահէք զկարգն և յԱստուած և նոցա օրհնութիւն 'ի
 վերայ հնազանդողացն. . . :

Գրեցաւ թղթն Ռձկեթ և Յոնիսի Իե :

Ծ. Լուսանցքին վրայ գրուած է նաև հետևեալն :

Յարժամ նր հայրն մեր Վարդան եկն ի Սպահինաց , բազում չարչարանք կրեալ էր վասն սուրբ վանքին եւս ստաւակի որ բազում աշխատութեամբ զկենաց փայտն վասն վանքին համար էր բերեալ , ձ. պակաս Ա. եկեղեցի շինեալ էր ; Աստուած բնդ երկոտասան վարդապետացն պատկակից և զասակից ասնէ . Ամէն :

ՎԵՋ. ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (*) ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

ՄԱԿԱՐ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍՄԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԻՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՐԵՄԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱՄԵՒ, ՎԵՀԱՇՆՈՐՀ ՊԱՏՐԻԱՐԻՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ ԲԱՐՁՐ ՍԸՐԲԱԶԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՐԱԶԱՏԻ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ԵՒ ՀԱՄՕՐԷՆ ԸՆԴ ՏԵՍՉՈՒԹԵԱՄԲ ՉԵՐՈՎ ԳՏԵԱԼ ԴԱՍՈՒՅ ԲԱՐԵՇՆՈՐՀ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ԲԱՐԵԿՐՈՆ ԱՌԱԳԵՐԻՅԱՆՅ, ՀՈԳԵՍԷՐ ՔԱՀԱՆԱՅԻՅ, ՇՆՈՐՀՈՒՆԱԿ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ, ՍՐԱՍՈՒՆ ԳՊՐԱՅ ԵՒ ԿԴԵՐԻԿՈՍԱՅ, ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ ԻՇԽԱՆԱՅ, ՔԱԶԱԶԳԻ ՊԱՅԱԶԱՏԱՅ. ԲԱՐԵՇՆՈՒՆԷՒ ԱՍՏԻՃԱՆԱՒՈՐԱՅ, ՊԱՏՈՒԵԼԻ ԱԶՆՈՒԱԿԱ-

(*) Մակար Ա. Թեղուտցի Տէր Պատրոսեան 1885 Ապրիլ 21ին, Կաթողիկոս ընտրուեցաւ եւ նոյն տարուայ Նոյեմբեր 10ին օծուեցաւ. 6 տարի պաշտօնավարելէ ետքը 78 տարեկան հասակին մէջ ի Տէր հանգեաւ 1891 ապրիլ 16ին :

ՆԱՅ, ՄԵՇԱՐՈՅ ՔԱՂԱՔԱՅԵԱՅ, ԲԱԶՄԱՓՈՐՉ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ, ՃԱՐՏԱՐԱՄԻՏ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԱՅ, ԱՐԴԱՐԱՎԱՍՏԱԿ ԵՐԿՐԱԳՈՐԾԱՅ, ՀԱՒԱՏԱՐԻՄ ԳՈՆԶԱՊԵՏԱՅ, ԺՐԱԶԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱՅ, ԶԱՆԱՍԷՐ ՀՈԳԱՐԱՐՉՈՒԱՅ, ԱՐԴԻՒՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՉԱՅ ԵՒ ԱՇԱԿԵՐՏԵԼՈՅ ՆՈՅԻՆ, ԵՒ ՍՄԵՆԱՅՆ ՉԱՓՈՒ ՀԱՍԱԿԻ ՀԱՒԱՏՈՎ Ի ՔՐԻՍՏՈՍ ԶԱՐԳԱՅԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄՕՐՆ ԼՈՒՍՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԴԻԿԷ ԷԶՄԻԱՄԵՒ, ԱՐԱՆՅ ԵՒ ԿԱՆԱՆՅ, ԾԵՐՈՅ ԵՒ ՏՂԱՅՈՑ, ԿՈՒՍԻՅ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՅԻՍՈՒՍՒՍԵՒ ՍՈՒՐԲ ՈՂՉՈՒՆԻՒ ԽՆԳԱԼ Ի ՏԷՐ :

Շնորհք, սէր, խաղաղութիւն, բարութիւն և ողորմութիւն Ամենասուրբ Երրորդութեանն Հօր և Որդույ և Հոգւոյն Սրբոյ և լուսացնցու չհաճանի մեծի տաճարիս Մայր Աթոսոյ Սրբոյ Էջմիածնի և պահպանողական զօրութիւն աստուածամուխ զեղարգեան. օրհնութիւն շնորհարաշխ Աջոյ բազմավաստակ նահատակին Քրիստոսի Սրբոյն Գրիգորի Հայաստանեայցս Լուսաւորչի և աւետղական նշխարաց սրբոց և համօրէն հրաշափառ սրբութեանց զանձեկոց ի ծոց մայր տաճարիս տարրասցին, տարածեսցին և ծաւալեսցին ի վերայ հոգւոց և մարմնոց ձերոց և ի վերայ որդւոց և զսուերաց ձերոց սիրելեաց մերոց ի Քրիստոս Յիսուս :

Ընդ յիսուսաւանդ ողջունիս և հայրապետական օրհնութեանցս ծանուցանեմք համայնից անձկալի զաւակացդ մերոց, թէ անդատին ի սոլայ աիոց ուխտեալ զոլով նուիրել զանձն մեր ի սպասաւորութիւն Բանին Աստուծոյ և ի սեղանաւորութիւն շնորհաց հոգւոյն ցփախձան կենաց, չեղեւ մեզ մարթ խոյս տալ ի պաշտամանէն, զոր ազգն և եկեղեցին եզ ի վերայ մեր համազգական ընտրութեամբ իւրով ըստ հաճոյից անհատանելի կամացն Աստուծոյ, զիտելով չափ զապրելարութեան և զսկարութիւն մարմնոց, հոգւոյ և մտաց մերոց և զսրբութիւն և զմեծութիւն առաքելութեանս այսորիկ, նաև զծանրութիւն աստիճանիս,

մանաւանդ յայսպիսում խրթնացեալ ժամանակի. թող զի և երկնչէաք իսկ յանհնազանդութեանց դատաստանէ բստ գրեցելոյն «որզի անհնազանդ ի կորուստ եղիցի», և իրախուսէաք ևս յկստուածայնոյն առ Առաքեալն բան թէ «Ջօրութիւն իմ տկարութեան կատարի». ուստի և պնդեալ զմէջս հաւատոյ մերոյ և հնազանդեալ կամաց Ամենախնամ Արարչին մեր ամենեցուն, որ զիտէ լցուցանել զպէտս մեր և զկարիս առաւել քան զոր խնդրեմք և իմանամք՝ օծութեամբ իւղոյն սրբութեան ամբարձաք՝ ՚ի հայրապետական օթոռ երջանկայիշատակ նախորդացս մերոց հաւատալով թէ արժանահայց աղօթիւք ուխտի քահանայութեան և ժողովրդոց, սիրելի որդւոցդ մերոց, Քահանայապետն Երկնաւոր հասանիլ սենիցի ՚ի թիկունս տկարութեան մերոյ, որպէս զի երբեմն Մովսիսին և Ահարովիւն զմեծամեծան հրաշագործեաց յեղիպտոսն տնհաւանութեան առ իսրայէլեան ժողովուրդ, որպէս զի զառաջիկայ վսեմ գործ և պաշտօն տնտեսութեան կաթողիկէ ընդհանրական եկեղեցւոյ և զհովուութիւն բանաւոր հօտին Քրիստոսի և զառաջնորդութեանն օրինակ առաջնորդելոցն առ Աստուած, ուղիղ և անմտար, ըստ Աստուածային պատուիրանացն և տուելոց բարեաց օրինակացն. կատարեսցուք և ընդ ճանապարհ Երանելի և Առաքելապատիւ նախորդացն մերոց թեւակոխեսցուք, որպէս վայել է և հաճոյ կամաց ամենակալ հոգւոյն բարութեան, խաղաղութեան, քաղցրութեան, սիրոյ, համբերութեան և երկայնատութեան:

Այսպէս ուրեմն կատարեալ մեր զգործ հրամանին, որ ազդեցյաւ մեզ ի վերուստ և տարածեալ զանձն մեր առաջի բազումողորմ գթութեանցն Աստուծոյ ի մէջ Տաճարիս և առաջի Աստուածընկալ Սուրբ նշանաց և Սրբութեանց ի ծոց սորին գանձելոց, մաղթեցաք և մաղթեմք ջերմաղին սրտիւ, զի Ամենակարողն Աստուած անխորձ և անասան պահպանեսցէ զՁեզ զամենեսին, զսիրելի որդեակսդ մեր, լուսաւորեսցէ զաչս հոգւոց և մարմնոց ձերոց և սրբեսցէ

զմիտս և զխորհուրդս ձեր անիւն Աստուծոյ, հանգուցանելով ի վերայ ձեր յաղագց յաղգս, զլիութիւն շնորհաց. Հողոյն Սրբոյ առ ի կարող լինել ի միտ առնուլ զհաճոյսն Աստուծոյ և ի նոսին խորհիլ միշտ և հսկօք առաւելուլ և փառաւորել ի յաւիտեանս. ամէն:

Եւ արդ՝ որովհետեւ զլուխ առանց մարմնոյ յարմարութեան ս'չ կարէ կրել զկենդանութիւն, և ոչ մարմինն առանց գլխոյ, որպէս և հաւատք առանց գործոց և գործք առանց հաւատոյ մեռեալ են, ըստ առաքելոյն բանի, կամիմք ապա, յեա ընծայութեան Տիրական ողջունիս և Հայրապետական օրհնութեանցս ևս և հարեւանցիկ յիշատակութեան ամբարձման մերոյ ի բարձրադիտակ գահ Հայրապետութեան Հայոց մեծաց՝ հրաւէր սիրոյ, միութեան և զործակցութեան և բանս խրատականս կարգալ՝ նախ զառաջինն առ Սրբազան Արքեպիսկոպոսունս և Եպիսկոպոսունս Ազգիս, որք են տեսուչք կարգեալք յԱստուծոյ հոգւոց հաւատացելոց՝ որ են յաշխարհի Վասն այնորիկ զթութեամբն Աստուծոյ ազաչեմք զՁեզ զամենեսին զՍրբազան Եղբարսդ մեր ի Քրիստոս, զի անմտաց ունելով ի մտի զգործ և զբարձրութիւն աստիճանի ձերոյ, որպէս զգէտ աննիրհ աչօք մտաց հայեսցիք ի վերայ ամենեցուն քահանայից և ժողովրդոց՝ որոց զլուխ համարիք և հրամանատարք, հոգ մեծ ունիջիք ի վերայ անտխեղձ և անարատ պահպանութեան ուղղափառ գաւանդութեան հաւատոցն ի Քրիստոս ըստ հնադարեան աւանդութեանց՝ ոչ թոյլատրելով զի և նշանախեց մի անգամ փոփոխիցի ի նմին և պէսպէս նորաձեւութիւնք ի ներքս յեկեղեցի և յեկեղեցական կարգս, արարողութիւնս և ձէսս մեր սպրդիցեն, զարդարութիւն, զգլխութիւն, զխոնարհութիւն և զըջահայեցութիւն չեցուկս համարեալիք իշխանական իրաւանց ձերոց յեկեղեցական հրապարակի. մի երբէք զանարժանս յառաջ կոչեսցիք յԱստուածայնոցն սպասաւորութիւն ի կորուստ կոչողացն և կոչեցելոցն և մի զարժանաւորս յետս

կացուցանիջիք, այլ արդարութեամբ զինուորեսջիք յընտրելն և ՚ի կարգելն պղաշտօնեայս ի սպաստօրութիւնս եկեղեցեաց յանայթաք ուսմունս, ի բարի վարս, յանախղճ քաղաքավարութիւնս և յԱւետարանական հեղութիւնս նոցին յեայք ուշադիր քան ի թախանձանս անկշտադատ ամբօխին կամ յապահով զիրս միջնորդաց նոցին: Ըստ սմին օրինակի արդարութեամբ վարեսջիք և յառաջարկին մեզ ի վարձատրել զստորագրեայ պաշտօնեայս եկեղեցւոյ, մի սոսկ զպարտուց կատարումն արժանաւոր ճանաչեայ պարգեւաց, այլ անգր քան զպաշտօնան առաքինութիւնս ի գործ բարդաւաճման եկեղեցական և զպրոցական արբիտնոց յարձարմունս բարեպաշտական սովորութեանց նախնեաց ի հաւատացեայսն եւյն. վերակացու յիջիք բանին վարդապետութեանն յուսուցանել. զիտել և սպասուորել Աստուածային օրինացն քարոզութեանց զողջամիտան միխիթարեսջիք և զճակատակորդն և զստանակեայսն հաւատոցն բանի և օրինոց Աստուծոյ և աւանդութեանց եկեղեցւոյ ըմբերանեսջիք Աստուածային գիտութեամբն՝ կամ անձամբ կանխելով ՚ի կորեւոր հրահանգս և կամ առնելով ձեզ յօգնականութիւն զչորհունակ և ժրջան վարդապետս հսկեսջիք արթնութեամբ և ՚ի վերայ բարեկարգութեանց եկեղեցեաց, վանօրէից, զպրոցաց և այլոց հոգեւոր և Աստուածաճանց հաստատութեանց. ևս և կանոնաւոր հաշուեւարութեանց մտից և ծախուց նոցին, ուսուսջիք իւրաքանչիւր ումեք ստորագրեայ պաշտօնավարաց արթուն լինել ՚ի պարտս պաշտամանց իւրեանց: Սիրեցէք և ուսուցէ՛ք պաշտել զօրէնս և զսահմանադրեայ կարգս և կանոնս եւս և զաջգաչէն և զեկեղեցաչէն հրամանս, որք ՚ի մայր Աթոսոյ՝ իբրև ՚ի շտեմարանէ Աստուածային չորհոց առ Ձեզ և առ նոսա արտափայլեսցին, աշխատ լիջիք տայ կրթիւ և զարգացուցանել զհայազգի մատաղ սերունդն ՚ի կրօնական և ՚ի բարոյական գիտելիս և զժողովուրդն յԱստուածապաշտութեան, յառաքինական վարս և յանյիզլի հաւատար-

մութեան առ մայրս մեր Սուրբ կաթողիկէ Էջմիածին, առանձին խնամօք փոյթ ունիջիք բարեօքել զտնտեսական կատարութիւնս եկեղեցական, վանական և զպրոցական կալուածոց և զկառավարութիւնս նոցին յանձնեսջիք ի ձեռս հաւատարմութեամբ և զօրծունէութեամբ վկայեայ հոգեւորական և աշխարհական անձանց և պատրաստ լիջիք ՚իչտ ի գործ հոգեւոր հովուութեան ձերոյ, որպէս զի համարձակութեամբ և պարզերես կացջիք առաջի աւանդողին ձեզ զսողանդ պատուիրանին, տայով նմա զհամար շահիցն կըրկնապատիկ յաւելուածով:

Գարցձուք հակիրճ բանիւք և դասս սրբանուէր կրօնաւորաց և վանական եղբայրութեանց յանապատս և ՚ի վանօրէս զԵղիային և զԱնտօնին յիշատակելով ձեզ զվարս ճգնողականս: Զհաւաստութիւնս խնամոց ՚ի կերակուրս, յազանելիս և ՚ի բնակարանս ունիջիք առ համօրէն վանականս՝ արգահատելով մանուանդ ՚ի կարիս բազմավաստակ ձերունեաց: Զժուժկալութիւնս սիրեցէք և վայելչութեամբ մեծատանին խնդացեալ բերկրեսջիք՝ քան շատաշրջկութեամբ ՚ի հրապարակս քաղաքաց և աւանաց: Զուխտուորս և զպողաբերս մարմնաւոր պատարագաց ՚ի զիւրութիւնս ուխտին խրատականաց շահեցէք բանիւք և պարկեշտութեամբ բողաջի երեսաց նոցին բնթացէ՛ք ՚ի պատիւ և ՚ի գովեստ հնաւանդ սահմանադրութեան մեծաւոր կենաց: Աղօթից, Սաղմոսերգութեանց և հանապազօրեան ժամերգութեանց ստէպ կացէք, որպէս այդ իւրաքանչիւր ՚ի ձէնջ հրապարակաուխտեալ է առաջի Յաւիտենականին, որպէս զի վարձս բուրիս բնկալջիք ՚ի քահանայապետէն Յաւիտենից ՚ի Քրիստոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ:

Բարեկրօն քահանայից ց պատու ևս կարգամք զհրաւէր զգաստութեան, մի՛ այլ ևս ստաջնովք վարել անփութութեամբ և անտարբերութեամբ՝ բացէք զաչս մտաց ձերոց՝ ձաներուք զգօրութիւնս երկնային գործոյդ յորս հրաւիրեայ կոչեցայք ՚ի նուիրել զամենայն հողիս Աստուծոյ, մի՛ իւիք պատճառս տայք արատոյ անկանել ՚ի պաշտօնդ ձեր ըստ առաքելոյն խրատու. այլ ըստ անուան ձերոյ և ըստ կոչման իբրև զհարս

և զՆոդս ժողովրդեան ձերոյ յամենայն ժամ տո՛ւք նոցա զհոգեւոր խրատս, միշտ ուսուցանելով զպուշացուցանելով և յորդորելով յԱստուածայինսն, մի՛ երբեք թուլանայք ՚ի պարտս պաշտաման ձերոյ, այլ մարտը հոգեով, սուրբ սրտիւ, հաւատով և յուսով մեծաւ սպասաւորեցէք Աստուածային խորհրդոցն և փառաւոր արարէք զԱստուած պայծառացուցանելով զԵկեղեցի սուրբ մշտամուտնչ աղօթիւք ձերովք, և աշխարհար և յօժարամիտ սրտիւ, առանց ծուլութեան զկանոնեայ սահմանս աղօթից սրբոց հարցն անթերի կատարեցէք ըստ իւրաքանչիւր ժամու, փոյթ ունիջիք հնազանդ գտանիլ իշխանաւորաց ձերոց: և կատարել սրբութեամբ զաւանդեալ ձեզ պատուիրանս, սիրեցէ՛ք և պաշտեցէք միշտ զսուրբ և զանարատ կեանս, և ձերով սրբակրօն գնացիւք օրինակ բարի հանդիսացէք ձեզ հաւատացեալ հօտին Քրիստոսի, զի այն է բարի և ընդունելի առաջի՝ Աստուծոյ:

Ուղղեցուք այսուհետե զկարգ բանից մերոց առ ժողովրդականաց, սիրելի որդիսդ մեր ըստ հոգեոյ: Խրատեմք և յորդորեմք զամենեւին զՁեզ առնել Ձեզ առաջնորդ վարաց Ձերոց զԱստուածաւանդ պատուէրս սուրբ գրոց, սիրելի զեղբայրսիրութիւն, պաշտել սրբութեամբ զԱստուած և զԵկեղեցական պաշտամունս, խնամել զաղքատս, գորբս, զտնտնիկս և զայրիս, հեռի կալ ՚ի դատարկութենէ, յաճախել ՚ի Սուրբ եկեղեցի և կրթել զանձինս ձեր ՚ի բարոյական և ՚ի կրօնական գիտելիս հաւատոյ: Խնայո՛ղ և զգաստ լերտք յամենայն իր սխճանութիւնս և ՚ի հացկերոյթս, զի մի՛ ի հեշտասիրութեանց ապականեցին վարք և բարք Ձեր, զհայրենաւանդ սովորութիւնս մեծարելի ունիջիք և մի՛ տարուբերիք ՚ի յորձանս անփրկանաւոր նորասիրութեանց, զուսումն գիտութեանց, զառաքինութիւն և զճրչմարիտ Աստուածպաշտութիւն մեծ և գերազանց քան զատեալ ճոխութիւնս համարեցէք, զի մի՛ յունայնութիւն և յերազախար յաջողուածս յուսասջիք այլ ՚ի Հայրն երկնաւոր, որ միօրինակ զխնամ ունի զամենեցուն կենացս: Զանայարուք օր ըստ օր զԱստուածահաճոյ հաւարական հաստատութիւնսդ, զվանօրէս ասեմք, զԵկե-

ղեցիս, զգպրոցս, զաղքատանացս, զհիւանդանոցս և զայլլս, մարդասիրաբար չքեղաչուք յարդարել ՚ի ներքուստ և յարտաքուստ զարդարութիւն և զճշմարտութիւն յամենայն ՚ի գործառնութիւնս ձեր: սիրեցէ՛ք զիշխանաւորս ձեր և զառաջնորդս պատուեցէք, զի հնազանդութիւնն է գլուխամենայն բարեաց, զորդեակս ձեր երկրւղիւն Աստուծոյ սնուցէ՛ք և զաստիարակեցէ՛ք, զի ՚ի մանկութեան ժամանակի առաւել տպաւորեցին խրատք ձեր ՚ի միտս նոցա անջնջելի յիշատակաւ՝ ըստ որում վարձս բարեաց ընկալջիք փոխարէն ՚ի Տեառնէ: Իսկ և կանանցդ դասու պատուէր հայրական տամք հնազանդ լինել արանց ձերոց իբրև գլուխ ձերոց, սիրել զամօթխածութիւն, և զպարկեշտութիւն յամենայնիս ՚ի գնացս ձեր և զանտեսութիւն ՚ի տան ձերում, հեռի կալ ՚ի զարգասիրութեանց, ՚ի պչրանաց և ՚ի նորասիրութեանց գիտելով զի վայելչութիւնն առաւել ՚ի պարզասիրութեան փայլի, մանաւանդ հոգ մեծ ունել ի խնամել, կրթել և զաստիարակել զորդիս ձեր և զգաստերս և աշալուրջ հսկողութեամբ զորդացուցանել զնոսս բարոյական զեղեցիկ յատկութեամբք, սրով և արքայութեանն լինիջիք ժառանգորդք ՚ի Քրիստոս Յիսուս:

Այսքանեաւ առ ժամս բաւականացեալ յորդորակնաւ՝ ապառնեաց թողումք աւուրց զհարկաւորս մանրամասն աւանդել և ՚ի նուիրական սրբավայրիս իջման Աստուածորդոյն խոնարհեալ յողերս մաղթանաց խնդրուածովք դառնամք առ Արարչապետն Տիեզերաց՝ պահպանել զամենեւին զձեզ անփորձ և անսասան յերեւելի և յաներևոյթ փորձութեանց, պարգեւել ձեզ անվրէպ ճանաչումն բարեոյ և զտեւական յօժտութիւնս ընթանալ ընդ ուղին առաքինութեան, որպէս զի բարեպաշտական վարուք և առաքինասէր գործովք կեցեալ յայտմ աշխարհի երկնից արքայութեանն լիջիք ժառանգորդք՝ չնորձօք և մարգասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ամէն:

Գրեցաւ անդրանիկ կոնդակս օրհնութեան ՚ի Մայր Աթոս ՚ի Սուրբ Էջմիածին յամի Տեառն 1885 ՚ի Նոյեմբերի 10. և յազգային թուարկութեան մերում ՌՅԼԵ:

ՄԱԿԱՐ ԿԱՌՈՒՂԻԿՈՍ
Ամենայն Հայոց

ԻՐԻՍԵԱՆ ԵՒ ՊԻՈՍ Թ. ՊԱՊԸ

Անուասիկ այն զեղեցիկ, իմաստալից եւ հոգիւց նամակն զոր Խրիստոսն 1869ին. մինչ առաջնորդ էր Տարոնոյ, ո՛չ պաշտօնապէս գրած է 'ի պատասխանի այն հրաւերին, որով Հռովմայ Պիոս Թ. Պապն 'ի Տիեզերական ժողով կը հրաւիրէր Արեւելեան եկեղեցեաց եպիսկոպոսները:

Գերապատիւ Սրբազան Տէր, գործակից եղբայր ի Քրիստոս. Քրիստոսի Տեսան. մերոյ տնօրէնութեան նախասկզբն՝ այն մեծ օրը, յորում Հայաստանեայց Եկեղեցին ճրգոյններ կը լուսանէր. Ձեր եղբայրութենէն յանուն իւր ուղղաւած նամակ մի ընդունեցի Արթ. Հայր Մաղաբեանին ձեռքով: Այն նամակին ծոց ներթափեալ կայր Հռովմայ Սրբազան Քահանայապետին հրաւիրողիրն. երկուքն եւս ամենայն ուշադրութեամբ ընթերցայ, խելամոտեցի եւ ահա կը գրեմ պատասխան ըստ քրիստոնէական պարտուց եւ աշխարհի քաղաքավարութեան օրինօք:

Այն նամակը, Գեր. Տէ'ր. դուք 'ի դիմաց Սրբազան Քահանայապետին Հռովմայ եւ ըստ ակնարկութեան գերերջանիկ Պատրիարքին ձերոյ, որ 'ի Պօլիս, 'ի պաշտօնէ գրելով կը յղէք առ մեզ. որով կը յայտնէք թէ դուք քան զՁեզ գերազոյն հեղինակութեանց իրբե կամակատար պատգամաւոր մի էք այս մասին մէջ: Իսկ մեք իրբե զՁեզ այդ իրաւունքը չունինք 'ի ձեռին. ո՛չ էջմիածնայ ընդհանուր Հայոց Հայրապետէն եւ ո՛չ եւս Կ. Պոլսոյ Սրբազան Պատրիարքէն, Հռովմայ Սրբազան Քահանայապետին հրաւիրողիրն ընդունիլ կամ չընդունիլ: Ուստի իմ այս պատասխանագրութիւնը պիտի ճանչնաք միմիայն իմ կողմէս իրբե մեր ազատ սկզբունքը եւ ո՛չ պաշտօնական գիր մը, զոր թէպէտ փոքր մի համառօտութեան սահմանէն անցուցի Ձեր հակիրճ աղ-

դարարողոյն նկատմամբ, բայց մեր ընդարձակ պատասխանը աւելի մասամբ հրաւիրողոյն իմաստից ու նպատակին կը պատկանի. որուն այսքան բան առ այժմ բաւ համարեցէք. իսկ կէտ առ կէտ իմաստիցն պատասխան այլում նուազի կը թողում:

Ստոյգ դատելով մեք բնաւ չէինք կարծեր թէ Հռովմայ Աթոռոյն գահակալն Արեւելեան եպիսկոպոսաց առհասարակ եւ անխտրապէս հրաւէր կարգաւով, զամէնքն եւս միանամու ի վատիկանեան ընդարձակագոյն դանլիճ կը հրաւիրէ: Թէպէտ այդ հրաւէրը Հռովմայ Եպիսկոպոսապետն ինքնին իւր կողմէն իբրեւ հայրական պարտք մի համարելով, ամենուն միօրինակ իւր հրաւէրը կ'ընծայէ, սակայն ո՛վ չէ կարող ուղղապէս մտածել թէ այս եղանակ հրաւէր մի իւրաքանչիւր ազգային եկեղեցեաց նախնի կանոնաց եւ Սահմանադրութեան չըջանէն զուրս շեղուած է: Այս շեղումն պարզ եւ ակամայ սխալ մի չէ՛, հարկաւ նշանաւոր նպատակ մի ունի իւր մէջ զոր այժմ պատշաճ չեմ համարիր նշանակել սատ:

Քրիստոսի առաքելոց վիճակեալ ամէն մէկ աշխարհ իւր յատուկ առաքեալն ունի եւ իւրաքանչիւր առաքեալ՝ իւր յաջորդ: Սրբոյն Պետրոսի յաջորդն է Պիոս Թ., Սրբոյն Թագէտի յաջորդն է Տ. Գէօրգ Գ.: Եթէ Պիոս Թ. ի նպատակն է միայն Հայոց Եկեղեցւոյն եւ աշխարհին հետ նոր դաշնագիր մը կնքել. շատ եւ բաւական էր յայնժամ իւր հրաւիրողին միայն Հայոց Հայրապետին ուղղել: Իսկ եթէ ինքն իւր եւ կարախնայներուն խորհրդով միայն յայտարարութիւն եւ հրաւէր կ'ընէ արեւելեան ընդհանուր եպիսկոպոսաց գալ ի Տիեզերական ժողովն, ո՛վ կը լսէ եւ կը հաւատայ թէ Հռովմայ Հայրապետին սոսկ ձայն մի կարող է Արեւելք, Հիւսիս, Հարաւ. 'ի միասին գումարել՝ այդ հակառակ միմիանց հողմունք ու տարերք: Այս երեքանկիւնի կողմերը այնչափ հեռու են Հռովմայէն, առ որս թերեւս հանդերձեալ փողն Գարրիէլի զժուարանայ իւր ահաւոր ձայնը հա-

սուցանել: Առաքելոց քարոզութենէն մինչև ցարդ զբեթէ երեք անգամ տիեզերական ժողով կազմուեցաւ, միթէ՞ մի-միայն Հայրապետի մը ձեռնարկութեամբ եղած են այս ժողովները: ո՛չ բնաւ, եկեղեցւոյ պատմութիւնը մեզ յիշապէս յոյս կ'ուտայ թէ ի՞նչպէս և ի՞նչ զօրաւոր հեղինակութեամբ գումարուած են ՚ի Նիկիա երեք հարիւր տասն և ութն հարք: Յառաջ բերած այս խօսքերուս ուղիղ հետևութիւնն է, թէ արդի Պիոս Թ. ի հրաւիրագիրն տիեզերական ժողով մի կազմելու երբեք հեղինակութիւն չունի: վասն զի Սիոնի վերնատան միութենէն բղխած չէ, այսինքն զԹ. քա-նի մի առաքելական յաջորդութեաց միախորհուրդ և համա-ձայն որոշումէն: Հապա ի՞նչպէս կարելի է և ի՞նչ է տիեզերական ժողով մի կազմելու օրինաւորութեան կերպ: Այդ խնդիրը՝ եթէ խոնարհի Հոովմ մեզմէ հարցնել, եկեղեցւոյ ամեն տղջամիտ եպիսկոպոսներն ևս համաձայն այս պատասխան կուտան: Քրիստոս, Երուսաղէմ, Սիոնի լեռ և վերնա-տուն, ասոնք են անհա եկեղեցւոյ միութեան ճշմարիտ խոր-հրդարան և միմիայն կեդրոն ընդհանուր աշխարհի համա-տարած Քրիստոնէական շրջանակին: Ուրեմն եթէ կը սիրէ ստոյգ սրբոյն Պետրոսի յաջորդը Եկեղեցւոյ միութիւ-նը, թո՛ղ ելլէ ինքն վատիկանեան պալատէն, Յունաց ընդհ Հայրապետն Պոլտոյ Ֆէնէրի Պատրիարքարանէն: Սրբ-բոյն Թաղէոսի յաջորդը՝ Էջմիածնաց վեհարանէն, ասոնք թո՛ղ տալով քաղաքականութեան նկատմաները, Առաքե-լական մախաղով ու Քրիստոսի խոնարհութեամբ իջնան յե-րուսաղէմ, ժողովին աշխարհամուտ Տաճարին մէջ այն գե-րեզմանաքարին քովը, որ միմիայն տիգերական եկեղեց-ւոյն միացուցիչ վէմ և անկիւնաքարն է:

Ո՛հ, որչա՞փ ցանկալի է՝ եթէ այս քարին առաջ ուխ-տեն և միանան առաքելական յաջորդները և հոն խմբա-գրեն տիեզերական ժողովոյ հրաւիրագիրն: Այս մեծ և հոգե-ւոր ձեռնարկութեան կէտը՝ եթէ մեծին Կոստանդիանոսի կամ Թէոդոսի ոգւով քանի աշխարհի վեհապետաց կամք ևս

ձուլուի միութեան դադափարով, այսինքն խաչի գաւազա-նին հետք. սուրբին իշխանութեան գաւազանն ևս դու գա-ձայն հրամայէ, ո՛վ չի հաւատար թէ՛ տիեզերական ժողովոյ զործը կատարեալ է յայնժամ: Թ.՛ղ այս. այնպէս համա-րինք թէ Պիոս Թ. ի հրաւիրագիրն նոյն իսկ Երուսաղէմի գերագոյն հեղինակութենէն եկած է առ մեզ, մեք եթէ նկատելով մեր խոնարհ վիճակը՝ ինքնին կարո՞ղ ենք եր-թալ այն մեծ ժողովրդ Քաջ իսկ յայտնի է ձեզ և ընդհա-նուր աշխարհին թէ Հայաստանեայց եկեղեցին նոյն ինքնա-զատ կառավարութիւն ունի, ինչպէս ուրիշ եկեղեցիները. որուն գլուխ կը հանդիսանայ Սրբոյն Թագէոսի և Գրիգո-րի Լուսաւորչին յաջորդը՝ Էջմիածնաց Կաթողիկոսը. առ որով ենթարկուած են Հայաստանի ամեն վիճակաւոր եպիս-կոպոսունք. ո՛վ իրաւունք ունի ասոնցմէ առանց օրինաւոր Սինոդի, առանց խորհրդոյ, առանց եկեղեցւոյ համաձայն հաւանութեան ինքնազուլու երթալ ի տիեզերական ժողով: Միթէ կարելի՞ է իբրև երեսփոխան ներկայանալ հոն ա-ռանց պաշտօնական իրաւասութիւն մը ընդունելու Հայաս-տանեայց եկեղեցւոյ համագումար ժողովոյ ատենէն: Եթէ այսպէս, հարկ է ուրեմն սպասենք թէ Արարատեան Եկե-ղեցւոյ ծայրագոյն Ատեանը ւրչափ կարեւորութիւն կուտայ Հոովմայի հրաւիրագրոյն, իր խորհուրդն ի՞նչ է և ի՞նչ պի-տի որոշէ: Մեք անհա այս որոշման և վճռոյն ազատակամ հպատակող պաշտօնեայն եմք:

Այլ նկատելով զմեզ իբրև Աւետարանի սուրբ գիտու-թեան ազատ աշակերտ. նկատելով իբրև նոյն սուրբ գի-տութիւնը քարոզող Եկեղեցւոյ վարդապետ. նկատելով Հայ-աստանեայց սուրբ, ուղղափառ, առաքելական և աւանդա-պահ Եկեղեցւոյն անձնանուէր անգամ, երկու կերպ սեպուհ պարտաւորութիւն կ'ըզգամ հոգւոյս մէջ, նախ ընդհանուր եկեղեցւոյ վերաբերեալ ամէն խնդիր Աւետարանի սուրբ սկզբանց և մեր երանելի Ս. Հարց աւանդած վարդապետու-թեան հետ համեմատել. այոն, այո քսել և ոչն ոչ. ընդու-

նիլ կամ չընդունիլ . այս իրաւանց բաժինը բոյր եկեղեցւոյ վարդապետաց հաւասարապէս Էսթայց ամեն մէկը իրենց ընդունուած շնորհաց ձիրքով և գիտութեան չափով կարող են վարդապետել , դատել և որոշել : Երկրորդ՝ իբրև հարազատածին զաւակ այն սուրբ հարց, Գրիգորի , Ներսէսի և Սահակոյ , որ զիս ՚ի Քրիստոս ծնան և գոտարակեցին . իմ այս հոգեւոր հայրերուն ամենամեծ երախտեաց իրաւունքը կը վառէ հոգիս , հազար ութ հարիւր տարուան հիմնուած հինուուրց մեր հայրենի եկեղեցւոյն ազատ իրաւունքը միշտ հաստատուն պահել . այն իրաւունքը՝ զոր Յիսուս Թաղէտին ետ , Թաղէտ՝ Գրիգորին , Գրիգորն՝ իւր ամեն յաջորդացայն իրաւունքն , որ իբրև քաղաք մի բարձրացած է Մասեաց զաղաթան վրայ : Այ՛ո , Հայաստանեայց եկեղեցւոյ քաղաք բարձր է իւր ամեն իրաւունքներով : Նորա հիմն Յիսուան է հաստատել սանդարամետին գլխոյն վրայ , նորա պարիսպները սնդամանդեայ են , նորա դուռ՝ բաց և ազատ է , ո՛վ որ մտնէ , կ'ընդունի , ո՛վ որ ելած է , չ'արգելուր . նորա ամեն շինուածոց քարերը՝ Արտազու զաշտին սուրբ նահատակներն են : Այս քաղաքն անպահապան չ'է . անքուն կը հսկեն նորա պարսպոց վրայ երկու Առաքեալ և մէկ Հայրապետ , Թաղէտին ձեռք՝ Աւետարան . Բարդուղիմէոսին՝ Տիրամօր կենդանագիր պատկեր . իսկ Գրիգորի ձեռք՝ Նիկիոյ սուրբ ժողովոյն հանդանակ . թո՛ղ չը նայի ուրեմն այն քաղաքին ուրիշ ո և իցէ ձեռք տիրապետել կամ գրաւել :

Ի՞նչ կը կարծեն Արեւմտեան եկեղեցիք . այս ազատ քաղաքին բանային ո՛ւմ ձեռք յանձնուած է . Աւետարանի ճշմարտութիւն և նախնի սուրբ հարց անստերիւր աւանդութիւնը ցոյց կուտան թէ՛ Հայաստանի Առաքեալ Թաղէտին ձեռք յանձնուած է : Արդ , մետասաներորդ դարէն մինչև ցայսօր աշխարհալուր վէճ մի յուզուած է . Աւետարանի գործակից երկու եզրարց , այն է Սրբոյն Պետրոսի և Թաղէտի մէջը , մինն կը փաստաբանէ Աւետարանի խօսք յեղաշրջելով թէ Յիսուս միմիայն ինձ տուաւ այն մեծ բա-

նային , որպէսզի ընդհանուր աղբաց և ազանց զէմ ես մի այն կարողանամ բանալ երկնից արքայութեան գուռ . իսկ միւսը հազար ու մէկ ճշմարիտ վկաները ի մէջ բերելով կը հաստատէ թէ՛ նոյն մեր վարդապետ Յիսուս ինձի այ բանայի մը տուաւ . որ յար և նման քս բանայիին պէս է մեծութեամբ , զօրութեամբ և իրաւասութեամբ . ես այս բանային Երուսաղէմէն անելով եկի ի Հայաստան . երկնից արքայութեան դուռն լացի խաւարին մէջ նստող Անահիտ պաշտող ժողովրդոց վէմը :

Խորհեցէ՛ք , Գերապոյցձառ Տէր , լուրջ և զգաստ խօսելով , եթէ սրբոյն Պետրոսի յաջորդ Պիոս Թ . Հայրապետ Հռովմայ իւր արդի հրաւիրագրովն Տիեզերական ժողով կազմելով դարձեալ բանալեաց խնդիր պիտի յուզէ և պահանջէ սրբոյն Թաղէտի յաջորդէն նոյն բանային , որ իւր իւր առանձնաշնորհութիւնն կը համարի , կամ տո՛ւր անէ և կամ իմ հրամանաւ բաց ու փակէ . ամէն ամէն ասեմ , ի զուր և ի նանիր է այդ զիշխային վաստակ ու տքնութիւն . ի վերջոյ պիտի խոստովանի իւր նախորդ ձկնորս Պետրոսին զանգուտը . «Տէ՛ր զամենայն զիշխար աշխատեցաք և ոչինչ կալար» : Եթէ ինքն կարծէ թէ բունն է Պետրոս՝ Մաղքոսի ախանջ հասանող սրով , բայց ես կ'ըսեմ , առաւել եւս քաջակորով է Թաղէտ ճշմարտութեան անպարտելի զէնքով , հնար չէ բնաւ այս բանային նորա ձեռքէն կորդել ու հանել մինչեւ ՚ի կտտարած աշխարհի : Ապա ուրեմն ի՞նչ է ճարն , որ այս երկու տարանջատ եղբարք իրաւախոն լինելով հաշտուին իրարու հետ . այդ բանին ճարը միմիայն Պետրոսի ձեռքն է , որ թող տայ իր պաշտած յամառ սկզբունքը , և յաւիտեան չը յուզէ բանալեաց խնդիրը . Աւետարանին սիրով հաշտութեան ձեռք պարդէ իւր խոտիկալ եղբայր Թաղէտին , ուխտէ յանուն Աստուծոյ այլ ևս չարտարերիչ այն անունը , որ Աւետարանի յիշած մորոս ու յիմար անուանելէն աւելի ծանրագոյն է , այն անունը , որ խաչեալ Աստուծոյն կողմ մը խոսուած սայրասուր զեղարդէն սաստիկ ևս կը խոցէ Հայաս-

տանի սրբուց սիրտը, որոց անուանք Յիսուսի սուրբ անունով կնքուած և օծուած են երկնից Հօր որդիքներն կոչուելով և աւագանի սրբարանէն ուսանելով մշտամուռնչ այսպէս կ'ազօթեն. «Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո 'ի վերայ մեր» Օ'ն հապա եթէ Հռովմայի Պետրոսի ձայն տալով Հայաստանի Թաղէոսին՝ պաղատելով եկեղեցւոց խաղաղութիւն և միութիւն կ'ուզէ. թող ուշաբերի ուրեմն նախ եղծել իւր նորահնար Տօմարի մէջէն իր արձանագրած անհանգուրմելի անունը. երկրորդ՝ չինդրել բնաւ իւր եղբայր Թաղէոսէն նորա իրաւանց ազատ բանալին: Այս է անա միմիայն միջոց խաղաղութեան և միութեան, որ կը կապէ անխզելի սիրով Հռովմը Հայաստանին հետ, Պետրոս՝ Թաղէոսին հետ, մէկ խօսքով Արեւմուտքը՝ Արեւելից հետ: Ահա Տիեզերական Ժողովոյ լրումն ու վախճան, որ առանց Հռովմ երթալու կ'աւարտի:

Այս բարենշան աւուր յամենայն զօրութենէ սրտի ցանկացող իբրև աւուր Մեսիայի զալստեան:

Տրուպ պաշտօնեայ Հայաստանեայց Եկեղեցւոյ
 Մ. Վ. ԽՐԻՄԵԱՆ ԵՊԻՍԿ. ՏԱՐՕՆՈՅ
 Ա. Ա. Պ. Հայոց Կարկոյ

1869 Յնվր. 18



ԱՄԵՆ. Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊ. ՆԱՐՈՅԷԱՆ
 ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՅՈՅ Կ. ՊՈԼՍՈՅ

Թուրք Հանրապետական Կառավարութեան բարենաճ արածուութեամբ գումարուած Ազգ. Ընդհ. Ժողովոյ կողմէ 1927 Յունիս 22ի Կիրակի օր Կ. Պոլսոյ Պատրիարք ընտրուեցաւ Ամեն Նարոյեան Սրբազան և Պատր. Աթոռը՝ որ թափուր մնացած էր 4¹/₂ տարիէ ի վեր, ունեցաւ իր արժանաւոր տէրը:

Ամեն. Տ. Մեսրոպ Ս. Նարոյեան ծնած է Մշոյ Արտէրտ գիւղը 1875ին և նախնական. կրթութիւնը ստացած Ս. Կարապետ վանքի վարժարանին մէջ: 1895ին Արմաշու Դպրեւանքը մտնելով: 1899ին հինգ ընկերներու հետ կը ստանայ սարկաւազութեան սատիճան. երկու տարի վերջը, 1901ին 401 — Տարեցոյց

տանի որդեոց սիրտը, որոց անուանք Յիսուսի սուրբ անունով կնքուած և օծուած են երկնից Հօր որդիքներն կոչուելով և աւագանի սրբարանէն ուսանելով մշտամուռնչ այսպէս կ'աղօթեն. «Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո 'ի վերայ մեր:» Օ'ն հապա եթէ Հռովմայի Պետրոսի ձայն տալով Հայաստանի Թաղէոսին՝ պաղատելով եկեղեցւոյ խաղաղութիւն և միութիւն կ'ուզէ. թող ուշաքերի ուրեմն նախ եղծել իւր նորահնար Տօմարի մէջէն իր արձանագրած անհանգուրծելի անունը. երկրորդ՝ չինդրել բնաւ իւր եղբայր Թաղէոսէն նորա իրաւանց ազատ բանալին: Այս է անա միմիայն միջոց խաղաղութեան և միութեան, որ կը կապէ անխղիչ սիրով Հռովմը Հայաստանին հետ, Պետրոս՝ Թաղէոսին հետ, մէկ խօսքով Արեւմուտքը՝ Արեւելից հետ: Ահա Տիեզերական Ժողովոյ լրումն ու վախճան, որ առանց Հռովմ երթալու կ'աւարտի:

Այս բարենշան աւուր յամենայն զօրութենէ սրտի ցանկացող իբրև աւուր Մեսիայի գալստեան:

Տրուպ պաւսօնեայ Հայաստանեայց Եկեղեցւոյ
 Մ. Վ. ԽՐԻՄԵԱՆ ԵՊԻՍԿ. ՏԱՐՕՆՈՅ
 Աւագ. Հայոց Կարնոյ

1869 ՅՃՎր. 18



ԱՄԵՆ. Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊ. ՆԱՐՈՅԵԱՆ
 ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՅՈՅ Կ. ՊՈԼՍՈՅ

Թուրք Հանրապետական Կառավարութեան բարեհաճ արտօնութեամբ զուժարուած Ազգ. Ընդհ. Ժողովոյ կողմէ 1927 Յունիս 22ի Կիրակի օր Կ. Պոլսոյ Պատրիարք ընտրուեցաւ Ամեն Նորոյեան Սրբազան և Պատր. Աթոռը՝ որ թափուր մնացած էր 4½ տարիէ ի վեր, ունեցաւ իր արժանաւոր տէրը:

Ամեն. Տ. Մեսրոպ Ս. Նորոյեան ծնած է Մշոյ Արտէրոս գիւղը 1875ին և նախնական. կրթութիւնը ստացած Ս. Կաթապետ վանքի վարժարանին մէջ: 1895ին Արմաշու Դպրեւանքը մտնելով: 1899ին հինգ ընկերներու հետ կը ստանայ սարկաւազութեան աստիճան. երկու տարի վերջը, 1901ին

վարդապետ կը ձեռնադրուի ուրիշ ինը բնկերներու հետ՝ Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկ. Դուրեանէ: Այս առթիւ գրած է շրջանաւարտի իմաստալից քեզ մը՝ «Ինճնակացուքիւն Հայ Եկեղեցւոյ»։ Ձեռնադրութենէն անմիջապէս ետքը աւուջիչ կգած է Արմաշի Դպրեվանքին մէջ, յետոյ փոխ-տեսուչ, ներքին տեսուչ, այդ պաշտօնները վարելով խղճմտութեամբ և ձեռնհասութեամբ: 1909ին Իզմիրլեան Տ. Մատթէոս Կաթողիկոս (որ տակաւին Պոլիս կը գտնուէր) ծայրագնութեան աստիճան տուաւ Նարոյեան Մեսրոպ, Պալազեան Գրիգորիս և Դուրեան Ղևոնդ Վարդապետներուն: Նարոյեան Վ. որ 1909ին փոխ-Վանահայր կգաւ Արմաշի՝ մինչև 1915 վարելով նոյն պաշտօնը, 1913ին արդի Վեհ. Տ. Գէորգ Ե. Ս. Կաթողիկոսէն ստացաւ Եպիսկոպոսութեան աստիճան: 1916ին Պոլիս հաստատուելով, քարոզչական պաշտօններ վարեց նախ Պէշիկթաշ և յետոյ Բերա: Երկու անգամ վարած է Պատր. Տեղապահի պաշտօն՝ 1918ին, և 1919էն 20: Եղած է Կրօնական Ժողովոյ անդամ, Ատենապետ Արմաշի Խնամակալութեան, և ցարդ վարած է ուսուցչական պաշտօններ՝ Կեղրոնական Էսաեան, Պէղազեան, Հինդլեան վարժարաններու և Գալֆանեան Որբանոցի մէջ, հմտօրէն դասախօսելով կրօնագիտութիւն և Հայերէնի ճիւղերը: Գրած է գրական և կրօնաբարոյական յօդուածներ և հմտալից տեսութիւններ՝ օրաթերթերու և պարբերաթերթերու մէջ:



Լ Ջ Լ Ե Բ

Կապոյտ կամ սեւ, ամէնքն աղուոր ու սիրուած,
Անթիւ աչքեր արշալոյսին նայեցան:
Դամբաններուն խորը անոնք կը նիրհեն,
Ու արեգակը կը ծագի տակաւին:

Ցայգեր, անուշ՝ ցերեկներէն աւելի.
Կախարդեցին աչքեր լանթիւ անհամար.
Աստղերը միշտ կը պըլպըլան աւասիկ.
Մինչդեռ աչքերը ըստուերով են լեցուած:

Օ՛հ, կորուսի՞ն միթէ անոնք նայուածքնին.
Ո՛չ, ո՛չ երբեք. անկարելի է այն բանն.
Անոնք դարձած են մի միայն ուրիշ կողմ.
Դէպի այն՝ որ աներեւոյթ կը կոչուի:

Եւ ինչպէս որ ինկող աստղերը, թէեւ
Մեզ կը թողուն, բայց կը մընան երկնից մէջ,
Բիբերը եւս ունին իրենց արեւմուտքն,
Այս ըսել չէ բայց թէ անոնք կը մեռնին:

Կապոյտ ու սեւ, ամէնքն աղուոր ու սիրուած:
Բացուած դէպի արշալոյսներ անսահման,
Անդրշիրմեան աշխարհի մը կեանքին մէջ՝
Փակուած աչքերը կը տեսնեն տակաւին:

SULLY PRUDHOME

Թրգմ. ԹՈՐԳՈՍ ԵՊՍ.

Ա Ռ Լ Ո Ւ Ս Ի Ն

Ա.

Անդորր եւ հաս յսինգերաց վրայիկն
Գունն արծաթեայ՝ քայիկն ժպտոյ նըշոյներ
Ընդ ծովս 'ի ափսռ 'ի քն սեւ որ անոխն
ըզկոնակարն փոփոսդեգ:

Ի՛ ի մըքընչադ պորսս երկրի ստուերագրեայ
Գօսիք շերանց անեղակոյճ՝ իսանաց
Երկնայարձակ գերդ հորսք՝ 'ի վեր խոյսնան
սկնայիչք յաստեղ կայան:

Ի ֆղանց նոցին ցրուեայ ֆաղսֆֆ հոյաշեկք՝
Իբրու վնուկի մը մահակով ֆարացեայք՝
Անայի՛ փողոցներով կը նկարին
յարծաթեայ յայիս ծովին:

Հագիւ քե այն պսնուն հսկե՛ սի՛րս յաստեդս՝
Քերթողն անձկոս՝ կաւ սիրսարսի մանկունիին
Հրեչսակ մասնեայ 'ի բոցս՝ յոյր այսս ըսպիսակ
կը հոսին շուտոյ կայրակք:

Հագիւ արքուն կայ բանիկն մեք՝ յոյր յասակ
Կը պասկերին շուտովդ ձողք շուսանցից՝
Եղեռնագործն այր դեմ կանգնի անծիծայ
արիւնըւայ մեկ ձիւնայ:

Իսկ դիմացի բըղեր վրայ՝ անայցեք
Բայց 'ի նշուից ֆոց՝ մեռեղոց են ոսսակք,
Ուր ըաց ու ժպիս, յոյս ու կակիծ՝ ֆեն եւ սեռ՝
յանյասակ փոս մ'են լրուեր:

Բ.

Լո՛ւն ե ե գունն ֆո՛ ա՛յ յուսին՝ եւ ոչ անպք
Գնայուն կոզեակս ըստուերց կսգնեն 'ի ֆո դաշսս.
Ոչ յունայն վիհըս ֆո մունչեն ովկեակք
մերիկներու երգարակք:

Հագիւ երթեք հովսնանայ ֆո ձակաս
Շքիով գնիս պանդխտեղոյ յանասնեսն.
Ոչ այլ անձրեւք ցեղուն երկիկնիդ՝ աչ սառայք՝
փշրած ասոյի մը դերբուկք:

Եւ անարսոյ այդ յոյս՝ որ գիս որորե
Յերագս անոյչ՝ հարեանցի ե միայն
Ժպիկն նընսն որով օրրե գնանկիկ յւր
այրիացեայ կին զըխուր:

Ո՛վ նաւարեկդ անբաւուքեան՝ անծանօք
Ո՛ր գիտե որ աստեղ ծոցեն ես յըզոսած.
Ո՛ւր՝ ինչո՛ւ՝ ցե՛րք ձակասագիր մըդե գեգ
սենչիցդ 'ի կիս՝ հոգոյս պես:

Գ.

Ո՞ն քե ըզար ոք ֆո բարձրեն ու նկատե
Հեռաւոր գերկիր մեր՝ երբ մանիկ ոսկեկար՝
Կաւ գունն ձերմակ՝ հորիգունիդ մըքին վրայ
շեղակարծ կը բարձրանայ:

Քո վիհերուդ մեք եւ շերանցդ 'ի կսարս
'Ի դաշօրայոյ անայցեղու եւ անձայն
Յոյացնեղով շողիւնն աղօս՝ գերդ կնձնեայ
պսսակք 'ի վիտ մի մուայ:

Պիսի սեւեռ 'ի սխարայոյս քեռեկն
Ա. առագաստ ծովուց աչիս սառնաստոյ՝
Մանրանըկար պսկեր 'ի ջուրց անդ վերայ
սարսմանեղ գերուպս:

Հնգհետեւ ապա զնձիս 'ի գորի,
Պիտի գային 'ի տես անդունդի Աշխատեանց
Ըզբունընով զգահեալ նաւուց ընդ տորկի
յորձանախար ընդ իբր շիդ:

Եւ կըլիսդիւնեան հոսանք՝ շաւիղ կապուտակ
Ողորսացոյց ընդ մուշաձայնն ովիկան.
Ու Աւերիկայ անստք յոյց խորըս մըքիկն
Նեքք քո քախանց քախքըփիկն:

Խաղաղականն ապա՝ աւսար շափիւղեայ՝
Ողորսացեալ զերկրաւ՝ հասնակ պարպացուն,
Եւ իւր վիհերըն գոր ցեղուն փոփրակոծ
Կեքք քազաւորք անդընդոց:

Եւ բիւր սաս անդ ցրուեալ կղզեակք օրեանք
Երազասեր յաւերժնարսանց՝ հեծեղով
Մենաւորիկք յսնհունուքեան, ճեղիկակ
Ծըփսնն անցա խիտ անստք:

Ահա եզերք Ասիոյ, շողի հեղեղիկն
Ի սրեփս անձայրս՝ ուր շրջեցան այնչափ ազգք.
Ինչպէս շրջին հոն արդ անուրջք անիրան
Նըշոյլից քոց ի հոսանք:

Ինչպէս կոհակք յըպառնալից կուտակք
Յանկարծ ի վեռ փոխեալ կանգնեալ դիզադից,
Գուն հիւնաղայք անեղք՝ զըլուխք յուսապասկ
Որք յանդունդըս անչասակ:

Չըպիտիեցի՞ր երբեմն ըզոյս քո սերիւն
Իւր կողերէն զնսահեալ բիւր ազգաց
Գիշերախառն երբ գտրեփիկն անհատարք
Յանձաւոր քաղղ եւ աշխարհք:

Չըսեամբ բիւր ըսպառագին վաշտերու
Փայրակնացայց զինուց շողիւնն օղաքիչ,

Երբ ծովերու պէս մերկանոծ ու դժխեմ
Արշաւեփն դիւնադիւն:

Չընսամն քեզ՝ փրոյովեղու զանդորր քո
Չայլիք մեր խնդից, հատաչք ոգոց սպեկից.
Անեծք կամ ուխտք սիրոյ՝ եւ տեղք փառաստոյք՝
Եւ արսաստք եւ սոթք:

Ի՞նչ՝ եղո՞ւկ՝ ի՞նչ՝ եւ ոչ զնձիս ժանսնեմ
Այսչափ սղոնուկք եւ անձկայրեաց մեր մեռունեցք.
Ինչո՞ւ ուրեմն այսչափ ըլիսնք՝ հոգք աղի
Այսչափ վաղանց մահացունք:
Թ. ՅԷՐՁԵԱՆ (*)

ԱՌ ԱՍՏՂՆ ՀԵՌԱԻՈՐ . . .

Երկնից մեզ կայսրոզ քուխ ամպոց ներեւ
— Օրօրոց եւ բոյն շանթից մահարկու
Հրաս շողաղուն լոյս կենսապարգեւ,
Փայլիկն երբեմն աչկունքիդ երկու,
Երկնից մեզ կայսրոզ քուխ ամպոց ներեւ:

Օրօրոց եւ բոյն շանթից մահարկու
Ամպք պաշարեփն թգեկ, եւ լուսիկն
Եւ ես հարցնեփն՝ լրօփն՝ մեկ մեկու.
«Ամպք եմ քե աչկունք գեղանոյց կուսիկն՝
Օրօրոց ու բոյն շանթից մահարկու . . . :»

(*) Թողմաս Թերզեան՝ նշանաւոր բանաստեղծ, թատերագիր եւ ուսուցիչ: Ունի կարեւոր գրական արտադրութիւններ: Ծնած է 1838ին եւ մեռած 1909ին:

Հըրա՛ս շողոզուն, յո՛յս կենսապարգեւ,
 Հեճեճցար դու ճակատագրիդ չար,
 Մինչ խաւարն հոգւոյս կը փարաւե՛ր քե՛
 Հեռացար յանկարծ, աւա՛ղ. եւ շիջար,
 Հըրա՛ս շողոզուն, յո՛յս կենսապարգեւ:

Փայլեին երբեմն աչկունքրդ երկու . . .
 Այժմ նային միայն այսերուդ վերեւ,
 Եւ յայն վայր օտար՝ յոբում ապրիս դու՛
 Մա՛րդ չը կասկածիր քե՛՝ որպէս արեւ՝
 Փայլեին երբեմն աչկունքրդ երկու . . . :

Երկնից մեջ կայսուող թուխ ամպոց ներքեւ
 Բիւրաւոր աստղեր պրլպրլան հեռուն . . .
 Այլ առ քե՛զ սլանան իմ յուճ, երազ, եւ
 Զքե՛զ որոնեն իմ խոհեր թափառուն
 Երկնից մեջ կայսուող թուխ ամպոց ներքեւ . . . :

Ա. Ղ. Ե. Բ. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ (*)



(*) ԱՂԵՔՍԱՆԴԵՐ ՓԱՆՈՍԵԱՆ (Արիասրան) անգուգական տաղաչափ: Ծնած է 1858ին Պոլիս: Երև. կրթութիւն սուած է Նուպար-Շահնազարեան վարժարանէն: Կանուխէն սկսած է ոտանավորներ գրել «Բարաստան Մանկանց» մանկական շաբաթաթերթին մէջ, որոնք յանգերու ճոխութիւն մը կը ներկայացնեն: Մասնաւորաբար մշակած է երգիծական ոտանավորի սեռը, որուն մէջ անտատարելի կը մնայ: Ունի «Այգեկութիւն» եւ «Ազատ Բնաս» 1908ին սկսած: Բազմաթիւ թարգմանութիւններ եւ ոտանավորներ ունի թրքահայ թերթերու եւ ֆրանսերէն հանդէսներու մէջ: Մեռած է սրտի կաթուածէ Պոլիս՝ Սամաթիա 1919 Հոկտ. 29ին:

ՄԻՔԱՅԷԼ ԷՖԷՆՏԻ ՄԱԳՍՈՒՏ

Ա Ռ Ն Ա Ռ Ի Ն Ա

Երբ մեկնեցար, ամպ մ'էիր գո՛ց վարդագոյն.
 Աչքդ 'ի ժրմիտ, շողայր ճակատդ բսպիտակ:
 Վերադառնա՛ս մեզ որպէս ամպ թրխադոյն.
 Փոխան ժրպոտի՛ դառն արտասուաց, ո՛հ. կայլակ.
 Լուսոյ տեղ մու՛թ, երգոց փոխան ողբ ու կոծ . . . :

Երբ մեկնեցար, և՛ բոթն անտի մեկնեցաւ.
 «Այժմ յերկինս է համակրելին Հիւպատոս»
 Հէ՛զ հորեղբայրն, սրում ո՛չ էր օտար ցաւ.
 Ո՛չ այլ չընչէր. իւր շիջանէ՛ր արիին հոս . . .
 Եւ լայր Սօֆին, կոյս՝ որբ կըրկին: Եւ դու, Նա՛ն:

Դու, փափկասի՛րտ, սրբուհւոյն չափ ըզգացիր
 Անակրնկայ հարուածն, ըզքեզ սերէր յոյժ.
 Ըզքեզ, փոքրիկ մանուկ ազո՛ւ շնորհածիր.
 Միրուն հօրայրն այնքա՞ն գրգուէր: Արդ, այն դոյժ
 Ի յուշ ամ քեզ գրգուանքն անոյշ. Եւ լացիր . . . :

Արտասուես դեռ մինչ յոսկր է հա վերածեալ.
 Դեռ լաս, մինչ դեղ գայար ծածկէ զիւր գամբան:
 Ա՛հ. քան ըզմեզ որք կենդանիքս եմք մնացեալ,
 Են օգտաւէա մեռեալք մեռեալք բազմերա՛ն.
 Ոտք ճմլին խոտն, ոսկերք ծրնին գալարիք:

Եւ . . . մինչ գայար՝ փոսն ըզգենու, մարդն ընդէ՛ր
 Համակի՛ թուխս: Ո՛ Նառ, սրտու՛՛ սե հանդերձդ:
 Ուռենին տի՛ս, արտասուաթոր, կարեկէր.
 Միթէ սե՛ւ են սաքն իւր երկայն որպէս հերքդ:
 «Մաման մո՛ւթ է» գո՛չէ մանկիկդ, Եւ սոսկա՛յ . . . :

Եւ կաթին չափ ժրպիտն ու լոյսն հարկաւոր
Մանկան, որ բոյս մ'է, ոյր արեւն է մայր իւր:
Ա՛հ, ամպասքող, տրամաթախիժ սըզաւոր,
Պիտի սպանն՞ս Աննան՝ էակ բոցահուր.
Քու սէրդ այսպէ՞ս պիտի յայտնես առ հօբայր:

Կըրէր անուն Քերորի, սիրտ նո՛յն բարի.
Եւ իբր հրեշտակ ըստփէ գքեդ. «Նառինոյ՛,
Սուգն անպատեն է, երբ ծագիկ մը խամբի.
Թողու ծաղիկն հողոյն ո՛ր ինչ մանանայ.
Բոյրն իւր ու թոյր ու ձեւ կորչին երբեք ո՛չ...»

ԳՐԱՍԷՐ ԱՏՈՄ

Մ Ա Տ Ո Ւ Ն Ք Կ Ո Ւ Ս Ի Ն

Անճառ, աննըման, ջինջ եւ անապակ
Մատունրդ, ոյց վայլէ ոսկի գաւազան,
Բանան զրունքն ամէն սրտից ամրափակ,
Երբ շողան աչերդ, լուսո՛յ աւազան,
Անճառ, աննըման, ջինջ եւ անապակ:

Մատունրդ, ոյց վայլէ ոսկի գաւազան,
Քնքոյշ զերդ բամբակ, նուրբ են զերդ պրտու.
Այլ ըսէ ինձ, կո՛յս, ո՞ր վայրի գագուն
Փոխ տրաւ քեզ իւր ճիրաններն հատու,
Մատունրդ ոյց վայլէ ոսկի գաւազան...:

Բանան զրունքն ամէն սրտից ամրափակ,
—Որպէս չարագործք՝ խորտակեալ արկեդ,—
Միշտ արձարծելով բուռն սիրոյ պապակ,
Այլ յաւէ՛տ թողով անո՞ անրոյժ մի կեդ,
Բանան զրունքն ամէն սրտից ամրափակ...:

Երբ շողան աչերդ. լուսո՛յ աւազան,
Հոգիք-խո՛ւ թիթռունք-կ'ընթանան առ քեզ.
Այլ սէ՛ն մի ակնարկդ, հո՛ւր զարմանազան,

Կը լսփէ մի սիրտ սիրո՛յ ողջակէզ՝
Երբ շողան աչերդ լուսոյ աւազան...:

Անճառ, աննըման, ջինջ եւ անապակ
Հոգիս երբ անցնի աշխարհիս սեմէն,
Կո՛յս, թո՛ղ դագաղիս՝ նեղ, կարճ ու տափակ
Կափարիչն ալ՝ քո՛ւ մատունրդ գամեն
Անճառ, աննըման, ջինջ եւ անապակ...:

ԱՂԵՔՍԱՆԴՐ Դ. ՓԱՆՈՍԵԱՆ

Ա Ռ Գ Ե Ր Ա Ր Գ Ո Յ

Հ. ՍԱՐԳԻՍ ՎՐԴ. ԹԷՈԴՈՐԵԱՆ

Վերաստուչ Մուրասեան վարժարանին
Ողջոյն հրատարական

Փայլակնաձեւ

ամիսք երբեակ անցին զինեւ,
Յորմէհեաէ,

Ո՛ հայրդ որբոց Թէոդորէ,

Զիս աստանոր

Հիւրընկալես սիրայորդոր:

Ժամ է ինձ արդ

Յայտնել զիմ սիրտ քեզ շնորհապարտ,

Զև 'ի տըխուր

Զև 'ի հրաձեմն անկեալ յերիւր:

Վաղ խակ ընդ քեզ
 Ոգեխառնեալ 'ի զօդ պէս պէս,
 'ի գեղեցիկ
 Յայլ 'ի նարօտ զօգեմ այժմիկ:
 Պարտք սրբազան
 Հիւրոյ առ խրն ասպընջական,
 Կայցեն 'ի սպառ
 Դրոշմեալ յոգւօջս յանջինջ 'ի տառ:
 Թէպէտ յողունք
 Քեզ որհներգու կայցեն շրթունք,
 'ի գերազանց
 Երկ քո շարժեալ սիրտ հայկազանց,
 Եւ ոյց աստէն
 Խնամես սրբոց դու հայրօրէն,
 Այլ և գայս, օ՛ն
 Օրհնից յինէն ընկայցիս ձօն.
 Ընկայցիս դայն
 Ընդ ողջունիս հրաժարական:
 Ողջամբ մրնա,
 Ողջոյն ընդ քեզ միշտ յարակայ,
 Երկայն աւուրք
 Տացին յերկնից քեզ անտըխուրք,
 Երանաւէտ
 Խաղաղութեամբ յորդեալ յաւէտ:
 Որչափ աստեղք
 Փայլին յերկինքս յուսադեղք,
 Որչափ ծաղկունք
 Փըթթին ընդ գաշարս գունագոյնք.
 Որչափ այգուն
 Ընդ մարգարօտըս գարնայնոյն
 Մարդըրտահատ
 Ածէ 'ի սփիւռ ցօղ երկնառատ,

Նոյնչափ զեղցին
 Ուղիք օրհնութեան 'ի գլուխ քոյին.
 Կեցցես յամայր
 Կեցցես խնամող որբոց դու հայր:

Հ. ԵԴՈՒԱՐԴ ԼԻՒՐՄԻԻՉԵԱՆ
 Արեւս. Շիրակայ (*)

'ի Փարիզ 8 Հոկտ. 1854

Հ Ս Կ Ա Յ Ե Ր Ա Ձ Ն

Յանրջի էր:

Եւ տեսնէի գաշտ ընդարձակ,
 Ուր պարէին խառն 'ի խուռըն և հերարձակ
 Ամբօխ լրօին կտրիճներու և աղջըկանց.
 Ոյց հրպէին շրթունք երբեմըն սիրախառն:
 Հովանուտ էր գաշան, և թմբիք մեծ, թաւուտեան
 Տաաանէին հողմոց 'ի շունչ յորդահասան:
 Այսպէս ճաճանչ մի մերթ ընդ մերթ 'ի վայր սահէր

(*) Հ. ԵԴՈՒԱՐԴ ՎՐԴ ԼԻՒՐՄԻԻՉ տաղանդաւոր լեզուագէտ, մնած է Պոլիս 1799 Յունուար 10ին: Վենետիկի Մխիթարեաններէն, որ քահանայ ձեռնադրուած է 20 տարեկանին: Չանագան պաշտօններով 44 տարի Հռոմ մնացած է: «Վրոյր» ծածկանունով քանաստեղծութեանց հատոր վը՝ «Բուրաստանը» հրատարակած է: Թարգմանած է Վիրգիլիոսի «Ենէականը», Ֆէնըլօնի, Տէլէմարի արկածները», Պէրնարտէն տը Սէն Բիէռի «Պօղ եւ Վերգիլնէն», Ֆլօրիանի «Նուսա Պոմպիլիոսը», Ռօլէնի հսկայ «Հնախօսութիւնը եւ ուրիշ դասական գործեր» Ունի նաեւ հեղինակութիւններ, ինչպէս «Աստուածաբանութիւն» բարոյական ընդարձակ, 2 հատոր 1865ին տպուած, «Առձեռն ճարտասանութիւն» 1866ին, «Արտարականը» 1874ին եւլն: Վախճանած է Հռոմի մէջ 1876 Նոյ՝ 26ին 77 տարու:

Ի՞նչ տակն ներկէր լանջ, ուս, բերան. գլուխ լուսածեր :
 Այլ, ս՛վ դարմանք, լրուին շրթունք չը ժպտէին :
 Այլ ունէին անճառ բան մի գերմարդկային :
 Աչեր յիրեար չը յառէին սիրաբորբոք,
 Եւ ունէին նայեաց տարտամ, վշտամորմոք :
 Գագցես իմըն վերջին օր մ՛էր նոցա շնորհեալ,
 Յորում իւրեանց ներելի էր սիրել, խնդալ,
 Եւ իւրեանց սիրան արդէն յի էր ցուրտ սարսուռով
 Եւ ՚ի մահուան տանջէր խորհուրդ աղետորով :

Ամպ մի անցաւ :

Եւ տեսնէի մի սրորան,

Յորում խաղաղ ննջէր մանկիկ վարդ եւ շուշան :
 Անաւօտ էր. պատուհանին մօտ երգէին
 Հոյլ հոյլ թռչունք սիրասարփիկ, թեթեւ, նըրբին :
 Մըսուրի բոյր մի գաղջ սրփուէր յօդս արփաւէտ .
 Հողմիկ անոյջ գըզուէր գմանկան հերս վէտ ՚ի վէտ :
 Անշուշտ ակտրօթ եբազ մ՛եկաւ շոյել իւր քուն ,
 Զի աւանիկ շարժէր իւր շուրթըն վարդագոյն .
 Որպէս շարժին վարդի թերթեր, երբ հեղ զեփիւռ
 Գոյ համբուրել ծաղկանց ճակատ բուրումնասփիւռ :
 Եւ արթընցաւ մանուէկն, ահա աչեր բացաւ
 Լուսափրթիթ, գոյց գոյն երկին օժտեց ամբաւ :
 Բտնար աչերն ՚ի լոյս, գտնար մեղմ իւր նոյուած
 Յարարչութեան վըսեմ տեսիլ և, զարմացած,
 Ծիւջ մ՛արձակէր ում չիք նըման աստեղաց տակ :
 Մայրն ընթանար ՚ի ներքս, ասէր. «Աստուծոյ իմ հրեշտակ» :

Ամպ մի անցաւ :

Եւ տեսնէի բանտ խաւարին :

Կարդ մ՛էակներ ձեռն ՚ի ծնօտի նստած էին .
 Կարդ մ՛էակներ տժգոյն, վրտիտ խարազնազգեաց,
 Ներքեւ մօրուք ցախ, տնխընամ, հէք վըշտազգած :

Անշարժ կային, այլ յարբթմընի, դէտակն յերկիր,
 Անփոյթ միմիանց, լուս, մեհաւոր, անկարեկիր,
 Կարծէիր թէ վաղուց լըտած էր նոցա շունչ,
 Կամ թէ զիրեար իմանային, թէ եւ անմուռնչ,
 Կամ կարծէիր թէ սպասէին ումեք հասնիլ
 Եւ հուսկ բանալ այդ երկաթի սեաւ դուռն անել .
 Այլ թէ նոքա սպա սպասած էին յոյժ ընդ երկար,
 Եւ նա որում ակն ունէին բընաւ չէր գար :—
 Յանկարծ ամենքն ի միասին, կին, այր, պատանի :
 Գոհնիկ բանակ մի ցնցոտեաց, սէգ, սպանալի,
 Վէս, կանգնէին քրքիջ բարձեալ մտնասարսուռ,
 Կայծակնացայտ նոյուածքներով ահեղ և սուր .
 Եւ տեսնէի, ս՛վ տեսիլ հէգ և գըժպընի,
 Որ երկնի ցոյց տային իւրեանց բուռն ամենի :

Ամպ մի անցաւ :

Եւ էր ձըմուռն ստանամած :

Մըշտապատ էր երկնից ճակատըն տխրազգեաց :
 Ամպ ձըմուռն խառնէր բղձով, զերկին, զերկիր .
 Անշընչացած էր բընութիւն սպիտակածիր .
 Անհետացած էին մարդիկ և անասունք .
 Փակեալ էին նոցա համայն բընակութիւնք :
 Եւ ոչ լրուէր, և թաղչէին համադոյք բնաւ
 Համապարփակ, սառնատարած ընդ պատանաւ :—
 Այլ յեղակարծ հատիկըք ձեան զգեցան թեւեր,
 Եւ թիթեանիկ զարձած, գնացին ՚ի վայր, ՚ի վեր :
 Վերանայր մեծն, համայնասքողն սպիտակ ամպ
 Զերդ մոզական գաւազանի մի զօրութեամբ :
 Ծոխ արեգակն արտաքս հոսէր ՚ի մըտայէն
 Եւ ողողէր կենօք զէակըս համօրէն :
 Շող, տերեւ, ցօղ, կապոյտ, վըտակ և թիթեանիկ,
 Անտառ, հովիտ, սար, ձոր մարմանդ, զեփիւռ, թռչնիկ .
 Համայնք շուրթեր եղած էին և ՚ի համբոյր

Միմիանց 'ի սէր մատչէին, գոհ և կենսաբոյր:

Ամպ մի անցաւ:

Եւ տեսնէի մեծ Սահարան,

Ձոր մըթրնչալ վերջալուսոյ ծածկէր պատան:

Թըւէր ինձ թէ փոխադրուած էի երկրէս:

Գերաշխարհիկ և բոցօթեայ ինչ 'ի կրկէս:

Ահաւոր էր տարածութիւնն անծայրածիր:

Ամայի էր երկին, թափուր և ըս՝ երկիր:—

Մի ուղեւոր, ցուպ ի ձեռին, փոշի ծածուկ:

Կըտրէր անցնէր այդ անապատըն արտամասուգ:

Արդէն վազուց յուզի անկած էր նա, միայն,

Եւ չը գիտէր թէ ո՛ւր յանդէր այդ ուղին լայն:

Երթա՛ր, երթա՛ր, աչք 'ի խոնարհ, հաստատ, յամառ,

Նինջ կամ դադար չը կար բընաւ նորա համար:

Եւ հարցնէի. «Ո՞վ է այդ մարդն և ո՛ւր երթայ»:

Ո՛չ ոք տար ինձ պատասխանի թէ ո՞վ էր դա:

Ամպ մի անցաւ:

Եւ տեսնէի որ էր գիշեր,

Եւ էր ծովափ բայց թէ յո՛ր կոյս, ալ չեմ յիշեր:

Անդ լուսողով մի ապարանք կար կենսասփիւռ:

Ուր բացխրիփիկ նըշուլէին ճըրագունք բիւր:

Մետաքսահիւս ելանիլիք սիրահարաց

Կախուէր անոյս պատուհանէ մի որ էր բաց:

Խընդի աւաչք պալատան մէջ ամենուրեք

Բարձրանոյին և նըւագաց հոսէր խմբերդ:

Բարձրը քրքիջք ընդ բաժակաց խառնէին շփնդ,

Խըլամուլար հիւ զար կաքաւ սէդ, գոտեպինդ:

Յայնժամ, երբ ձայնք առաւել ևս բազմանային

Եւ կարծէիր թէ զըզըրդէր գունատ երկրային:

Յանկարծ սպիտակ երեւէր ինձ մի կերպարան

Յայն խաւարին պատուհանին 'ի մըթութեան,

Եւ տեսնէի մանկամարդ կին մի որ 'ի վայր

Յալիս ծովուն վիժէր զիակ մի գալկահար:

Եւ տեսնէի, և այդ ամպեր կուտակեցան:

Յերկնից երեսս, ուր չըջէին նախ ցիր ու ցան:

Համայն անուրջքն այն խայտաբղէտ յորինեցին

Մի ահամայ մարմին որ զըրաւէր կիսով զերկին:

Մի ալհհեր հսկայ որ անդ ընկողմանէր:

Կարծէիր թէ մի հինաւուրց գերեզման էր:

Ճակատն 'ի վեր, գլուխն 'ի յամպոց վերայ զըրած,

Ակընկառոյց կար 'ի կէտ ինչ, բազկատարած,

Անթարթ էին նորա հայեացք աղերսաւոր:

Չայս ամենայն լուսաւորէր լոյս անսովոր:

Լոյս զոր տեսնեն մարդիկ երբեմն, երբ յեղակարծ

Չարթնուն 'ի շող մեծ հըրգեհի մի հողմարծարծ:

Անշարժ էին նորա հոծ հերք ասրաքատակ:

Խոր էր խորհուրդ համայնազգած իւր կուրծին տակ:

Հայէր 'ի կէտն այն բացական, 'ի վեր, 'ի վեր...:

Յայնժամ անշուշտ նըմա մեծ ինչ անդ երեւէր,

Ձի ծերունի այն հսկային շուրթ ժպտեցաւ,

Եւ այս անգամ պարզէր ճակատն այն հոգեգրաւ:

Բազուկք իւր միշտ կտակառէին իբր 'ի գրկել:

Նայուածին մէջ փայլէր հուր խանդ մեծավայել:

Անձկակարօտ, ողջազուրիւ գոգցես թըւէր

Մի վեհ էակ զոր ցարդ խնդրած էր սիրտ յերեր,

Եւ խնդութեամբ զեղուր հոգին, որպէս մի մօր:

Որ զկորուսեալ գտնէ զորդի իւր միամօր:

Վեհատեսիլ էր կերպարանդ այդ հոյակապ:

Այլ չ'էր կարող հասկնալ զայն միտք իմ ուշաթափ:

Եւ հարցնէի. «Ո՞վ է այդ դէմք սպիտակայօն»:

Չայնք հծծէին զինեւ. «Ահա Վիկտօր Հիլգօն»:

28 Ապր. 1885 Օրբախէյ

Յ. ՍԵՌԵԱՆ (*)

(*) ՅՈՎ. ՍԵՌԵԱՆ ուսուցիչ, բանաստեղծ և վիպագիր: Ծնած է Պոլիս՝ Օրթագիւղ 1853ին: Երկար ատեն հայերէնի և ֆրանսերէնի ուսուցիչ եղած է Պոլսոյ Ազգ. վարժարաններու մէջ: 1896էն ի վեր հաստատուած է Գահիրէ: Աշխատակցած է բանաստեղծութիւններով և գրավէպերով՝ «Մասիսի», «Թատրոնի», «Երկրագունտի», «Արեւելքի», «Ամերիկայի շոյսի», ինչպէս նաեւ «Շիրակի»: Իր բանաստեղծութիւններէն մաս մը աւանմին հատորով լոյս ընծայած է «Յուզման ժամեր» խորագրով 1888ին: Յովհ. Սեթեան ծանօթ է նաեւ «Յոսէյ Վանանդսեհ» գրական ծածկանունով:

Բ Ե Ր Ա Ն Կ ՈՒ Ս Ի Ն

Փոփրիկ վարդագեղ ունեւր մի բերան
 Եւ շարժ մ'ասանակն ողորկ՝ ձիւնագոյն .
 Հոգեկոյց ժպտից ջիւնց բընակարան ,
 Սիրոյ, հեշուքեանց երանաւեհս բոյն ,
 Փոփրիկ, վարդագեղ, ունեւր մի բերան :

Եւ շարժ մ'ասանակն ողորկ, ձիւնագոյն ,
 Ծողար, սուր, մախուր, փայլուն , կարուփի .
 Այլ ոչ ոք կարծեւր քե— ծաղկիկն մեջ բոյն—
 Ծրբակն ետեւ կար՝ արեանն ծարաւի՝
 Եւ շարժ մ'ասանակն ողորկ, ձիւնագոյն

Հոգեկոյց ժպտից ջիւնց բընակարան,
 Բերանն այն ժպտեւր ժպտոյ մ'երկնային .
 Ասողիակնուր մշտախա՛ն խորան,
 Աղբիւր զրգուանաց, շնորհաց կը նային,
 Հոգեկոյց ժպտից ջիւնց բընակարան

Սիրոյ, հեշուքեանց երանաւեհս բոյն ,
 Թաւեցաւ պահ մ'անդ արտիկս ու սընաւ
 Այլ սուր աստուակն խաճի՛ն գայն իսկոյն
 Զի սրուած չ'ե՛ր ինձ ունենայ բընաւ
 Սիրոյ, հեշուքեանց երանաւեհս բոյն

— Փոփրիկ, վարդագեղ ունեւր մի բերան
 Որ այժմ ա՛յլ շրբակն քաղցր հեղու նեկար ,
 Մինչ իւր վերայ իմ երազ գուրգուրան
 Եւ անյագ տեկնաւ հեծեալ անդադար .
 « . . . Փոփրիկ, վարդագեղ, ունեւր մի բերան . . . »

Ա Ղ Օ Թ Ք

Իւրովք փառօք 'ի խոնարհ պայծառ արքայն տըւընջեան
 Էջըս առնու յամրաքայլ յիւրոց կառացն յաղթական :
 Ամպ լուսափայլ , որ ըզնա յաջաց մերոց թանգուզէ .
 Ըզհետս նորա ընդ երկինս յոսկի ակօսս նըկարէ ,
 Եւ ծիրանի աշխարհալից ծաւալանսն ցոյմանց հեղեղք :
 Անդուստ լուսինն 'ի տատան՝ զերդ ոսկեղէն ինչ կանթեղ
 Հորիզոնին առ եզերքք կախ 'ի կամարըն կապոյտ ,
 Սըփռէ զնուազ նշոյլքն 'ի քուն ըզդալարեօք 'ի ծածկոյթ ,
 Եւ ըզլերամբք լայնասփիւռ գիշերանց քօղն տարածի :

Այս ահա՛ ժամն յորում բնութիւն , յինքն աւելափեալ առ
 վայր մի ,
 Ընդ մէջ տուընջեանն որ խուտէ և գիշերոյն վերահաս ,
 Կանգնի հանդէպ Արարչին՝ տեսուն տուընջեան և գիշերաց ,
 Եւ պերճ իմն լեզուաւ գոգցես բոլոր էիցս 'ի գիմաց
 Զիւր յարգանացն ըզծօնիս՝ մատուցանէ առ Աստուած :
 Ահա՛ պաշտօն վեհափառ տիեզերացքս համայն ,
 Ուր տիեզերք են տաճար , և ուր երկիրն է սեղան .
 Երկինք նորա են գումբեթ . և բիւրոց բիւր աստեղունք
 Զահաւորեալ տաճարիս են սըրբազան ճըրագունք :
 Իսկ զորս առնէ երփնագեղ մահամերձ օրն ամպք մաքուր ,
 Զորս և հողմոյն շունչ թեթեւ , 'ի մտից մինչ յեւս համասփիւռ
 Ծալ 'ի ծալեալ մեղկաբար 'ի դաշտավայրըն օդոց
 Սահէ , գլորէ գունդ 'ի գունդ ծիրանեփայլ յերկնից ծոց .
 Խընկոց կոհակք են որ 'ի վեր ելնեն և ցընդին
 Մերձ առ դահոյսն Աստուծոյ՝ բոլոր բնութեանց պաշտելին :
 Այլ այս տաճարն անձայն է , ո՛ւր են նորա սուրբ նուագք .
 Տիեզերացն առ Աստուած ուստի՞ բըզխին երգք դաշնակք .

Ամենուրեք լըռութիւն . սիրտս իմ միայն խօսի լռին .
 Տիեզերաց միակ ձայն՝ իմացութիւնս է ներքին .
 Երեկորեան ճաճանչեց՝ թեւոց հողմոց 'ի վերայ .
 Ձերդ կենդանի ինչ բուրումն՝ դա առ Աստուած ամբառնայ .
 Արարածոցս բովանդակ ինքըն գոլով միակ լեզու՝
 Ձհողիս 'ի փոխ տայ նոցա լինել նըմին օրհներգու :
 Անդ միայնիկ, հայցելով զհայեցուածս հայրական ,
 Ձամայութեանն լընում վայր արձագանգօք սուրբ Անուան :
 Իսկ որ ծածկեալն իբր յօթոց 'ի յանսահման յիւրում փառս ,
 Հըլու զընդից լըսէ նա ըզներդաշնակըն բարբառս ,
 Նա լըսող է և ձայնի խոնարհ ցածուն իմ մըտաց
 Որ իւր անուանն մըրմընջող և իւր փառաց խորազգեաց :

Լ.Ա.ՄԱՐԳՒԻՆ

Թրգ. Ս. Վ. Գ.

Գ Ի Շ Ե Ր

ԿՈՅՍՆ Ի ԲԱՆՏԻ

Ամբաւածալ երկնից վըսեմն ի կապոյտ՝
 Սեւասբողեալ մութն ի մըռայլ վարազոյր
 Չեռք՝ որ զխաւար ի միջոցէն արկ յանդունդ
 Իբր յոչէէն սըփուէր երկնից ի պարոյր,
 Լուսազընդից եթերածեմ բոյլը ըստուար .
 Փախըստական դողեալ ի յալս եթերին,
 Բիւր կայձակունս վերուստ ի վայր շանթտհար
 Տագնապ ի սիրտ տիեզերաց, ո՛հ, արկին :
 Իբր ըզյետին աւուր լըրման վերջակէտ,
 Ո՞ զմահացուն կարէ չափել ցաւս եւեթ :

Իսկ ես՝ ուր կէտն է խորհրդոցն իմ համայն
 Միտք ամբաւին արբեալ ի հեշտ ըզմայլմունս,
 Ըզխորութիւնըն չափէի անսահման,

Տըկարութեան նըշկահել զուճըս ծանունս :
 Այլ ի՞րր ապա նանիր յուսոյն խելամուտ,
 Ուշ ի ծոցին ամփոփելով յինքն ըսթափ .
 Ձերդ որ ի քուն երազիցէ խօլ խորհուրդ,
 Եւ վերընդոստ ծանիցէ հենդն եւ ըզխար
 Կամ յովկէան ի ծուփս ալեաց ընկեցիկ,
 Ըզդարափամբ մօտ քերելով որ ի շիւղ,
 Եւ նահանջեալ յետս ընկրկեն զայն ալիք,
 Ձրահետ յուսոյն վարեալ առցէ նախկին գոյժ :
 Եւ ասէի ց'անձն իմ, ո՛հ, մր գուցէ Տէր՝
 Աւերածոյ աշխարհին յայց ելանէր :

Գիշեր էր ստակ, կարկառ անծիր ընդ ոլորտ
 Երկիր ի ստուերս մահու զբիքսն ունէր փակ,
 Խուլ իմն հծծիւն ընթանայր յօղս թափառկոտ,
 Իբր ուղեւոր ու զհետս կորոյս լայնարձակ :
 Աղերսարկու հանդէպ էին կայր ի գուճս
 Եւ վերարձակ յերկինս ըզրիբարն իւր պարկեշտ
 Աշխարեյի հեծէր ի վիշտս անմըռունջ,
 Կոյսն ի բանտի վըսանգս արկեալ դառնադէտ,
 Սիրտն ընդ մահու բեռամբ ցաւոցն ի տըրոփ,
 Ձերդ ծով մ'ի յոյզըս փոթորկէր ի տագնապ :
 Եւ արտասուաց աղեվիժակս անըստի
 Յաջացն ընդ այտաըն ծաւալէր մեղօր չափ,
 Չայնէր եւ ծայն շեշտ ընդ կամարս վերասլաց
 Յունկն Անմահին որստայր զիւրն ըզհայցուած :

«Որ ի տաճար խորհրդակիր սեղանոյն
 «Յար ի բուրմունս անոյշ ինկոցն հոտոտիս,
 «Ընկալ զոր իմըս նը իրեմ սիրտ հանգոյն,
 «Աստ ի կապանս մեղապարտիցն ի բանտիս,
 «Իցէ թէ, Տէր, յանդուզն ի մեղս ինչ գրել,
 «Որ հէզ մանկան շրթանց մատոյց ուժով մի ջուր,
 «Ոչ ուսուցեր մեզ այլ օրէնս չը գիտել,
 «Քան զոր արեամբդ ի Գողգոթա մեզ ետուր,
 «Եօ պինդ ի յայդ պատուէր կալայ գակընալիշ,
 «Կըրիցս ընդդէմ իբր ըմբիշ յանձն ոգորել,
 Այլ թըշնամին ժանտ մախանացն ի փուրսիշ,

«Չանմեղութիւնս արձանագրեաց անվաւերս
 « Բզսիրա իմ դու գիտես, Տէր»
 « »
 Հընչեաց դափիրն, պատգամաւ կոյսն էջ յերկնից,
 եւ յարճաւ իրս մահու զաշխարհս այս ելից,
 «Ձի զարտատուս փրրկանս ետուր բոց մեղաց
 «Արդարութիւն ընդհուպ ելցէ քեզ ի յայց»
 եւ ամպորոտ տարերբ յերկունս կըրկնեցին
 Հրաշէկ շանթիցն ի սօստ «Կամք քո եղիցին»
 ԳԱՐԵԳԻՆ Տ. ԱՐԻՍՏԱԿՆՍԵԱՆ (*)
 1889 Դեկտ. 17

ԱՌ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Դարբ 'ի վերայ դարուց կուտեայ՝
 Խափանեղ ո՛չ բաւեն երբեք
 Զքո երկնային բոյրս անուշից՝
 Որով հոգիք մեր ըզնային ։
 Իբր 'ի հովիսս անւանից
 Գլուցեայ 'ի սիւզ երանութեան ,
 Բո սաղմ մրմունջք են երկնային՝
 Որ 'ի վերուս մեր յունկն հընչեն ։
 Բո երգք հընչնունք հրեշտակային
 Որ 'ի դրախտին օդս ծածակին
 'ի զգացնանց անդ անխոփեղոց
 Զինց յոյս ծորե երփըներփեան ։

(*) Առաջնակարգ հայկարան եւ քաջ գրարարագէտ, որդին է Սա-
 մաթիոյ Տ. Արիստակէս Բհնյ. Մամբրեանի ։ Գէորգ Գ. Կաթողիկոսէն հրա-
 շիրուած է Էջմիածին իբր հայկարանութեան դասախօս Գէորգեան ձեմարա-
 նին մէջ, ուր պաշտօնավարած է ատեն մը ։ Մեռած է յանկարծական մահ-
 ուամբ, 1911 Մայիս 11ին 'ի Պոլիս ։

'ի պահեայ անդ սրբիդ գեղնանց
 Շընորհք բորին յուսակայրակ ,
 Զխաւարին սիրս մեր վասեղ
 Յերկնից 'ի սուրբ բոց ծիրանի ։
 Խոհիցդ 'ի վեկ պասկերաց՝
 Վերին Սիօն մեզ ժրպի ,
 Երգոցդ յանոյշ գեփիւոյց
 Անւանութիւն ծաւայի ։
 Յե՛ս քան ըզնց քայրութիւն
 Զն հասս այն կէտ գերերկրային ,
 Յառաջ եւ յե՛տ քան զնց շընորհք
 Բանից չը գտին սուրբ երկնային ։
 Իբր գրո սիրս՝ յոր նա ըցաւ
 Որպէս նեկսար ըզնայրական ,
 Գիւր քան ըզնց իսկ պերճախօս
 Ունիւք քեպիտ երգաբան ։
 Փափուկ քան զնց, քայրք քան զնց
 Զունի սագ մի օրհնաբան ։
 Յորժամ ըսին քայրքսքիսուր
 Երգքք քոյին որ սո Յիսուս ։
 Զոյր սանցանացն անեղ խորհուրդս
 Առեայ ի վսեմ եւ ի նուագ,
 Սիրք իբրեւ խունկ ի սուրբ բուրվառ
 Հարեայ ծըխին եւ անձերին ։
 Զինց յարսուր այք պաղպաղեայ միտք
 Ի սուրբ վըշտաց յոյս-լին ծըփին ,
 Յորժամ երգի սաղոյ անեսոյ
 Յարութեան Տեառն յայց յու-
 սախառ ։
 Հաւասացեայք զայնունս սրբեայ
 Եւ զգըրխս սուեայ ի վեր

Սուրբ խորխուսակոփ, բերանայիր
«Փառք Տեառն» գոչեն որոսածայն :

Եւ մինչ այսպէս ի սուրբ գանգից
Եկեղեցոյ կախարն հընչե՛,
Զքարգանկոյ օրհնից մեռ առ Ասուած
Զօրհնեց միթե հընա՞ր ինչ է :

ՏԱՂ ԱՌ ՍՈՒՐԲ ԽԱԶՆ ՅԻՍՈՒՍԻ

Ո՛վ խաչ, յանչափս ո՛չ ընդլայնեալ զմտաց սահման եւ
զարբուքիւն ,
Հնա՞ր է նեղիւ կալ ի վերայ քոյին անեղ խորհրդոյ՝
Ոյր վեհուքեան կալ առաջի աշխարհի մըսաց հան-
դուրծեն ոչ,
Յոլայ զքեւ լոյս Յիսուսի եւ շողք Արփույն սուզին
ի նմա :
Երկինք կրքին յոսիցդ համբոյր, եւ Յաւիտեանք պատկառին
Վսեմ իմն ես դու առաջակ, ուր հալեցաւ սէր Տեառն
առ մարդ ,
Եւ մարդկութիւն ըզքեւ փարեալ յերկրէ յերկինս վերացաւ :
Յերկանց մահունն ի Քեզ կրեցոց՝ երջանկութեան ծնան
դարբ :
Ի միջոյ մթան անգրթութեանն շուրջ իսկ ըզքեւ քանձ-
րացելոց,
Լոյս գրթութեան յերկրի վերայ ծագեաց ընդ շողք
զերանուքիւն :
Իսկ ի ներհուս պարսութեանն երեւելոյ ի Քո վերայ
Վեհ յաղթութիւն զիւրբն պարգեաց ըզդրօշակ գե-
ղածածան,

Ոյր սրբաշուքն ընդ հովանեալ կրքեաց Աշխարհ զիւր
զլուխ խորխոս,
Հըպարտութեան յերինք քաղցր հեզութեամբ Տեառն
հալեցան ,
Ի՛ի մահաբեր ծառոյդ վերայ շողաց պրտուղ անմահու-
թեան ,
Ամբալ դարբն Յաւիտեանց գոչեն իրեարքս յաղթապանձ
Յեղեղելով «Անմահին մահուամբ մահըն մահացաւ :»

Ա Ռ Լ ՈՒ Ս Ի Ն

Յանքաւելի բարձրութեանց ,
Անճառելի այնքց յարկաց ,
Յաւիտենից վեհարանին ,
Վսեմ փառաց այն կայանին ,
Զըւարթափայլ շող ծիրանի
Հատաւ 'ի դէմս քո գեղանի ,
Ո՛վ երկնային վայելչութիւն ,
Ո՛վ երկնային գեղ սրբապատեն ,
Որ ցոլտնայ 'ի քո ճակատ
Փափուկ . չըքեղ և լուսակաթ .
Լուսին , երէկ դու սեւասքող
Ամպովք պատեալ յահ և 'ի դող ,
Դանդաղէիր լեալ դալկահար ,
Այսօր քանի՛ պերճ փայլեցար :

*
*
*

Գընացեալ , խառնեալ ընդ սուրբ զըւարթունս՝
Լուսածածան իմն թըռեա՞ր դու յանհունս ,
Եւ յամենասքանչ յայն սրբազայրի՝
Ահեղահըրաչ լուսոյն առաջի

Ընդ հրեշտակըս լեալ օրհներգու՝
 Այլ յայլմէ՞ եղեր յայն պերճ փառաց դու .
 Հըրատ սուրբ խանդին, հիացմանց ասիթ ,
 Բո՞ց արկ 'ի սրախդ , բո՞ց արկ 'ի յայտիդ .
 Եւ սրբածորան միւսոն շնորհաց
 Բուրմունքս սրփռեալ անձառ քաղցրութեանց՝
 Ծորեցա՞ւ զզլլխովդ յաջոյ Բարձրելոյն ,
 Օծա՞ւ քոյին գէժք՝ որ նախ էր տրմոյն ,
 Այնո՞ւ զհոգեշարժ Դու զեղ ըզգեցար
 Այնո՞ւ իսկ այոչափ Դու վրսեմացար :

* *

Քանզի հրեղէն քեզ կրնիք առեր ,
 Եւ 'ի բոցեռանդն յաւիտն զՖեղ լրցեր ,
 Որ ոք հայիցի ի գեղ քոց շողից ,
 Այդքան լուսալից , այդքան շնորհալից ,
 Որ յայտմ 'ի գիշեր չէ թոյլ և աղոտ ,
 (Իբր անսուրբ ժըպիտ մեղկ և վաւաշոտ)
 Ըստածիչ ախտից տարփողաց մաղձոտ ,
 հընա՞ր է նըմա 'ի պիղծ սիրոյ խորճ՝
 Կասիլ յերկնային սիրոյն տիրաշնորճ ,
 Եւ ո՛չ իսկ խոկմանց թիւով հրաշալի՝
 Սլանալ 'ի վերին Սիօն Գերարփի ,
 Յանձուկ ո՛չ հալիլ փառացն այն անցաւ ,
 Սուրբ արտօսըր ո՛չ հեղուլ յապաշաւ ,
 Եւ 'ի մոլութեանց սարսեալ սաստիկ յան՝
 Զանրթութեան ո՛չ ծածկել զսհար զրահ :

* *

Զի մինչ նեա տարփից , նեա կըրից անսուրբ ,
 Զերգ սըլաք մըխեալ դըժոխոցըն հուրբ ,
 Սըլացեալ յուրուք վերայ շեշտ գայցէ ,
 Զըրահիւն պատիլ քանի՞ քաղցր իցէ :

Նեա՞ն երգիծանել ո՛չ զօրէ 'ի նա ,
 Այլ երգիծանէ Անմեղըն ըզնա՝
 Գուչելոլ «վա՛ն , զինչ իցէ նեա կըրից »
 «Առ այս գոհարեայ զըրահիւ երկնից »
 «Որ փըշրէ ըզ նա իբրև ապակի »
 «Բեկեալ ջախջախեալ 'ի սայր տապարի »
 Թէ հըպի՝ երկաթ կըրիցն հրացեալ
 Յանրծութեան ծաղկունս ջընջի ջըրացեալ :

* *

Ո՛հ , քանի քաղցր է , գեղափայլ լուսի՛ն .
 Իբրև աղանի , յեա ընդ կենցաղին
 Ծով անցանելոց անբիծ , ըսպխտակ ,
 Անդր ըստ քս կամար կայթիլ կայտուելով ,
 Անդր իսկ քան զԱրփի վերաթեւելով՝
 Գընալ միանալ ընդ Յոյսըն բնաւից ,
 Ըզմայլիլ յաւերժ 'ի փառս Անմահից :

ԽԱՉԱՏՈՒՐ Ս. ՊԱՂՏՍԱՍՐԵԱՆ



Անհրաժեշտ գործ մ'է հովանարն այն կանանց համար
 որ չը գիտեն շիկնել :

— Կանայք շատ ու շատ զօրաւոր են երբ իրենց ակարու-
 թեամբ կը շինուին :

— Կանայք պէտք է՛ իրենց զէմքին վրայ դնեն աւելի
 քան ինչ որ Աստուած գրած է :

— Շատ կանայք աւելի քաղցրահամբոյր են իրենց տունէն
 դուրս քան թէ ներսը :

ԱՌ ԼՈՒՍԻՆՆ

1

Լուսին, լուսին,
Սիրուն լուսին.
Նըման ես դու
Անսեղ Կուսին:

3

Տեսքդ անոյշ
է, վե՛հանոյշ,
Ինչո՞ւ լուռ ես,
Ո՛վ գերանոյշ:

5

Մթին գիշեր,
Ո՛վ է յիշեր.
Քեզ, ո՛վ լուսին,
Ես եմ յիշեր:

7

Քեզմով միայն,
Գիշերներն ա՛յն,
Լուսաւորուին,
Համանգամայն:

9

Ականատես,
Լուռ վկայն ես,
Տաւապողին,
Յաւոց պէսպէս:

2

Դէմքդ աղուոր,
Խորհրդաւոր.
Կ՛ուզեմ դիտել,
Քեզ մենաւոր:

4

Խօսէ, խօսէ,
Բարձրէն խօսէ.
Ի՛նչ որ կայ մէջդ
Յոյրն ըսէ:

6

Ոսկի մագերդ,
Հազար նագերդ
Թափեր ես դու,
Դէպի ծովերդ:

8

Ծագէ՛ լուսին,
Ձերդ Սէր-Կուսին.
Յոյց երեսըդ,
Նըշանն Յոյսին:

10

Եւ արդ, ո՛վ Տէր,
Յո՛յց մեզ Քոյդ Սէր
Եւ մի՛ Յողուր,
Անոր, անտէր:

ԿՐՐԱՀԱՄ Ա. ՔՆՅ. ԷՊԷԿԱՆ

1927 Հոկտ. 10

ի Գնալը

ԱՅՑ ՄԸ

ՊԱԼԸՔԼԸԻ ԱԶԳ. ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

Քաղաքակիրթ ազգեր մեծ կարեւորութիւն ընծայած են իրենց գերեզմանատուներուն, վայելուչ եղանակաւ յարգարելով և բարեգարգելով զանոնք և ունին իրենց յատուկ արձանագրութիւնները հոն թաղուող մեռելներուն մասին: Մենք Հայերս ալ աւելի մեծ կարեւորութիւն տուած ենք մեր գերեզմանատուներուն, ինչպէս Շիչլիինը՝ որ վայելուչ և օրինակելի ձեւի մը վերածուած է, շնորհիւ թափուած աշխատանքներուն, ինչպէս Պալըքլըի Ազգ. գերեզմանատունը՝ որ վերջերս սկսաւ յարգարուիլ և բարեգարգուիլ: Բայց ունինք նաև շրջակայ դիւղերու և արուարձաններու մէջ գերեզմանատուներ անխնամ վիճակի մէջ թողուած:

Գերեզմանատուները անուանուած են մեռելներու աշխարհ մը, ուր մարդ՝ աշխարհի փորձութիւններէն ու առապանքներէն յոգնած ու պարտասած, կը հանգչի յաւիտենապէս և ուրկէ միշտ ներքին ձայն մը կ'արձագանգէ աշխարհի ունայնութիւնը: Միմիայն այդ հանգստարաններու մէջ է, որ կը տեսնենք հաւատարութիւն մը և մեռելները կատարեալ եղբայրակցութեամբ կը հանգչին: Հոն այդ գերեզմանատուներու մէջ հանգչողներէն իւրաքանչիւրը ունի իր պատմութիւնը և ինչ գիրքի ու աստիճանի մէջ տը եղած ըլլան անոնք իրենց կեանքին մէջ, ամենքն ալ աշխարհի ունայնութիւնը կը պատմեն և կը հրաւիրեն յաւիտենական կեանքին պատրաստուիլ:

Այդ անխօս դամբաններու տակ հանգչող մեռելները ի-

բաւամբ մէյմէկ աշխարհներ են ինքնայատուկ պատմութիւնով մը զարդարուած :

Մեր Պալըզլըի Ազգ. Գերեզմանատունը՝ հակապատկերը կը կազմէր իր զրացի Յոյն Գերեզմանատան : Բայց դո՛ւնանակութեամբ կը տեսնենք թէ մեր գերեզմանատունը վաշելուչ ձևի մը վերածելու համար անկեղծ ջանքեր կը թափուին : Գերեզմանատան արդի տնօրէնը Տիար Անտօն Ասլանեան՝ որ ժամանակ մը Ազգ. Հիւանդանոցի կենդանի մեռելները կը կառավարէր այնքան ձեռնհասութեամբ , բախտին դժնդակ բերումով հիմա ալ կը կառավարէ Պալըզլըի Ազգ. Գերեզմանատան իսկական մեռելները , կանոնաւոր արձանագրութիւնը բռնելով հոն հանգչողներուն :

Պալըզլըի գերեզմանատունը ուր ամէնքս ալ , մեր հին և նոր սերունդներն ալ իրենց սիրելիները ունին , 3—400 տարւան հնութիւն մը ունի . հոն թաղուած են Պատրիարքներ , եպիսկոպոսներ և այլ եկեղեցականներ և բազմաթիւ ազգայիններ : Եթէ մինչև հիմա չունեցանք մենք Պալըզլըի գերեզմանատան պատմութիւնը հատորի մը մէջ՝ ամփոփուած , ինչպէս ունեցաւ Շիշլիի Ազգ. գերեզմանատունը , վստահ ենք որ կրնայ ունենալ շնորհիւ արդի տնօրէնին , որ զուրգուրոտ վերաբերում մը ունի հանդէպ իւրաքանչիւր տապանաքարին որ խլուած իր գերեզմանէն , հոս հոն ձգուած է : Տիար Ասլանեան գիտէ ամբողջ պատմութիւնը Պալըզլըի և հոն թաղուողներու :

Անցեալները երբ բարեկամ ննջեցեալի մը յուղարկաւորութեան առթիւ կը գտնուէինք Պալըզլը , արդի տնօրէնը տեսանք որ՝ ոչ միայն հոգի և սիրտ կը դնէր դամբարաններու կանոնաւորութեան և խնամոտ հոգածութիւն մը ցոյց կուտար անոնց հանդէպ , այլ և պատմական փաստերով կ'ապացուցանէր եկեղեցական թէ աշխարհական հոն հանգչողներու անձանաչ դամբարանները : Առաջարկեցինք իրեն , որպէսզի , այդպիսի հին տապանաքարերու արձանագրութիւնները հաւաքէ հատորի մը մէջ և այդ քարերուն պահպա-

նութեանը հոգածու գտնուի : Ինքը բացատրեց թէ որքան որ կրցած է հաւաքել այդպիսի տապանաքարեր՝ խլուած իրենց գերեզմաններէն , զանոնք խնամով պահած է : Եւ երբ հասկցուցինք թէ՝ նոյն տապանագրերու հրատարակութիւնը ինչ մեծ ծառայութիւն պիտի մատուցանէ հայ պատմութեան և հայ բանասիրութեան , ընդունելով հանդերձ գործին ծանրութիւնը , խոստացաւ կարելին ի գործ դնել և ահա ի սէր բանասիրութեան ներկայիւս կոչում կ'ընենք իրեն՝ իր այս խոստումը կատարելու :

Ասկէ առաջ երբ ժամանակները լայն էին , շաաեր իրենց սիրելիներուն գերեզմանին վրայ տապանաքարեր դնել կուտային գողարիկ՝ ոտանաւոր արձանագրութիւններով , մինչ հիմա ազքատ և էսնաֆի դասակարգերը պարզ երկաթեայ խաչով մը կը լրացնեն այդ պէտքը , ուր միայն արձանագրուած կան մեռնողին անունն ու մահուան թուականը :

Մեր պատանեկութեան օրերուն երբ յաճախ կ'այցելէինք Պալըզլըի գերեզմանատունը , հոն հանդիպած ենք այնպիսի տապանաքարերու արձանագրութեանց , որոնք այնքան հըրահանգիչ էին . անոնցմէ ընդօրինակած եմ երեք տապանաքարի արձանագրութիւն , զորս կը ներկայացնեմ իրենց շահեկանութեանը և հեաաքըքրական ըլլալուն պատճառաւ : Ասոնցմէ երկուքը հայերէն է , իսկ երրորդը հայատառ թուրքերէն :

Ա.

Մինչ կայի եւ շնչեի ,
յԱյսարհին ունայնասպանծ ,
Յիշեի , զի ես չեի
Արժանի անւան փառաց :

Երանի , բի՛ւր երանի
Այնոցիկ , որք պաշտեցին
զԱրարիլն անեւայնի
Կրեզով զխաչ փառակցիլն :

Բ.

1885 Դեկտեմբեր 15
 Ասարազար իմ հայրենիս
 Անունն Յակոբ Զ. Չեթեան
 Յիսուն եւ ինն էին սարիսս,
 Երբ քերին զիս յայս գերեզման :
 Իմ երկրի մեջ ես ունիի
 Տուն տեղ ու գործ կիսն ու զաւակ,
 Այլ անկեկն շատ փրկեցի
 Եւ պաշտեցի միայն շսակ,
 Միրեցի զայն կեանքս ալ շատ
 Անձիս անգամ խնայեցի
 Ծախք ըրաչեկն ես վախճայ շատ,
 Բայց աւանդ զայն հոս թողուցի,
 Օրինակ ամ, ո՛վ Այցեղու
 Եւ մի ըրար ինձ պէս ազան,
 Տիրոջ պարգեւն վայելի դու,
 Դեռ չը թողած այս սոս աշխարհ,
 Այլ մի մոռնար օրհնեղ զԱսունած,
 Մի վստահիր այս աշխարհի,
 Ունայնութիւն ունայնութեանց
 Շիրտին մեջեկն կրկնեմ քեզի :

Գ.

ՄԵՐՍԻՅԷԻ ՊԵՐԱԻ ԴԱՌԼԻ ՊՐՈՒՍԱԼԸ ԳՐԻԳՈՐԻՍ

Գարե երկ զաշեմի Նանիս զաւանդին,
 Լեյնաի քաղաքիս կազմը՝ էրկիսին,
 Գարե կազմընդար օրնազ շատիսան,
 Էմրի իշանի սիր սկնիրեզ կաման,
 Հիւանիսն ձեռնալ իցի մանկեկս Եռաք,
 Եիրնի իւր կաշքնսա օրնուշքը յուրք,
 Պիր նեղնիսան դուքե կիւրին վուրեքին,
 Կտօրնեյե վերեկսի քեչեկ ռուխսեքին,
 Անիսեկ տոնիսիսի սեմի տեղիսանը,

Չիւն նախեան կազմը զարդի փերեսանը
 Պին սեփիզ երկ սեփեկն եկեի կեչիկնձե,
 Մայիս օրնազ ձուանաւ երթեալ կեձե,
 Իւզերիսեկ նարը հիսսեք սաչըրը,
 Դասարդնսան չիփրե կարե աչըրը,
 Օյ տե՛ն նան ձեկսեկն չըրընձա նախեան,
 Պուզը ձեկնս իւզրե զըրը սակիրան,
 Նազը երթի անվայիմ նազմի նապիեք,
 Պայիս սիր զարդիսեկ իշրեք ու հիսսեք :

Չեմ գիտեր թէ մեր պատանութեան օրերուն տեսած այս տապանազրերը կը գտնուին այժմ, բայց սա յայտնի է թէ մեր ներկայացուցած այս արձանազրութիւնները ինչ գեղեցիկ դասեր կուտան մարդկութեան :

Եւ տակաւին այսպիսի գեղեցիկ ու հրահանգիչ սրբան արձանազրութիւններ փճացած են :

Յ. ՎԱՐՃԱՊԵՏԵԱՆ

ԵՐԳԻԾԱՆՔԻ ՌԱԺԻՆ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ ՄԻ ԹԱՓԷՔ . . . Ո՞ՒՐ

Գրեց՝ ՅԻ ՅԻ

Խոզի մը անմահանալն է որ կ'ուզեմ յիշել :

—Ո՞վ խոզ, աղտոտ չորքոտանի, դուն որ երբեք աւելի չես ունեցած գլուխդ վեր բարձրացնելով շուրջդ գիտելու, ո՛չ երկինքը, ո՛չ աստղերը և ո՛չ ալ մարդկութիւնը, դուն որ ոչ սքի մնաս սենիս, այլ միայն օրն ի բուն քիթդ հողին հազարդ կը շրջիս հոս հոն և քեզ միմիայն կը շահա-

զըրզոէ ուտել անընդհատ, քան թէ խորհրդածիլ և վնասել նմանից:

Ահա դուն ինքնին կ'անմահանաս և կ'արժանանաս պատիւներու, հակառակ որկրամուլութեանդ, նոյնիակ կը տեսնենք քու կրանիթէ արձանը կանգնուած Գերմանիոյ Լուերնայէրկ քաղաքի մէկ հրապարակին վրայ: Ինչո՞ւ: Վասըն զի քու ցեղակիցներէդ միոյն տէրը տասներհինգ տարի առաջ իր խոյին առաջնորդութեամբ գտած է եղեր ազի հարուստ հանք մը, և իբր վարձատրութիւն ու զնահատուտ այսպէս կը պատուէ իր խոզը:

Ուրեմն վստահ եղիք, ով խոզ, այլեւս ականջդ պիտի չլսէ խայթիչ և անուանարկիչ խօսքեր, «Մարդարիտներ մի թափէք խոզերուն առջեւ» պարբերութիւնը, որովհետեւ դուն իսկ սկսար ճանչնալ անոր արժէքը: Լաւ է տակէ վերջ ըսել. «Մարդարիտներ մի՛ թափէք մարդ կարծուած ամէն էակի առջեւ»:

ԲԱՐՁՐ ԿԱՆՉՈՎ ՀԱԽԵՐ ԹԷ՞ ՀԱՅԵՐ...

Լուր մը կ'ըսէ թէ բարձր կանչով հաւեր մեծ հաւկիթ կ'ածին: Այս ճշմարտութիւնը փորձով հաստատողը Քալիֆորնիացի ազարակապան մըն է, որ կ'ըսէ. «Իմ 5000 հաւերուս մէջ ամենամեծ հաւկիթ ամողը ամենազօրաւոր կանչ ունեցողն է»:

Երբ այս լուրը կարգացի, աչքիս առջև ցցուեցան մեր մեծախօսիկ և բարձրաձայն և հրապարակը ազդիող շառլաթաններ, որոնք եթէ հաւեր ըլլային, ապահովարտը ուղտի խոչորութեամբ իսկ հաւկիթներ պիտի ուծէին և գոնէ Քալիֆորնիացի ազարակապանին զնահատութեան պիտի արժանանային:

Օգտուելով այս առիթէն ուղեցի գիտնալ թէ մեր մէջ ամենէն խոչոր հաւկիթ ամողը ո՞վ պիտի ըլլար, եթէ փոխանակ երկու ձեռքի՝ երկու փետրաթեւերով աչխարճ եկած ըլլար:

Սիրելի ընթերցող, ձեզի վստահեցնեմ որ այդ նոյն ինքն մեծապտու և մեծատիտղոս... մը պիտի ըլլար: Բայց սպասեցէք անոր գերազանցողը կայ: Սակայն այսքանը բաւական չէ, արդէն իսկ ականջներս խօսիլ սկսան, ձայնը հեռուէն կուզայ. ձեզի ապահովցնեմ որ մեծ հաւկիթ աման հաւերուն ուրքօրը մեր անխոնջ կենսագիր բանասէրին կը պատկանի, որուն ձայնը եգիպտոսէն մինչև հոս կրնայ հասնիլ:

Իսկ եթէ կ'ուզէք էն փոքրահաւկիթ ամողը մեր մէջ դժբախտաբար թէ բարեբախտաբար կը պակսին թռչունի հաւկիթ ամողներ:

Մէկ խօսքով՝ Քալիֆորնիացի ազարակապանին փնտրուած հաւերն ենք բոլորս:

ԱՌԱՆՅ «Ա»Ի ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Սեպտեմբերի իրիկուն մըն էր. մութը կոխելու մօտ, Միւսիւ Մկրտիչ խորհելէ վերջ մէկէն տեղէն երկու մէթր ստտուժ մը ընկելով՝ շուրջը քննեց և յետոյ խօսքը ընկերօջը ուղղելով.

—Յովսէփ, զգրոցին մէջ մ'զլոտ ու բորբոս մէկ երկու ձուկերն է՞նչ ըրիր...:

—Ինչ ըրիր խօսք է, երկիւղի պէտք չունինք...:

—Շո՛ւտ քեզի եմ, ճիշտը ըսէ, ո՞վ գիտէ, մուկի կեր ըրի՞ր...:

Յովսէփ քիչ մը ինքնիրեն խորհելէ ետքը.

—Ոսօքը մէջերնիս, դէմի սկերիչին կլլեցուցի...:

Մկրտիչ երբ լսեց սոյն խօսքը, դէմքը թթուեցուց և տխուր երեւոյթով մը.

—Է՛հ, հոս թիթեղի մէջ դէ՛ չհոտոզ իւղերէն երբէք չունի՞նք...:

—Ունէինք, սիրելիս, մինչևեւ երէկ...:

—Է՛հ, ի՞նչ ըրիր, ըսէ՛ չուտ, որովհետեւ ինչ որ կը փնտռեմ, չեմ գտներ...:

— Կէսօրին վերջին քիւօն տուի մեր գէմի ընկերոջ... :

— Որո՞ւ... :

— Կրկին նոյն սակերիչին քչեցի, կ'ըսեմ :

Մկրտիչ սակերիչ խօսքը կրկին լսելուն երեսը ձուց և նոյն բոսկէին խորունկ մտմտուքով մը :

— Երեսուն օր է գրեթէ, հան՝ վերը թելէ կողովին մէջ ձուկեր կը տեսնէի... ո՞ւր են :

— Հոգ մի՛ ընե՛ր, քչեցի, չնորձիւ սակերիչին՝ քչեցի... :

— Ի՞նչ ըսեմ քեզի, Յովսէ՛փ Տիրոջմէն զանեա... :

— Ինչո՞ւ կը դժգոհիս, ընկե՛ր, կ'ուզէի լսել... :

— Երկու երկուք ևս չորս կ'ընէի սէս գիւրին է, որովհետեւ սակերիչին սնորհման տեղի տուի և գիշերը իր տունը պիտի գտնուիմ իբրև հիւր կերուխումի, խնջոյքի :

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԶՈՒԱՐԾԱԼԻՔՆԵՐ

ԹԻԻԵՐՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ասանց 8 թիւը նշանակելու 1չն մինչև 9, այսինքն 1, 2, 3, 4, 5, 6, 7, 9, երբ 9ով, անոր կրկինով, եռապատիկով, քառապատիկով և մինչև իննապատիկով բազմապատկենք, արդիւնքը միշտ նոյնանման թիւերը կուտայ. այսպէս :

| | | | | |
|-----------------|---|----|---|---------------|
| 1 2 3 4 5 6 7 9 | × | 9 | = | 111, 111, 111 |
| — | × | 18 | = | 222, 222, 222 |
| — | × | 27 | = | 333, 333, 333 |
| — | × | 36 | = | 444, 444, 444 |
| — | × | 45 | = | 555, 555, 555 |
| — | × | 54 | = | 666, 666, 666 |
| — | × | 63 | = | 777, 777, 777 |
| — | × | 72 | = | 888, 888, 888 |
| — | × | 81 | = | 999, 999, 999 |

* * 142857 թիւը երբ 1ով բազմապատկենք, բնականաբար միեւնոյն արդիւնքը կուտայ. բայց երբ 2, 3, 4, 5, 6ով բազմապատկենք, արտադրեալը ցոյց կուտայ միեւնոյն թիւերը. թէև տեղերը փոխուած ըլլան : Իսկ եթէ այդ թիւը 7ով բազմապատկենք, այն ստան արտադրեալը ամէնը մէկ միեւնոյն տեսակի թիւը ցոյց կուտայ. այսպէս :

| | | | | |
|--------|---|---|---|--------|
| 142857 | × | 1 | = | 142857 |
| — | × | 2 | = | 285714 |
| — | × | 3 | = | 428571 |
| — | × | 4 | = | 571428 |
| — | × | 5 | = | 714285 |
| — | × | 6 | = | 857142 |
| — | × | 7 | = | 999999 |

* * 37 թիւը երբ 3, 6, 9, 12, 15, 18, 21, 24 և 27 թիւերով բազմապատկենք, այնքան զարմանալիօրէն կարտադրեն համանման երեք թիւեր : Այսպէս՝

| | | | | | | | | | | | | | | |
|----|---|---|---|-----|----|---|----|---|-----|----|---|----|---|-----|
| 37 | × | 3 | = | 111 | 37 | × | 12 | = | 444 | 37 | × | 21 | = | 777 |
| 37 | × | 6 | = | 222 | 37 | × | 15 | = | 555 | 37 | × | 24 | = | 888 |
| 37 | × | 9 | = | 333 | 37 | × | 18 | = | 666 | 37 | × | 27 | = | 999 |

Երբ արտադրեալները իրարու վրայ գումարենք արդիւնքը կուտայ մեզի բազմապատկելին թիւը, այսպէս առաջին 3 հաս մէկը կ'ընէ 3, երկրորդ 3 հաս 2ը կ'ընէ 6 և չարունակարար :

* * 15ն մինչև 9 թիւերը կարգաւ երբ գրենք երկու շարքի վրայ, իւրաքանչիւր շարքին գումարը կ'ըլլայ 45, իսկ երբ այդ երկու շարք թիւերը իրարմէ հանենք, մնացորդներուն գումարն ալ 45 կ'ըլլայ : Այսպէս՝

| | | | | | | | | | | |
|-------|---|---|---|---|---|---|---|---|---|----|
| 9 | 8 | 7 | 6 | 5 | 4 | 3 | 2 | 1 | = | 45 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | = | 45 |
| <hr/> | | | | | | | | | | |
| 8 | 6 | 4 | 1 | 9 | 7 | 5 | 3 | 2 | = | 45 |



ԱնՅորջյանի անձնական
ի շնորհիվ և Բարսեղյանի
հրատարակչի Վ. Քաջուհի
ի անձնական ջանքերով
Մատենադարան, 21 օգոստ. 1895

Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՔԱԶՈՒՆԻ (Ծն. 1823 ՕԳՈՍ. 11 * 1903 ԴԵԿՏ. 1)

Մեծն Մխիթար Սերաստացիի ոսկեայ կաղապարին վրայ թափուած, անոր մաքուր հոգիով թրծուած և վեհ սկզբունքներով սնած ու մեծցած ճշմարիտ Մխիթարեան մը, յաջողակ ի գործ և ի գիր, որոնց շողուններով փայլեցաւ երկար տարիներ երկնակամարին վրայ Մխիթարակերտ մենաստանին Ս. Ղազարու Իր երկայնաձիգ կեանքին գործունէութեան արձագանգը կուտան այն տեղերն՝ ուր պաշտօնավարեց, և իր գրչին արտադրութիւններուն վկայ կը մնան այն ստուար հատորներն՝ որոնց մէջ կը փայլին նշոյլներն իր տաղանդին:

Անհնարին գործի մը ձեռնարկած պիտի ըլլամ եթէ փորձեմ Տարեգրքիս սահմանափակ էջերուն մէջ ամփոփել Քաջունիին լայնածաւալ գործունէութիւնը, որ կը կարօտի ստուար հատորի մը, ուստի՝ իբր ականատես վկայ անոր կեանքին գործունէութեան՝ պիտի ջանամ ցոլացնել անոր արեւուն նշոյլները միայն, կամ թէ ըսեմ՝ ուրուագծել զիմաստուերը լոկ անոր, որուն գործունէութիւնն զաղբիցաւ գերեզմանին մէջ միայն:

* *

Անկիւրացի սիրակցորդ ամուսնուն Յովակիմ և Իսկուհի ծնունդ տունն Քաջունիի ի Կ. Պոլիս, յամին 1823 Օգոստ. 11ին (Հ. Տ.) և մկրտութեան աւազանէն կոչուեցաւ Յովսէփ: Տասերկու տարեկան ծաղիկ հասակին՝ բարեպաշտ ծնողքն նուիրեցին զանի Աստուծոյ, և իր երէց եղբոր Յա-

կորին(*) հետ՝ 1835 տարւոյ Սեպտեմբերի 27ին զրկեցին Վենետիկ Ս, Ղազարու վանքը: Երեք տարի վերջ՝ Սոմալեան Սուքրիաս Արք. Աբրահայրն հաղցուց անոր կրօնաւորական սքեմը, փոխեց մկրտութեան անուանը և կոչեց զանի Մանուէլ: Խրատեց որ նմանող ըլլայ իրեն նախորդ Հ. Մանուէլ Զախչախեանին, որ այնքան նշանաւոր հանդիսացաւ Միաբանութեան մէջ իր սրբասուն և գրական բեղմնաւոր կեանքով: Աբրահօր խրատը ազդեց մեծապէս պատանւոյս վրայ, որ աշակերտական ամբողջ ընթացքին մէջ ջանաց վարչմալ իր մեծանուն անուանակցէն, և կարելի է ըսել, թէ լիուրթ արգիւնաւորուեցաւ ջանքն:

Քաջունին ուշիմ ի բնէ և օժտուած երկնապարզիւ ձիրքերով՝ քիչ ժամանակէն մեծաքայլ յառաջադիմեց առաքինութեան և ուսման ճամբուն մէջ, գրեթէ միշտ առաջինը հանդիսանալով իր դասընկերներուն: Մանկական և պատանեկան հասակին իբր հոգեւոր դաստիարակ ունեցաւ երկու սրբակեաց վարդապետներ՝ Հ. Անդրէաս Ծովիղեան(**) և Հ. Դանիէլ Պոլսեան, որոնք իրենց եռանդնալից խրատներով և դործնական օրինակներով տոգորեցին անոր սրտին մէջ կրօնաւորական հոգին: Ասոնց յաջորդեց Հ. Գաբրիէլ Վ. Այվազովսքի, որ իր ազգային և համայնադիտական հատութեամբ մեծապէս զարգացուց Քաջունիի միտքը, և դարձուց զայն իբր շտեմարան գիտելեաց:

Քաջունին այսպէս յարդարուած ու պատրաստուած, 1843 Օգոստոսի 15ին, Ս. Աստուածածնի վերափոխման

(*) Յակօր զրկուած ըլլալով վանքը իբր աշխատաւոր Եղբայր, հետեւեցաւ սոյն կոչումին, և անդամակցելով Միաբանութեան՝ անուանուեցաւ Եղբայր Անսոն, որ իր բնական խելքով, խոհեմութեամբ և գործունէութեամբ մեծապէս օգտակար եղաւ Միաբանութեան, որուն հողային կալուածներուն վրայ դրուելով իբր գործակալ՝ ընդարձակեց զանոնք, և անոնց եկամուտով կազմեց հաստատուն գրամագլուխ մը Միաբանութեան, որ միշտ օրհնենքով կը յիշէ անոր անմահ անունը:

(**) Հ. Անդրէաս հոգեւոր դաստիարակն եղած է նաեւ Հ. Ալիշանին, որ միշտ մեծ գովեստով կը խօսէր անոր հոգեկան ձիրքերուն վրայ:

տօնին, Սոմալեան Սուքրիաս Արք. Աբրահօրէն ձեռնադրուեցաւ կուսակրօն քահանայ իր ութ դասընկերաց հետ, որոնք են, Գամասարեան Հ. Եփրեմ, Տլվրլիկեան Հ. Մաղաքիա, Գարպասեան Հ. Յովակիմ, Գուլումեան Հ. Օդոստինոս, Թէրճիմանեան Հ. Համազասպ, Թնկըրեան Հ. Տիմոթէոս, Գուրգէնեան Հ. Օքսէնտիոս և Եսայեան Հ. Բառնարաս, որոնց դասազուխն էր Հ. Մանուէլ Քաջունին: Բոլորն ալ զարգացած նորընծայ վարդապետներ, Այվազովսքիի պէս քաջ դաստիարակի մը բովին մէջ փորձուած, ոմանք մանաւանդ նշանաւոր իրենց մասնաձեւերուն մէջ: Բազդատական համեմատութեան գնելով՝ եթէ Քաջունին հայկաբանութեան մէջ քիչ մը ստոր կը մնայ վերոյիշեալ Թնկըրեան և Գուրգէնեան դասընկերներէն և ազգային դիտութեան մէջ Թէրճիմանեանէն, սակայն անտարակոյս կը գերազանցէ զամէնքը իր մեծ հմտութեամբ բնական, բնաբանական, բնալուծական և ուսողական գիտութեանց մէջ: Չեմ գիտեր ի՞նչ էր ներշնչեր այս նորընծայ վարդապետներուն իրենց դաստիարակն, որոնք գրեթէ երկուրնցեր էին բնաւ օտար բառ կամ բացատրութիւն չգործածել իրենց խօսակցութեանց և գրութեանց մէջ, ինչ որ օրինակով ալ գործադրեցին, իրենց յտակարան, հիւթեղ յօդուածները հրատարակելով «Բազմավէպ»ին մէջ, որ առաջին անգամ ըլլալով՝ ի լոյս կ'ընծայուէր նախաձեռնութեամբ և խմբագրութեամբ Այվազովսքիի և Ալիշանի:

Քահանայ ձեռնադրուելէն մինչեւ մահը (1843—1903), որ ժամանակամիջոց մըն է վաթսուն տարուան, Քաջունիի կեանքը կարելի է կոչել միակտուր հիւսուած մը ոսկեղէն գործերու, սրոնց հարեւանցի յիշատակութիւնն իսկ կարող է գաղափար մը տալ ընթերցողաց արտակարգ գործունէութեան վրայ անոր վառվռուն կեանքին:

Քաջունին ապա Վանքի և Ռափայէլեան վարժարանի մէջ ստանձնեց հետզհետէ անտեսութեան, գործակալութեան, ուսուցչութեան և դաստիարակութեան կարեւոր պաշտօննե-

րը, զորս կատարեց անձնուիրութեամբ, կանոնաւորութեամբ
և արդիւնաւոր կերպով, յետոյ Կ. Պոլիս զրկուելով՝ կրկին
կարգուեցաւ տեսուչ Բերայի Մխիթարեան Վարժարանին և
ի մասնաւորի գաստիարակ՝ Տիւզկան Միհրան պէյի որդւոց :
Ժամանակ մը վարեց տեսչութիւնը Գառըզիւզի Մխիթարեան
Վարժարանին, եղաւ տեղական մեծաւոր Մխիթարեան Հայ-
րերու և գործակալ Միաբանութեան կալուածոց ի Կ. Պոլիս :
Ան՝ վերաշինեց Բերայի Մխիթարեան Վարժարանն, որ
հրոյ ճարակ եղած էր 1870ին Պոլսոյ մեծ հրդեհին :

Սակայն, Քաջունին իր ամենէն մեծ և արդիւնաւոր
գործունէութիւնը ցոյց տուաւ. Մուրատեան վարժարանի
գործակալութեան պաշտօնին մէջ զոր վարեց երկար տարի-
ներ ի Բասուա : Ընդարձակեց ու բարւոքեց յիշեալ վարժա-
րանի հոգային կալուածները, և այսպէս աւելցուց անոնց
վարկն ու գրամագլուխը : Մինչ այս սակայն Քաջունին
չդադրեցաւ մասնակցելէ Միաբանութեան Վարչական Ժողո-
վին, որուն ամէն անգամ անգամ ընտրուած է լիաբուէ :
Միաբանութիւնը դժուարին խնդիրներուն մէջ անոր խոր-
հուրդին կը դիմէր, որով կը յաջողէր ձեռք ձգել խնդրոց
բարւոք լուծումը :

Այսքան ծանր գրադումներու մէջ, Հ. Քաջունի երբեք
ձեռքէն չթողուց գրիչը, «Բազմավէպ»ի նախորդ տարիներ-
ուն մէջ հրատարակած բազմաթիւ գիտական յօդուածներ-
էն գոտ՝ ի լոյս հանեց հետզհետէ հատորաւոր գրքեր. ինչ-
պէս ժամանակագրական կարգով, 1. Հնախօսութիւն Հա-
յաստանի : 2. Այլաարհագրութիւն հին և նոր Հայաստանի : 3.
Հանարողութիւն կալ թուարանութիւն : 4. Դպրոց բարոց,
թարգմանութիւն (հեղ. Պլանչար) : 5. Տարրաբանութիւն գրա-
բառ, 3 հատոր : 6. Բնագրութիւն կալ ֆիզիկա, 2 հատոր :
7. Մեկնակալութիւն : 8. Արուեստագրութիւն կալ շեկարան
գիտելուց : 9. Տարեք Երկրագործութեան : 10. Բառագիրք ար-
ուեստից, գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց, 2 հատոր : 11.
Մեղուարուծութիւն : 12. Շերանարուծութիւն : 13. Պարսիկական

թիւն : 14. Պարսկանութիւն : 15. Կարևարուծութիւն, որոնցմէ
մեծապէս օգտուեցաւ հայ ժողովուրդն, և այս անկէ յայտնի
է, որ յիշեալ գրքերուն շատերն շուտով սպառած և կրկին
տպագրութիւններ տեսած են : Աոյն երկասիրութեանց մէջ
ան կրցաւ այնքան ճարտարութեամբ հայերէն նոր բառեր
կերտել մասնաւորապէս բնագրամական, բնաբանական և
բնալուծական, որոնք ճշգրտորէն կը համապատասխանեն ու
կը բացատրեն իմաստները եւրոպական նոյնանիչ բառերուն,
որոնց համար Քաջունին՝ զովեստի արժանացաւ նոյնիսկ
հայկարան Հ. Արսէն Բագրատունիին : Իր հրաշակերտն ու
գրական փառաց պակշը կը կազմէ իր երկհատոր բնագրա-
կածաւայ «բառգիրքն արուեստից, գիտութեանց և գեղեցիկ դպ-
րութեանց», որուն յօրինումին համար զոնք է նա ամբողջ
քառասուն տարի, իր տեսակին մէջ միակ գործ մը, որուն
նմանը ցարգ երեւցած չէ ազգին մէջ :

Միաբանութիւնը ի վարժատարութիւն Քաջունիի մեծա-
հանդէս տօնեց Ս. Դազարու Վանքին մէջ անոր քահանա-
յութեան յիմնամեակը՝ 1893 Օգոստոսի 13ին, Ս. Աստուա-
ծածնի տօնին : Խոտալական կառավարութիւնն այ գնահատե-
լով Հ. Քաջունիի գիտական և գրական ջանքերն պատուեց
զայն Աւպէս իսպախալ քաղիւ տիտղոսով և ու շքանշանով :
Նոյնպէս Գաղղիոյ աստղաբաշխական կաճառն գնահատելով
Քաջունիին մեծ հմտութիւնը և աշխատութիւնները աստղա-
բաշխական և բնական գիտութեանց մէջ՝ սիրայօժար ընտ-
րեց ղինքը ակդալ իր կաճատին :

Քաջունին մանկական հասակին՝ սրտին՝ մէջ ունեցած իր
մէկ փափաքին զոհացում տալու համար Միաբանութեան
արտօնութեամբը գնաց Ս. Երուսաղէմ իր ուխտը կատարելու
և այլեւեց սրբավայրերը 1895ին՝ միաբանակից Հ. Բարսեղ Վ.
Սարգիսեանին հետ : Երուսաղէմի Տ. Յարութիւն Պատրիարք
իւ աւագ թարգմանին Տ. Եղիշէ Մ. Վ. Չիլինկիրեանի (այժմ
Եզրակոպոս) միջոցաւ երկիցս հրաւիրած է Հ. Քաջունին իր
մօտ և գնահատելով անոր արժանիքը, թէ Պատրիարքը և
թէ Տ. Եղիշէ Մ. Վ. իրենց լուսանկարները նուիրած են :

Հ. Քաջունի Բատուա վերադառնալէն ետքը զրկած է փոխադարձաբար երկուքին ալ իր լուսանկարներն, որոնցմէ մին կ'երեւայ այս գրութեանս սկիզբը :

Միաբանութիւնը նկատի առնելով անոր յառաջացեալ տարիքը և երկարամտայ բազմավաստակ արդիւնքները, թագազիր արբայի պատելը աւելով իրեն՝ զրկեց ի Կ. Պոլիս իբր գաւառական մեծաւոր, զոր հազիւ կրցաւ վարել ութսունամեայ ծերունին տարի մը : Եւ ահա քիչ ժամանակէն յաճախ կըրկենելով իրեն սիրական այս աղօթքը. «Եկո՛ւր, սէր անուն, Յիսուս, ա՛ն հոգիս, սիրով քով ճմլեա՛, յոյս իմ ևս դու, Տէր, ի մանկութենէ իմմէ», աւանդեց իր ամբիժ հոգին Արարչին ձեռքը, յամին 1903 Դեկտեմբերի 1ին : Եւ յուզարկաւորութեան փառայեղ հանգէսը կատարուելէ ետքը Բիւրայի Ս. Յոնան Ոսկերեքան եկեղեցիին մէջ, մարմինը փոխադրուեցաւ Վենետիկ, և ամփոփուեցաւ Մխիթարեանց Ս. Ղազար վանքի գերեզմանատան կճեայ գամբարանին մէջ, զոր ինքն չինել տուած էր կենդանութեան ատեն :

Հ. Քաջունի իր արգար վաստակով ձեռք ձգած գրամներով նպաստեց մասնաւորապէս վանքի և վարժարանաց չէնքերու շինութեան : Վանքի մէջ չինել տուաւ շքեղ թանգարան մը բնագիտութեան և աստղաբաշխական գիտարան մը, ու ձօխացուց զանոնք գործիքներով : Նպաստեց վանքի եկեղեցոյն բարեզարդութեան : Նոյնպէս իր վերահսկողութեամբ շինուեցան Պարտիզակի Մխիթարեանց վանատուն, եկեղեցոյ և դպրոցի չէնքերն, և որ ըստ կարգի :

Գոյութեանը հաւասար սիրած է միշտ իր Մխիթարեան միաբանութիւնը և ազգը : Խորշած է միշտ ծայրայեղութենէ և խոհեմութեան սահմանէն երբէք դուրս ելած չէ : Հ. Քաջունի ազգին բարոյական և նիւթական օգտին նուիրած է ինքզինքը :

Արտաքին երեւոյթն վսեմ էր, միջահասակ, կլորիկ, գերուկ, լայն դէմքով, որուն վրայ կը փայլէր միշտ անմեղութիւնն մշտաժպիտ : Քրիստոսի պատուէրին համեմատ ունէր աղաւնի միամտութիւնը, բայց օձի խորագիտութիւնն չէր պակսեր իրեն երբ հարկն կը պահանջէր :

Պատկցութեան մէջ ունէր անմեղ պարծենկոտութիւն մը, սովայն այնքան անկեղծ և միամիտ չեչտով կ'արտայայտէր զայն որ—եթէ ներելի է ըսել—իբր առաքինութիւն կ'երեւէր ան իր բերնին մէջ և ախորժ կը պատճառէր լսողներուն : Անգամ մը երբ պատմեց նա մեզի, թէ Սոմալիան Արբահայրն մկրտութեան անունը փոխած և Մանուէլ գրած պահուն պատուիրեց որ նմանի նախորդ անուանակցին Հ. Մանուէլ Զախճախեանի, մենք չարածճիւղութեամբ մը վրայ բերինք, թէ «Գերայարգելի Հա՛յր, դուք գերազանցած էք զինքը», առ որ պատասխանեց նա ժպտերես միամտութեամբ մը «Ստոյգ է, մասամբ իւրք գերազանցած եմ, որովհետեւ նա նիւթական գործերու մէջ չունէր այնքան յաջողակութիւն», և մենք խնդացինք ախորժով :

Քաջունիի կեանքն ի ին շատ մը մանրավէպերով, զորս զանց կ'ընեմ, և կը կնքեմ յօղուածս յիշեցնելով ընթերցողներուն, որ զուգադիպութեամբ մը յառաջիկայ տարին կը լրանայ Քաջունիի մահուան քսան և հինգամիակն, որուն տօնախմբութեան թող իբր յառաջարանն ըլլայ գրուածս և զրդիչ ուրիշներուն գրիչներն ալ շարժելու :

Հ. ԵՓՐԵՄ Ծ. Վ. ԱՊՐՈՅԵԱՆ

Բեքա, 20 Հոկտ. 1927

ԲԻԻԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

Հայ Լրագրութիւնը 1927 Յունիս 29ին կորսնցուց առ յաւէտ իր տաղանդաւոր և բազմահմուտ մէկ անդամը յանձին Տիար Բիւզանդ Քէչեանի: Լռեց այն ձայնը որ կէս դարու չափ լրագրութեան բեմէն կ'արձագանդէր իր այնքան շինիչ և օգտակար թելադրանքները: Հանգուցեալը ծնած էր Պոլիս 1859ին և իր նախնական ուսումը Մայր



ԲԻԻԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

վարժարանին մէջ առնելէ յետոյ, 18 տարեկան հասակին ընդգրկած է լրագրական աւարէզը, ուր յառաջացած է ինքնօգնութեամբ: Աշխատակցած է Կ. Իւթիւճեանի Մախիսին. խմբագրապետ՝ երկար տարիներ Արեւելի: Յոգուածներ ունի նաև հոյատառ և թրքաբարբառ ձ. Շարգիյի մէջ: 1896ին հիմնած է Բիւզանդիոնը, ուր շատ ողջամիտ առաջնորդող յօդուածներ գրած է: Հանգուցեալ Քէչեան հայ եկեղեցւոյ պաշտպան հանդիսացած է և, ընդունելով

հանդերձ բարեկարգութեան պէտքը, չափաւոր պահպանողական մը եղած է: Քէչեան վերջին տարիները կ'աշխատակցէր Նոր Լուրի, ուր հաճոյքով կը կարդացուէին իր շաբաթական բեզուն տեսութիւնները, ընկերային, բարոյական և ընտանեկան հարցերու շուրջ: Բազմարդիւն լրագրողը ունի առանձին հեղինակութիւն և թարգմանութիւններ ալ:

Ազգ. Հիւանդանոցի պատուաբիւնը, երկար պրպտումներու արդիւնք՝ օժտուած տօքլումաններով: Անգլիերէնէ թարգմանած է նաև նախակներ առ երիտասարդս, առ օրիորդս, առ նորագրակ առնուիմս, հմտալից և բարոյացուցիչ գործերը:

Ի ստորև կը հրատարակենք Հանգուց. Քէչեանի(*) անձնական յուշատետրէն քաղուած հատուած մը Հայ Եկեղեցւոյ մասին, որ ինքնատիպ կերպով կը պատկերացնէ անոր հնութիւնը:

Հ Ա Յ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն

Հայ Եկեղեցին յիշած է հինգ սիւներու վրայ, Առաջին՝ «Բարեպաշտութիւն» կամ կրօնասիրութիւն, որուն յագուրդ կուտայ իր ծէսերով, շարականներով, աղօթքներով, ամէնքն ալ սքանչելի:

Երկրորդ՝ «Ազգասիրութիւն», որուն յագուրդ կուտայ իր հին, բնատոնմիկ, բուն հայկական նկարագրով, հին լեզուով, յիշատակներով, աւանդութիւններով:

Երրորդ՝ «Մտաւորական կեանք, ընկերային կեանք, բարոյական կեանք», զոր կը գոհացնէ իր քարոզութիւններով:

Չորրորդ՝ «Գիտական կեանք» կամ «Հնագիտութիւն և կրօնից պատմութիւն», որուն նիւթ կ'ընծայեն իր դիրքը կրօնից պատմութեան մէջ, իր հնութիւն բուրոյ կարգուսարքը, արդուզարդը, հին կեանքի կենդանի պատկերացումը:

Հինգերորդ՝ «Գեղարուեստ», զոր կը գոհացնէ իր սեփական երաժշտութեամբ, իրեն յատուկ ճարտարապետութեամբ և նկարչութեամբ:

(*) Հանգուցեալին շիրմին վրայ **Նոր Լուրի** բացած հանգանակութեամբ շքեղ դամբարան մը շինուելու ձեռնարկուած է, եւ կը յուսացուի որ քանի մը ամիսէն լրանայ:

Անոնք որ կ'ուրանան կրօնը, և պէտքը չեն զգար բա-
 րեպաշտութեան, միայն ստաջին սիւնն է որ կը քանդեն
 այս չէնքէն, միւս չորս սիւներուն չեն կարող դպչիլ, եթէ
 դիտութեան, բանականութեան, ճաշակի և զգացումի մար-
 դեր են զարգացած, եթէ Հայեր են իրօք, որով Հայ եկե-
 ղեցին միշտ կարող է կանգուն մնալ իր չորս սիւներուն
 վրայ: Այսինքն՝ անոնք որ կրօնասիրութեամբ եկեղեցի յա-
 ճախելու պէտքը չեն զգար՝ կրնան միշտ եկեղեցի երթալ,
 կարող քարոզիչ մը լսելու համար, գրաբառ երգեցողու-
 թիւն մտիկ ընելու համար, մեր նախնեաց հետ պահ մը
 ազգասիրական հաղորդակցութեան մէջ մտնելու համար, զի
 Հայ հնութեան միակ մնացուն աւանդը և բոյնը մեր եկե-
 ղեցին է այժմ:

1924 Ապրիլ 28

ԲԻԲԼՆԳ ՎԷՉՅԱՆ



Վ Ր Ի Պ Ա Կ



| Էջ | Տող | Սխալ | Ուղիղ |
|-----|-----|---------------------|------------------|
| 80 | 2 | Մաքիննէս | Մաք Քիննէս |
| 83 | 13 | դ-սղդ-ող | դ-ողդ-ոջ |
| 99 | 5 | յԱթուսյդ | յԱթուսյդ |
| 113 | 9 | խաղաղութեան սիրոյն, | խաղաղութեանսիրոյ |
| 164 | 3 | միւշապէսէթ | միւշապէհէթ |
| 164 | 5 | տիւ | աւերարդ է |
| 165 | 29 | Բէտէրտէն | Բէտէրտէն |
| 168 | 10 | Թանվիւ | Թանվիւ |




ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Նոր կամ Գրիգորեան Տամարք Էւ Հայոց
Ս. Եկեղեցին:

Պատրաստուած՝

Յ. Վ. Բ. Ժ. Ա. ՊՆՏՆԵԱՆԷ

ԳԻՆ 50 ՂՐՇ



«Ազգային գրադարան»



NL0139054

14118

